

ՎԱՍՆ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ

ՍԵՊՏԵՄԲԵՐ 2003
(ԲՈՒՆ ՀԱՅՈՅ ՀՕՈՒԻ 4496 ԱՍԻ)



9
(45)

FOR THE SAKE OF JUSTICE

SEPTEMBER 2003

ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ

ԱՎԱԳՅԱՆ Ռ. «Ռուսական կայսրության Հայ-Գրիգորյան (լուսավորչական) դավանանքի քրիստոնյաների հոգևոր ուժերի կառավարման մասին» կանոնադրությունը	2
ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ Ա. Ինքնորոշման իրավունքը՝ որպես ազգամիջյան հակամարտությունների լուծման հիմք	7
ԳԱԼՍՅԱՆ Խ. Բանակցությունների իրավական հիմքերի և սկզբունքների մասին	12
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Գ. Տեղեկատվական հասարակություն և գլոբալիզացիա	17
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Ա. Գազարայունային ավտոմեքենաների շահագործում. էկոլոգիական խնդիրներ, լուծումներ	26
ԶԱԶԱՐՅԱՆ Ս. Հայ փիլիսոփայական միտքը տարածաշրջանային և եվրոպական փիլիսոփայության համատեքստում	31
ԽԱՉԱՏՐՅԱՆ Գ., ՊԵՏՐՈՍՅԱՆ Լ. Նարեկացին՝ բառաստեղծ	37
«ՎԱՍՆ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ». Վավերացված ապօրինություն	42
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Ա. Հայ-եգիպտական հարաբերությունների պատմության շուրջ (14-րդ դարի առաջին քառորդ)	46
ՀԱԿՈՒԲՅԱՆ Ի. Մենք ուզում ենք, որ ամեն ինչ թափանցիկ և ժողովրդավարական լինի	53
Գիտության նվիրյալը	57
Հիմնարար հետազոտություն	58
Գրքերի տեսություն	59

IN THE ISSUE

R. AVAGYAN. “Regulations “On the Management of Spiritual Powers of Christians of Armenian-Grigorian (Illuminative) Confession of Russian Empire””	2
A. GHARIBJANYAN. “Right to Self-Determination as a Basic for Solution of Interracial Conflicts”	7
KH. GALSTYAN. “ On Legal Bases and Concepts of Negotiations”	12
G. HARUTYUNYAN. “Informational Society and Globalization”	17
A. HAYRAPETYAN. “Exploitation of Cars with Gas Cylinders: Environmental Problems, Solutions”	26
S. ZAQARYAN. “Armenian Philosophical Thought in the Context of Territorial and European Philosophy”	31
G. KHACHATRIAN, L. PETROSIAN. “Narekatsi as a Word-Creator”	37
“FOR THE SAKE OF JUSTICE”. “Retified Illegality...”	42
A. HOVHANNISYAN. “Round the History of Armenian – Egiption Relations” (First Quarter of 14 th Century)	46
I. HAKOBYAN. “We Want Evereverything to be Trasparent and Democratic”	53
The Devoted to Science	57
Fundamental Research	58
Survey of Books	59

«ՌՈՒՍԱԿԱՆ ԿԱՅՄՐՈՒԹՅԱՆ ՀԱՅ-ԳՐԻԳՈՐՅԱՆ [ԼՈՒՍԱՎՈՐՉԱԿԱՆ] ԴԱՎԱՆԱՆՔԻ ԶՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ ՈՒԺԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՌՈՒՐԵՆ ԱՎԱԳՅԱՆ
Իրավաբանական իրությունների
րոկոտոր, պրոֆեսոր

Մտքը գործելով XIX հարյուրամյակ՝ հայ ժողովուրդն առաջվա նման գրկված էր ազատ և անկախ հասարակական-քաղաքական կյանքից: XVI-XVII դարերի թուրք-պարսկական պատերազմներից հետո Հայաստանը բաժանվել էր Օսմանյան կայսրության և Պարսկաստանի միջև. Արևմտյան Հայաստանն անցել էր Թուրքիային, իսկ Արևելյանը՝ Պարսկաստանին: Ընդ որում՝ թուրք-պարսկական սահմանը Հայաստանում անցնում էր Ախուրյան գետով մինչև Արաքսի հովիտները, Կողբի հարավարևմտյան մասով, Մեծ և Փոքր Արարատներով, Կոտուր և Ջազրոս ջրբաժանով:

Գրեթե քառորդ դար տևած ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմներն ավարտվեցին խաղաղության մի շարք պայմանագրերով: Ըստ 1828 թ. փետրվարի 10-ի պայմանագրի, որով ավարտվեց 1826-1828 թթ. պատերազմը, Արևելյան Հայաստանը (Նախիջևանի, Էրիվանի խանությունները և Օրդուբադի շրջանը) միացվեց Ռուսական կայսրությանը: Այդ իրադարձությունը հայ պատմագրության մեջ տարբեր ժամանակներում տարբեր կերպ է գնահատվել: Ինչ վերաբերում է այդ հարցում Ռուսական կայսրության քաղաքականությանը, ապա բնութագրական է ռուս պետական գործիչ և դիվանագետ Լոբանով-Ռոստովկուի հայտարարությունը. «Ռուսաստանը թույլ չի տա մեկ այլ Քուլդարիայի ստեղծում... Հայաստանը նրան պետք է առանց հայերի»: Բայց կային նաև այլ տեսակետներ: Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության ասիական դեպարտամենտը «Ասիական ժողովուրդների և պետությունների տեսությունում» գրում էր. «...Նա [Հայաստանը] Կովկասյան հողերը միացնում է Արարատի համակարգի և հնագույն Տավրոսի հետ... բայց գլխավոր գանձը, որ Էրիվանի գրավմամբ անցնում է մեր ձեռքը, պետք է համարել Էջմիածնի վանքը: Այնտեղ պահպանվում է հայոց ազգի Լուսավորչի՝ սուրբ Գրիգորի ձեռքը, և այնտեղ է սույն արդյունաբերող, Ասիայով մեկ ցրիվ եկած ժողովուրդը տեսնում իր հավատի հնագույն մայրաքաղաքը և իր հայրապետների կացարանը: Կարելի է ասել, որ Էջմիածնի վանքը... շուտով նոսրաբնակ Հայաստանի մարդ բնակության կձգի նույնհավատներին» [տե՛ս Արքսեռ անաթեմիս ուսուցիչ - ԱՅՈՒՐ, փ. Գ. Արքսեռ 11.1, օտ. 30, ձ. 1, Լ. 43 օճ. և այլն]:

Լեոն, Բ. Բոլյանը և ուրիշներ Հայաստանի միացումը Ռուսաստանին դիտում էին որպես «չարիք»՝ ի հակադրություն Ռուսական կայսրության պատմաբանների տեսակետների, իսկ հետագայում նաև խորհրդային հանրապետությունների (առաջին հերթին՝ Հայաստանի և Ռուսաստանի), որոնք այդ ակտը համարում էին «բացարձակ հայամպաստ»:

Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացվե-

լուց հետո հայ հայրենասերների մի խումբ հանդես եկավ տվյալ տարածքում Ռուսաստանի հովանավորության ներքո հայկական ինքնավարություն ստեղծելու ծրագրով: Դրա պաշտպանության համար առաջարկվում էր կամավոր սկզբունքով ստեղծել հայկական զվարդիա:

Հետևելով անկախ Հայաստանի հայտնի նախագծերի օրինակին, որ դեռևս եկատերինա II-ի օրոք մշակել էին Ռուսաստանում Հայոց եկեղեցու առաջնորդ Յովսեփ Արղուրյանը և Շահամիր Շահամիրյանը, հայ հայրենասերներ խաչատուր Լազարյանը, Ալեքսանդր Խուդաբաշյանը, Արղուրյան-Երկայնաբազուկը և ուրիշներ Պետերբուրգում ցարի անմիջական հովանավորության ներքո կազմեցին «անկախ» Հայաստանի իրենց նախագիծը և ներկայացրին Ռուսական կայսրության կառավարությանը: Սակայն այդ նախագիծը հավանության չարժանացավ: Նիկոլայ I ցարը 1828 թ. մարտի 21-ի հրամանագրով հավանություն տվեց Հայկական մարզի ստեղծման նախագծին: Ըստ այդ նախագծի՝ անբողջ իշխանությունը, վարչական կառուցվածքը և նորմատիվ-իրավական ակտերը հայամպաստ չէին: Հայկական մարզի զինանշանն էլ հիշեցնում էր ավելի շուտ Հայաստանի պատմական հեռավոր անցյալը:

Թուրքիայի հետ հաշտության պայմանագրի կնքումից հետո՝ 1829թ. դեկտեմբերի վերջերին, Թիֆլիսում հիմնադրվեց Հայոց եկեղեցու «Կանոնադրության» նախագծի մշակման կոմիտե: Կոմիտեի կազմի մեջ մտան զեներալ-մայոր Բ. Յ. Բեհրությանը (Բեհրուսով) [նախագահ], անդամներ՝ պրոֆեսոր Յ. Շ. Ջրպետը [Ջրպետյանը], արքեպիսկոպոս Սերովբեն և այլք: Կոմիտեին գործնական, բայց ոչ պաշտոնական օգնություն ցույց տվեցին Յովհաննես Ը Կարբեցի կաթողիկոսը և հայկական հասարակական-քաղաքական ու եկեղեցական այլ գործիչներ [տե՛ս Акты Кавказской архиепископической комиссии (АКАК).- Тифлис, 1878. Т. 228, с. 280-282; Т. 229, с. 282 և այլն]:

1830 թվականի փետրվարին Հայկական մարզի կառավարիչ նշանակվեց զեներալ-մայոր Բ. Բեհրությանը: Նրա կառավարման շրջանում (1830-1838 թթ.)՝ 1833 թ., վերացվեց մարզային կառավարման կոլեգիալ ձևը, վերակազմավորվեց խորհրդականների ինստիտուտը, որ ղեկավարում էր ոստիկանական, դատական և ֆինանսատնտեսական գործերը: Ընդ-



Հայաստանի
Հանրապետության
զինանշանի նախագիծ,
XIX դ.

հանուր առմամբ՝ գեներալ-մայոր Բ. Բեհրությանին տրվեցին ավելի լայն իրավունքներ:

Երևանի գավառը բաժանվեց չորս օկրուգի՝ Երևանի, Շարուրի, Սուրմալուի և Սարդարապատի: Սակայն «վերևից» օկրուգների կառավարիչներ նշանակվեցին ռուս չինովիկները, իսկ Նախիջևանը և Օրդուբադը թողեցին մահմեդականների ձեռքին³:

Հայկական մարզում վարչական նոր եղանակների հաստատման հետ մեկտեղ սկսվեց հայ հոգևորականության կառավարման վերակազմակերպումը⁴:

Միաժամանակ, դեռևս 1830 թվականին՝ Բ. Բեհրությանին Հայկական մարզի կառավարիչ նշանակելուց մեկ ամիս հետո, վերոհիշյալ «Կանոնադրության» նախագծի առաջին տարբերակն արդեն պատրաստ էր. Թիֆլիսյան կոմիտեի բոլոր պաշտոնական անդամների կողմից ստորագրված և ուղարկված Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Դ. Բլուդովին:

Երկու զլխից և տասներկու բաժիններից բաղկացած հիշյալ նախագիծը հիմնավոր բնույթ էր կրում: Ելքումն էր՝ «Ռուսաստանում հայ հոգևորականությանն ընծեռել ռուս հոգևորականության արտոնությունների համապատասխան իրավունքներ և արտոնություններ... իսկ եթե հարկ լինի ձգտել թուրքահայերին միացնելու Էջմիածնի թեմին, դրա համար կբավականացնի նախագծում ընդգրկել մի քանի [նոր] որոշումներ...» [ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 57, ցուցակ 1, գործ 66, էջ 9-57, 69-98]:

Վերոհիշյալ նախագիծը Դ. Բլուդովի կողմից թագավորին ներկայացվելուց հետո Ռուսաստանի ներքին և արտաքին գործերի նախարարությունների մասնակցությամբ վերանայվել և մերժվել էր միջգետնատեսչական կոմիտեի կողմից:

Նախագծի հերթական նախապատրաստումը Հայոց եկեղեցու վարչության կողմից պետք է իրականացվեր Դ. Բլուդովի հովանավորությամբ, ապա հաստատվեր կառավարական կոմիտեի կողմից: 1830 թ. հուլիսին Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Դ. Բլուդովն Էջմիածնի աթոռանիստի և Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության լիազոր ներկայացուցիչ Քրիստափոր Լազարևից ստացավ անհրաժեշտ «Ընդհանուր տեղեկություններ Հայոց եկեղեցու դավանանքի և նրա զլխավոր հոգևորականության կառավարման մասին» փաստաթուղթը [տե՛ս ԱԳԱՕՐ (Центральныи государственный архив Октябрьской революции), ֆ. 109, 1 экз., 1826, д. 51, л. 108-116 և այլն]: Սույն փաստաթուղթը հիմք հանդիսացավ «Հայոց հոգևորականության գործերի կառավարման կանոնադրության» նոր խմբագրման համար:

1830 թ. Լեհաստանում սկսված ապստամբության պատճառով Դ. Բլուդովը 1831 թվականի հուլիսի 30-ին միայն նոր խմբագրված նախագիծն ուղարկեց Կովկասի նախկին կառավարչապետ կոմս Ն. Պասկևիչի վերանայմանը՝ հետևյալ մակագրությամբ. «Եթե Դուք թույլ կտաք հաստատել սույն նախագիծը (նոր խմբագրությամբ), արդյոք չէի՞ք կամենա, հարգարժան Տեր, հաստատելուց հետո, նույն նպատակով, այն ուղարկել փոխվարչապետ Կ. Վ. Նեսելռոդին և [ժամդարմների կորպուսի պետ] Ա. Խ. Բենկենդորֆին [ՀՀ ՊՊԿԱ (ՀՀ պատմության պետական կենտրոնական արխիվ), ֆ. 57, ցուցակ 1, գործ 66, էջ 106]:

Նոր՝ վերջնական խմբագրության մեջ նորամուծությունը նախագծի «Ներածությունն» էր, ուր հռչակվում էր միապետության հոգատարությունը «Հայոց հոգևորականության հարզի բարձրացման» նկատմամբ և հնագույն արտոնությունների վերականգնումը՝ հաշվի առնելով պահպանել ռուսական հոգևորականության համար նախատեսված արտոնությունները: Միաժամանակ՝ նախագծի ինչպես հին, այնպես էլ նոր խմբագրության մեջ բացակայում էին կաթողիկոսի տիեզերական նշանակությունը և համայն հայության հոգևոր առաջնորդի կարգավիճակը: Հայաստանի հոգևոր հովվի ընտրության ժամանակ հաշվի չէր առնվում արտասահմանի հայության կամքը, կաթողիկոսական ընտրություններում անտեսվում էր մեկըների ու յուզբաշինների մասնակցության ավանդույթը և այլն: «Կանոնադրության» նախագծի վերջնական վերանայումը ձգձգվում էր մի կողմից՝ վերոհիշյալ լեհական խնդրի [տե՛ս Отчеты по Азиатскому департаменту (АВПР) 1831-1832 гг., л. 224, ф. Армянские дела 1842, д. 8, л. 1.2 և այլն], իսկ մյուս կողմից՝ Էջմիածնի աթոռանիստի հոգևոր առաջնորդների շրջանում տիրող ձգնաժամի պատճառով [տե՛ս АКAK, т. 8, №.194, с. 274; №.195, с. 275; №.197, с. 278; №.201, с. 283-284 և այլն]:

Հասարակական-քաղաքական, հոգևորական և այլ հայ գործիչների, այդ թվում՝ Ներսես Աշտարակեցու, Հովհաննես Կարբեցու, Լազարևի, Սերովբեի, Գուրգենբեկովի, Ալեքսանդր Խուդաբաշևի մի շարք առաջարկություններ արտասահմանյան երկրներում Էջմիածնի աթոռանիստի ազդեցության ուժեղացման և Էջմիածնի աթոռանիստից հայ ազգաբնակչության հոգևոր կախվածության բարձրացման և այլնի վերաբերյալ, ներքին գործերի նախարարությանը հարկադրեցին մեկ անգամ ևս վերանշակել եկեղեցական Կանոնադրության նախագիծը և այն ավարտել 1835 թ. գարնանամուտին:

1836 թ. փետրվարին Դ. Բլուդովը պետական քարտուղար կոմս Պ. Տոլստոյին ներկայացրեց «Ռուսաստանում Հայոց եկեղեցու գործերի կառավարման մասին» Կանոնադրության նախագծի վերջնական վերանշակված տարբերակը: Պետական Խորհուրդը վերանայեց Կանոնադրությունը, որը բաղկացած էր 10 զլխից և 141 հոդվածից: Կատարելով հոդվածների սոսկ շարադրման կարգի մի քանի ուղղումներ՝ Խորհուրդը նախագիծը հաստատման ներկայացրեց Նիկոլայ I ցարին [ՀՀ ՊՊԿԱ (Հայաստանի պատմության պետական կենտրոնական արխիվ), ֆ. 1274, ցուցակ 1, գործ 723, էջ 4-5]:

1836 թ. մարտի 11-ին Պետերբուրգում հայ հոգևորականության և Ռուսաստանի շահագրգիռ պետական մարմինների մասնակցությամբ ընդունվեց «Ռուսական կայսրության Հայ-Գրիգորյան դավանանքի քրիստոնյաների հոգևոր ուժերի կառավարման մասին» Կանոնադրությունը: Այդ փաստաթուղթը կարելի է համարձակորեն որակել որպես Հայաստանի «պետական» օրենք, քանի որ դրա ստեղծմանը մասնակցել ու հավանություն են տվել ոչ միայն Ռուսական կայսրության իշխանության տարբեր ճյուղերի ներկայացուցիչները, այլև, ինչպես արդեն նշեցինք, հայ ժողովրդի լավագույն ներկայացուցիչները: Այն ժամանակ՝ հայ պետականության բացակայության պայմաններում, տվյալ օրինակարգը ստացավ

միայն Ռուսական կայսրության օրենքի ձև: Սույն Կանոնադրության դրական դերը Հայոց եկեղեցու համար 1837-1856 թթ. ամբողջությամբ երևում է «Հայ եկեղեցու կացությունը Ռուսական կայսրությունում 1837-1846 թթ.» աղյուսակից:

Այնուամենայնիվ, Ամենայն Հայոց կաթողիկոս Հովհաննես Ը Կարբեցին դժգոհ մնաց եկեղեցական Կանոնադրությունից: Մասնավորապես, տարակուսանք էին հարուցում 57-րդ և 24-րդ հոդվածների միջև եղած հակասությունները, բոլոր թեմական առաջնորդների նկատմամբ կաթողիկոսի առաջնության կանոնը, ինչպես նաև եկեղեցիների գլխավորների, թեմերի առաջնորդների և վանականների ունեցվածքի վրա նրանց հարազատների ժառանգական կարգի տարածումը: Այս առիթով Հովհաննես Ը Կարբեցին գրում էր. «Ոչ ավանդություններից, ոչ էլ Էջմիածնում տարբեր պատրիարքներից մնացած հնագույն գրություններից մինչև այժմ ոչ մի օրինակից չի երևում, որ երբևէ պատրիարքի կամ սովորական վանականի մահից հետո նրանց ժառանգները կարողանային օգտվել նրանց ունեցվածքից...»⁵ [ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 57, ցուցակ 1, գործ 77, էջ 51, 51-ի հակառակ երեսը, էջ 52, 52-ի հակառակ երեսը]:

1837 թ. հունվարի 22-ին արդեն հաստատված Կանոնադրության հիման վրա Սինոդի ստեղծման առթիվ Էջմիածնի վանքում տեղի ունեցավ հանդիսություն: Հայոց աշխարհիկ և հոգևոր անձանց ներկայությամբ Բ. Բեհրությանը ներկաների ուշադրությունը հրավիրեց հանդիսության պատմական կարևորության վրա:

1837 թ. օգոստոսի 7-ին Թիֆլիսի հայկական կոնսիստորիայի հանդիսավոր բացման ժամանակ Վրաստանի հոգևորականության առաջնորդը հրապարակայնորեն հայտարարեց իր համախոհությունը Կանոնադրությանը, քանի որ թագավորի կողմից հայկական եկեղեցու նկատմամբ հաստատվեց միապետական հավատի կարգավիճակ, այսինքն՝ նրան օրվեցին նույնպիսի իրավունքներ, ինչպիսիններից օգտվում էր Ռուսական ուղղափառ եկեղեցին: Այնուհետև նույն թվականի սեպտեմբերին Կոստանդնուպոլիսի և Երուսաղեմի Հայոց պատրիարքները նույնպես որոշեցին ճանաչել Կանոնադրությունը, այսինքն՝ Էջմիածնի գահաթոռի և Հովհաննես Ը Կարբեցի կաթողիկոսի առաջնությունը: Սակայն հնդկահայերը (Կալկաթա, Մադրաս), ինքնական ենթարկվելով Էջմիածնի գահաթոռի կաթողիկոսին՝ որպես սուրբ Գրիգորի ճշմարիտ հետևորդի, իրենց պահանջներով մերժեցին վերոհիշյալ Կանոնադրության որոշ հոդվածներ, որոնք տարածվում էին նաև Ռուսաստանի սահմաններից դուրս գտնվող հայերի վրա: Բայց այդ խնդրի վերանայման ընթացքում՝ 1842 թ. մարտի 26-ին, կյանքից հեռացավ Հայոց հայրապետ, 87-ամյա Հովհաննես Ը Կարբեցին, և նրա փոխարեն 1843 թ. ընտրվեց, ապա և Նիկոլայ I ցարի կողմից հաստատվեց Ներսես Աշտարակեցին⁶:

Ռուսաստանի հետ Կանոնադրության նոր խմբագրման տասնհինգամյա համեմատաբար անարդյունք բանակցությունների ընթացքում [վերջին բանակցությունները տարվում էին Կովկասի փոխարք իշխան Ա. Խ. Բարատինսկու հետ]՝ 1857 թ. հունվարի 13-ին, վախճանվեց Ամենայն Հայոց կաթողիկոսը: Սակայն նա իրենից հետո թողեց Կանոնադրության նոր նախագիծ, որն արքեպիսկոպոս Սարգիս Ջա-

լայանցը 1857 թ. մարտի 24-ին ուղարկեց Կովկասի վերոհիշյալ փոխարքային: Սույն նախագիծը մասնավորապես պահպանում էր հոգևորականության սեփականության հարցի վերաբերյալ Ներսես Աշտարակեցու մոտեցումը, ընդգծում կաթողիկոսի իշխանությունն ու առաջնությունն ամբողջ հոգևորականության նկատմամբ:

1858 թ. հուլիսի 15-ին Էջմիածնում նոր կաթողիկոս ընտրվեց Կոստանդնուպոլիսի նախկին պատրիարք Մատթեոս Ա Կոստանդնուպոլսեցին (Չուխաճյանը), որ օսմանյան հայերի շրջանում հայտնի էր բողոքականության դեմ պայքարով: Նա միայն ութ տարի անց ներկայացրեց Կանոնադրության իր նախագիծը՝ Կովկասի արդեն նոր փոխարքա մեծ իշխան Սիխայիլ Ռոմանովին:

Մատթեոս Չուխաճյանի 1864 թ. Կանոնադրության նախագիծը ներառում էր 89 պարագրաֆ, որից 37-ը ներկայացնում էր կաթողիկոսի իրավասությունները: Համաձայն սույն Կանոնադրության՝ ընտրված հայրապետն անկախանում էր աշխարհիկ իշխանությունից, այսինքն՝ չէր հաստատվում թագավորի կողմից և երբևէ չէր տալիս: Հոգևորական անձանց ունեցվածքը ճանաչվում էր եկեղեցու սեփականություն, թեմական առաջնորդների նշանակումը և կարգալուծությունը փոխադրվում էր Ամենայն Հայոց կաթողիկոսի իրավասության տակ (իհարկե, կառավարական շրջաններին հետագա ծանուցմամբ): Սույն Կանոնադրությունը լուծում էր նաև Հայոց եկեղեցու կողմից ազգային բարձրագույն կառավարության ստեղծման խնդիրը, որով լուծվում էր նաև հնդկահայության առաջ քաշած խնդիրը: Կաթողիկոսը սույն նախագիծի միջոցով ձգտում էր վերականգնել Էջմիածնի գահաթոռի դերը՝ որպես եկեղեցական-ազգային ինստիտուտի:

Վերը շարադրվածից հետևում է, որ, ի տարբերություն իր նախորդների, Մատթեոս Ա կաթողիկոսը ձգտում էր 1836 թ. Կանոնադրության արմատական վերանայման: Սակայն այս նախագիծը նույնպես չիրագործվեց, քանի որ 1866 թ. սեպտեմբերին Հայոց եկեղեցու առաջնորդ դարձավ Կոստանդնուպոլիսի նախկին պատրիարք Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցին [Գևորգ Պրուսացին], որը 1870 թ. գործող Կանոնադրության բովանդակային փոփոխությունների կատարումը հետաձգեց «մինչև հարմար ժամանակներ» [տե՛ս ԱԳՄԱ ՔՓ, ֆ. 821, օռ. 140, ձ. 1, և. 229 և այլն]: Նախատեսվում էր հետագայում նոր Կանոնադրությունն ստեղծելիս ներմուծել Հայոց եկեղեցու հնագույն օրենքները [ավանդույթները և սովորությունները]: Իսկ առայժմ Կանոնադրության վերանայման խնդիրը՝ որպես Արևմտյան և Արևելյան հայության միասնության փխրուն խորհրդանիշ, Հայոց վերոհիշյալ հովվապետը հետաձգեց մինչև լավագույն ժամանակներ: Այդ ժամանակը եկավ XIX դ. 2-րդ կեսին և XX դ. սկզբներին: Հայոց եկեղեցին Կանոնադրության վերջին խմբագրությունը՝ մի քանի փոփոխություններով ու լրացումներով՝ որպես Ռուսաստանի օրենքների ժողովածու, գործնականում ստացավ 1906 թվականին:

Կանոնադրությունը՝ 1906 թ. խմբագրությամբ, կազմված էր 9 բաժնից և 152 հոդվածներից: Առաջին բաժինը վերաբերում էր Հայ-Գրիգորյան եկեղեցու ընդհանուր իրավունքներին և պարտականություն-

ներին, երկրորդը՝ Էջմիածնի Գերագույն պատրիարքին, այսինքն՝ կաթողիկոսին, երրորդը՝ Էջմիածնի Սինոդին, այսինքն՝ Գերագույն եկեղեցական ժողովին, չորրորդը՝ թեմական առաջնորդին, հինգերորդը՝ կոնսիստորիային և հոգևոր կառավարմանը, վեցերորդը՝ հոգևորականությանը, յոթերորդը՝ Հայոց եկեղեցու հոգևոր-ուսումնական հաստատություններին, ութերորդը՝ եկեղեցական ունեցվածքին, իններորդը՝ պատարագիչների ու դպիրների եկամուտին և նրանց այրիների ու որբերի խնամքին:

Համաձայն այդ Կանոնադրության 55 [1163]⁷ հոդվածի՝ Ռուսական կայսրության իշխանության տակ գտնվող հայկական շրջանները բաժանվել էին հետևյալ վեց թեմերի՝ Էրիվանի, Ղարաբաղի, Նախիջևանի, Բեսարաբիայի, Աստրախանի և Շիրվանի

(Համախի): Ըստ որում՝ յուրաքանչյուր թեմ ուներ իր առաջնորդը, իր վանքերն ու եկեղեցիները, դպրոցներն ու մյուս ուսումնական հաստատությունները, շարժական ու անշարժ գույքը և այլն:

Ցավոք, հարկ է հավաստել, որ 1836 թ. Ռուսական կայսրությունում հայերի ազգային Կանոնադրության հիմնական սկզբունքները հիմք չդրածան հայոց սահմանադրության մշակման, այլ հիմնականում օգտագործվեցին սփյուռքի հայ համայնքների ինքնակառավարման համար նորմատիվ-իրավական ակտերի պատրաստման ընթացքում: Սակայն այդ հանգամանքը չի նսեմացնում դրա նշանակությունը, և այսօր էլ այն արժանի տեղ է գրավում հայ ժողովրդի իրավունքի պատմության մեջ՝ իրավական հուշարձանների շարքում:

Հայ եկեղեցու կացությունը Ռուսական կայսրությունում 1837-1856 թթ. [696, էջ 57, 72]

№	Թեմեր	Վանքեր		Սնտուներ		Կուսակրոն հոգևորականություն				Թեմական դպրանոցներ	
		1837թ.	1842թ.	1837թ.	1842թ.	Երբազն և սպասավ եկեղեցականներ	Մեշիկաբիներ			1837թ.	1842թ.
1.	Նախիջևան և Բեսարաբիա Աստրախան	28	36	8	34521	145	216	-	-	11	10
2.	Երևան	19	23	4	18348	166	146	1	1	1	1
3.	Երևան	308	411	235	113227	1677	915	1	2	3	0
4.	Վրաստան	340	297	28	105567	625	714	1	1	12	1
5.	Ղարաբաղ	99	168	33	42456	345	364	0	1	4	1*
6.	Շիրվան	25	30	2	12847	41	55	0	0	1	0
Ընդամենը		619	965	310	316987	3007	2610	5	5	32	13

¹ Մանրամասն տե՛ս «Հայ ժողովրդի պատմության տեսությանը վերաբերող ակտերի ժողովածու». Հ. 1, Մոսկվա, 1833, էջ 178-179:

² Հայկական մարզի զինանշանը հաստատվել էր ռուսաց ցարի կողմից 1833 թ. փետրվարի 27-ին: Չինանշանի ներքևի մասում պատկերված էին Արարատ լեռը, հայկական թագը և Էջմիածնի վանքը, իսկ վերին մասում՝ Ռուսական կայսրության խորհրդանիշը՝ փռված թևերով երկգլուխ արծիվ և կայսրական թագ:

³ Գեներալ Բեհբուջյանի հեռանալուց երկու տարի անց Հայկական մարզը՝ որպես ինքնուրույն վարչական միավոր, լուծարվեց: Երևանի և Նախիջևանի գավառները, Օրդուբադի օկրուգը և վերստեղծված Ալեքսանդրապոլի գավառն ընդգրկվեցին Վրացա-իմերեթական նահանգի մեջ: Հայկական մարզը, որի հետ հայ ժողովուրդն այնքան մեծ հույսեր էր կապել, դադարեցրեց իր իրավական գոյությունը... Միայն 1849 թ. կազմավորվեց Երևանի նահանգը, որի մեջ մտան Երևանի, Ալեքսանդրապոլի, Նախիջևանի և վերակազմավորված Օրդուբադի ու Նոր Բայազետի գավառները: Ուշագրավ է, որ լինելով Կովկասի կորպուսի հրամանատար՝ գեներալ Բ. Բեհբուջյանը 1853 թ. Ալեքսանդրապոլից Էջմիածնի կաթողիկոսին գրում էր. «Ցավալի է ինձ համար մեր ազգի վշտերի ակնատեսը լինել...» [Հայկ. ՍՍՀ ՊԿԿԱ, ֆ. 57, գ. 157, էջ 132]:

⁴ Հայտնի է, որ Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացվելուց հետո հայ ժողովրդի ազգային խնդիրների մեծ մասը Էջմիածնի կաթողիկոսի միջնորդությամբ Պարսկաստանի շահն էր լուծում: Ուրիշ երկրների հետ արտաքին հարաբերությունները հիմնականում պահպանվում էին Էջմիածնի կաթողիկոսի միջոցով:

⁵ Տասնամյակներ անց՝ միայն 1871 թ. մարտի 1-ին, Ալեքսեյ II ցարը վերանայեց հին և հաստատեց Պետական Խորհրդի նոր՝ հայ կուսակրոն հոգևորականության ունեցվածքի ժառանգականության կարգի մասին որոշումը՝ համաձայն հայոց ազգային ավանդույթների ոգու:

⁶ Ներսես Ե Աշտարակեցի (1770 թ., Աշտարակ - 1857 թ., Վաղարշապատ) - հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ, Ամենայն Հայոց կաթողիկոս 1843-ից: 1804-1813 թթ. ռուս-պարսկական պատերազմի սկզբին՝ երևանյան առաջին արշավանքի ժամանակ, աջակցել է ռուսական զորքերին: 1814-ին, նշանակվելով Թիֆլիսի հայոց թեմի առաջնորդ, հիմնադրել է (1824 թ.) Ներսիսյան դպրոցը: 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի ժամանակ կազմակերպել է հայկական կամավորական գումարտակներ, անձամբ մասնակցել Երևանի, Էջմիածնի, Սարղարապատի ազատագրմանը: Ռուսաստանի հովանավորության ներքո հայկական ինքնավար պետություն ստեղծելու Ներսես Աշտարակեցու ձգտումները շուտով հարուցում են ռուսական կառավարության դժգոհությունը և, Ի. Պասկևիչի սադրանքով, շուտով նա հեռացվում է Անդրկովկասից: Հետագայում ընտրվել է Ամենայն Հայոց կաթողիկոս, վերադարձել Էջմիածին և շարունակել դիմադրել հայկական եկեղեցու նկատմամբ ցարական կառավարության ոտնձգություններին [Ա. Դ. Երիցյանց, «Նյութեր Ներսես Ե Աշտարակեցի կաթողիկոսի կենսագրության», Թիֆլիս, 1899]:

⁷ Փակագծից առաջ տրվում է հոդվածների մեր համարակալումը, իսկ փակագծում՝ «Ռուսական կայսրության Հայ-Գրիգորյան դավանանքի քրիստոնյաների հոգևոր ուժերի կա-

ռավարման մասին» Ռուսական կայսրության Կանոնադրության հոդվածների համարակալումը:

REGULATIONS "ON THE MANAGEMENT OF SPIRITUAL POWER OF CHRISTIANS OF ARMENIAN - GRIGORIAN (ILLUMINATIVE) CONFESSION OF RUSSIAN EMPIRE"

RUBEN AVAGYAN
Doctor of Law, Professor

Summary

The article approves ascertaining the basic concepts and meanings of the Regulations "On the Operation of Spiritual Power of Christians of Armenian-Grigorian (Illuminative) Confession of Russian Empire" in 1836. The given Regulations and National Constitution of Armenians in Osman Empire in 1863, afterwards, unfortunately, was not a base for elaborating Armenian Constitutions, but was basically used in the preparation of normative- legal acts for self-governing of communities in the Armenian Diaspora. However this does not diminish their meaning, and today they occupy their deserving place in the history of law of the Armenian nation.

It is mentioned that according to the Turkmenchai Treaty since 10 Feb., 1828, which concluded the Russian-Persian war of 1826-1828, Western Armenia was joint to the Russian Empire. The Emperor Nikolai the First approved with his edict, on 21 March, 1828, the creation of Armenian Region, and with confirmation of new administrative laws in the sphere of reorganization of the Armenian Church operation started. On 11 March, 1836 in Petersburg with participation of Armenian ecclesiastical representatives and interesting governmental bodies of Russia the abovementioned legislative Regulations was adopted. This document can be safely gulped as Armenian "state" law, as in the process of its creation and proof the best representatives of the Armenian society participated. Meanwhile in the condition of the absence of Armenian state system, the given Regulations got only rule shape of Russian Empire.

The presented edition of 1906, consists of 9 parts and 152 articles, first part is about general rights and responsibilities of Armenian - Grigorian Church; the second one - about Echmiadzin Supreme Patriarch, the third - Echmiadzin Catholics; the fourth - Eparchy leaders; the fifth - Consistory and Spiritual operation; the sixth - the clergy; the seventh - spiritual-educational establishments of Armenian - Grigorian Church; the eight - the church property; the ninth - the incomes of clergymen and church readers.

According to the presented Regulations on 22 Feb, 1837, a Synod was opened in Echmiadzin, and on 1 May - Yerevan Consistory.

ПОЛОЖЕНИЕ "ОБ УПРАВЛЕНИИ ДУХОВНЫХ СИЛ ХРИСТИАН АРМЯНО-ГРИГОРИАНСКОГО [ПРОСВЕТИТЕЛЬСКОГО] ИСПОВЕДАНИЯ РОССИЙСКОЙ ИМПЕРИИ"

РУБЕН АВАКЯН
Доктор юридических наук, профессор

Резюме

Предлагаемая статья констатирует основные принципы и значение Положения "Об управлении духовных сил христиан Армяно-Григорианского исповедания Российской империи" 1836 года. Данное Положение и Национальная Конституция армян Османской империи 1863г., к сожалению, впоследствии не послужили основой для разработки армянских конституций, а были в основном использованы в ходе подготовки нормативно-правовых актов для самоуправления армянских общин диаспоры. Однако это не умаляет их значения, и сегодня они занимают свое достойное место в истории права армянского народа.

В статье отмечается, что по Туркменчайскому договору от 10 февраля 1828г., которым завершилась русско-персидская война 1826-1828гг., Восточная Армения была присоединена к Российской империи. Император Николай Первый 21 марта 1828г. своим указом одобрил проект создания Армянской области, и с утверждением новых административных порядков началась в области реорганизация армянского церковного управления. 11 марта 1836 года в Петербурге, при участии представителей армянского духовенства и заинтересованных государственных органов России, было принято вышеупомянутое законодательное Положение. Этот документ можно смело квалифицировать как "государственный" закон Армении, т. к. в его создании и одобрении участвовали лучшие представители армянского народа. Между тем в условиях отсутствия армянской государственности данное Положение получило только форму закона Российской империи.

Данное Положение в редакции 1906г. состоит из 9 разделов и 152 статей. Первый раздел относится к общим правам и обязанностям армяно-григорианской церкви; второй - к эчмиадзинскому верховному патриарху, т. е. к католикосу Эчмиадзина; третий - к Эчмиадзинскому синоду, т. е. высшему церковному собранию; четвертый - к епархиальным предводителям; пятый - к Консistorии и духовному управлению; шестой - к духовенству; седьмой - к духовно-учебным заведениям армяно-григорианской церкви; восьмой - к церковному имуществу; девятый - к доходам священнослужителей и церковных причетников.

Согласно данному Положению, 22 февраля 1837г. в Эчмиадзине открылся Синод, а 1 мая - Ереванская Консistorия.

ԱՐԵՎ ՂԱՐԻՔՅԱՆՅԱՆ

ԵՊՀ քաղաքա-իրավունքային ամբիոնի ասպիրանտ

ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ՝ ՈՐՊԵՍ ԱԶԳԱՄԻՋՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԻՄՔ

Ժողովուրդների ազատ ինքնորոշման իրավունքը քննարկման հարց է դարձել առավելագույն 18-19-րդ դարերում: Ամերիկայի Միացյալ Նահանգների 1776 թ. Անկախության հռչակագիրը և 1789 թ. ֆրանսիական մեծ հեղափոխության ծնունդ Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագիրն այս ուղղությամբ կատարված առաջին քայլերն էին: 19-րդ դարում արդեն հնչում է «Եվրոպան կենտրոնն է ազգությունների և նրանց ինքնորոշման իրավունքի» կարգախոսը: Իսկ 20-րդ դարում ժողովուրդների ազատ ինքնորոշման իրավունքը դառնում է պայքարի նպատակ ու միջոց: Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում՝ 1918 թ. հունվարի 8-ին, ԱՄՆ նախագահ Ու.Վիլսոնի հանձնարարությամբ կազմվում է գալիք խաղաղության պայմանների նախագիծ: Այն միջպետական-քաղաքական սահմանները էթնիկական-լեզվական սահմաններին համապատասխանեցնելու մասին 14 կետից բաղկացած փաստաթուղթ էր, որում հայտարարվում է, թե՛ «Գերիշխանությունների հարցը լուծելու համար՝ խնդրո առարկա ժողովուրդների շահերը պետք է համընկնեն կառավարությունների պահանջների հետ, երբ վերջիններիս հողային իրավունքները քննվելիս լինեն»¹:

Մինչ այդ՝ 1917 թ. նոյեմբերի 2-ին, Ռուսաստանի ժողովրդական կոմիսարների խորհուրդը հրապարակել էր Ռուսաստանի ժողովուրդների իրավունքների հռչակագիրը, ըստ որի՝ ընդունվում էին «Ռուսաստանի ժողովուրդների հավասարությունը և ինքնիշխանությունը, Ռուսաստանի ժողովուրդների ազատ ինքնորոշվելու, ընդհուպ մինչև անջատվելու և անկախ պետություն կազմավորելու իրավունքը»²:

Ուսումնասիրողները գտնում են, որ միջազգային հարաբերություններում արդարության ու բարոյականության այս սկզբունքները հռչակելուց Ու.Վիլսոնին դրդում էին Միացյալ Նահանգների անմիջական շահերը. իր պետական կազմավորման հիմքում ընկած անկախության հռչակագրի սկզբունքներով մուտք գործելով միջազգային դիվանագիտության ասպարեզ՝ ԱՄՆ-ը հուսով էր, որ կարող է կարևոր տեղ գրավել այդ ասպարեզում իշխող հին, պահպանողական եվրոպական տերությունների հաշվին: Իսկ Լենինի համոզմունքների հիմքում ընկած էր դասակարգային շահը. նա հորինել էր կոմունիստական ապագային վերաբերող մի տեսություն, որի կադապրներով և հանուն որի մտադիր էր վերածնել աշխարհը՝ զոհաբերելով ամեն ինչ: Ուստի բոլշևիկներն ազգերի ինքնորոշման սկզբունքը հռչակում էին այնտեղ և այն ժամանակ, որտեղ և երբ դա շահեկան էր, և հրաժարվում էին նրանից, եթե այդ էր պահանջում «համաշխարհային հեղափոխության» գերխնդիրը³:

Այսուհանդերձ, ազգերի ինքնորոշման իրավունքը հետագայում ամրագրվեց թե՛ Խորհրդային Միության սահմանադրության մեջ, թե՛ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի բանաձևերում: 1950 թ. դեկտեմբերի 24-ի 421 D (V) բանաձևում ժողովուրդների ինքնորոշման իրավունքը ճանաչվում է իբրև մարդու հիմնական իրավունք: «Մարդու իրավունքների պաշտպանությունը,- նշվում է միջազգային իրավունքի դասընթացում,- անկարելի է առանց ՄԱԿ-ի կանոնադրության հիմնական սկզբունքները հաշվի առնելու, որոնց թվում ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքը գրավում է առաջին տեղերից մեկը: Ինքնորոշման իրավունքը միաժամանակ և՛ կոլեկտիվ, և՛ անհատական իրավունք է: Յետևաբար, հանրության մեջ մտնող անձանց կոլեկտիվ իրավունքի խախտումը նշանակում է առանձին անհատի հիմնարար իրավունքների և ազատությունների խախտում»: Առանց ինքնորոշման իրավունքի՝ անհնար է նաև միջազգային համագործակցությունը մարդու իրավունքների պաշտպանության գործում, քանզի, ինչպես ասված է Գլխավոր ասամբլեայի վերոհիշյալ բանաձևում, «...ինքնորոշման իրավունքը համդիսանում է միջազգային անվտանգության և փոխշահավետ միջազգային համագործակցության կարևոր պայմանը»⁴:

Ժողովուրդների ինքնորոշման հայեցակարգը հետագա զարգացում ստացավ համաշխարհային պատմական նշանակություն ունեցող մի այլ փաստաթղթում՝ Գաղութային երկրների ու ժողովուրդների անկախության հռչակագրում, որ ընդունվել է 1960 թ. դեկտեմբերի 14-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից: Այն գաղութատիրությունն ու օտարերկրյա տիրապետության ու շահագործման բոլոր ձևերը որակեց որպես ժողովուրդների ինքնորոշման իրավունքի և մարդու հիմնական իրավունքի խախտում: Այս հռչակագրին հետևեցին 1966 թ. ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի ընդունած Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրերը, որոնցում առավել զարգացավ ժողովուրդների ինքնորոշման հայեցակարգը:

1970 թ. հոկտեմբերի 24-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի ընդունած հռչակագիրը հաստատում է, որ ՄԱԿ-ի կանոնադրությամբ ամրապնդված ինքնորոշման իրավունքի հիման վրա բոլոր ժողովուրդներն անկապտելի և անկասելի իրավունք ունեն ազատորեն որոշելու իրենց քաղաքական կարգավիճակը՝ առանց արտաքին միջամտության:

Ըստ միջազգային իրավունքի ճանաչված մասնագետ Յուրի Բարսեղովի՝ «Ազգերի ինքնորոշման

իրավունքը քաղաքակրթության բարձրագույն նվաճումներից մեկն է, անխտիր բոլոր ժողովուրդների իրավունքների փոխադարձ հարգման վրա հիմնված միջազգային հարաբերությունների քաղաքակիրթ ձևերը տանող նրա երկարատև ու փշոտ վերելքի արդյունքը, որը կբացառի հողի համար նախնադարյան, վայրենի, արնահեղ ընդհարումները, երբ գերակշռում էին տարածքային զավթումների, ուրիշ, ավելի թույլ ժողովուրդների ստրկացման, արտաքսման կամ ոչնչացման անասնական բնազդներն ու կրքերը»⁵:

Մարդու իրավունքներն ու ազատությունը և ժողովուրդների ինքնորոշման իրավունքը փոխադարձաբար կապված են: Չի կարող խոսք լինել մարդու իրավունքներից ու ազատություններից օգտվելու մասին, եթե չի ճանաչվում նրա ընդհանրային իրավունքը՝ ժողովրդի ինքնորոշման իրավունքը, և, ընդհակառակը, անհնար է իրականացնել ինքնորոշման իրավունքը, եթե խախտվում են մարդու իրավունքները: Այդ փոխադարձ կապն ու փոխադարձ պայմանավորվածությունը հիմնավորելու համար Յու. Բարսեղովը վկայակոչում է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1952 թ. դեկտեմբերի 16-ի 637 (VII) բանաձևը, որում նշվում է. «ժողովուրդների ու ազգերի ինքնորոշման իրավունքը նախադրյալ է մարդու հիմնական բոլոր իրավունքներից օգտվելու համար»: «Ուստի մարդու իրավունքի մասին միջազգային բոլոր ակտերը ժողովուրդների ինքնորոշման իրավունքը դասում են մարդու հիմնական, գլխավոր իրավունքների թվին», - եզրակացնում է ճանաչված միջազգայնագետը⁶:

Ինքնորոշման իրավունքի պահանջների իրականացումը հասցեագրված է այն պետությանը, որից անմիջականորեն կախված է այդ իրավունքի կատարումը, այսինքն՝ այն պետությանը, որից անջատվում է ինքնորոշվող ժողովուրդը: Այսպիսով՝ ինքնորոշման ժամանակ իրավահարաբերությունների կողմեր են հանդիսանում ազգը, որը ձգտում է օգտվել ինքնորոշվելու իր անկապտելի իրավունքից, և պետությունը, որի սահմանների մեջ է մտնում ազգը: Սա նշանակում է, որ ժամանակակից միջազգային իրավունքի սուբյեկտներ են ճանաչվում ոչ միայն պետությունները, այլև իրենց ինքնորոշման իրավունքը պաշտպանող ժողովուրդները:

Ժողովուրդների ինքնորոշման իրավունքի իրացման կարևորությունը մատնանշում են նաև ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի մի շարք բանաձևեր՝ 2649 (XXV), 2787 (XXVI), 2955 (XXVII), 3070 (XXVII), 3246 (XXIX) և այլն⁷:

ՄԱԿ-ի հիմնադրման սկզբից կյանքի կոչված այս սկզբունքը չի դադարել խնդրահարույց լինելուց: Այն մի կողմից արգելակվում էր հորհրդային Միության բլոկի և Արևմտյան բլոկի միջև ծավալված Սառը պատերազմով, մյուս կողմից՝ արևմտաեվրոպական գաղութատիրության դեմ Աֆրիկայի և Ասիայի ժողովուրդների ծավալված ազգային-ազատագրական պայքարով: Ժողովուրդների ազատ ինքնորոշման իրավունքը փաստորեն սահմանափակվում էր Արևմուտքի գաղութատիրության ենթակա ժողովուրդների ազատագրման մեջ: Իսկ հորհրդային Միության և ԱՄՆ-ի տարածքում ինքնորոշման իրավունքի ցանկացած ար-

տահայտություն դիտվել և դիտվում էր իբրև «անջատողականություն»:

Այս հարցը ԽՍՀՄ փլուզումից հետո նույնիսկ չդադարեց խնդրահարույց լինելուց: Արդի ժամանակաշրջանում ինքնորոշման իրավունքի կիրառումը բարդանում է այն իրողությամբ, որ ՄԱԿ-ի անդամ ազդեցիկ պետությունները տարածքային ամբողջականության պահպանման անվան տակ ընդդիմանում են իրենց պետական սահմաններում գտնվող ժողովուրդների ազատ ինքնորոշման իրավունքին: Այսպես, օրինակ, եթե ՄԱԿ-ի Գաղութատիրության ենթարկված ժողովուրդների և երկրների անկախության մասին 1960թ. դեկտեմբերի 14-ի վերոհիշյալ հռչակագիրը հայտարարում է, թե՛ «բոլոր ժողովուրդներն ինքնորոշման խնդիրն ազատորեն վճռելու իրավունք ունեն», ապա Պետությունների միջև բարեկամական հարաբերություններին և գործունեությանը վերաբերող հարցերի մասին 1970 թ. հոկտեմբերի 24-ի ՄԱԿ-ի հռչակագիրը դրսևորում է երկու հակադիր դիրքորոշում. առաջին՝ «Բոլոր ժողովուրդները, առանց արտաքին միջամտության, իրավունք ունեն ազատորեն որոշելու իրենց քաղաքական վիճակը». երկրորդ՝ «Պետության տարածքային ամբողջականությունն ու քաղաքական անկախությունն անխախտելի են»: Նույն հռչակագիրը նաև ազդարարում է, որ «գաղութատիրությանն արագորեն պետք է վերջ տալ»⁸:

Հիմնախնդրին նման լուծում էր տալիս նաև ԽՍՀՄ վերջին սահմանադրությունը, որի 70-րդ հոդվածում սահմանված էր. «Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը միասնական միութենական բազմազգ պետություն է՝ կազմավորված սոցիալիստական Ֆեդերալիզմի սկզբունքի հիման վրա՝ ազգերի ազատ ինքնորոշման և իրավահավասար խորհրդային սոցիալիստական հանրապետությունների կամավոր միավորման հետևանքով...»: 72-րդ հոդվածը արտոնում է. «Յուրաքանչյուր միութենական հանրապետության իրավունք է վերապահվում ազատորեն դուրս գալ ԽՍՀՄ-ից»:

Սակայն 78-րդ հոդվածը սահմանափակում է այդ իրավունքը՝ պատճառաբանելով. «Միութենական հանրապետության տերիտորիան չի կարող փոփոխվել առանց նրա համաձայնության: Միութենական հանրապետությունների միջև սահմանները կարող են փոփոխվել համապատասխան հանրապետությունների փոխադարձ համաձայնությամբ, որը ենթակա է ԽՍՀ Միության հաստատմանը»:

Ինքնորոշման իրավունքի այս երկակի պահանջները շահարկում են ոչ միայն որոշ գերտերությունների կառավարող շրջանները, այլև արևմտյան որոշ քաղաքագետ-հասարակագետներ՝ պատճառաբանելով, թե որևէ ժողովրդի ինքնորոշվելու և ազգային պետություն կազմելու գաղափարն անխուսափելիորեն կհանգեցնի բացասական հետևանքների, քանի որ պետությունների սահմանները չեն համապատասխանում էթնիկական-լեզվական սահմաններին: «Այս փաստարկը, - նշում է ակադ. Յ.Գևորգյանը, - որպես վճռական կռվան բերում են թե՛ պատմաբան Ա. Թոյնքին, թե՛ քաղաքագետ Է. Յոսբաումը, թե՛ փիլիսոփա Կ. Պոպերը: Արևմտյան եվրոպայի երկրներում, նրանց

կարծիքով, «... ազգայնականության ավերիչ հետևանքները մեղմացվեցին այն պատճառով, որ այդ երկրներում ազգայնականությունը փաստորեն սրբազործում էր քաղաքական սահմանաբաժանման գոյություն ունեցող վիճակը», քանի որ 18-րդ դարի վերջին Արևմտյան Եվրոպայում ժողովուրդները կազմում էին «տարածքային միասնե գանգվածներ», որոնք էլ դառնում էին ազգային պետություններ: Բայց երբ «ազգայնականության մոլուցքը» շարժվեց դեպի Արևելք, ապա պարզ դարձավ, որ ազգայնական իդեալը տարբերվում է «ժամանակակից քարտեզագրական փաստերից»: «Եվ սա էր աղետաբերը», - եզրակացնում է Թոմյեից՝:

Ազգերի ինքնորոշման իրավունքը բնավ չի ենթադրում, թե երկրի վրա որքան ազգեր կան, այնքան էլ պետություն պետք է լինի: Սակայն մի ժողովրդի՝ մյուսների գերիշխանության վրա հիմնված հարաբերությունների վերացման խնդրում ընդդիմադիր ուժերը փորձեր են անում արդարացնելու զավթողական քաղաքականությունը, ժխտելու բռնակցված տարածքների ժողովուրդների ինքնորոշման իրավունքը՝ պատճառաբանելով, թե դա կարող է խախտել պետության միասնականությունն ու տարածքային ամբողջականությունը:

Վերջին հաշվով՝ ովքե՞ր են բարձրացնում ինքնորոշման հարցը. նրանք, որոնց պատմական հայրենիքը բռնակցվել է ուրիշ պետությունների, որտեղ ոչ միայն ոտնահարվում են նրանց ազգային արժանապատվությունն ու մարդկային իրավունքները, այլև վտանգված է նրանց գոյությունը, և կանգնած են ուժացման ու բնաջնջման վտանգի առաջ: Դրա վառ օրինակը Ադրբեջանի կազմում գտնվող Նախիջևանի հայության ճակատագիրն է:

Ժողովուրդների ինքնորոշման իրավունքը հենց Արևելքում է մարդկությունից պահանջում բռնակցված ու վտանգված ազգերի ու նրա առանձին հատվածների՝ իրենց հայրենիքում հարատևորեն ապրելու ու գոյատևելու իրավունքի պաշտպանություն: Բռնակցված ազգերի ինքնորոշումը չի խաթարում պետությունների պատմական սահմանները այն պարզ պատճառով, որ բռնակցման հետևանքով նվաճված տարածքային ոչ մի ձեռքբերում չի կարող նվաճողի համար հայրենիք ճանաչվել, իսկ ինքնորոշումը՝ տարածքային ամբողջականության խախտում:

Օրինակ, Լեռնային Ղարաբաղի պարագայում խոսքը վերաբերում է ոչ թե երկու պետությունների միջև ծագած տարածաշրջանային վեճին, այլ՝ բռնակցված և բռնակցությամբ պահվող մարզի ինքնորոշման իրավունքին և նրան, որ պետության տարածքային ամբողջականության սկզբունքը չի կարող հակասել ժողովուրդների ինքնորոշման սկզբունքին: Ժողովրդի ինքնորոշման իրավունքի հարցի նենգափոխումը սովորական տարածքային վեճով անընդունելի է և անբարո: Մինչդեռ այդ ճանապարհով է բռնակցում իրականացրած պետությունը փորձում խուսափել պատասխանատվությունից:

Ի տարբերություն պետությունների միջև հարաբերությունները կարգավորող տարածքային ամբողջականության պահպանման և սահմանների ան-

խախտելիության սկզբունքի՝ ժողովուրդների ինքնորոշման իրավունքը նախ և առաջ կարգավորում է հարաբերությունները ժողովրդի՝ որպես տարածքային իրավունքների սկզբնական կրողի, և այն պետության միջև, որի տարածքում նա գոյատևում է հանգամանքների բերումով:

Որևէ կերպ չժխտելով պետության տարածքային ամբողջականության և սահմանների անխախտելիության բուն սկզբունքը՝ միջազգային իրավունքը, որպես պետության տարածքի տիրապետման և տնօրինման հիմք, հաստատել է այդ տարածքում ապրող որոշակի էթնիկական ստվար խմբի (ժողովուրդ, ազգ)՝ ինքնորոշվելու - իր պետականությունն ինքնուրույնաբար կառուցելու իրավունքը:

Ինքնորոշման իրավունքը ենթադրում է ժողովրդի քաղաքական կարգավիճակի փոփոխման հնարավորություն, դրանով իսկ՝ նրա բնակեցրած տարածքի պետական պատկանելության փոփոխության հնարավորություն: Հենց այդ հիման վրա էլ օրինական են պետության այն սահմանների փոփոխությունները, որոնք ձևավորվել են բռնակցման հետևանքով: Բոլոր բռնակցող պետությունները պետք է հարգեն ժողովուրդների պատմական տարածքների՝ անհրաժեշտության դեպքում հետ վերադարձնելու իրավունքը:

Ինքնորոշումն ու օտարերկրյա տիրապետության վերացումը կարող են դրսևորվել տարբեր՝ ազգային պետության ստեղծման, իր ժողովրդի անկախ մասի հետ միավորման կամ վերամիավորման ձևերով:

Քանի որ ինքնորոշման իրավունքը պետությունների կողմից ընդունված է իբրև միջազգային իրավունքի պարտադիր նորմ, և քանի որ նրանցից յուրաքանչյուրը ոչ միայն ինքն է պարտավոր պահպանել ժողովուրդների ինքնորոշման իրավունքը, այլև օգնել հանուն ինքնորոշման, հանուն ազատագրման պայքարող ժողովուրդներին, ապա ակնհայտ է, որ ինքնորոշման համար պայքարող ժողովրդին աջակցելը չի կարելի դիտել որպես միջամտություն ինքնորոշման իրավունքը ժխտող պետության ներքին գործերին:

Ինքնորոշման իրավունքի անտեսումն ունի իր պատճառները: «Ի վիճակի չլինելով ժխտել ժողովուրդների ինքնորոշման իրավունքի՝ որպես միջազգային իրավունքի նորմի գոյությունը, -եզրակացնում է Յու. Բարսեղովը,- ծավալապաշտության կողմնակիցները փորձում են նրանից դուրս նետել գլխավորը՝ քաղաքական ինքնորոշումը, այսինքն՝ անջատվելու և ինքնուրույն ազգային պետություն կազմավորելու կամ նույնիսկ մեկ այլ պետության միանալու իրավունքը: Այդ նպատակով նրանք ձգտել և ներկայումս էլ ձգտում են սահմանափակել ժողովուրդների ինքնորոշման իրավունքը կամ էլ, ինչպես արդեն տեսանք, պետության տարածքային ամբողջականության միջազգային-իրավական սկզբունքը դրան հակադրելու ճանապարհով թույլ չտալ դրա իրացումը»¹⁰:

Որևէ պետությունում գոյություն ունեցող բռնատիրակազմ համակարգն ունի քաղաքական կայունության իր ընթացումները, որոնց համաձայն՝ պահանջված փոփոխությունները կամ թույլատրում է, կամ մերժում: Ակնկալվող փոփոխությունները, որոնք կարող են պատճառ դառնալ շահերի և ուժերի հաշվե-

կշռի մեջ փոփոխությունների երևան գալուն, դիտվում են իբրև կայունության սպառնալիք:

Թեև սահմանների անձեռնմխելիության սկզբունքը ստեղծված համակարգի կայունությունը պահպանելու միտում ունի, սակայն նրա կիրառության վերջին տարիների փորձը ցույց տվեց, որ զարգացումները կարող են հակառակ արդյունքի հանգեցնել: Աղբյուրները և Վրաստանը, իրենց սահմաններից ներս ինքնորոշման խնդիր ունեցող, ինքնորոշվել և դրանով իսկ անկախանալ ձգտող ժողովուրդների հիմնախնդիրն ապարդյուն փորձեցին լուծել ռազմական ճանապարհով (Ղարաբաղ, Աբխազիա, Հարավային Օսեթիա):

Միջազգային կազմակերպությունները, չկարողանալով և չցանկանալով լուծել այդ հիմնախնդիրները, ավելի արեցին այն: Արդյունքում՝ պահանջատեր ժողովուրդները, չհրաժարվելով իրենց արդարացի պահանջներից, դիմակայեցին և արտաքին որոշ օժանդակությամբ հաջողությունների հասան: Այս բոլորը ցույց է տալիս, որ սահմանների անձեռնմխելիության սկզբունքի ոչ ճկուն գործադրմամբ հին համակարգի կայունությունն ավելի վտանգվում է, քան անրապնդվում՝ դառնալով նոր արյունահեղությունների պատճառ:

Այսպիսով՝ պահանջատիրական նկրտումները միջպետական հարաբերություններում հաճախ հրահրում են պատերազմներ և ենթարկվում արտաքին միջամտության՝ վերածվելով հակադիր շահերի բախման կիզակետի: Մինչդեռ անջատողական շարժումներն ավելի քիչ միջամտության և հակադիր կողմեր ունեն: Հետևաբար, եթե պահանջատիրական քաղաքականությունն ավելի խնդրահարույց է, անջատողական դրոշի տակ երևան գալը դառնում է ավելի նպատակահարմար: Վերջին տասնամյակներին ծավալված անջատողական շարժումներն արդյունքներ արձանագրել են միայն այն դեպքում, երբ ունեցել են արտաքին վճռորոշ օժանդակություն: Անջատողական շարժումների ղեկավարությունը կառավարել կկարողանա, եթե պահանջատիրությունն անջատողական բնույթ ստանա, մինչդեռ միացումով ուղղակի մրցակցության մեջ կմտնի պահանջատեր պետության ղեկավարության հետ¹¹:

Թեև պահանջատիրական մոտեցման դեպքում ավելի համապարփակ է ներկայանում Ղարաբաղյան հիմնահարցի էությունը, սակայն դժվարանում է նրա լուծումը: Բազմապատկվում է տարածաշրջանի հիմնախնդիրներին միջամտող ուժերի թիվը, որոնք պահանջատիրության ենթակա հայապատկան հողեր ունեն իրենց սահմաններում և, հետևաբար, շահագրգռված պետք է լինեն խնդիրը փակուղի մտցնելու իրողությամբ: Տվյալ դեպքում Նախիջևանի հիմնախնդիրը, օրինակ, ներկայանում է որպես պահանջատիրություն, այսինքն՝ անջատողականություն:

Ղարաբաղյան հարցի լուծումն ինքնորոշման կամ նույնիսկ անջատողականության հարթության վրա դնելը տվյալ հիմնախնդրի լուծման համար ստեղծում է, մեր կարծիքով, առավել նպաստավոր նախապայմաններ: Այս տեսանկյունից Ղարաբաղի հարցը ճկունորեն կարող է ներկայացվել թե՛ իբրև Հայաստանի

տարածքային պահանջ, թե՛ իբրև Ղարաբաղում հայկական պետության ստեղծման պահանջ՝ նայած միջազգային իրադրության կանխատեսելի մոտեցման կամ հակազդեցության: Խնդիրն անջատվելու ձևով ներկայացնելն ունի իր հիմնավորումն ու բացատրությունը:

Միջազգային այն շրջանակները, որոնք իրենց դիրքորոշումը կառուցել են Աղբյուրների տարածքային ամբողջականության վրա, Ղարաբաղի անկախության հայտարարությունը՝ ժողովուրդների ինքնորոշման իրավունքի վերաբերյալ հիմք-հղումով, դիտում են իբրև անջատողականություն: Այս մոտեցմամբ՝ Ղարաբաղի ինքնորոշում-ինքնուրույնացումն Աղբյուրների պետական տարածքի բաժանում է դիտարկվում, իսկ հայկական պահանջատիրությունը բնորոշվում է իբրև ծավալապաշտական: Անջատողական մոդելը Ղարաբաղը գետնից է Աղբյուրների կազմում և անտեսում այդ տարածքում հայկական բնակչության դարավոր գոյությունը: Միջազգային ուժերը հետամուտ են և անթաքույց կերպով նախապատվությունը տալիս են տարածաշրջանում իրենց տնտեսական շահերին:

Ղարաբաղի ազատ ինքնորոշման հայտարարությունը հռչակվել է Խորհրդային Միության օրենքների համաձայն՝ իր պետական անկախությունը վերստանալու իրավունքի վրա և, բնականաբար, չի կարող դիտվել իբրև «ամբողջական Աղբյուրները» բաժանելուն ուղղված հակաօրինական քայլ: Այլ խոսքով՝ եթե Լեռնային Ղարաբաղն իր մերձակա հայկական հողերով Աղբյուրների մասը չէր կազմում, երբ վերջինս ընդունեց խորհրդային վարչակարգը, ապա անկախություն հայտարարելու ժամանակ Աղբյուրները և Ղարաբաղը ընթացել են յուրաքանչյուրն իրեն հարմար ճանապարհով: Այս պարագայում Աղբյուրներից անջատվելու հարց չկա, քանի որ Ղարաբաղն առանձին քաղաքական միավոր է:

Տարածքային պահանջատիրությունը Հայաստանի համար միջպետական հարցի կարող է վերածել Ղարաբաղի հիմնախնդիրը, սակայն ազատ ինքնորոշման համար պայքարող Ղարաբաղին օգնելը չի բացառում միջպետական այդ բնույթը: Գլխավոր տարբերությունն այն է, որ առաջին դեպքում Հայաստանը դառնում է հակամարտող և բանակցող կողմ, երկրորդ դեպքում՝ միջամտող, օժանդակող: Ղարաբաղյան հիմնախնդրի ինքնորոշման տարբերակի դեպքում Աղբյուրները միակողմանիորեն այն ներքին հարց չի կարող համարել:

Այստեղ կարևորն այն է, որ Ղարաբաղում նոր պետության կազմավորման սկզբունքը շատերի համար արդեն ընդունելի է: Այդ տեսակետը պաշտպանում են ինչպես շատ պետական ու քաղաքական գործիչներ, այնպես էլ քաղաքագետ գիտնականներ:

Աղբյուրները հենց սկզբից խստորեն մերժեց Ղարաբաղի հայերի ինքնորոշման իրավունքը, մերժեց նրանց՝ Աղբյուրների կազմից դուրս գալու պահանջը:

Ներկա փուլում աղբյուրական պաշտոնական պահանջը հետևյալն է՝ Աղբյուրների տարածքային ամբողջականության պահպանում, ԼՂՀ զորքերի դուրսբերում, բանակի զինաթափում և ցրում: Պետք

է չեղյալ հայտարարել ԼՂ և Հայաստանի ԳԽ 1990 թ. դեկտեմբերի 1-ի որոշումը ԼՂ և Հայաստանի միավորման մասին, նոր միայն քննարկել ԼՂ կարգավիճակի հարցը:

Վերոհիշյալ պահանջները վկայում են, որ Ադրբեջանը չի ցանկանում հաշվի նստել նոր ռազմաքաղաքական իրողությունների հետ, ուժերի նոր դասավորության հետ՝ անտեսելով ԼՂ հայ ազգաբնակչության ազգային-ազատագրական շարժման արդյունքներն ու դաժան, հաղթական պատերազմի հետևանքները, որի ընթացքում ադրբեջանական կողմը պարտություն կրեց:

ԼՂ-ն միանշանակ մերժում է հին կարգավիճակի վերականգնման ցանկացած տարբերակ: ԼՂ կառավարող շրջանները զտնուծում են, որ իրենք հաղթել են ռազմի դաշտում, և ադրբեջանական զինված ուժերը պարտություն են կրել: Փաստ, որ պետք է հաշվի առնվի ԼՂ կարգավիճակի հարցը որոշելիս, քանի որ պատմության մեջ չկա նախադեպ, որ հաղթող կողմը ենթարկվի պարտվողի կամքին: ԼՂ-ի և Ադրբեջանի միջև հարաբերություններն առնվազն պետք է հիմնված լինեն լիակատար հավասարության սկզբունքի վրա: Ուղղահայաց հարաբերությունները բացառվում են, ընդունելի են հորիզոնական հարաբերություններն իրենց տարատեսակներով:

ԼՂ հռչակումն իբրև անկախ պետություն՝ նշանակում է, որ այժմ չի դրվում Հայաստանի հետ նրա միավորման հարցը: Սա, իհարկե, ինչ-որ տեղ զիջողություն է՝ լարվածությունը թուլացնելու նպատակով: Պարզ է, որ ԼՂ-ի այդպիսի դիրքորոշումը պայմանավորված է աշխարհաքաղաքական ներկա իրավիճակով: Հայաստանը բնականաբար կհամաձայնի

այն տարբերակին, որն ընդունելի կլինի ԼՂ-ի համար: ԼՂ-ի և Հայաստանի միավորման մասին 1990 թ. դեկտեմբերի 1-ի որոշումն առայժմ չի իրագործվում՝ որոշակի քաղաքական նպատակներով: Այդ քայլով մանկրելու և բանակցելու ազատ դաշտ է թողնվում թե՛ հակամարտող կողմերի, թե՛ միջնորդների համար:

- 1 Jouve, Edmond, Op. cit. p.11.
- 2 Ջ.Կիրակոսյան, Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, Եր. 1972, էջ 410:
- 3 Տե՛ս Հ.Գևորգյան, Ազգ, ազգային պետություն, ազգային մշակույթ, Եր. 1997, էջ 6-7:
- 4 Տե՛ս Курс международного права, т. 2, М. 1989, стр. 186.
- 5 Յու. Բարսեղով, Ինքնորոշման իրավունքը ազգամիջյան պրոբլեմների դեմոկրատական լուծման հիմք է, Եր. 1990, էջ 15:
- 6 Տե՛ս նշվ. աշխ., էջ 35:
- 7 Տե՛ս նշվ. աշխ., էջ 38:
- 8 Jouve, Edmond, Op. cit. p.14.
- 9 Տե՛ս Հ.Գևորգյան, նշվ.աշխ., էջ 7-8:
- 10 Барсегов Ю. Самоопределения и территориальная целостность, М.1993, стр. 11.
- 11 Տե՛ս Charan, Naomi. "Iredentism, Separatism and Nationalism", Op. cit. p. 148.

RIGHT TO SELF-DETERMINATION AS A BASIC FOR SOLUTION OF INTRACONFLICTS

AREG GHARIBJANYAN
Research Student of YSU Politology Department

Summary

Right to self-determination is demanded from the state which is directly responsible for implementation of the right, i.e. the every nation from which the other is separated.

Under existing conditions of self-determination competent parts are both a nation tends to take advantage of the right and a state including the given nation.

Self-determination of the usurped nations doesn't break the historical borders of the states as no usurped territory can be a birth-place, native country for any usurper.

In the case of Republic of Mountainous Karabagh the problem is not in territorial conflict between two states but about the right of self-determination of the usurped region.

ПРАВО НА САМООПРЕДЕЛЕНИЕ КАК ОСНОВА РЕШЕНИЯ МЕЖНАЦИОНАЛЬНЫХ ПРОТИВОСТОЯНИЙ

АРЕГ ГАРИБДЖАНИЯ
Аспирант кафедры политологии ЕГУ

Резюме

Право на самоопределение требуется с того государства, от которого непосредственно зависит право на осуществление (реализацию), то есть с того государства, от которого отделяется самоопределяющийся народ.

Во время самоопределения сторонами правоотношений выступают: нация, которая стремится воспользоваться своим неделимым правом, и государство, в границах которого входит нация.

Самоопределение насильственно объединенных наций не портит исторические границы государств по той простой причине, что вследствие насильно приобретенные захваченные территории никак не могут быть признанными родной со стороны захватчиков.

В случае Нагорного Карабаха речь идет не о территориальном споре между двумя государствами, а о праве самоопределения насильственно объединенной и насильно удерживаемой области.

ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԻ
ԵՎ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԽԱՉԻԿ ԳԱՍՏՅԱՆ
Քաղաքական իրությունների թեկնածու

Հասարակության զարգացման արդի փուլում
Հղժվար է մատնանշել քաղաքականության
սուբյեկտների փոխհարաբերությունների, առաջա-
ցած հակասությունների ու կոնֆլիկտների կարգա-
վորման և, վերջապես, նրանց միջև համագործակ-
ցության ապահովման առավել գործուն և արդյունա-
վետ կառուցակարգ, քան բանակցություններն են, ո-
րոնք այսօր դարձել են քաղաքական կյանքի բաղ-
կացուցիչ մասը: Ամենուր՝ մասնավոր, հեռուստատե-
սությամբ, զանգվածային լրատվության զանազան
այլ միջոցներով նշվում է քաղաքականության տար-
բեր ոլորտներում տարվող բանակցությունների մա-
սին, որը, անգլիացի գիտնական Դ. Յելդի կարծիքով,
«բանակցությունները վերածում է քաղաքականու-
թյան իրականացման հիմնական միջոցի»¹:

Բնականաբար, բանակցությունները նույնպես՝
որպես քաղաքական գործունեության առանձնահա-
տուկ բնագավառ, ունեն իրենց խորքային պատճառ-
ները, հիմքերը, գործոններն ու սկզբունքները: Բա-
նակցային գործունեության իրականացման համար
անհրաժեշտ նախադրյալների շարքում հատկապես
կարևորվում է բանակցությունների իրավական հիմ-
քերի ուսումնասիրությունը: Բանն այն է, որ բանակ-
ցությունների իրավական հիմքերի անտեսումը կամ
դրանց թերազնահատումը էապես ազդում են ինչպես
բանակցային գործընթացների արդյունավետ կազ-
մակերպման, այնպես էլ դրանց արդյունքում կողմերի
ընդունած վերջնական որոշումների որակի վրա: Այդ
իսկ պատճառով քաղաքական գործընթացներին,
հատկապես՝ բանակցային, ներգրավված տարբեր
սուբյեկտներին ներկայացվող առաջնային պահանջ-
ներից է մնում իրավական հիմքերով գործունեության
իրականացումը:

Բանակցությունների տեսության նկատմամբ հե-
տաքրքրությունը, տեսական-վերլուծական բնույթ
կրող աշխատանքները մեծ թափ են ստանում հատ-
կապես Երկրորդ համաշխարհային պատերազմի ա-
վարտից հետո: Բանակցությունների հիմնահարցի ու-
սումնասիրման այդպիսի ակտիվությունը պայմանա-
վորված էր մի շարք գործոններով և հանգամանքնե-
րով, որոնցից, թերևս, ամենաէականը՝ հակամարտու-
թյունների, կոնֆլիկտային իրավիճակների, վիճահա-
րույց հարցերի կարգավորման գործուն մեխանիզմ-
ների, ընթացակարգերի մշակման և կիրառման հրա-
տապ անհրաժեշտությունն էր: Միջազգային հանրու-
թյան հիշողության մեջ տակավին պահպանվում են
Երկրորդ աշխարհամարտի արհավիրքների, դրանց
ողբերգական հետևանքների պատկերացումները, ո-
րոնք ի ցույց են դնում միջազգային հիմնախնդիրների,
սոցիալական ու ներքաղաքական կոնֆլիկտների
կարգավորման ուժային, բռնի եղանակների բոլոր
բացասական հետևանքներն ու դրանց անընդունե-
լիությունը քաղաքակրթության զարգացման արդի

պայմաններում:

Պատահական չէ, որ Երկրորդ համաշխարհայի-
նից հետո ձևավորված միջազգային կառույցներից
ՄԱԿ-ի, ապա նաև ԵԱՀԿ-ի գերխնդիրը դարձավ և այս-
օր էլ հանդիսանում է ազգերի խաղաղ գոյակցության
ու համագործակցության ապահովումը: Մասնավոր-
ապես՝ զանազան կոնֆլիկտների, վեճերի կարգա-
վորման կամ քաղաքականության տարբեր սուբյեկտ-
ների միջև համագործակցության ապահովման իրա-
վական և ոչ իրավական զանազան մեխանիզմներ
ունեն ինչպես ՄԱԿ-ը, այնպես էլ ԵԱՀԿ-ը, որոնց իրա-
վասությունների շրջանակներում նախատեսված են
հակամարտող կողմերի միջև բանակցությունների,
խորհրդատվությունների անցկացման, միջնորդա-
կան գործունեության իրականացման, կողմերի հաշ-
տեցման, արբիտրաժային, դատական միջամտու-
թյան տարբեր մեխանիզմներ և ընթացակարգեր:
Դրանցից կարևորներն են Բեռլինյան, Վիեննական,
Մոսկովյան և այլ մեխանիզմները²:

Խորհրդային Միության կազմալուծումից հետո
հետխորհրդային տարածաշրջանում հատկապես
խաղաղարար գործունեությամբ առանձնանում է
ԵԱՀԿ-ն, որն իր գործունեության վերջին տասնամ-
յակի ընթացքում աչքի է ընկնում նախկին միութենա-
կան գրեթե բոլոր հանրապետություններում (Մերձ-
դնեստրյան, Միջին Ասիայի, Հարավային Կովկասի
տարածաշրջաններում) ծագած կամ հնարավոր հա-
կամարտությունների կանխարգելման և խաղաղ
կարգավորման գործընթացներում: Իր աշխարհա-
քաղաքական ընդգրկման առումով ԵԱՀԿ-ը բացառիկ
ինստիտուցիոնալ կառույց է, որի շրջանակներում
ստեղծվել է զարգացել են եվրոպական անվտան-
գությանը սպառնացող կոնֆլիկտների կանխարգել-
ման կամ էլ դրանք կառավարելի դարձնելու համար
նախատեսված բազմաթիվ կառուցակարգեր: Օրի-
նակ՝ անտանգության ոլորտում ԵԱՀԿ շրջանակնե-
րում գործող Վիեննայի մեխանիզմի (1990) հիմնական
խնդիրը ԵԱՀԿ գոտում ռիսկի նվազեցումն է, որը գոր-
ծում է Հակամարտությունների կանխարգելման
կենտրոնի միջոցով³: Բեռլինյան մեխանիզմը կիրառ-
վել է Հարավսլավական և Ղարաբաղյան հակամար-
տությունների ժամանակ: Մասնավորապես՝ Ադրբե-
ջանը, հենվելով մի շարք երկրների ջանքերի վրա,
պահանջեց գործի դնել արտակարգ իրավի-
ճակներում խորհրդատվությունների և համագործակ-
ցության մեխանիզմը⁴: Մոսկովյան մեխանիզմը (1991)
կիրառվում է մարդու իրավունքների հետ կապված
դեպքերում, որի կիրառումը դրված է ԵԱՀԿ ժողովրդա-
վարական ինստիտուտների և մարդու իրավունքների
բյուրոյի վրա⁵:

Նմանատիպ մեխանիզմների ստեղծումը իր մեջ
ներառում է կոնֆլիկտների կարգավորման և քաղա-
քականության տարբեր սուբյեկտների միջև համա-

գործակցության ապահովման ինչպես իրավական մեխանիզմների ու ընթացակարգերի մշակումը, այնպես էլ օրինակաբանության շրջանակներում ոչ իրավական ձևերի ու մեթոդների ստեղծումը: Կոնֆլիկտների կարգավորման ոչ իրավական մեխանիզմների գոյության անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ ոչ բոլոր կոնֆլիկտները կամ վեճերն է հնարավոր լուծել գործող իրավական նորմերի ու ընթացակարգերի շրջանակներում. երբեմն հակասություններ են առաջանում հենց գործող իրավական նորմերի կապակցությամբ, երբ կոնֆլիկտի հիմքում ընկած իրավական նորմերն ու պարտավորությունները չեն համապատասխանում կոնֆլիկտի կողմերից որևէ մեկի շահերին, այսինքն՝ հակասություն է առաջանում՝ կապված գործող նորմերի և կանոնների հետ: Բացի այդ՝ հնարավոր է, որ կոնֆլիկտների դատական կարգով կարգավորման ժամանակ դատական որոշումն ամբողջությամբ բավարարի կողմերից որևէ մեկի շահերը միայն, իսկ մյուսին՝ ոչ: Բանակցությունների ժամանակ պետք է գտնել (և դա է, մեր կարծիքով, բանակցությունների հիմնական գործառնության նպատակը) հակամարտող կամ վիճաբանող կողմերի միջև շահերի համաձայնեցման ու բավարարման ավելի ճկուն, փոխընդունելի լուծումներ: Դատական որոշումները պարտադիր են կատարման բոլոր կողմերի համար և, որպես կանոն, չեն փոխում կողմերի միջև հարաբերությունների բնույթը. դրանք կարող են մնալ կոնֆլիկտային՝ պահպանելով նոր կոնֆլիկտի առաջացման մեծ հավանականություն: Մասնավորապես Արևմուտքի շատ երկրներում քաղաքացիական իրավունքին առնչվող խնդիրները, չնայած այդ երկրների օրենսդրության բավարար մշակվածությանը, շատ հաճախ լուծվում են բանակցությունների ճանապարհով, և միայն այն դեպքում, երբ կողմերը չեն զալիս համաձայնության, դիմում են դատարան: ԱՄՆ-ում նման հայցերը կազմում են 90-95%-ը⁶: Սակայն կոնֆլիկտների կարգավորման իրավական մեխանիզմների որոշ սահմանափակվածությունն ամենևին չի նվազեցնում նրանց դերը բանակցային գործընթացներում: Միաժամանակ դա չի նշանակում, թե բանակցությունները (հատկապես՝ քաղաքական) զուրկ են իրավական հիմքերից: Ի վերջո, քաղաքական բանակցությունների արդյունքում կնքված յուրաքանչյուր համաձայնագիր կամ պայմանագիր պետք է ունենա նաև իրավական ձևակերպում, հանդիսանա իրավաբանական փաստաթուղթ, որում ամրագրված լինեն հարցերի կարգավորման համար անհրաժեշտ իրավական նորմեր:

Քաղաքական բանակցությունների իրավական հիմքերը, բանակցային որոշումների՝ պայմանագրերի կամ համաձայնագրերի իրավական առումով ձևակերպումները իրավամբ շատ կարևոր են, հակառակ դեպքում ձեռք բերված պայմանավորվածությունների ու պարտավորությունների կատարումը կողմերը կարող են մեկնաբանել յուրովի՝ վտանգելով դրանց իրականացումը:

Կոնֆլիկտների՝ բանակցային եղանակներով կարգավորման ժամանակ բանակցությունների իրավական հիմքերի, մտեցումների, ձևակերպումների կարևորությունն ու առաջնայնությունն առավել ցայ-

տուն է դրսևորվում Ղարաբաղյան հակամարտության կարգավորման բանակցային գործընթացի համատեքստում:

Ղարաբաղյան հակամարտությունը երկար պատմություն ունի, ժամանակային առումով է՛լ ավելի երկար է Արցախի հիմնախնդիրը: Սույն պարագայում նպատակ չունենալով մանրակրկիտ անդրադառնալ Ղարաբաղյան հակամարտության առաջացման ակունքներին՝ նշենք միայն, որ հակամարտության խաղաղ կարգավորմանն ուղղված ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում տարվող բազմամյա բանակցությունների առաջնային խնդիրներից մեկն է խաղաղ կարգավորման իրավական հիմքերի ու շրջանակների ճշգրտումը: Չնայած հայտարարություններին ու կարծիքներին, որ անընդհատ հնչում են ինչպես Մինսկի խմբի համաձայնագրերի, այնպես էլ Յալթայի և Ադրբեյջանի քաղաքական շրջանակներում առ այն, թե Ղարաբաղյան հակամարտությունը պետք է կարգավորվի բացառապես քաղաքական ճանապարհով, այն ամենևին չի կարող անտեսել կամ հաշվի չառնել Լեռնային Ղարաբաղի հակամարտության արժեքային, էթնոմշակութային, սոցիալական, իրավական, քաղաքական հիմքերն ու գործոնները: Այս կապակցությամբ պրոֆեսոր Ա. Մանասյանը գտնում է, որ ԽՍՀՄ կազմալուծման գործընթացը տեղի ունեցավ գործող իրավական դաշտում, որի արդյունքում որոշակիացվեցին հետխորհրդային տարածաշրջանում կոնֆլիկտների կարգավորման ու լուծման իրավական մոտեցումներն ու շրջանակները⁷: «Եվ, որքան էլ մեզ վստահեցնեն, թե Ղարաբաղյան կարգավորումը քաղաքական բնույթ է կրում, ամենար և չտեսնել ակնհայտը. ԵԱՀԿ «ստվերային իրավական փաթեթի» բոլոր իրավական սկզբունքները... վերցված են միևնույն «բանկից», որի անունն է՝ ԽՍՀՄ իրավաքաղաքական ժառանգություն»⁸:

Կոնֆլիկտների քաղաքական կարգավորումը նշանակում է հակամարտող կողմերի պատրաստակամությունը բացառապես խաղաղ ճանապարհով, քաղաքական երկխոսության, բանակցությունների միջոցով հիմնահարցերի համատեղ քննարկման և ընդհանուր հայտարարի գալու, փոխադարձ ընդունելի որոշումների կայացման ճանապարհով խնդիրների լուծումներ գտնելու ուղղությամբ: Ինչպես նշում է Մ. Լեբեդևան, «Ի տարբերություն միակողմանի գործողությունների հակվածության՝ այդ ճանապարհը (այսինքն՝ քաղաքական կարգավորումը՝ Խ.Գ.) նշանակում է հետևյալը՝ մասնակիցները ելնում են նրանից, որ գոյություն ունեցող հակասությունները պետք է քննարկվեն, որի արդյունքում պետք է գտնվի հիմնախնդրի լուծումը: Այդպիսին է կոնֆլիկտների քաղաքական կարգավորման ճանապարհը, որը ենթադրում է հակամարտող կողմերի միջև ուղղակի կամ միջնորդների մասնակցությամբ բանակցությունների վարում»⁹: Այսինքն՝ Ղարաբաղյան հակամարտության քաղաքական կարգավորումը որպես իրավական կարգավորման այլընտրանք ներկայացնելու փորձերն արդարացված չեն: Օրինակ, պրոֆեսոր Վ. Թուրանյանը առանձնացնում է նման հիմնահարցերի իրավական, իրավաքաղաքական և քաղաքական լուծման ձևերը, որոնք, սակայն, պետք է դիտարկել ու զննահատել իրենց կոնկրետ կապերի մեջ՝ խստորեն

հաշվի առնելով իրավունքի և քաղաքականության իրական առնչությունները՝ իրենց դրսևորման առանձնահատկություններով¹⁰:

Նախ՝ Ղարաբաղյան հակամարտության վերջնական կարգավորումը պետք է հիմնված լինի միջազգային իրավունքի գործող սկզբունքների ու նորմերի վրա: Քաղաքական կարգավորումից դուրս չի կարող մնալ բանակցությունների առանցքային՝ Լեռնային Ղարաբաղի վերջնական իրավական և քաղաքական կարգավիճակի ճշգրտման ու լուծման հարցը: Վերջապես՝ յուրաքանչյուր քաղաքական համաձայնագիր կամ պայմանագիր, որը կվերաբերի Ղարաբաղյան խնդրի կարգավորմանը, պետք է ամրագրվի իրավական փաստաթղթերում, ունենա հստակ իրավական ձևակերպումներ: Քաղաքական բանակցությունների գործընթացի նման չափորոշիչների առկայությունն է հիմք տալիս հունգար դիվանագետ Յ. Ներգեշին բանակցությունները դիտարկելու որպես իրավական ակտեր: «Փորձը ցույց է տալիս, - նշում է նա, - որ նույնիսկ իշխանության դրսևորման ամենակոշտ ձևում՝ պատերազմում, գործում են իրավունքն ու նրա կողմից որոշարկված մարմինները, իսկ ամենախաղաղ, մարդկային ըմբռնումով կազմված իրավական ակտերում առկա է ուժը, իշխանությունը, քաղաքականությունը: Դրանից հետևում է, որ բանակցությունները, իսկ առավել չափով՝ բանակցային համաձայնագրերը իրավական ակտեր են»¹¹:

Թե որքանով են բանակցությունները համարվում իրավական ակտեր, միանշանակորեն հստակ չէ, քանի որ, այնուամենայնիվ, բանակցությունների անհրաժեշտությունը մեծամասամբ զգացվում է այն ժամանակ, երբ հասարակության մեջ չկան կամ չեն գործում վարքագծի հստակ կանոնակարգված մոդելները և օրենսդրությամբ նախատեսված իրավական նորմերն ու ընթացակարգերը:

Վերը նշված օրինակները ևս մեկ անգամ ապացուցում են, որ քաղաքական բանակցությունների իրավական հիմքերի անտեսումը կամ դրանց թերազնահատումն էապես ազդում են ինչպես բանակցային գործընթացների արդյունավետ կազմակերպման, այնպես էլ բանակցությունների արդյունքում կողմերի ընդունած վերջնական որոշումների որակի վրա: Այդ իսկ պատճառով բանակցային գործընթացներին ներգրավված քաղաքական տարբեր սուբյեկտներին ներկայացվող առաջնային պահանջներից է մնում իրավական հիմքերով գործունեության իրականացումը:

Ընդհանրապես, իրավական հիմքով պետության գործունեության և քաղաքակիրթ հիմունքներով հասարակական կյանքի կազմակերպման, քաղաքական տարբեր սուբյեկտների շահերի ու պահանջումների համաձայնեցման խնդիրները նորանկախ երկրներում, մասնավորապես Հայաստանի Հանրապետությունում, այսօր էլ մնում են իրավական պետության ստեղծման կարևոր նպատակներից մեկը:

Բանակցային գործունեության իրականացման, դրանց վարման, ընդհատված բանակցությունների վերսկսման համար շատ հաճախ բանակցային սուբյեկտներն առաջ են քաշում զանազան սկզբունքներ, որոնց հիման վրա կողմերից յուրաքանչյուրը փորձում է ձևավորել վիճահարույց խնդրի նկատմամբ սեփական դիրքորոշումներն ու մոտեցումները: Քաղաքա-

կան բանակցությունների ժամանակ կողմերի ներկայացրած փաստարկներն ու տեսակետները, մոտեցումներն ու դիրքորոշումները, որպես կանոն, հիմնված են լինում որևէ սկզբունքի վրա: Գրեթե յուրաքանչյուր բանակցություն առաջին հերթին բանակցության սուբյեկտների կողմից հռչակված սկզբունքների պայթյուր է: Այս առումով և՛ բանակցությունների մասնակիցների, և՛ բանակցային գործընթացներն ուսումնասիրողների համար նախ անհրաժեշտ է պարզել, թե ո՞ր սկզբունքները պետք է դրվեն բանակցությունների հիմքում, և ու՞մ շահերն են դրանք արտահայտում: Պատահական չէ, որ Ռ. Ֆիշերն ու Ռ. Յուրին բանակցությունների տեսակներից առանձնացնում են հատկապես «սկզբունքային բանակցությունները»:

Ժամանակակից միջազգային իրավունքը ճանաչում է մի շարք հիմնական սկզբունքներ, որոնք գերակայող են պետությունների հարաբերությունները կարգավորելու և նրանց միջև խաղաղ կարող են հանդես բերելու ապահովելու ժամանակ: Դրանց մի մասը շարադրված է ՄԱԿ-ի կանոնադրության մեջ, ԵԱՀԿ ՅԵՄ-ի կողմից վերջնական արձանագրության և այլ միջազգային իրավական փաստաթղթերում: Որպես բանակցությունների սկզբունքներ կարող են հանդես գալ միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչում գտած և տարբեր միջազգային իրավական փաստաթղթերում ամրագրված զանազան սկզբունքներ: Այս կապակցությամբ պրոֆեսոր Վ. Թունանյանը միջազգային քաղաքականության սկզբունքները բաժանում է երկու խմբի՝ նկատի ունենալով դրանց բնույթը և ընդհանրության մակարդակը¹²: Ըստ նրա՝ սկզբունքների մի մասը վերաբերում է միջազգային քաղաքականության սուբյեկտների կարգավիճակի և գործունեության տարբեր կողմերին, որի մեջ մտնում են պետությունների ինքնիշխանության, հաստատված հասարակական-քաղաքական կարգի ճանաչման, տարածքային ամբողջականության հարգման, սահմանների անձեռնմխելիության, պետությունների ներքին գործերին չմիջամտելու, միջազգային իրավունքի նորմերն ու պարտավորությունները ինքնական կատարելու, այլ պետությունների և երկրների հետ փոխհարաբերություններում հիմունքներով համագործակցելու սկզբունքները և այլն:

Մյուս խմբի սկզբունքներն ավելի ընդհանրական են և հիմնականում վերաբերում են միջազգային քաղաքականության բնույթի, որոշումների կենսագործման հիմունքների և կառուցակարգերի հարցերին: Այդպիսիներից են միջազգային խաղաղության և անվտանգության ապահովման, իրավահավասարության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության, ժողովուրդների և ազգերի իրավահավասար և ազատ ինքնորոշման, քաղաքականության սուբյեկտների միջև տարածայնությունները, հակասություններն ու կոնֆլիկտները խաղաղ ճանապարհներով լուծման, համագործակցության ընդլայնման և խորացման, համերկրային հիմնահարցերի համատեղ ջանքերով լուծման, միջազգային քաղաքականության մարդասիրացման սկզբունքները և այլն¹³: Եթե հետևելու լինենք միջազգային քաղաքականության և իրավունքի սկզբունքների նման դասակարգմանը, ապա ակներև է և՛ ընդհանրության մակարդակով, և՛ արժեքային առումով երկրորդ խմբի

սկզբունքների գերակայությունն ու առաջնայնությունն առաջինի նկատմամբ: Սակայն առայժմ դեռևս չկա միջազգային այնպիսի փաստաթուղթ, որը սպառնիչ կերպով շարադրեր միջազգային իրավունքի զլխավոր կամ հիմնարար սկզբունքները:

Առաջին կարգի սկզբունքները, ինչ խոսք, ունեն իրենց որոշակի կարգավորիչ դերը միջազգային հարաբերությունների և քաղաքականության կազմակերպման առումով: Սակայն անժխտելի է նաև այն փաստը, որ ժամանակակից տարածաշրջանային կոնֆլիկտների մեծ մասը տեղի է ունենում հենց այդ սկզբունքների գործառնության շրջանակներում: Սկզբունքները սահմանվում են մարդկանց կողմից՝ ելնելով պատմական այս կամ այն ժամանակաշրջանի կոնկրետ պահանջներից և հանգամանքներից, հետևաբար, կախված իրավիճակային փոփոխություններից, նրանք նույնպես կարող են փոփոխվել: Չի՞ նշանակում դա, արդյոք, որ որոշ սկզբունքներ աստիճանաբար դադարում են կատարել իրենց հիմնական գործառնությունը, որ աշխարհը գտնվում է փոխակերպման մի նոր փուլում, որտեղ քաղաքականության գլոբալացումը թելադրում է նոր իրողություններ և համարժեք արժանաքներ այդ իրողությունների նկատմամբ: Բացի այդ՝ համընդհանուր նշանակության սկզբունքների դերի ակտիվացման հետ մեկտեղ կարելի է նկատել որոշ սկզբունքների արդիականության նվազում: Ինչ վերաբերում է այդ սկզբունքներից մի քանիսի նշանակությանը, ապա այդ առումով՝ կոնկրետ տարածքային ամբողջականության պահպանման և ազգերի ազատ ինքնորոշման սկզբունքների վերաբերյալ, արժեքավոր են պրոֆեսոր Ա. Մանասյանի տեսակետները: Մասնավորապես, հեղինակը գտնում է, որ նախկին ԽՍՀՄ կազմալուծման՝ ընթացքում միջուկային զորքեր տեղաբաշխման արդյունքում, ինչպիսին ԽՍՀՄ-ն էր, միջազգային հանրության առջև ծառայած գերխնդիր էր դարձրել աշխարհում միջուկային անվտանգության ապահովումը, որի իրականացմանն էլ ուղղված էին խոշոր տերությունների քաղաքական, դիվանագիտական, քարոզչական ողջ կարողություններն ու հնարավորությունները¹⁴: Այս հանգամանքով էր պայմանավորված միջազգային հանրության կողմից նորակախ պետությունների ճանաչման սկզբունքի ընտրությունը: Որպես իրավական հիմք հանդիսացավ միջազգային իրավունքի նորմերից տարածքային ամբողջականության պահպանման և սահմանների անխախտելիության սկզբունքը: Պետք է նշել, որ Ռուսաստանի համար ևս այդ սկզբունքի հռչակումը և առաջնայնությունը տվյալ սոցիալ-քաղաքական իրավիճակում ձեռնառու էր, քանի որ այդ ժամանակ բավականին մեծ էր Ռուսաստանի դաշնային կառուցվածքի մասնատման վտանգը: Փաստորեն տարածքային ամբողջականության պահպանման սկզբունքը միակ իրավական հիմքն էր, որի շրջանակներում հնարավոր էր իրականացնել ԽՍՀՄ կազմալուծման՝ համեմատաբար խաղաղ և միջուկ-

կային սպառնալիքի տեսանկյունից անվտանգ գործընթացը: Միաժամանակ Ա. Մանասյանը կարծում է, որ Ղարաբաղյան հակամարտության կարգավորման ժամանակ տարածքային ամբողջականության պահպանման սկզբունքի կիրառումը զուրկ է որևէ հիմքերից, քանի որ երբ 1992 թ. հռչակվեց Ադրբեջանի նորանկախ Հանրապետությունը, Լեռնային Ղարաբաղը օրինական կերպով և այն ժամանակ գործող բոլոր իրավական նորմերին համապատասխան դուրս էր եկել Ադրբեջանական ԽՍՀ կազմից¹⁵: Բացի այդ, եթե հարցին մոտենանք արժեքային առումով, ապա միանգամայն պարզ է, որ միջազգային իրավունքի ոչ բոլոր սկզբունքներն են գտնվում արժեքային միևնույն հարթության վրա. անվիճելի է մարդու իրավունքների հարգման, իրավահավասարության, ժողովուրդների ազատ կամքի արտահայտման և ինքնորոշման սկզբունքների առաջնայնությունը տարածքային ամբողջականության սկզբունքի նկատմամբ և՛ համամարդկային արժեքների, և՛ ժողովրդավարական արժեքների տեսանկյունից: Ինքնորոշման իրավունքի առաջնայնության մասին է խոսում նաև Յու. Բարսեղովը, նշելով, որ «...փոխզիջողական լուծումը հնարավոր է միայն ինքնորոշման սկզբունքի հիման վրա և, հետևաբար, ենթադրում է խորհրդային սահմանադրության երկու հոդվածների միջև այնպիսի հարաբերակցության ճանաչման անհրաժեշտություն, որն սկզբունքորեն այլ բան լինել չի կարող, քան միջազգային իրավունքով սահմանված ինքնորոշման սկզբունքի առաջնայնությունը»¹⁶:

Բացի վերը նշված միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքներից՝ որպես բանակցությունների հիմք կարող են լինել այլ սկզբունքներ ևս: Ամերիկացի հեղինակներ Ջ. Ռուբինն ու Ջ. Սալակյուզը նշում են, որ գրեթե յուրաքանչյուր բանակցությունում կողմերի դիրքորոշումները հիմնվում են այս կամ այն սկզբունքի վրա, որոնք շատ հաճախ չեն համընկնում¹⁷: Մասնավորապես, ֆինանսական պարտավորությունների մարմանն ուղղված Հարավային և Հյուսիսային երկրների միջև տարվող բանակցությունների ժամանակ, ինչպես նշում են նրանք, հարուստ երկրներն իրենց դիրքորոշումները աներկմտորեն կառուցում են երկու սկզբունքների՝ պայմանագրերի անվերապահ կատարման (pacta sunt servanda) և միջազգային բանկային համակարգի առողջ հիմքերի վրա: Հարավի երկրները դրա փոխարեն առաջ են քաշում փոփոխված հանգամանքների (rebus sic stantibus) և միջազգային տնտեսական հավասար հարաբերությունների հաստատման սկզբունքները¹⁸:

Գրեթե բոլոր բանակցությունների համար հատկանշական է այս կամ այն սկզբունքների առաջնությունը և դրանց հիման վրա սեփական դիրքորոշումների ձևակերպումը: Շատ հաճախ բանակցային դիրքորոշումները ձևակերպվում են ոչ թե մեկ, այլ մի քանի սկզբունքների հիման վրա՝ դրանով իսկ առավել չափով հիմնավոր դարձնելով բանակցային դիրքորոշումները՝ անմիջական, ուղղակի բանակցություններից առաջ:

Այսպիսով՝ կարելի է նշել, որ բանակցություններում կողմերից որևէ մեկի հաջողությունը մեծապես կախված է հենց այն հանգամանքից, թե որքան խոր ու մանրակրկիտ են վերլուծության ենթարկված բա-

* Հեղինակը ԽՍՀՄ տրոհման գործընթացը նկարագրելիս օգտագործում է «կազմալուծում» եզրույթը՝ «փլուզման» փոխարեն, դրանով իսկ ընդգծելով, որ այդ գործընթացը կազմակերպված բնույթ էր կրում, մինչդեռ փլուզումը ենթադրում է տարերային գործընթաց:

նակցությունների հիմքերը, կողմերի՝ բանակցային գործունեության դիմելու իրական շարժառիթներն ու դրդապատճառները, բանակցությունների սկզբունքները: Դրանց համալիր ուսումնասիրումն ու վերլուծությունը յուրաքանչյուր կոնկրետ բանակցություններից առաջ մեծապես կօգնի բացահայտել բանակցային կողմերի հետապնդած իրական շահերն ու նպատակները, մերձեցնել հակամարտող կողմերի դիրքորոշումներն ու մոտեցումները, բարձրացնել հնարավոր բանակցային որոշումների ընդունման որակն ու արդյունավետությունը:

Նորանկախ երկրներում ընդհանրապես, Հայաստանի Հանրապետությունում մասնավորապես ժողովրդավարական հասարակության ձևավորման և իրավական պետության կերտման ճանապարհին առաջնային նշանակություն են ձեռք բերում բանակցությունները՝ որպես պետության բնականոն գործունեության ապահովման, քաղաքակիրթ հիմունքներով հասարակական կյանքի կազմակերպման, քաղաքականության տարբեր սուբյեկտների շահերի ու պահանջներին համաձայնեցման առավել արդյունավետ և քաղաքակիրթ միջոց:

- ¹ Տե՛ս Իսրաելյան Բ.Ն., Լեբեդեա Մ.,Մ. Переговоры - искусство для всех.// Международная жизнь. 1991/ 5, с. 68.
- ² Տե՛ս Яснокорский Ю.А. Политико-правовые механизмы пред-

отращения и урегулирования конфликтов в рамках ОБСЕ.// "ПОЛИС". 1999/5, с.164-168.

- ³ Տե՛ս Этнические и региональные конфликты в Евразии.// Под общ. ред. Коппитерс Б. и др. М., 1997, с. 99.
- ⁴ Տե՛ս նույն տեղում:
- ⁵ Տե՛ս նույն տեղում:
- ⁶ Տե՛ս Лебедева М.М. Вам предстоит переговоры. М., 1993, с. 10.
- ⁷ Տե՛ս Манасян А.С. Карабахский конфликт: ракурсы правового подхода. Ер., 1998, с. 36.
- ⁸ Նույն տեղում, էջ 36:
- ⁹ Лебедева М.М. Политическое урегулирование конфликтов. М., 1999. с. 39.
- ¹⁰ Տե՛ս Թումանյան Վ.Ս. Իրավունքը և քաղաքականությունը, // Քաղաքականություն և իրավունք: (Գիտաժողովի նյութեր, 9-10 ապրիլի, 1999թ.), Եր., 2000թ., էջ 19:
- ¹¹ Нергеш Я. Поле битвы-стол переговоров. М., 1989, с. 59.
- ¹² Տե՛ս Քաղաքագիտության մերաժողով (Բ.Ս. Բալյանի խմբ.), Եր., 1996թ., էջ 241:
- ¹³ Տե՛ս նույն տեղում:
- ¹⁴ Տե՛ս Манасян А.С. Карабахский конфликт: ракурсы правового подхода., Ерван, 1998. с 35.
- ¹⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 37:
- ¹⁶ Բարսեղով Յու., Ինքնորոշման իրավունքը ազգամիջյան պորբլեմների դեմոկրատական լուծման հիմքն է, Եր., 1990թ., էջ 57:
- ¹⁷ Տե՛ս Рубин Дж., Салакиоз Дж. Фактор силы в международных переговорах.// Международная жизнь. 1990/3, с 31.
- ¹⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 31:

ABOUT THE LEGAL FOUNDATIONS AND CONCEPTS OF NEGOTIATIONS

KNACHIK GALSTYAN
Candidate of Politilogy

Summary

According the democratization of the society, negotiations, as a type of political activity, become one of the most effective and civilized means of states' politics implementation, solution or regulation of conflicts and contradictions between diverse subjects of social interactions, and also regulations of collaboration between them.

With the rising of the negotiations' role in the contemporary society, the interest towards the theory of negotiations is stipulated.

Particularly among the diverse aspects of analyze of the negotiation process the legal foundations survey and basic principles of negotiation activity occupies an important place, ignoring and underestimation of which may considerably affect as on the process of negotiations so on the quality of the accepted decisions in the process of negotiations.

That is why, particularly in the transforming societies one of the most important demands presented to the diverse subjects of the negotiation process is the implementation of activity on the legal foundation in the framework of the functioning norms and basic principles of the international right.

О ПРАВОВЫХ ОСНОВАХ И ПРИНЦИПАХ ПЕРЕГОВОРОВ

ХАЧИК ГАЛСТЯН
Кандидат политических наук

Резюме

По мере демократизации общества переговоры как вид политической деятельности становятся одним из самых эффективных и цивилизованных средств осуществления политики государств, разрешения или урегулирования конфликтов и противоречий между различными субъектами социального взаимодействия, а также налаживания сотрудничества между ними.

Повышением роли переговоров в современном обществе обуславливается интерес к теории переговоров. В частности, среди различных аспектов анализа переговорного процесса важное место занимает исследование правовых основ и основных принципов переговорной деятельности, игнорирование или недооценка которых может существенным образом повлиять как на ход переговоров, так и на качество принимаемых в ходе переговоров совместных решений.

И поэтому, особенно в трансформирующихся обществах, одним из важных требований предьявляемых различным субъектам переговорного процесса, является осуществление деятельности на правовой основе, в рамках действующих правовых норм и основных принципов международного права.

Հատկանշական է, որ դեռևս 80-ական թվականներին հրատարակված բառարաններում բացակայում էին տեղեկատվական հասարակություն և գլոբալիզացիա հասկացությունները: Մասնավորապես, գլոբալիզացիա արտահայտությունն սկսել է լայնորեն կիրառվել Սառը պատերազմի ավարտից հետո և ներկայումս ունի բազմաթիվ, հաճախ իրարամերժ բացատրություններ: Բայց գլոբալիզացիոն գործընթացները բոլոր պարագաներում, անկախ իրենց մեկնություններից, ունեն մեկ օբյեկտիվ բաղադրիչ, ըստ որի՝ երկրագունդը մի համակարգ է, որտեղ հեռավորությունները կրճատված են հաղորդակցության էլեկտրոնային միջոցներով: Այսինքն՝ գլոբալիզացիա հասկացության հիմքում դրված են նաև տեղեկատվական տեխնոլոգիաները և, բնականաբար, տեղեկատվությունը:

Միևնույն ժամանակ տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումն իր հերթին ենթադրում է փոփոխություններ հասարակության սոցիալական, գաղափարական դաշտում, նրա կացութաձևում: Ելնելով այդ չափանիշներից՝ ներկայիս հասարակությունը, համաձայն որոշ հասարակագետների, ընդունված է անվանել տեղեկատվական:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Տեղեկատվական հասարակություն հասկացությունը սկսել է ձևավորվել անցյալ դարի 60-ական թվականների վերջից: Իսկ տեղեկատվական հասարակություն դարձվածքն առաջին անգամ գործածել է Տոկիոյի Տեխնոլոգիական համալսարանի պրոֆեսոր Յու.Ջայաշին՝ ճապոնիայի կառավարության կողմից պատվիրված հետազոտություններ կատարելու ժամանակ: Հետազոտությունների նպատակն էր ուսումնասիրել նոր զարգացող համակարգչային տեխնոլոգիաների ազդեցությունը հասարակության վրա:

Այդ հաշվետվություններում տեղեկատվական հասարակությունը բնութագրվում էր որպես մի հասարակություն, որտեղ համակարգչայնացումը հնարավորություն էր ընձեռում մարդկանց օգտվել տեղեկատվության հուսալի աղբյուրներից, նրանց ձեռքազատել անենօրյա տաղտուկ աշխատանքներից, ապահովել արտադրության ավտոմատացման բարձր անկարգակ: Ենթադրվում էր, որ այդ պարագաներում պետք է փոխվի նաև արտադրական պրոցեսը. նրա արգասիքը՝ ապրանքը, պետք է դառնա «տեղեկատվապես ավելի ծավալուն»: Այդ բառի տակ հասկացվում է, որ պետք է նրա արժեքի, գնագոյացման մեջ աճեն նորարարության, դիզայնի և մարքեթինգի մասնաբաժինները:

Համաձայն այս նոր գաղափարախոսության հիմնադիրներից մեկի՝ Մասուդայի՝ «հասարակության զարգացման շարժիչ ուժն է լինելու ոչ թե նյութական, այլ տեղեկատվական աշխատանքի արդյունքի՝ ապրանքի ստեղծումը»: Ավելին, «տեղեկատվական հա-

սարակություն» հասկացության հիմնադիր հայրերին սկզբնական փուլում թվում էր, թե նման հասարակությունում չեն լինելու դասակարգեր և հակասություններ, սակայն այդ գաղափարները բավական ուսուպիստական բնույթ ունեին: Ըստ նրանց մտահղացումների՝ այդպիսի հասարակությունը պետք է լինի համերաշխության հասարակություն՝ ոչ մեծ կառավարությունով և փոքր պետական ապարատով:

Մասուդան էր, որ, ի տարբերություն ինդուստրիալ հասարակության, որի բնորոշիչ արժեքն ապրանքների սպառումն է, տեղեկատվական հասարակության բնորոշիչ արժեք է համարում ժամանակը: Այդ իսկ պատճառով այդպիսի հասարակությունում խիստ աճում է կուլտուրական ժամանցի նշանակությունը: Տեղեկատվական հասարակության ճապոնական տարբերակը մշակվում էր առաջին հերթին ճապոնիայի տնտեսական խնդիրները լուծելու համար: Այս հանգամանքը պայմանավորում էր այդ գաղափարախոսության սահմանափակ, կիրառական բնույթը:

Սակայն 70-ական թվականներին տեղի է ունենում միաժամանակ ծնվող և զարգացող երկու գաղափարախոսությունների՝ տեղեկատվական հասարակության և հետինդուստրիալիզմի կոնվերգենցիան՝ զուգամետությունը: Հետինդուստրիալիզմի գաղափարն առաջ է բաշվել Դանիել Բելլի կողմից: Նրա՝ 1973թ. հրատարակած «Հետինդուստրիալ հասարակության հարձակումը. սոցիալական կանխագուշակման փորձ»² աշխատությունում առավել լայնորեն ներկայացված է հետինդուստրիալիզմի հայեցակարգը:

Դ. Բելլը, մարդկային հասարակության պատմությունը բաժանելով երեք մասի՝ ագրարային, ինդուստրիալ և հետինդուստրիալ, հիմնականում հենվում է ինդուստրիալ հասարակության տեսությունների և բնութագրիչներին: Նա մեկնաբանում է ինդուստրիալ հասարակությունը որպես մի հասարակություն, որը կազմակերպվում է ապրանքարտադրության և արտադրամիջոցների շուրջը: Դ. Բելլը շեշտում է, որ ինդուստրիալ հասարակությունն ընդգրկում է տարբեր երկրներ, որոնք կարող են հակադիր քաղաքական համակարգ ունենալ, տարբեր անցյալ ու ներկա: Հենց հասարակության ինդուստրիալ բնույթն է, որ կանխորոշում է նրա սոցիալական կառուցվածքը՝ ներառյալ մասնագիտությունների համակարգը և սոցիալական շերտերը:

Սոցիալական կառուցվածքը, ըստ Բելլի, «վերլուծաբանորեն անջատվում է» հասարակության քաղաքական և մշակութային չափումներից, նրա հարթություններից: Համաձայն Բելլի՝ 20-րդ դարի կեսերին սոցիալական կառուցվածքում տեղի ունեցող փոփոխությունները վկայում են, որ ինդուստրիալ հասարակությունն էվոլյուցիոն եղանակով ձգտում է հետինդուստրիալի, որը և պետք է դառնա որոշիչ սոցիալական ձև 21-րդ դարի համար, առաջին հերթին՝ ԱՄՆ-ում, ճապոնիայում, Ռուսաստանում և Արևմտյան Եվրոպայում:

Յետինդուստրիալ փուլին բնորոշ է անցումը ապրանքարտադրությունից ծառայությունների արտադրություն, և այդ ծառայություններն առաջին հերթին կապված են առողջապահության, կրթության, գիտական հետազոտությունների և կառավարման հետ: Յետինդուստրիալ հասարակության այդ բնութագիրը սերտորեն կապված է մասնագիտությունների բաշխման հետ: Նկատվում է նաև մտավորականության, պրոֆեսիոնալների և «տեխնիկական խավի» աճ: Այդպիսի հասարակությունում կենտրոնական, գլխավոր տեղ է գրավում առկա գիտելիքների բնույթը:

Եթե ինդուստրիալ հասարակությունում մարդիկ և մեքենաները կազմակերպվում և համախմբվում են ապրանքների արտադրելու համար, ապա հետինդուստրիալ հասարակությունում կենտրոնական տեղ են գրավում գիտելիքները, այն է՝ տեսական բնույթի: «Իհարկե, գիտելիքներն անհրաժեշտ են ցանկացած հասարակության համար,- գրում է Բելլը,- բայց հետինդուստրիալ հասարակության բնորոշ գիծն է հենց գիտելիքների բնույթը»:

Որոշումների ընդունման և փոփոխությունների ուղղորդման համար կարևորագույն նշանակություն է ծնեք բերում տեսական գիտելիքների կենտրոնական դերը, ինչը ենթադրում է տեսության առաջնությունն էմպիրիզմի նկատմամբ: Ցանկացած ժամանակակից հասարակություն ապրում է նորարարությունների շնորհիվ, փորձում է կանխագուշակել և պլանավորել իր ապագան:

Տեսական գիտելիքների փոխակերպումը նորարարությունների աղբյուրի հնարավոր է արդյունաբերության այնպիսի գիտատար ճյուղերի միջոցով, ինչպիսիք են՝ քիմիական արդյունաբերությունը, հաշվիչ տեխնիկան, էլեկտրոնիկան և օպտիկան: Ժամանակին Բելլի վրա մեծ տպավորություն են գործել տնտեսագետ Կեյնսի մշակած դրույթները, համաձայն որոնց՝ հնարավոր են դառնում կառավարության միջամտությունը տնտեսությունում և այնպիսի գործնական միջոցառումները, որոնք 20-րդ դարի 30-ական թվականներին իրագործեց Ֆ. Ռուզվելտը՝ ամերիկյան տնտեսությունը ճգնաժամից հանելու համար:

Այդ երևույթները, համաձայն Բելլի, չափանիշ են դառնում այն բանի, որ տեսական բնույթ կրող տնտեսագիտական հայեցակարգերը կարող են որոշիչ դեր կատարել պետական կառավարման և կիրառական բնույթի տնտեսագիտության մեջ: Գիտության, տեխնիկայի և տնտեսության միացումն արտահայտություն են գտնում ԳՀՄ (գիտական հետազոտություններ և մշակումներ) երևույթում: Դրանք, Բելլի կարծիքով, պետք է ավելի և ավելի կարևոր դեր խաղան դեպի ապագա ուղղորդված հասարակության մեջ: Ի դեպ, դեպի ապագա ուղղվածությունը հետինդուստրիալ հասարակության ևս մեկ հատկանիշ է, որը ենթադրում է վերահսկողություն տեխնոլոգիաների վրա, տեխնոլոգիական կանխագուշակման մոդելների մշակում:

Եվ, վերջապես, Բելլը համարում էր, որ հետինդուստրիալ հասարակության էական բնութագրիչն են նոր ծնված ինտելեկտուալ տեխնոլոգիաները, որոնք օգտագործվում են ղեկավարման ժամանակ որոշումներ ընդունելիս: Նա գտնում էր, որ 20-րդ դարի վերջին ինտելեկտուալ տեխնոլոգիաները մարդ-

կության կյանքում պետք է կատարեն նույնքան կարևոր դեր, որքան կատարել են մեխանիկական տեխնոլոգիաները անցած մեկուկես դարում: Ինտելեկտուալ տեխնոլոգիաները ենթադրում են օգտագործել ալգորիթմներ՝ ինտուիտիվ դատողությունների փոխարեն: Այդ ալգորիթմները կարող են գործածվել համակարգչային ծրագրերի կամ հրահանգների տեսքով, որոնք հիմնված են որոշակի մաթեմատիկական բանաձևերի վրա:

Միևնույն ժամանակ ինքը՝ Բելլը, գտնում է, որ նման նպատակների գործնականում անհնար է հասնել, և դրանք ուտոպիական են, քանի որ մարդն իր եռթյամբ իռացիոնալ է և դիմադրում է ռացիոնալին: Սակայն մարդկության առաջխաղացումն այդ ուղղությամբ հնարավոր է, քանի որ, այնուամենայնիվ, մարդուն ռացիոնալիզմի գաղափարը լրիվ խորք չէ: Եթե ինտելեկտուալ տեխնոլոգիաներում «վարպետի» դերը կատարում է որոշումների ընդունման տեսությունը, ապա «գործիքի» դերը կատարում է համակարգիչը: Առանց համակարգչի օգտագործման՝ նոր մաթեմատիկական միջոցների օգտագործումն անհնար է: Յենց համակարգիչներն են, որ թույլ են տալիս կատարել զգալի քանակի գործողություններ, ինչը հնարավոր է դարձնում ինտելեկտուալ տեխնոլոգիաների զարգացումը:

Յետինդուստրիալ հասարակությունում տնտեսության զարգացմանը վերաբերող հիմնական որոշումները պետք է ընդունի կառավարությունը, բայց դրանք պետք է հիմնվեն իրենց իսկ կողմից հովանավորվող գիտական հետազոտությունների, մշակումների և վերլուծությունների վրա: Նշենք, որ Բելլի այս կանխատեսումները տեխնոլոգիայես առաջատար երկրներում զգալիորեն իրագործվել են: Մասնավորապես Միացյալ Նահանգներում որոշումները ներքին և արտաքին քաղաքականության ոլորտում ներկայումս մեծ չափով ընդունվում են, այսպես կոչված, «ուղեղային տրեստների» մշակած նախագծերի և ծրագրերի հիման վրա:

Ժամանակի հետ Դ. Բելլը զարգացնում է իր իսկ մտահղացումները՝ նոր դրույթներում ներկայացնելով հետինդուստրիալ և տեղեկատվական հասարակություն հասկացությունների փոխազդեցությունը: Այդ գաղափարները նա ներկայացնում է 1980թ. իրատարակած «Տեղեկատվական հասարակության սոցիալական սահմանները» աշխատությունում:

«Տեղեկատվական հասարակություն» արտահայտությունը հետինդուստրիալ հասարակության նոր անվանումն է, որը շեշտում է ոչ թե հասարակության զարգացման հերթականությունը՝ հետինդուստրիալ և հետո նոր միայն տեղեկատվական, այլ ընդգծում է հետինդուստրիալ հասարակության հիմնական սոցիալական կառուցվածքը՝ տեղեկատվությունը: Ի տարբերություն իր նախկին մոտեցումների՝ այս աշխատությունում Դ. Բելլն էլեկտրոնային հաշվիչ տեխնիկան դիտարկում է ոչ թե որպես գիտատար բնագավառ և անհրաժեշտ միջոց կառավարման բարդ խնդիրներ լուծելու համար, այլ այդ տեխնիկան դիտարկում է կապի և հաղորդակցման միջոցների հետ փոխազդեցության մեջ:

Գիտելիքները և տեղեկատվությունը Բելլը համարում է ոչ միայն հետինդուստրիալ հասարակու-

թյան զարգացման և փոխակերպման անհրաժեշտ տարր, այլ նաև նման հասարակության ռազմավարական ռեսուրս:

Տեղեկատվական հասարակության գաղափարախոսության սահմաններում ի հայտ եկան այն ուղղությունները և միտումները, որոնք սևեռում են հասարակության ուշադրությունը տեղեկատվության և նրա հաղորդման, մշակման և պահպանման տեխնիկական միջոցներին: Դրանք կարող են լինել և՛ դրական, և՛ բացասական:

Միևնույն ժամանակ, եթե Բեյլի աշխատություններում մի կողմից՝ շեշտը դրվում է պետության կողմից տնտեսության կարգավորման օրենսդրական նախաձեռնությունների վրա, որոնք ապահովում են ազատ մուտք տեղեկատվության շտեմարաններ, իսկ մյուս կողմից՝ արգելում են քաղաքական և ոստիկանական հետապնդումներն անձի նկատմամբ կատարյալ տեղեկատվական տեխնիկայի միջոցով: Ի լրացումն դրա՝ ֆրանսիացի սոցիոլոգ Ժ. Էյլուլը գտնում է, որ տեղեկատվական հասարակությունը, լինելով սոցիալիստական, անարխիստական և պացիֆիստական գաղափարներ իրագործող, ենթադրում է կենտրոնացված բյուրոկրատական պետության վերացում:

Յետինդուստրիալ տեղեկատվական հասարակության գաղափարախոսությունն ունեցել է և ունի բազմաթիվ կողմնակիցներ ու ընդդիմախոսներ: Ուշագրավ է, որ եթե Բեյլը նման հասարակությունում տարանջատում է սոցիալական կառուցվածքը քաղաքական և մշակութային համակարգից, ապա Ջրիգոն Բժեզինսկին նոր տեխնիկական դարաշրջանի գալուստը համարեց մի լրացուցիչ հնարավորություն՝ կազմալուծելու ԱՄՆ հակառակորդներին, մասնավորապես՝ խորհրդային Միությանը՝ համապատասխան քաղաքականություն վարելու պարագայում:

Յետինդուստրիալ տեղեկատվական հայեցակարգին քննադատական մոտեցում ցուցաբերեցին հասարակագետներ Ս. Նորդ և Ա. Մինկը: Նրանք իրենց "Будет ли компьютеризованное общество обществом культурных конфликтов" աշխատության մեջ գտնում են, որ համակարգայնացումը հանգեցնում է բավական պարզունակեցված, բայց միասնական լեզվի: Իհարկե, նման լեզուն ինչ-որ տեղ նպաստում է մշակութային անհավասարության հաղթահարմանը: Միևնույն ժամանակ՝ այդ պարզունակեցված համակարգային լեզուն պետք է զարգանա և դառնա առավել զարգացած խավերի համար հաղորդակցման միջոց: Սակայն ակնհայտ է, որ այդպիսի զարգացումներն առաջ կբերեն նման տեղեկատվական դարձվածքային դաշտից դուրս մնացած սոցիալական խմբերի դժգոհությունը:

«Քննադատական սոցիոլոգիայի» ներկայացուցիչ Մ. Պոստերը⁴ գտնում է, որ Դ. Բեյլի հայեցակարգի հիմնական թերությունն այն է, որ չնայած նա ձգտում է սահմանափակել հետինդուստրիալ հասարակության բնագավառը միայն սոցիալ-տնտեսական կառուցվածքի մակարդակով, սակայն, այնուամենայնիվ, տեղադրում է մեկ՝ հետինդուստրիալ հասարակություն սահմանման մեջ բոլոր տնտեսական, քաղաքական և մշակութային գործոնները, որի հետևանքով նոր երևույթների սահմանումները դառնում են

սահմանումներ ողջ հասարակության համար:

Ըստ Պոստերի՝ Բեյլի սահմանումը, որ գիտելիքը հանդիսանում է անկախ փոփոխական հետինդուստրիալ հասարակությունում, և որով պայմանավորվում են մնացած փոփոխականները, ինչպիսիք են աշխատանքը և կապիտալը, միայն կարող է հիպոթեզ լինել և ոչ ավելին: Եվ սա՝ մի պարագայում, երբ Բեյլն այն ներկայացնում է որպես հետևություն:

Սակայն պետք է նշել, որ Դ. Բեյլի անգամ անենախիստ ընդդիմադիրները կասկածի տակ չէին առնում տեղեկատվական գործոնի դերն ու կարևորությունը հասարակական կյանքում: Միևնույն ժամանակ՝ տեղեկատվական ոլորտի զարգացումը հանգեցրեց նաև աշխարհաքաղաքական մոտեցումների յուրահատուկ զարգացումների, որոնցից, անշուշտ, առաջին հերթին պետք է նշել այն գործընթացները, որոնք հայտնի են գլոբալիզացիա անվան տակ:

ԳԼՈՒԲԱԼԻԶԱՑԻԱ

Գլոբալիզացիա դարձվածքն առաջին անգամ կիրառել է Ջ. Սակլինը 1981 թ., երբ իր մի հետազոտությունում փորձում էր բացատրել աշխարհում սոցիալական փոփոխակցությունների ուժեղացման դրդապատճառները: Միևնույն ժամանակ, որպես գաղափարախոսական կատեգորիա, գլոբալիզմը հենվում է լիբերալիզմի հիմնադրույթների վրա: Այդ ենթատեսքստում ուշագրավ է մոնոպոլիզմի գաղափարներից դեպի գլոբալիզմ կատարված էվոլյուցիան:

Գլոբալիզացիան տեղեկատվական համակարգի հիմնախնդիրների ուսումնասիրության տեսանկյունից դիտարկվում է որպես արագ գործընթաց, որը տանում է դեպի միասնական համաշխարհային ֆինանսատնտեսական տարածության ձևավորում: Սակայն նշենք, որ այդ տարածությունը միտում ունի լինել միասնական՝ թերևս միայն քաղաքական և տնտեսական կառավարելիության տեսակետից: Իրականում այն խիստ անհամասեռ է և շերտավորված:

Ավելին՝ վերջին ժամանակահատվածում պարզորոշ են դարձել մեկուսացման գործընթացները «հետինդուստրիալ» աշխարհում: Բավական է նշել, որ համաձայն Ինդոնեզիի տվյալների⁵ արևմտյան տերություններին 90-ական թվականների վերջին բաժին էր ընկնում՝

- ուղղակիորեն կատարվող արտասահմանյան ներդրումների 76 %-ը.
- միջազգային առևտրի ծավալի 73 % -ը.
- աշխարհում գրանցվող բոլոր արտոնագրերի և հայտնագործությունների 88 % -ը.
- ինտերնետ գլոբալ ցանցից օգտվողների ավելի քան 90% -ը:

Այսպիսով՝ եթե գլոբալիզացիան դիտարկենք որպես տնտեսական, տեխնոլոգիական, սոցիալական ստանդարտների սահմանների վերացման գործընթաց, ապա դժվար չէ համոզվել, որ այն իրականում ավելի շուտ ռեգիոնալ, քան համաշխարհային երևույթ է: Այսինքն՝ կարելի է ասել, որ սահմանների (այս հասկացության լայն մեկնաբանման պարագայում) վերացումը բնորոշ է միայն տնտեսապես զարգացած երկրներին:

Մինչդեռ տեղի ունեցող գլոբալ փոփոխություն-

ները տեղեկատվական և ֆինանսական ոլորտում ոչ միայն չեն վերացնում արդեն իսկ գոյություն ունեցող համաշխարհային քաղաքական և տնտեսական տարածությունը բաժանող խոչընդոտները, այլև հանգեցնում են նոր, էլ ավելի դժվար հաղթահարելի վարչական, իրավաբանական և տնտեսական խնդիրների առաջացման:

Այս տեսանկյունից խիստ բնորոշ է, որ 2001 թվականի սեպտեմբերի 11-ի իրադարձություններից հետո գլոբալիզացիոն գործընթացները հարստացել են նոր նրբերանգներով: Այսօր ավելի քան մկատելի են դարձել ԱՄՆ-ի կողմից, համաձայն վերլուծաբանների ուրակման, «կայսերապաշտական» ձգտումները, որոնք ուղեկցվում են նախկին դաշնակիցներից ինքնամեկուսացման միտումներով: Այդօրինակ դիրքորոշումն ԱՄՆ-ը հիմնավորում է իր ռազմական և տեխնոլոգիական գերազանցությամբ և հայտարարում է, ելնելով սենատոր Բ. Լուգարի դոկտրինից, որ իրենք ինքնաբավ են և իրենց քաղաքական գիծը վարելիս կարիք չունեն եվրոպական երկրների, այդ թվում՝ նաև ՆԱՏՕ-ի աջակցությանը: Այսպիսով՝ կարող ենք փաստել, որ գլոբալ գործընթացներ հարուցող երկրների մեջ իսկ տեղի է ունենում շերտավորում և առանձնացում՝ համաձայն գլոբալիզացիոն չափանիշների:

Հատկանշական է նաև, որ այս տիպի մոտեցումն արդեն իսկ ընդունել է ռեալ տեսք. ԱՄՆ-ը միակողմանի փոփոխություններ է կատարում իր ռազմական համակարգում և մասնավորապես՝ եվրոպական ռազմական թատերաբեմում, բոյկոտում է Միջազգային քրեական դատարանի ստեղծումը, որը նախկինում համարում էր «գլոբալ աշխարհի խորհրդանիշ»՝ պահանջելով իր համար անձեռնմխելիության երաշխիքներ: Բնական է, որ այս ամենը ստիպում է եվրոպական տերություններին ձեռնարկել պաշտպանական հակաքայլեր:

Այսպիսով՝ այն ամենը, ինչ վերաբերում է գլոբալիզացիոն գործընթացներին ռազմաքաղաքական, տնտեսական և այլ ոլորտներում, ավելի շուտ կրում է տնտեսապես և տեխնոլոգիապես զարգացած տերությունների կողմից իրենց առավելությունների պահպանման բնույթ, ինչը հաճախ ընդունում է առավելապես ինքնամեկուսացման, քան համաշխարհային տարածքի ունիֆիկացիայի՝ միասնականացման տեսք: Օրինակ, ԱՄՆ-ը մեկուսանում է եվրոպայից, վերջինս՝ մնացյալ աշխարհից: Իսկ այսպես կոչված սահմանների բացումը կրում է միակողմանի բնույթ. վերջին ժամանակահատվածում զարգացած երկրների սահմաններն ավելի ու ավելի են փակվում մյուսների համար:

Այսպիսով՝ տեղեկատվական համակարգի հիմնախնդիրների առումով գլոբալիզացիան ներկայացնում է իբրև մի գործընթաց, որը բարենպաստ նախադրյալներ է ստեղծում զարգացած երկրների համար՝ իրենց առաջատար դիրքերը պահպանելու: Նկատենք նաև, որ այս իրողության նկարագրությունը դուրս չի գալիս համաշխարհային մրցակցության մեջ ընդունված պրակտիկայի սահմաններից:

Միևնույն ժամանակ՝ համաշխարհային մրցակցությունը ներկայումս ընդունել է այնպիսի բնույթ, որ այդ մրցակցության խաղի կանոններն ապահովում են ուժեղ կողմի համար առավել բարենպաստ պայ-

մաններ: Այդ իսկ պատճառով զգալիորեն ավելի է խորանում զարգացման մակարդակների տարբերությունը տարբեր երկրների միջև: Այսինքն՝ գլոբալիզացիան իրականում հանգեցնում է ոչ այնքան համաշխարհային տարածքի համահավասարեցման և ունիֆիկացիայի, որքան տնտեսապես չզարգացած պետությունների «քաղաքակրթական, տնտեսական գավառականացմանը, նրանց «գետտոիզացիային»»: Սա իր հերթին սրում է հակասությունները, հրահրում ահաբեկչական գործողություններ՝ բոլոր բացասական հետևանքներով:

Գլոբալիզացիայի գործընթացը համաշխարհային տեղեկատվական միատարր դաշտի, այսինքն՝ դուրին կառավարվող տարածքի ձևավորման գործում նույնպես հանգեցնում է հակասական արդյունքների:

Կարող է թվալ, որ, իրոք, այսօր աշխարհը տեղեկատվական տեսակետից ավելի միատարր է դարձել: Սակայն դա վերաբերում է տեղեկատվության մի փոքր, դյուրամարս հատվածին, որը մատչելի է բոլորին: Տեղեկատվության առավել արժեքավոր հատվածը՝ այն, ինչ Դ. Բելլն անվանում էր «գիտելիքներ և առաջատար տեխնոլոգիաներ», ավելի ու ավելի է կենտրոնանում մի քանի զարգացած երկրներում:

Իր հերթին՝ վերոհիշյալ դյուրամարս տեղեկատվությունը հենց դյուրամարսության շնորհիվ սկսում է «վաճալ», դուրս մղել ազգային արժեքներն այն երկրներում, ուր սկսել է ներթափանցել: Սա նույնպես հանգեցնում է յուրահատուկ՝ դեմքաց «գետտոիզացիայի»:

Այս հանգամանքներն ավելի խոր քննարկելու համար անհրաժեշտ է համառոտ ժամոթանալ այն մեթոդներին և ռազմավարությանը, որոնք կիրառվում են տեղեկատվական ոլորտում արդի ժամանակաշրջանում:

ԻՆՖՈՐԵՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ

Հատկանշական է, որ տեղեկատվական հեղափոխությունը, որը, համաձայն Դ. Բելլի և նրա համախոհների, պետք է հանգեցնի մարդկության բարօրությանը, իր հերթին ծնեց նաև բազում նոր, նախկինում անալոգները չունեցող գործընթացներ և խնդիրներ: Այդ գործընթացների և խնդիրների համախումբը մենք կկոչենք տեղեկատվածին կամ ինֆոզեն⁶: Ինֆոզեն գործընթացները բովանդակում են և՛ դրական, և՛ բացասական վտանգ պարունակող բաղադրիչներ: Այդ վտանգները կարելի է դասակարգել երկու հիմնական տիպի՝

1. Վտանգներ, որոնք կապված են անհատի, հասարակության, ազգի կամ պետության, այդ թվում՝ նաև ռազմական ոլորտի գործունեությունը կազմակերպող, պայմանավորող և համակարգող տեղեկատվական տեխնիկական համակարգերից կախվածության և այդ համակարգերի տեխնիկական խոցելիության հետ:

2. Վտանգներ, որոնք կապված են անհատի կամ հասարակության, ազգի հոգեկան և մտավոր, ինչպես նաև արժեքային համակարգերի հնարավոր փոփոխությունների և խեղաթյուրումների հետ և պայմանավորված են տեղեկատվական-լրատվական անկառավարելի կամ, հակառակը, հատուկ նպատակաուղղվածությամբ կառավարելի հոսքերով:

Միևնույն ժամանակ հայտնի է, որ ազգի կամ պետության ամեն մի խոցելի գործոն ինքնաբերաբար հակառակորդի համար վերածվում է թիրախի: Հենց այս հանգամանքի վրա է, որ ստեղծվել է ժամանակակից տեղեկատվական պատերազմների հայեցակարգը և գաղափարախոսությունը: Ուշագրավ է, որ մարդու հոգեկանի և գիտակցության վրա հարձակման և խեղաթյուրման մեթոդաբանությունը մեծ «առաջընթաց» է ապրել ավելի զարգացած փուլի, այսպես կոչված երկրորդ սերնդի տեղեկատվական պատերազմների հայեցակարգը մշակելիս: Փորձենք համառոտակի լուսաբանել ինՖոզեն հոգևոր և մտավոր, ինչպես նաև տեխնիկական բնույթի մարտահրավերները, արդիական տեղեկատվական պատերազմներում կիրառվող մեթոդները և նպատակները՝ կապելով դրանք ՀՀ տեղեկատվական համակարգերի տեխնիկական վիճակի հետ:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐ

ԱՄՆ-ը տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում այսօր գրավում է ամենաառաջատար դիրքերը: Այդ իսկ պատճառով այդ պետության փորձն արժանի է ուսումնասիրության: Եկատենք նաև, որ ԱՄՆ-ը սեպտեմբերի 11-ից հետո բազմապատկել է իր ուշադրությունը տեղեկատվական ոլորտի նկատմամբ: Մասնավորապես 2001-ի հոկտեմբերին ԱՄՆ-ում ստեղծվել է մի կառույց, որը մասնագիտանալու է այսպես կոչված կիբերտարածության անվտանգությունը ապահովելու ոլորտում: Պաշտոնապես այն կոչվում է «Ենթակառուցվածքների կարևորագույն օբյեկտների պաշտպանության խորհուրդ»: Այդ կառույցի ղեկավար է նշանակվել Ռոբերտ Կլարկը, որն ունի կիբերտարածության անվտանգության գծով ԱՄՆ-ի նախագահի հատուկ խորհրդակցանի կարգավիճակ: Այդ նոր կառույցի խնդիրն է տեղեկունուհիկացիոն, էներգետիկայի, ֆինանսական ծառայությունների, ջրամատակարարման, շտապ օգնության, տրանսպորտի, առողջապահության և ազգային անվտանգության տեսակետից կարևոր այլ ծառայությունների տեղեկատվական համակարգերի պաշտպանությունը:

Այս ամենը ԱՄՆ-ի ջանքերի մի մասն է, որ գործադրում է այդ երկիրը՝ տեղեկատվական պատերազմների նոր զարգացում հաղորդելու և իր նկատմամբ կատարվող տեղեկատվական ոսնձգություններից ավելի արդյունավետ պաշտպանվելու ուղղությամբ:

Համարվում է, որ տեղեկատվական պատերազմ դարձվածքն առաջին անգամ գործածել է է Թոմաս Ռոնը «Բոինգ» ավիաընկերության համար պատրաստած իր հաշվետվությունում: Այդ հաշվետվությունում, որը կոչվում էր «Ջենքի տեսակները և տեղեկատվական պատերազմը», շեշտվում է, որ «տեղեկատվական ենթակառույցները դառնում են ամերիկյան տնտեսության կարևորագույն բաղադրիչը: Միևնույն ժամանակ՝ հենց այդ ենթակառույցները վերածվում են խիստ խոցելի թիրախների ինչպես խաղաղ, այնպես էլ պատերազմական իրավիճակներում»:

Թ. Ռոնի առաջադրած խնդիրները խիստ հետաքրքրեցին ԱՄՆ պաշտպանության նախարարությանը, իսկ տեղեկատվական պատերազմ դարձվածքն սկսեց հիլովվել ՋԼՄ-ներում՝ սկսած 1991

թվականից, Իրաքի դեմ մղված պատերազմի ժամանակ՝ «Մրրիկ անապատում» ռազմական գործողությունն իրականացնելիս: Իրաքյան պատերազմի ժամանակ թերևս առաջին անգամ նոր տեղեկատվական տեխնոլոգիաները օգտագործվեցին որպես ռազմական գործողություններ վարելու միջոց: Օրինակ, Իրաքի հակաօդային պաշտպանության (ՀՕՊ) համակարգում գործող համակարգիչների տպիչների՝ պրինտերների «հիշողության» մեջ նախապես, դեռ վաճառման պահին դրված այսպես կոչված դեստրուկտիվ ծրագրերի շնորհիվ, որոնք ԱՄՆ հատուկ ծառայությունների կողմից էլեկտրոնային հրահանգով ակտիվացվեցին՝ ինիցիալիզացվեցին, շարքից հանվեց Իրաքի ողջ ՀՕՊ համակարգը: Իրաքյան, ինչպես նաև հարավսլավական պատերազմի ընթացքում լայնորեն կիրառվեցին նաև բնակչության և զինուժի վրա ազդող տեղեկատվական և հոգեբանական միջոցները⁷:

Իսկ արդեն մեկ տարի հետո տեղեկատվական պատերազմ դարձվածքն սկսեց գործածվել պաշտոնապես և տեղ գտավ ԱՄՆ-ի պաշտպանության նախարարության հրամանագրերում:

1996 թվականին Պենտագոնի փորձագետ Ռոբերտ Բանկերը ներկայացրեց մի զեկույց, որը նվիրված էր 21-րդ դարում ԱՄՆ-ի ռազմական նոր դոկտրինային (այսպես կոչված՝ «Force 21» հայեցակարգը): Այդ հայեցակարգի հենքում դրված էին հետևյալ դրույթները. ամբողջ թատերաբեմը բաժանվում է երկու մասի՝ ավանդական տարածություն և կիբերտարածություն: Բնորոշ է, որ վերջինիս տրվում է առավել կարևոր նշանակություն: Ռ. Բանկերն առաջարկեց կիբեր մանևրման՝ խուսանավման հայեցակարգը, որը պետք է բնականորեն լրացներ ավանդական ռազմական հայեցակարգերը և որը նպատակ ուներ չեզոքացնելու կամ ճնշելու հակառակորդի զինված ուժերը⁸:

Այսպիսով՝ ռազմական գործողություններ վարելու ավանդական ոլորտներին, այն է՝ երկրին, ծովին, օդին և տիեզերքին, այժմ ավելանում է նաև տեղեկատվական ոլորտը՝ ինՖոսֆերան: Ինչպես նշում են ռազմական փորձագետները, նոր պատերազմներում հարձակման, ոչնչացման հիմնական օբյեկտ են դառնալու հակառակորդի «տեղեկատվական ենթակառուցվածքը և հակառակորդի հոգեկանը»:

Սակայն տեղեկատվական պատերազմ հասկացության և նրա բաղադրիչ տեղեկատվական գործողության ճշգրիտ սահմանումը տրվեց միայն 1998 թվականին Պենտագոնի «Տեղեկատվական գործողությունների միացյալ դոկտրինա» հայեցակարգում: Այդ սահմանումները հետևյալն են՝

- տեղեկատվական գործողություն. ձեռնարկվում է հակառակորդի տեղեկատվական համակարգերի կողմից տեղեկատվության հավաքման, մշակման, փոխանցման և պահպանման գործընթացը խաթարելու նպատակով՝ միևնույն պարագայում պահպանելով սեփական տեղեկատվությունը և տեղեկատվական համակարգերը:
- տեղեկատվական պատերազմ. ներգործում է (տեղեկատվական գործողությունների համախմբի միջոցով) հակառակորդի պետական համակարգի և նրա ռազմական, քաղաքական ղեկավարության վրա, որն արդեն խաղաղ ժամանակ կարող է հանգեցնել տեղե-

կատվական պատերազմ իրագործողի համար հակառակորդի կողմից նպաստավոր որոշումներ ընդունելուն, իսկ հակամարտության ընթացքում լիովին կարող է կաթվածահարել հակառակորդի կառավարման ենթակառուցվածքների գործունեությունը:

Համաձայն ԱՄՆ-ի «Տեղեկատվական գործողությունների միացյալ դոկտրինա» փաստաթղթի՝ տեղեկատվական պատերազմը բաղկացած է «գործողություններից, որոնք իրագործվում են ազգային ռազմական ռազմավարության գերազանցության (հակառակորդի հանդեպ) ապահովման համար, և որին հասնելու նպատակով կատարվում է ներգործում հակառակորդի տեղեկատվական համակարգերի վրա՝ միաժամանակ պահպանելով սեփական տեղեկատվական համակարգերը և ենթակառուցվածքները»:

Իր հերթին՝ տեղեկատվական գերազանցությունը սահմանվում է որպես ունակություն՝ հավաքելու, մշակելու և տեղաբաշխելու իրադրության վերաբերյալ տեղեկատվական հոսքերը՝ խոչընդոտելով հակառակորդին կատարելու նույնը: Այն կարելի է բնորոշել որպես ունակություն՝ սահմանելու և պահպանելու, գործողություններ կատարելու այնպիսի արագություն, տեմպ, որը կգերազանցի հակառակորդի ցանկացած տեմպ և թույլ կտա իշխել հակառակորդի վրա այդ գործողությունը կատարելու ընթացքում՝ միաժամանակ մնալով անկանխատեսելի և գործելով այնպես, որ հնարավոր լինի առաջ ընկնել հակառակորդից նրա պատասխան քայլերի պահին:

Տեղեկատվական գերազանցությունը թույլ է տալիս ունենալ, ստանալ ռեալ պատկերացում ռազմական իրադրության մասին և տալ հակառակորդի ու սեփական զինուժի գործողությունների ճշգրիտ և ինտերակտիվ պատկերը ժամանակի իրական մասշտաբում: Տեղեկատվական առավելությունն այն գործիք-լծակն է, որը թույլ է տալիս հրամանատարությանը որոշիչ գործողությունների ընթացքում լայնորեն կիրառել տարբեր բնույթի ուժերի ապակենտրոնացում, ապահովել գործերի պաշտպանություն և ռազմաճակատ մտցնել այնպիսի խմբավորումներ, որոնց կազմն առավելագույնս համապատասխանի դրված խնդիրներին, ինչպես նաև իրագործել զինված ուժերի ճկուն և նպատակաուղղված նյութատեխնիկական ապահովում:

1998 թվականի մայիսին ստորագրվեց ԱՄՆ-ի նախագահ Բիլինթոնի «Կրիտիկապես կարևոր ազգային ենթակառուցվածքների պաշտպանության կազմակերպման մասին» հրամանագիրը, որը, ըստ ամենայնի, հիմք հանդիսացավ վերը նշված հատուկ ծառայության կազմակերպման համար:

Այդ հրամանագիրն իրագործելու ուղղությամբ վերջին տարիներին Պենտագոնը հասել է զգալի հաջողությունների: Մասնավորապես, Պենտագոնի ծրագրերի համար հիմնարար է համարվում «Խորը պաշտպանություն» հայեցակարգը, համաձայն որի՝ տեղեկատվական համակարգերը պետք է բաղկացած լինեն «անվտանգության բազմաշերտ համակարգերից և այնպիսի պրոցեդուրաներից, որոնք օգտագործում են ակտիվ և պասիվ միջոցառումներ տեղեկատվական ռեսուրսների պաշտպանության ուղղությամբ և որոնք կանխարգելում են ոչ իրավասու ներթափանցումը դեպի ունեցած տեղեկատվությունը:

Խորը էշելոնավորված պաշտպանությունը պահպանում է «կրիտիկական ռեսուրսները» և գործընթացները՝ ձևավորելով զսպման քաղաքականությունը: Դա իր հերթին լայնացնում է ծրագրային միջոցների հնարավորությունները ցանցի տեղեկատվական անվտանգության ապահովման համար»:

Ամիրաժեշտ է նշել, որ ԱՄՆ-ը լուրջ հիմքեր ունի ամհանգստանալու սեփական տեղեկատվական ցանցերի պահպանման ուղղությամբ: Դեռ մինչև 2001 թվականի սեպտեմբերի 11-ը արձանագրվել են ռուսաստանյան խակերների հարձակումների բազմաթիվ դեպքեր Պենտագոնի անվտանգության համակարգի վրա: ԱՄՆ-ն անգամ մի քանի պաշտոնական բողոքի նոտա է հղել Ռուսաստանին: Ավելին՝ ամերիկացիները որոշեցին կատարել սեփական հետաքննություն, որի արդյունքում հայտնաբերեցին, որ հասցեները, որոնցից կատարվել էին խակերային հարձակումները, գտնվում են Ռուսաստանում:

Սակայն, ի պատասխան ամերիկյան բողոքների, ռուսական ծառայությունները հայտարարեցին, որ այդ հասցեներում գտնվող հեռախոսային համարները վաղուց անջատված են, և որ իշխանությունները խակերային հարձակումների վերաբերյալ տեղեկատվություն չունեն: Հատկանշական է, որ համաձայն ԱՄՆ-ի Ազգային անվտանգության գործակալության (ԱՄԳ) փորձագետ Ջ.Ադամսի՝ վերոհիշյալ հարձակումները եղել են ԱՄՆ-ի վրա երեկից կատարված ամենալուրջ կիբեր հարձակումները, իսկ կատարված հարձակման հետաքննությունը եղել է ամենախոշորը կիբեր հանցագործությունների ոլորտում: Սակայն այն չի տվել որևէ էական արդյունք, իսկ խակերները կարողացել են իրենց համար հնարավորություններ ստեղծել՝ նորից ներթափանցելու Պենտագոնի անվտանգության համակարգ և կողպատելու այնտեղ եղած տեղեկատվությունը: Ավելին՝ հնարավոր չի եղել նույնիսկ պարզել, թե ինչպիսի տեղեկատվություն է հափշտակվել, և որքան խորն են խակերները ներթափանցել Պենտագոնի անվտանգության համակարգ:

Համաձայն ԱՄՆ հետաքննությունների ֆեդերալ բյուրոյի տվյալների՝ միայն 1999-2000 թթ. զինվորական ծառայությունները գրանցել են ավելի քան 1300 լուրջ խակերային հարձակումներ: Խակերները կարողացել են ներթափանցել մինչևկիսկ այն լաբորատորիաների տեղեկատվական շտեմարանները, որոնք զբաղված են միջուկային զենքի մշակումներով: Ամերիկյան հատուկ ծառայությունների կարծիքով՝ այդ խակերները կարող են կապված լինել ոչ միայն Ռուսաստանի, այլև Չինաստանի, Հյուսիսային Կորեայի և Իրաքի կառավարությունների հետ:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՐՁԱԿՈՒՄ
ՄԱՐԳՈՒ ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Այսօր դժվար է գտնել մեկին, ով հրապարակավ բացառի տեղեկատվության կարևորությունն իր բոլոր ձևերով ու դրսևորումներով: Երբ նախագծվում են քաղաքական կամ այլ բնույթի կառույցներ, ապա նրանց կառուցվածքների վերնամասում միշտ առկա է լինում ՏՎԿ (տեղեկատվական- վերլուծական կենտրոն) գրությամբ սյունակը: Սակայն, ցավոք, մնամո-

րինակ նախագծերը հազվադեպ են իրագործվում: Ավելին՝ տեղեկատվության թվացյալ առատության պարագայում մենք հաճախ ենք հանդիպում պաշտոնատար անձանց, որոնք չունեն տեղեկատվություն ո՛չ անմիջականորեն իրենց վերաբերող, ո՛չ էլ ընդհանուր բնույթի խնդիրների վերաբերյալ:

Սկստենք, որ նույնիսկ այն հիմնարկներում, որտեղ կատարվել է համակարգիչների միացում ինտերնետային ցանցին, նույնպես ոչ միշտ են հանգում դրական արդյունքների: Երևանյան «պրովայդերային» ընկերություններից հայտնի է, որ որոշ պետական հիմնարկների՝ ինտերնետից վերցրած տեղեկությունների կեսից ավելին, մեղմ ասած, անվայելուչ բնույթ է կրում:

Սկստենք, որ նախկին կոմունիստական վարչակարգի ժամանակ իշխանությունները քիչ թե շատ հոգում էին իրենց նոտենկլատուրայի իրազեկության մասին: Ակաժ որոշակի աստիճանակարգից՝ կուսակցական և պետական ապարատի աշխատակիցները ստանում էին ՏԱՍՍ-ի կազմած «Ատլաս» և «Պլանետա» պարբերականները, իսկ շատ «արգելված» գրքեր հրատարակվում էին «ժառայողական օգտագործման» համար: Դա զգալիորեն ընդարձակում էր պետժառայողի աշխարհայացքն ու մտահորիզոնը: Այսինքն՝ «սովետներն» ըմբռնում էին լրատվական գործունե կարևորությունը: Սակայն, դրա հետ մեկտեղ, չունեին հավաքված տեղեկատվության տարածման և արդյունավետ օգտագործման մտածված մեխանիզմ: Այժմ միայն կարող ենք արձանագրել, որ այդ իրողությունը զգալի դեր խաղաց ԽՍՀՄ փլուզման գործում:

Այսօր տեղեկատվական պատրաստվածությունն ու անվտանգությունը ձեռք են բերում հատուկ նշանակություն: Իրավացիորեն համարվում է, որ աշխարհում տեղի է ունենում «թվային հեղափոխություն», և հետինդուստրիալ հասարակությունը վերածվում է տեղեկատվականի: Եվ այդ ամենը կատարվում է առավել քան արագ: Ըստ տեղեկատվական տեխնոլոգիաների գծով փորձագետների տվյալների՝ նախկինում, որպեսզի ներգրավեին 50 մլն մարդու, ռադիոյին անդրաժեշտ էր 38 տարի, հեռուստատեսությանը՝ 13: Ընդամենը 4 տարվա ընթացքում նույնքան մարդիկ սկսեցին օգտվել ինտերնետից: 1993թ. այդ «գլոբալ սարդոստայնն» ընդամենը 50 էջ ուներ, իսկ այսօր՝ 50 մլն-ից ավելի: 1998թ. ինտերնետային ցանցին է միացել 143 մլն մարդ, իսկ 2001թ. այդ ժառայությունից օգտվողների թիվն արդեն հասել էր 700 մլն-ի:

Ինտերնետի կիրառման տիրույթն օրըստօրե ընդլայնվում է: Այն կոմունիկացիայի առավել արդյունավետ միջոցներից է: Սասնավորապես, շնորհիվ ինտերնետի՝ հնարավոր եղավ օպերատիվորեն օգտվել նախկինում քիչ հասանելի լրատվական աղբյուրներից, ամսագրերից, գրադարաններից: Էլեկտրոնային փոստը և հեռախոսային ինտերնետ կապը հեշտությամբ են լուծում բազմաթիվ կոմունիկացիոն խնդիրներ, ինչը մաեւ խիստ հրատապ է Հայաստան-Սփյուռք կապի ենթատեքստում: Այս իմաստով դժվար է թերագնահատել ինտերնետի դրական դերը:

Սակայն, ինչպես ցանկացած խոշոր գիտատեխնիկական նվաճում, ինտերնետը նույնպես ծնում է

բազմաթիվ խնդիրներ: Նրանում պարփակված տեղեկատվական էներգիան համեմատելի է միջուկայինի հետ, և այն, ինչպես միջուկային էներգիան, կարող է ունենալ երկակի օգտագործում: Խնդիրը միայն այն չէ, որ կասկածելի որակի «ինտերնետային մշակույթն» անպատրաստ օգտվողների, հիմնականում դեռ պատանիների մեջ ձևավորում է առանձնահատուկ մտածելակերպ ու հոգեվիճակ: Այդ «գլոբալ սարդոստայնը» տեղեկատվական պատերազմի գործիքներից է և, այդ իսկ պատճառով, կարող է հանդիսանալ հնարավոր աղետների ու վտանգների աղբյուր: Այս տիպի մարտահրավերները կարելի է սահմանել որպես ինֆոզեն: Չնայած իր ոչ նյութական ծագմանը՝ ինֆոզեն գենքը զանգվածային ոչնչացման միջոց է, նրա ազդեցության պատճառով միլիոնավոր մարդիկ վերածվում են հոգեպես ոչ լիարժեք, հեշտությամբ մանիպուլացվող ձեռնածու էականների⁶:

Ներկայումս «Ռենդ» կորպորացիայի մասնագետների կողմից մշակվում է նոր՝ երկրորդ սերնդի տեղեկատվական պատերազմների հայեցակարգը: Եվ եթե առաջին սերնդի տեղեկատվական պատերազմը դիտվում էր որպես կարևոր բաղադրիչ ընդհանուր պատերազմի ավանդական միջոցների՝ միջուկայինի, կենսաբանականի և այլնի կողքին, ապա երկրորդ սերնդինը հանդես է գալիս լիովին ինքնուրույն:

Նոր սերնդի տեղեկատվական պատերազմի գաղափարական հայրերն այն համարում են ռազմավարական հակամարտության սկզբունքորեն նոր տիպ, որը «կյանքի է կոչված տեղեկատվական հեղափոխությամբ: Տեղեկատվական տարածության մեջ է մտցնում հակամարտության հավանական ուլորտները (առաջին հերթին՝ տնտեսությունը և մարդու, հասարակության հոգևորը և գիտակցությունը): Եվ այն ժամանակային տիրույթում կարող է տևել ամիսներ, տարիներ...»: Ի թիվս խնդիրների, որոնք լուծվում են երկրորդ սերնդի տեղեկատվական գենքի միջոցով, առանձնացնենք հետևյալները՝

1. Բարոյագուրկ, ոչ հոգևոր մթնոլորտի և հակառակորդի մշակութային ժառանգության նկատմամբ բացասական վերաբերմունքի ստեղծում:
2. Քաղաքական լարվածության ու քաոսի ստեղծման նպատակով երկրի բնակչության սոցիալական խմբերի քաղաքական կողմնորոշման և հասարակական գիտակցության մանիպուլյացիա:
3. Առձակատումների հրահրման, անվստահության, կասկածանքության սերմանման, քաղաքական պայքարի սրման նպատակով կուսակցությունների միջև քաղաքական հարաբերությունների ապակայունացում, ընդդիմության դեմ բռնությունների սադրում, փոխզնչացման դրոշմ:
4. Իշխանության և կառավարման մարմինների լրատվական ապահովվածության մակարդակի իջեցում, կառավարման սխալ որոշումների ներշնչում:
5. Պետական մարմինների աշխատանքի մասին ապատեղեկատվություն, նրանց հեղինակազրկում, կառավարման մարմինների վարկաբեկում:
6. Սոցիալական, քաղաքական, ազգային և կրոնական բախումների հրահրում:
7. Կառավարման մարմինների կողմից կայացվող որոշումների դժվարացում:
8. Պետության միջազգային հեղինակազրկում,

այլ երկրների հետ նրա համագործակցության խաթարում:

9. Քաղաքական, տնտեսական, պաշտպանական և այլ ոլորտներում պետության կենսականորեն կարևոր շահերի վնասում:

Նշենք, որ երկրորդ սերնդի տեղեկատվական պատերազմները վտանգավոր են հատկապես այն երկրների համար, որոնք պատրաստ չեն դիմակայելու նմանատիպ ագրեսիայի: Աֆղանստանում թալիբների դեմ «հակահարձակական կոալիցիայի» կողմից վարվող պատերազմն ուժային և տեղեկատվական բնույթի գործողությունների զուգակցման ակնառու օրինակ է: Ավելին՝ կան բոլոր հիմքերը կարծելու, որ «ահաբեկչության դեմ պատերազմում» գերիշխում էր տեղեկատվական բաղադրիչը: Մեր կարծիքով՝ հենց այդ գործոնը աֆղանական արշավանքին տվեց այդչափ արդյունավետություն: Նույնը մենք դիտում ենք նաև այսօր՝ ԱՄՆ-ի կողմից Իրաքի հանդեպ վարվող անմատչալի տեղեկատվական-հոգեբանական պատերազմում: Բայց վերադառնանք սեփական խնդիրներին:

ՆՈՈՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Տեղեկատվական պատերազմի խնդիրներին թուուցիկ ծանոթությունը հանգեցնում է այն մտքին, թե մեր հանրապետությունն արդեն ենթարկվել է կործանիչ տեղեկատվական «ասպատակության», այն էլ բարձրագույն՝ երկրորդ սերնդի մակարդակով: «Իշխանական և կառավարման մարմինների (նաև ժողովրդի՝ Գ. Գ.) լրատվական ապահովվածության մակարդակի իջեցման, կառավարման սխալ որոշումների ներշնչման» օրինակ կարելի է համարել պետական գույքի կառավարման նախարարության հայտնի գրողը ԶԼՄ-ների, հրատարակչությունների դեմ: Վերջիններիս տնտեսապես ճնշելը խարխուլում է հանրապետության լրատվական դաշտի առանց այդ էլ փխրուն ենթակառուցվածքը: Այդպիսի գործողությունները դժվար է կոչել ուրիշ կերպ, քան՝ հակապետական:

Ուրիշ բան է, որ որոշ թերթեր կատարում են «լրատվական մահակի» դեր, «հասարակական գիտակցության մամուլային ճնշման» միջոցով «ստեղծում են ոչ հոգևոր մթնոլորտ» և «ապակայունացնում կուսակցությունների միջև քաղաքական հարաբերությունները»: Այս առիթով նկատենք, որ հայրենական ԶԼՄ-ների հրապարակումների ու ռադիո-հեռուստատեսային հաղորդումների ուսումնասիրությունը հանգեցնում է հետաքրքիր եզրակացությունների: Օրինակ, առանձին նյութերում տարօրինակ կերպով համադրվում են արդեն սովորական դարձած պարզունակությունն ու ակնհայտորեն դրսից ներմուծված ժամանակակից ինֆոտեխնոլոգիաների տարրերը:

Այս առիթով հարկ է ընդգծել, որ տեղեկատվական ներգործությունը, որը, ինչպես արդեն նշվել է, իրագործվում է տեղեկատվական գործողությունների և տեղեկատվական պատերազմների միջոցով, տեխնոլոգիական միջոց է, գործիք՝ այն կիրառող սուբյեկտի համար՝ իր ռազմավարական պլանները իրագործելու նպատակով: Տեղեկատվական գործողու-

թյուններով ռազմաքաղաքական ռազմավարության իրագործումը ստացել է նոոքաղաքականություն անվանումը և այժմ լայնորեն օգտագործվում է միջազգային պրակտիկայում՝ աստիճանաբար դուրս մղելով քաղաքականության ավանդական վարման որոշ տարրեր:

Այսպիսով՝ այս կամ այն երկրում դրսից թելադրվող տեղեկատվական գործողություններն ի հայտ բերելու անհրաժեշտ պայմանն այդ երկրի և այլ տերությունների քաղաքական հարաբերակցությունների, շահերի համընկման կամ հակասությունների իմացությունն է:

Միևնույն պարագայում, փաստացիորեն ի հայտ բերելով այս կամ այն տերության նոոքաղաքականության արտահայտումները, բովանդակությունը և ուղղությունը սեփական հասարակությունում կամ պետությունում, կարելի է բավական մեծ ճշգրտությամբ որոշել այդ տերության ռազմաքաղաքական մտադրությունները սեփական պետության նկատմամբ:

Բերենք մի քանի օրինակներ, որոնք հանդիսանում են այլ տերությունների նոոքաղաքականության արտահայտություններ ԳԳ- ի նկատմամբ:

- Արևմտյան, մասնավորապես ամերիկյան «հայագիտության դպրոցի» գործողությունները, որոնք, համակարգված աղավաղելով պատմական փաստերը, փորձում են հայ ազգի, հայոց պատմության, հայկական ազգային գաղափարախոսության և մասնավորապես Եղեռնի մասին ձևավորել թյուր, բարդույթված, բարոյազրկող և պարտվողական պատկերացումներ¹⁰:

- Սիջազգային որոշ հասարակական կազմակերպությունների կողմից հայկական լրատվամիջոցների նկատմամբ որոշակի գործողությունները, կապված մասնավորապես նրանց ֆինանսավորման հետ, կարող են հնարավոր պատճառը լինել ԳԳ մի շարք լրատվամիջոցների ապագային կողմնորոշումների և արտահայտությունների (սրանց օրինակները շատ են. բավական է բացել մեզ բոլորիս հայտնի մի քանի թերթ):

- «Հոկտեմբերի 27»-ի ահաբեկչությունը, անկախ կուսակցական կամ անհատական դիրքորոշումներից ու մոտեցումներից, խոշոր հարված էր՝ ուղղված հայկական պետականությանը: Սակայն այդ իրողության շարունակական լուսաբանումը և քննարկումը որոշ տպագիր լրատվամիջոցներում ընթանում էր ֆրանսիական հեղափոխության ժամանակների ուստիականության ղեկավար Ֆուլշի հայեցակարգի համաձայն՝ մարդուն սպանելը բավական չէ. անհրաժեշտ է սպանել նրա հեղինակությունը (ռեպուտացիան): Դաշվի առնելով այս դրույթի անհամատեղելիությունը հայկական մենթալիտետի հետ, ինչպես նաև այդօրինակ հրապարակումների խիստ համակարգված և համաձայնեցված գործողությունները (ինչը նույնպես բնորոշ չէ տեղական լրատվամիջոցներին), կարելի է ենթադրություններ կատարել այդպիսի հրապարակումների պատվիրված լինելու վերաբերյալ:

ԳԳ հեռուստատեսային հաղորդումներում բավական ցցուն են դարձել այսպես կոչված «սպիտակ աղմուկ» տեխնոլոգիայով իրագործվող հաղորդումները, երբ լրատվական հոսքը կառուցվում է առանձնապես ոչինչ չասող տեղեկատվությունների համախմբով:

Այդ կարգի, դեռևս հստակ պատասխան չստացած գործողությունների թվարկումը կարելի է անընդհատ շարունակել: Միաժամանակ անհրաժեշտ է նշել նաև, որ հաճախ մենք ակամատես ենք լինում սեփական, տեղական նախաձեռնությամբ ծավալված տեղեկատվական գործողությունների, որոնք ակնհայտորեն վտանգում են մեր ազգային անվտանգությունը: Այդ կարգի տեղեկատվական գործողությունները գրականության մեջ ստացել են «տեղեկատվական պատերազմ սեփական ժողովրդի դեմ» որակումը և, ի դեպ, խիստ բնորոշ են ռուսական լրատվամիջոցներին:

Անհրաժեշտ է նշել նաև, որ ներկայումս որոշ միջազգային կազմակերպություններ, ունենալով աշխարհով սփռված, այսպես կոչված ցանցային կառույցներ, նույնպես վարում են իրենց սեփական նոտաբաղաբանությունը: Դա արտահայտվում է աղանդների, սեքսուալ այլասերությունների, մեր ազգային նկարագրին անհարիր և ակնհայտորեն բարոյազրկող գաղափարների և համապատասխան գրականության (ի դեպ՝ հիմնականում անվճար) տարածումով: Դրան զուգահեռ՝ կատարվում է զանգվածային լրատվամիջոցներում երկիմաստ, թաքնված, այսպես կոչված «կրիպտոգովազգային» (զաղտնագրագովազգային) բովանդակության նյութերի հրատարակում և «հատուկ» գրականության վաճառք:

ՀՀ տեղեկատվական դաշտում գործող լրատվական աղբյուրների վերլուծությունը խիստ ծավալուն թեմա է: Այն կարիք ունի շարունակական վերլուծության ու տեղեկատվական փոփոխման և այդ փոփո-

րոշումից ելնելով՝ պետության կողմից համապատասխան հակազդեցության կամ խրախուսման:

- 1 “Японское информационное общество: темы и подходы” Japan’s Information Society: Themes and Visions”, 1969.
- 2 Bell D. The homing of Post-industrial Society. A Venture in Social Forecasting. N.Y., Basic Books, Inc., 1973.
- 3 St’u Brzezinsky Z. Between. Two Ages. America’s Role in the Technotronic Era. N.Y.: The Viking Press, 1970.
- 4 Poster M. The Mode of Information: Poststructuralism and Social Context. Cambridge: Polity Press, 1990.
- 5 St’u Иноземцев И. Л. Расколота цивилизация.- М.: Academia-Наука, 1999.
- 6 Гагик Тер-Арутюнянц (Арутюнян). Информенные вызовы, ГА, 08.12. 2001г.
- 7 St’u Г. Г. Почепцев, Информационные войны, “Рефл-бук” “Ваклер”, 2001г., Г.Г. Почепцев, Психологические войны, “Рефл-бук” “Ваклер”, 2000г., Гагик Тер-Арутюнянц, “Голос Армении”, 10.04.2001 г.
- 8 Information warfare web.
- 9 St’u С. Кара-Мурза, Манипуляция сознанием, Москва, “Алгоритм”, 2000, Гагик Тер-Арутюнянц, Манипуляция сознанием, ГА, 10.09.2000 г.
- 10 Ավելի մանրամասն տե՛ս Արմեն Ավագյան, «Հայաստանի պատմության լրատվամիջոցների վերլուծությունը» և այդ հեղինակի այլ գործերը, ինչպես նաև՝ Гагик Тер-Арутюнянц, “Агентура специального назначения”, ГА, 14. 05.2002 г.

INFORMATIONAL SOCIETY AND GLOBALIZATION

GAGIK HARUTYUNYAN
Politician

Summary

Conceptual development and materialization of “informational society” and “globalization” terms took place simultaneously in the last three decades of XX century. It is determined by the fact that above-mentioned concepts are closely interrelated and delineate the modern stage of the development of human society. At this stage, the informational (in broad sense) saturation of the society serves as a criterion and a decisive factor for the development of the society. In their turn, new means of communication in such society create conditions for global dissemination of information, which promotes the formation of world-wide integrated political, economic and informational infrastructures. Meanwhile, the formation of such global infrastructures is not sufficient for harmonious and proportionate development of human community. Moreover, in certain circumstances globalization leads to political, economic and other ruptures between various countries.

ИНФОРМАЦИОННОЕ ОБЩЕСТВО И ГЛОБАЛИЗИЦИЯ

ГАГИК АРУТЮНЯН
Политолог

Резюме

Понятия информационное общество и глобализация получили смысловое развитие и предметное выражение одновременно - в последнее тридцатилетие 20-ого века. Обусловлено это тем, что эти два понятия взаимосвязаны и представляют феноменологию нынешнего этапа развития человечества. На этом этапе, как критерий развития и определяющий фактор выступает информационная (подразумевается широкая интерпретация этого термина) насыщенность общества. В свою очередь созданные в подобном обществе новые средства коммуникации делают возможным глобальное распространение информации, что способствует формированию всемирной, единой политической, экономической инфраструктуры. В то же время формирование подобной глобальной инфраструктуры еще недостаточно, чтобы развитие человеческого общества происходило равномерно и гармонично. Более того, при некоторых обстоятельствах глобализация приводит к экономическому и цивилизационному разрыву между отдельными странами.

ԳԱԶԱԲԱԼՈՆԱՅԻՆ ԱՎՏՈՄԵԶԵՆԱՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ. ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ, ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

ԱՐԱՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
INTAS, անկախ իրական փորձա եր

Կանխարգելման մեկ ունցիան համարժեք է բուժման մեկ ֆունտին:

Էներգախնայողության քաղաքականության անցմանն այլընտրանք չկա: Ապագա էներգետիկան խարսխված է երեք փոխկապակցված հեմարանների վրա՝ էներգախնայողություն, մաքուր տեխնոլոգիա եւ էկոլոգիա:

Այդ պահանջներին համապատասխանում է հանրապետության ավտոտրանսպորտի զանգվածային անցումը գազային վառելիքի: Ավանդական հեղուկ շարժիչային վառելանյութի իրական փոխարինող է հանդիսանում սեղմված բնական գազը (ՍԲԳ):

Շուկայական տնտեսության պայմաններում գազով աշխատող ավտոմեքենաների շահագործման փորձի վերլուծությունը ցույց է տալիս բնական գազի՝ որպես շարժիչային վառելանյութ օգտագործման տեխնիկական, էկոլոգիական եւ տնտեսական նպատակահարմարությունը: Եւ պատահական չէ, որ աշխարհի զարգացած երկրներում ամեն տարի ավելանում է գազով աշխատող ավտոմեքենաների քանակը [1]:

Երկիր	Գազով աշխատող ավտոմեքենաների թիվը
Իտալիա	1 050 000
Նիդերլանդներ	700 000
ԱՄՆ	350 000
Ճապոնիա	320 000
Ռուսաստան	230 000
Մեքսիկա	210 000
Ավստրալիա	190 000
Հարավային Կորեա	160 000
Կանադա	140 000
Տաիլանդ	80 000
Նոր Զելանդիա	50 000
Ինդոնեզիա	20 000
Ալժիր	20 000
Այլ երկրներ	200 000

Այս տվյալները հանդիսանում են բենզինից գազի անցման գործընթացի անշրջելիության լավագույն ակադեմիայի:

Այստեղ անհրաժեշտ է առանձնացնել նաեւ գա-

զային վառելանյութի օգտագործման էկոլոգիական նպատակահարմարությունը: Ավտոտրանսպորտը թունավորում է մեզ՝ քաղաքացիներին, իր կենսագործունեության մնացուկներով: Եթե հաշվի առնենք, որ տրանսպորտի բոլոր միջոցներից աղտոտող նյութերի՝ դեպի մթնոլորտ արտանետումը գումարային տեսքով կազմում է 45%, ապա միայն ավտոտրանսպորտային համալիրի պատճառած էկոլոգիական վնասը կազմում է այս թվի 62.7%-ը: Բացասական ներգործության բոլոր տեսակներից «առաջատար» է հանդիսանում ավտոմոբիլային տրանսպորտը (աղմուկ՝ 49.5%, ներգործություն կլիմայի վրա՝ 68%, մթնոլորտային օդի աղտոտում՝ 71%):

Բնակչության առողջության համար ամենամեծ վտանգը ներկայացնում են էթիլացված բենզին օգտագործող ավտոտրանսպորտից դեպի մթնոլորտ կապարի արտանետումները: Այդ պատճառով էլ վերջերս Ռուսաստանի առանձին շրջաններում՝ Բաշկորտոստանի, Թաթարստանի հանրապետություններում, Վոլգոգրադի, Մոսկվայի, Նիժնեմովզորոդի, Պերմի եւ Ռյազանի մարզերում, ինչպես նաեւ Դաշնության այլ տարածաշրջաններում որոշումներ ընդունվեցին ավտոմոբիլային տրանսպորտում էթիլացված բենզինի օգտագործումն արգելելու մասին, ինչը կարող է եւ պետք է ահազանգ դառնա այս տեսակի վառելիքը Հայաստանի Հանրապետություն ներկրողների համար:

Ձարգացած շատ երկրներում ավտոմոբիլային տրանսպորտով շրջակա միջավայրի աղտոտման խնդիրը լուծվում է երկու հիմնական ուղղություններով: Առաջինը բենզինի սնուցման համակարգի կատարելագործումն է (անմիջական ներարկման կիրառում, կատալիտիկ չեզոքացուցիչների օգտագործում, որոնք կարող են աշխատել միայն ծծմբի, ֆոսֆորի, մեխանիկական խառնուրդների խիստ կանոնակարգված ոչ էթիլացված բենզինով, փոփոխական բնութագրի բաշխումով եւ այլն), որը զգալիորեն բարդացնում է մեխանիզմը եւ բարձրացնում է մեքենայի գինը: Երկրորդ ուղղությունն ավտոմեքենաների՝ էկոլոգիական տեսակետից առավել մաքուր վառելիքի անցման մեջ է: Այստեղ առաջատար դիրք են զբաղում հեղուկ ածխաջրածնային գազը եւ ՍԲԳ-ն: Այդ ընտրությունը պայմանավորված է ավտոմեքենայի գազաբալոնային սարքի վրա կատարվող ծախսի եւ արտանետվող թունավոր գազերի նվազեցման լավագույն հարաբերակցության արդյունավետությամբ եւ համապատասխանում է Եվրոպայում ընդունված Եվրո էկոլոգիական պահանջների չափա-

նաների (ԳԲԱ) արդյունավետ շահագործման ուղղությամբ: Գազով աշխատելու համար ավտոմեքենաների վերասարքավորման կետեր կան Երևան, Գյումրի, Վանաձոր եւ Հրազդան քաղաքների ավտոմոբիլային տրանսպորտի եւ «Հայռուսգազարդ» ՓԲԸ ձեռնարկություններում:

«Հայռուսգազարդ» ՓԲԸ ուսումնասիրելիական կենտրոնի բազայի վրա անցկացվում է գազաբալոնային ավտոմեքենաների վարորդների նախապատրաստում: Գոյություն ունի մշակված ուսումնական պլան եւ ծրագիր: Վերջինս հանդիսանում է որպես վարորդների «B», «C» եւ «B-C» կարգերի ավտոտրանսպորտային միջոցների հիմնական ծրագրի լրացում: Ուսուցման ծրագիրը նախատեսում է 18 ժամ, որն ընդգրկում է 14 ժամ տեսական պարապմունք: Նախատեսված է գազաբալոնային ավտոմեքենաների հիմնական տեխնիկական եւ տեխնիկա-շահագործման հետեւյալ հոդվածների ուսումնասիրությունը՝ բնական եւ հեղուկ ածխաջրածնային գազերի ֆիզիկա-քիմիական հատկությունները, ՍԲԳ-ով եւ հեղուկ գազով աշխատող ավտոմեքենաների գազաբալոնային տեղակայումների խմբաքանակը, շահագործումը եւ շահագործման անվտանգության տեխնիկան: Ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացման, գիտելիքների տիրապետման եւ ինքնաստուգման նպատակով մշակված է 300-ից ավելի հարցերից բաղկացած «ԱՎՏՈԳԱԶ» թեստը: Ուսումնական ավարտելուց եւ քննությունները հաջող հանձնելուց հետո վարորդները ստանում են համապատասխան վկայականներ:

Սակայն վերջին տարիներին գազաբալոնային ավտոմեքենաների շահագործման վտանգը նվազեցնելու բնագավառում կուտակվել են որոշակի հիմնախնդիրներ: Դրա հիմնական պատճառներն են՝ սարքավորումների մաշվածությունը, շահագործվող խողովակաշարի եւ փականային պիտույքակազմի մասերի ռետորսների սպառումը, նրանց նորոգման բացակայությունը, տեխնիկական եւ սեզոնային սպասարկումների (SU-1, SU-2, ՍՍ) անցկացման ժամանակացույցերի չկատարումը, արտադրական կարգապահության անկումը, որոշ դեպքերում՝ ավտոտրանսպորտային միջոցների տերերի եւ ձեռնարկության ղեկավարների կողմից անվտանգության պահովման գործում պատասխանատվության նվազումը կամ բացակայությունը: Սյուս պատճառներից են՝ գազաբալոնային ավտոմեքենաների ընթացիկ վերանորոգման, տեխնիկական եւ սերվիսային սպասարկման անհրաժեշտ բազայի բացակայությունը, իսկ մասնագետներին (նորոգող բանվորներին եւ ինժեներատեխնիկական աշխատողներին), որոնք սպասարկում են գազաբալոնային սարքերը, կարելի է համարել ոչ լրիվ արհեստավարժ կամ ոչ մի պատրաստվածություն չունեցող՝ այդ աշխատանքները կատարելու համար: Սիրողական միջամտությունն այդպիսի վտանգավոր տնտեսության կառուցվածքին, ինչպիսին է գազայինը, ուղեկցվում է ողբերգական հետևանքների հնարավորությամբ: Այստեղ հարկ է մշել,

որ թեև բացարձակ անվտանգություն չի լինում, բայց փոխզիջումն էլ ունի իր բանական սահմանները: Ահա թե ինչու գազաբալոնային ավտոմեքենաների շահագործման անվտանգության կառավարումն ունի առաջնահերթ մշանակություն:

Ավտոմոբիլային տրանսպորտում կիրառվող գազային վառելիքի մեծացող մասշտաբները կարելուրագույն հիմնախնդիրների թվում առաջ են բերում նաև սպասարկող անձնակազմի վերապատրաստում՝ ինչպես վերանորոգող բանվորների, այնպես էլ ինժեներատեխնիկական անձնակազմի, որոնք իրականացնում են գազաբալոնային ավտոմեքենաների տեխնիկական վիճակի տեսչական ստուգումներ: Վերջին հաշվով՝ անհրաժեշտ է հասկանալ, որ այն անձինք, ովքեր իրականացնում են գազով աշխատող ավտոմեքենայի հավաստագրումը՝ սերտիֆիկացիան, ինչպես ՊԱՏ-ում անցկացվող ամենամյա տեխնիկական զննումների, վերասարքավորման ակտի եւ երթուղային թերթիկի հանձնման ժամանակ, այնպես էլ տրանսպորտի նախարարության, «Հայռուսգազարդ» ՓԲԸ, ներքին գործերի ՊԱՏ-ի, «Հայլեռտեխնիկոլոգիայում» վարչության վերահսկող տեսուչների կողմից այլ տեսակի զննումներ կատարելիս, պաշտպանում են բնակչությանը եւ տարածքը տեխնոգեն արտակարգ իրավիճակներից: Այդ իսկ պատճառով պահանջվում է կազմակերպչական եւ տեխնիկական հարցերի համալիր լուծում: Առաջարկվում է դիտարկել եւ ՀՀ ազգային անվտանգության հայեցակարգ ներառել երբեմնի հանրահայտ, բայց մոռացված կամ գործնականում չօգտագործվող լրացված եւ ընդհանրացված անվտանգության կոմպոնենտների ցանկը՝ ուղղված հետեւյալ միջոցառումների համալիր անցկացմանը (այնպիսի բարձր վտանգավորության օբյեկտների համար, ինչպիսիք են ԳԲԱ)՝ նորմատիվ-իրավական, կազմակերպչական, տեխնիկական, սոցիալ-քաղաքական, տնտեսական, կրթական եւ տեղեկատվական [2, 5]:

Ազգային անվտանգության հայեցակարգի առաջարկվող անհրաժեշտ կոմպոնենտները ԳԲԱ շահագործման ժամանակ հետեւյալներն են՝

1. Նորմատիվ-իրավական.
 - 1.1. Ազգային քաղաքականություն (օրենքներ, որոշումներ, վճիռներ, նորմեր, կանոններ, հանձնարարականներ, ԳԲԱ շահագործման բնագավառում չափակարգում):
 - 1.2. Պատասխանատվություն անվտանգության պահանջների խախտման դեպքում:
2. Կազմակերպչական.
 - 2.1. Անվտանգության հռչակում:
 - 2.2. Սարքավորումների հավաստագրում:
 - 2.3. Սարքավորումների գործադրման թույլտվություն:
 - 2.4. Փորձաքննություն:
 - 2.5. Պետական հսկողություն:
 - 2.6. Արտադրական հսկողություն:

- 2.7. Ինքնահսկողություն:
- 2.8. Վարչական միջոցներ եւ այլն:
3. Տեխնիկական.
 - 3.1. Սարքավորումների ձեւավորում:
 - 3.2. Շահագործում:
 - 3.3. Սարքավորումների մաշվածություն (մոնիտորինգ, նորոգում, մնացորդային ռեսուրս):
4. Սոցիալ-քաղաքական.
 - 4.1. Շրջակա միջավայրի պահպանություն:
 - 4.2. Աշխատանքի պահպանություն:
 - 4.3. Ահաբեկություն եւ այլն:
5. Տնտեսական.
 - 5.1. Քվտաններ արտանետումների եւ թափոնների նկատմամբ:
 - 5.2. Վճար աղտոտման դիմաց:
 - 5.3. Ապահովագրում, վնասի փոխհատուցում (ապահովագրում, պատասխանատվություն պատճառած վնասի դիմաց):
 - 5.4. Արտոնություններ:
6. Կրթական.
 - 6.1. Ուսուցում, ատեստավորում (ԳԲԱ տեխնիկական զննում իրականացնող ղեկավարների, անձնակազմի, ինժեներատեխնիկական աշխատողների):
 - 6.2. Վարժասարքեր եւ ուսուցման այլ համակարգեր:
7. Տեղեկատվական.
 - 7.1. Տեղեկատվության լիարժեքություն օբյեկտի վերաբերյալ, վթարներից, դժբախտ դեպքերից եւ վթարի պատճառած վնասներից պաշտպանության ձեւերի եւ միջոցների վերաբերյալ տվյալների բանկեր:
 - 7.2. Տեղեկատվության տարածում վթարների եւ վտանգների մասին:
 - 7.3. Տեղեկացում եւ ծանուցում վթարների եւ արտակարգ իրավիճակների մասին եւ այլն [6]:

Դրա համար անհրաժեշտ է լուծել մի շարք կազմակերպչական եւ տեխնիկական բնույթի խնդիրներ: Առաջին հերթին նպատակահարմար է «Հայռուսգագարդ» ՓԲԸ ուսումնատեխնիկական կենտրոնին հանձնարարել կազմակերպել ոչ միայն վարորդների, այլեւ ընթացիկ նորոգում, տեխնիկական եւ սերվիսային ծառայություններ կատարող նորոգող բանվորների եւ առավել վտանգավոր օբյեկտներ սպասարկող կամ ստուգող ինժեներատեխնիկական աշխատողների ուսուցում՝ ավարտին համապատասխան փաստաթղթի հանձնումով: Այսպիսով՝ տեխնիկական անձնակազմի նպա-

տակաուղղված եւ կենտրոնացված պատրաստումը թույլ կտա արդեն մոտակա ժամանակներում ստեղծել անհրաժեշտ պայմաններ զազաբալոնային ավտոմեքենաների արդյունավետ եւ անվտանգ շահագործման համար: Այստեղից հետեւում է հաճախակի մոնիտորինգի նպատակահարմարությունը, որը թույլ կտա վերլուծել շահագործվող զազաբալոնային ավտոմեքենաների տեխնիկական վիճակը եւ զնահատել տեխնոգեն բնույթի ռիսկի իջեցման գործունեությունը, ստանալ կշռադատված պատասխաններ հիմնական հարցերին՝ որտե՞ղ ենք մենք, ինչպիսի՞նք են ժամանակակից պահանջները, ի՞նչ են առաջարկում, եւ ինչպե՞ս հասնել անվտանգության ստանդարտի գոնե թույլատրելի հիպոթետիկ մշածողին:

Կենտրոնացված պլանավորման եւ հսկողության համակարգի փլուզումից հետո ավտոտրանսպորտային միջոցների էկոլոգիական եւ տեխնիկական անվտանգության մեխանիզմներն իրենք իրենց չաշխատեցին: Ակնհայտ է, որ նոր տեխնոլոգիաների ներդրման գործունեությունը պետք է լինի նպատակաուղղված նախագծման արդյունք՝ մտավոր պաշարների ներգրավմամբ: Այդ իմաստով պարզամտություն է կարծել, որ «կապիտալիզմ, ի տարբերություն սոցիալիզմի, պետք չէ կառուցել. բավական է միայն թույլ տալ»: Ընդհակառակը, առաջատար երկրների փորձը ցույց է տալիս պետության կողմից խիստ միջոցների ընդունման անհրաժեշտությունը: Այլ կերպ, գտնվելով ազատ անկման վիճակում, կարելի է հայտնվել քաղաքակրթության ճամփեզրին:

Անհրաժեշտ է գիտակցորեն ստեղծել եւ աշխատեցնել հսկողության մեխանիզմները եւ յուրացնել զազաբալոնային ավտոմեքենաների էկոլոգիական եւ անվտանգության կառավարման տեխնոլոգիաների լծակներն այնպես, ինչպես իրացվում են ժամանակակից այլ տեխնոլոգիաներ:

Ամբողջ վերն ասվածն ամփոփենք հետևյալ հորդորով՝ անհրաժեշտ է շարժիչային վառելանյութը բնական զազով փոխարինելու ազգային ծրագիր*:

* Հոդվածում արժարժված խնդիրների մասին տե՛ս նաև՝ <http://www.bioecomed.am> («Բիոէկոմեդ» ՀԿ), <http://www.forum.am> («Բնապահպանություն» Ինտերնետ Ֆորում), <http://www.intas.be> (INTAS) ինտերնետային կայքերը:

Գ Ր Ա Վ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. Проблема перевода автомобиля на газ. <http://www.gaspart.ru/html/about.htm>
2. Айрапетян А. С. Стандарт EVRO—III вступает в силу. Независимая газета «Голос Армении», no.121 (18476), 10.21.1999.
3. Петров А. Б., Трофимов Ю. В., Фролов Ю. Н., Ширяев А. В. За вас, за нас и - за газ! Журнал «Новости авторемонта», no.16 2003 г.
4. Боксерман Ю. И., Мкртычян Я. С., Чириков К. Ю. Переход транспорта на газовое топливо.- М.: Недра, 1988.- 220 с.

5. “Безопасность труда в промышленности”, полнотекстовый вариант электронной версии журнала за 1996 - 2000 гг. и база нормативных документов Госгортехнадзора. <http://www.safety.ru>

6. “Промышленная безопасность труда”, научно-технический интернет журнал <http://www.alf-center.com>

EXPLOITATION OF CARS WITH GAS CYLINDERS: ENVIRONMENTAL PROBLEMS, SOLUTIONS

ARAM HAYRAPETYAN
Independent Scientific Expert, INTAS

Summary

The world experience for the exploitation of the gas cylinder equipment (GCE) and information about measures for providing the safety of drivers and passengers using car transport with gaseous types of fuel are described in brief. The stress is put on the ecological aspect, bio-safety. Estimation is given on the state of cars using GCE in the Republic of Armenia as objects of man-caused danger. A list of drawbacks negatively affecting on car driving and safety provision is presented. Reasons are given for the increase in the risk of GCE safe exploitation.

The problem of safe driving is put forward as the most important one and by this it is understood that persons accomplishing the certification of the object – GCE, both in case of annual technical inspection and in other types of checking by the supervising inspectors, protect the population and the territory from extraordinary man-caused situations, which actually is a declaration of safety.

It is proposed to consider and include in the conception of national safety a never well-known, but a forgotten and/or not used in practice a supplemented and generalized list of safety components directed toward the complex implementation of normative-lawful, organizational, technical, social-political, economic, educational and informational measures for such objects of increased danger as the GCE.

It is noted the expediency of GCE monitoring that allows the analysis and establishment of the technical conditions, to get weighed answers to the principal questions: **Where are we? What are the contemporary demands? What is proposed and how to reach at least the permissible mark of the hypothetical standard for safety?**

ЭКСПЛУАТАЦИЯ ГАЗОБАЛЛОННЫХ АВТОМОБИЛЕЙ: ЭКОЛОГИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ, РЕШЕНИЯ

АРАМ АЙРАПЕТЯН
Независимый научный эксперт INTAS

Резюме

Кратко освещается мировой опыт эксплуатации газобаллонного оборудования автотранспорта (ГБА) и сведения о мерах по обеспечению безопасности водителей и пассажиров автотранспорта, использующих газовые виды топлива. Особо выделен экологический аспект, биобезопасность. Дана оценка состояния ГБА эксплуатируемых автомобилей Республики Армения как объектов техногенной опасности. Приводится перечень недостатков влияющих на управление и обеспечение безопасности. Показаны причины повышения риска безопасной эксплуатации ГБА.

Выдвинута в число важнейших проблема управления безопасностью, при этом дано понять, что лица, осуществляющие сертификацию объекта – ГБА, как при проведении ежегодных технических осмотров, так и при других видах проверок, надзорными инспекторами, защищают население и территорию от техногенных чрезвычайных ситуаций, что фактически является декларацией о безопасности.

Предлагается для рассмотрения и включения в концепцию национальной безопасности некогда общеизвестный, но забытый и/или неиспользуемый на практике, дополненный и обобщенный перечень компонентов безопасности, направленный на комплексное проведение: нормативно-правовых; организационных; технических; социально-политических; экономических; образовательных и информационных мероприятий таких объектов повышенной опасности, как ГБА.

Отмечена целесообразность мониторинга ГБА, позволяющего анализировать и устанавливать диагноз технического состояния, получить взвешенные ответы на основные вопросы: Где Мы? Каковы современные требования? Что предлагают и как достичь хотя бы допустимой метки гипотетического стандарта безопасности?

ԻՄՔԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՅԱ: Հոդվածում շոշափված են հրատապ խնդիրներ, որոնց լուծումները գտնվում են այնպիսի նախարարությունների և գերատեսչությունների իրավագործության շրջանակներում, ինչպիսիք են էներգետիկան, տրանսպորտը, ներքին գործերը, բնապահպանությունը, արտակարգ իրավիճակները և այլն: Պահանջվում է նրանց գործողությունների համաձայնեցում: Ո՞վ կլինի նախաձեռնողը: Գուցե ՀՀ Ազգային ժողովի հետևյալ մշտական հանձնաժողովներից որեւէ մեկը՝

Պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի

Պետական-իրավական հարցերի

Սոցիալական, առողջապահության և բնության պահպանության հարցերի:

«Վասն արդարության» հանդեսը շահագրգիռ գերատեսչություններին և ՀՀ ԱԺ հանձնաժողովներին կոչ է անում արձագանքելու և պատրաստ է իր էջերում լուսաբանել տրանսպորտային միջոցների անվտանգության և էկոլոգիական անվտանգության ապահովման հարցերը:

ՄԵՅՐԱՆ ԶԱԶԱՐՅԱՆ

Փիլիսոփայական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր

ՀԱՅ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՄԻՏՔԸ
ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆԱՅԻՆ ԵՎ
ԵՎՐՈՊԱԿԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Յուրաքանչյուր ազգի փիլիսոփայական-իրավական մտքի պատմությունն ուսումնասիրելիս և շարադրելիս հետազոտողն անխուսափելիորեն դեմ է առնում ազգային և այլ ազգերի կամ, այլ կերպ ասած, վերազգային՝ համաշխարհային, եվրոպական, տարածաշրջանային փիլիսոփայության և իրավունքի հարաբերակցության հարցին: Իսկ այդ հարցի պարզաբանումն այսօր՝ համաշխարհայնացման (գլոբալիզացիայի) գործընթացների ժամանակաշրջանում, ունի ոչ միայն տեսական, ճանաչողական ու մեթոդաբանական, այլև գործնական ու արժեքային նշանակություն: Բանն այն է, որ խորհրդային կայսրության փլուզումից և Հայաստանի անկախացումից հետո ստեղծվել է բոլորովին այլ մշակութային իրավիճակ. եթե մինչ այդ հայ մշակույթը, փիլիսոփայությունն ու իրավագիտությունը զարգանում էին «փակ հասարակության» և ամբողջատիրական գաղափարախոսության պայմաններում՝ «վերևից» հրահանգավորվող ընդհանուր կանոններով ու չափանիշներով, և «արտաքին աշխարհի» հետ հարաբերվում էին միջնորդավորված ու վերահսկվող խողովակներով, ապա անկախացումից հետո մենք հայտնվել ենք այնպիսի վիճակում, երբ ինքներս պետք է կարողանանք մեզ ներկայացնել մշակույթի տարբեր ասպարեզներում:

Տվյալ դեպքում ինձ հետաքրքրում է հայ-եվրոպական և տարածաշրջանային փիլիսոփայությունների և իրավական մտքի պատմական առնչությունների խնդիրը, ավելի ստույգ՝ տարածաշրջանային և եվրոպական փիլիսոփայության և իրավունքի համատեքստում հայ փիլիսոփայության ու իրավունքի տեղի և դերի, արժեքի և նշանակության հետ կապված հարցը: Խոսքն այսուհետ մասնավորելով առավելապես փիլիսոփայության խնդիրների շուրջ՝ ի մտի ունեն մնա հայ իրավական միտքն այնքանով, որքանով այդ երկուսը փոխկապակցված են, երբեմն՝ մաս փոխապայմանավորված:

Մինչև այժմ հայ փիլիսոփայական մտքի պատմությունը գերազանցապես ներկայացվել է ազգային կեցության և մշակույթի համատեքստում, և, ըստ էության, ուշադրության չի առնվել այն քաղաքակրթությունների և մշակույթների համատեքստը, առանց որի անհնար է պատկերացնել ինչպես հայ փիլիսոփայության զարգացումը, այնպես էլ զմահատել նրա իրական արժեքն ու նշանակությունը: Հետազոտական այսպիսի մոտեցման բացակայությամբ պետք է բացատրել այն տարօրինակ վիճակը, որ ցայսօր հայ փիլիսոփայական ժառանգությունը փաստորեն (որոշ բացառությամբ) դուրս չի եկել ազգային մշակույթի շրջանակներից, չի դարձել համաեվրոպական նշանակություն ունեցող պատմամշակութային երևույթ: Արևմուտքում հայ փիլիսոփայության մասին շատ քիչ կամ, առանց չափազանցելու, գրեթե ոչինչ գիտեն:

Գուցե սա տարօրինակ, սակայն բացատրելի փաստ է: Եթե խորհրդային իշխանության տարիներին ռուսերեն լեզվով հայ փիլիսոփայության մասին հրատարակվում էին մենագրություններ, հոդվածներ, լույս էին տեսնում հայ հեղինակների բնագրեր, ապա մինևույն ժամանակ շատ քիչ բան էր արվում հայ փիլիսոփայությունը եվրոպական լեզուներով ներկայացնելու համար: Համենայն դեպս, այսօր չենք կարող ցույց տալ օտար լեզվով գրված մի աշխատություն, որում քիչ թե շատ ամբողջական ձևով ներկայացված լինի հայ փիլիսոփայական մտքի զարգացման պատմությունը: Տեղեկատվության պակասի հետևանքով հայ փիլիսոփայության մասին արևմտյան գրականության մեջ եղած պատկերացումները հիմնականում կիսատ-պռատ են, թյուր և աղավաղված: Բերեն մի տիպական օրինակ: Հայ փիլիսոփայության պատմաբանի համար անառարկելի իրողություն է, որ առանց Արիստոտելի փիլիսոփայության անկարելի է ներկայացնել միջնադարյան հայ փիլիսոփայության պատմությունը: Ստագիրացու տեսական-տրամաբանական ժառանգությունը վճռական ազդեցություն է ունեցել ինչպես հայ փիլիսոփայության՝ իբրև գիտակարգի ձևավորման, այնպես էլ դրա հետագա զարգացման վրա: Ինչպես հայտնի է, Արիստոտելը հեղինակություն էր ոչ միայն միջնադարյան Հայաստանում, այլև լատինախոս եվրոպայում, Բյուզանդիայում և մուսուլմանական (արաբալեզու) երկրներում: Մասնագիտական գրականության մեջ վաղուց շրջանառության մեջ են «լատինական արիստոտելիզմ», «արաբալեզու (արևելյան) արիստոտելիզմ» հասկացությունները, բացահայտված են դրանց բնորոշ գծերը, զարգացման ընթացքը և այլն: Սակայն գիտական աշխարհին անծանոթ են «հայկական արիստոտելիզմ» կամ «արիստոտելյան ավանդույթները հայ փիլիսոփայության մեջ» արտահայտությունները: Այսպես, 1983թ. Մոսկվայում հրատարակված «Философский энциклопедический словарь» գրքում «Արիստոտելիզմ» հոդվածում ներկայացված է սիրիական, լատինական, բյուզանդական, հրեական և արաբալեզու արիստոտելիզմը, իսկ հայ փիլիսոփայության մեջ արիստոտելիզմի դրսևորման վերաբերյալ չկա նույնիսկ թռուցիկ հիշատակություն: Սա զարմանալի փաստ է, որովհետև խորհրդային տարիներին հայ փիլիսոփայությունը ռուսերեն լեզվով քիչ թե շատ ներկայացվում էր: Հեղինակավոր «The New Encyclopedia Britannica» հանրագիտարանի «Արիստոտելիզմ» հոդվածում պատշաճ մակարդակով ներկայացված է հունական, սիրիական, լատինական, բյուզանդական, արաբալեզու և հրեական արիստոտելիզմը, իսկ հայ փիլիսոփայության մեջ արիստոտելյան ավանդույթների մասին գրված է ընդամենը հետևյալը. «**Լատինական արիստոտելիզմի ձևավորումից քիչ անց Աթենքի և Ալեքսանդր-**

րիայի (Ե՝ իպտոս) հունական դպրոցների որոշ հայ և ասորի ներկայացուցիչներ թարձմանեցին Արիստոտելի երկերը իրենց դպրոցներում: Հայկական ավանդույթը՝ ոչնչացնելով մինչև 19-րդ դարը այնպիսի վայրերում, ինչպիսիք են Մադրասը (Հնդկաստան) և Վենետիկը¹: Եվ դա այն դեպքում, երբ հայկական արիստոտելական ավանդույթն իր հարստությամբ և երկարատևությամբ չի զիջում, դիցուք, սիրիական, բյուզանդական և հրեական ավանդույթին:

Բացի այդ՝ վերոբերյալ բազմաթիվ մեջ առկա են թե՛ վրիպակներ, թե՛ բացթողումներ: Նախ՝ Արիստոտելի աշխատությունների հայերեն թարգմանությունները կատարվել են ոչ միայն Աթենքի և Ալեքսանդրիայի հունական դպրոցներում ուսանած հայազգի մտածողների, այլև Հայաստանում ծնավորված հունաբան դպրոցի ներկայացուցիչների կողմից (5-6-րդ դարերում), երկրորդ՝ ոչ մի խոսք չի ասվում միջնադարի հայ փիլիսոփայության մեջ տարածված արիստոտելյան ավանդույթների մասին (մինչդեռ միջնադարյան Հայաստանում Արիստոտելի տրամաբանական երկերը բազմիցս մեկնաբանվել են, իսկ 17-րդ դարում թարգմանվել և մեկնաբանվել է Ստազիրացու «Մետաֆիզիկա» երկը), երրորդ՝ Մադրասում երբեք չի եղել արիստոտելյան «հայկական ավանդույթ» և այլն: Եվ սրանից հետո ինչո՞ւ զարմանալ, որ, օրինակ, միջնադարյան փիլիսոփայության պատմությունը նվիրված հանրաճանաչ պատմաբանների՝ Է. Ժիլսոնի, Գ. Նոուլսի, Ֆ. Կոպլսթոնի, Գ. Լեֆի և այլոց հիմնարար աշխատություններում որևէ հիշատակություն անգամ չկա միջնադարում հայ փիլիսոփայության գոյության մասին: Թե տվյալ դեպքում ի՞նչ դեր է խաղացել եվրոպակենտրոն դիրքորոշումը, թողնենք մի կողմ, քանզի ակնհայտ է, որ եվրոպացի հետազոտողներն իրենց ձեռքի տակ չեն ունեցել հայ փիլիսոփայության պատմությանը նվիրված ծանրակշիռ այնպիսի հետազոտություններ, որոնք նրանց կապահովեին բավարար և անհրաժեշտ տեղեկատվությամբ: Մինչդեռ հայ փիլիսոփայությունը եվրոպական փիլիսոփայության համատեքստում դիտարկելու դեպքում ի հայտ կգան երկուստեք հետաքրքրություններ կայացնող բազմաթիվ փաստեր: Օրինակ, մի՞թե եվրոպացի փիլիսոփա միջնադարագետին հետաքրքիր չէ, որ, դիցուք, Կեղծ-Դիոնիսիոս Արեոպագացու երկերն առաջին անգամ թարգմանվել են հայերեն լեզվով 8-րդ դարում, որ արեոպագիտյան փիլիսոփայությունը որոշակի ազդեցություն է ունեցել հետագա դարերի հայ փիլիսոփայական մտքի վրա, որ եվրոպական սխոլաստիկական փիլիսոփայության խոշորագույն մտածողների՝ Ժիլբերտ Պոռետացու, Ալբերտ Մեծի, Թոմաս Աքվինացու և այլոց որոշ երկեր հայերեն թարգմանվել են 14-րդ դարում, որ եվրոպական երկրներում տարածված որոշ աղանդավորական շարժումների հիմքում ընկած էր Հայաստանում ծագած պավլիկյան գաղափարախոսությունը և այլն:

Թող այն տպավորությունը չստեղծվի, թե եվրոպական փիլիսոփայության մեջ «տեղ» գրավելու ձգտումն ազգային սնապարծության դրսևորում է կամ էլ պատմական փաստերի արդիականացման արտահայտություն: Ընդհակառակը, մեր կրավորական կեցվածքի և անգործության պատճառով մասնագիտական գրականության մեջ հայ մշակույթի և փիլիսոփայության վերաբերյալ արմատավորվում են թյուր

տեսակետներ, որոնք հետագայում դժվար կլինի վերափոխել: Այս կապակցությամբ ուշադրության է արժանի Հ. Գևորգյանի «Հայ ժողովրդի պատմությունը և մշակույթը Առնոլդ Թոյնբրիի պատմափիլիսոփայության տեսանկյունից» հոդվածը, որտեղ հեղինակը պատմական փաստերի վկայակոչմամբ ցույց է տալիս, որ Առնոլդ Թոյնբրիի կանխակալ մոտեցումը հայ ժողովրդի պատմությանը և նրա մշակույթին պայմանավորված է շատ փաստերի չիմացությամբ կամ հայեվրոպական մշակութային առնչությունների համարժեք լուսաբանման բացակայությամբ²: Կարող ենք մնանալով բազմաթիվ օրինակներ բերել նաև փիլիսոփայության պատմության բնագավառից: Այսպես, 14-րդ դարի հայ-եվրոպական փիլիսոփայական առնչությունները բացառիկ նշանակություն ունեն ոչ միայն հայ, այլև եվրոպական փիլիսոփայության որոշ հարցերի լուսաբանման համար: Միջնադարագետ Է. Ժիլսոնը «Քրիստոնեական փիլիսոփայության պատմությունը միջին դարերում» հանրահայտ աշխատության մեջ մի էջ է նվիրել Փարիզում աստվածաբանությունը դասավանդած, հետագայում Բոլոնիայի աստվածաբանական դպրոցը գլխավորած Բարդուղիմեոս Բոլոնիացու փիլիսոփայական-աստվածաբանական հայացքների լուսաբանմանը: Է. Ժիլսոնը փաստանքով նկատում է, որ դեռևս լավ չուսումնասիրված այդ մտածողի «հետքը 1294 թվականից հետո կորչում է»³: Մինչդեռ հայտնի է, որ Բարդուղիմեոս Բոլոնիացի անունով մի կաթոլիկ (թեև միանշանակորեն չեն կարող պնդել, թե դա նույն Բոլոնիացին է. դրա համար անհրաժեշտ է լրացուցիչ հետազոտություն) քարոզչական և գիտակրթական գործունեություն է ծավալել Արևելքում, ի մասնավորի՝ Հայաստանում, որտեղ էլ կնքել է իր մահկանացուն: Նրա գրչին են պատկանում հայերեն լեզվով պահպանված աստվածաբանական և փիլիսոփայական-տրամաբանական աշխատություններ, որոնք կարևոր դեր են խաղացել 14-րդ դարի հայ փիլիսոփայական մտքի զարգացման գործում: Սա ոչ թե առիթ է պարզապես հիշատակելու Հայաստան անունը, այլ ուշագրավ փաստ՝ անդրադառնալու և թուրքիկ լուսաբանելու տվյալ ժամանակաշրջանի հայ փիլիսոփայական մտքի վիճակը թեկուզև եվրոպական փիլիսոփայության տեսանկյունից: Մի՞թե միջնադարյան սխոլաստիկական փիլիսոփայության պատմության, հատկապես թոմիստական փիլիսոփայության հետազոտողի համար անհետաքրքիր և անկարևոր է այն փաստը, որ «իրեշտական դոկտորի» որոշ աշխատություններ առաջին անգամ թարգմանվել են հայերեն լեզվով, այն էլ՝ նրա մահվանից ընդամենը հիսուն տարի անց, որ նա գրել է «Ընդդեմ հայոց» կրոնադավանաբանական աշխատությունը, որ նրա որոշ գաղափարներ յուրացվել և քննադատվել են միջնադարյան հայ փիլիսոփաների կողմից:

Սակայն տվյալ դեպքում «մեղավորը» ոչ թե բացից անտեղյակ եվրոպացի պատմաբանն է, այլ՝ հայ հետազոտական միտքը, որ մասնաբնույթ, դրամից էլ ավելի արժեքավոր փաստեր պատշաճ մակարդակով չի դրել գիտական շրջանառության մեջ: Անշուշտ, դա բնավ էլ չի նշանակում, թե մասնատիպ փաստերի բացահայտում-տարածումը բավարար է «տեղ» գրավելու եվրոպական փիլիսոփայության պատմության մեջ: Խնդիրը, իսկն ասած, դա չէ, այլ ազգային փիլիսոփայության պատմության ներկայացման այնպիսի

ծների մշակումը, որը մի կողմից՝ հնարավորություն կտա ազգային փիլիսոփայությունը «տեղավորել» ավելի ընդհանուր փիլիսոփայության համատեքստում, իսկ մյուս կողմից՝ ազգային փիլիսոփայության մեջ ցույց տալ ավելի ընդհանուր փիլիսոփայության ներկայությունը:

Հարկ է նշել, որ իրավիճակը մխիթարական չէ անգամ այն դեպքերում, երբ փիլիսոփայապատմական որոշ իրողություններ ու փաստեր, առանձին մտածողների ուսմունքներ ներկայացվել են գիտական հանրությանը: Ամմիսիսթար է այն առումով, որ դրանց հետ կապված վիճահարույց բազմաթիվ հարցեր ժամանակի ընթացքում չեն ստանում անհրաժեշտ լուսաբանում: Ասվածի լավագույն վկայություն կարող է հանդիսանալ Դավիթ Անհաղթի ժառանգության հետ կապված խնդիրը: 1980թ. միջազգային մակարդակով Դավիթ Անհաղթի ծննդյան 1500-ամյակը տոնելուց հետո այս ուղղությամբ աննշան գործեր են արվել: Մինչդեռ կամ լուրջ խնդիրներ, որոնց ուսումնասիրության դեպքում կհարստանան մեր պատկերացումներն ինչպես Դավիթ Անհաղթի, այնպես էլ միջնադարյան հայ փիլիսոփայության մասին: Նշեն դրանցից մի քանիսը. ա) մեզ հայտնի Անհաղթյան չորս աշխատություններից գառ կան անանուն երկեր, որոնց հեղինակը աննշան հավանականությամբ Դավիթ Անհաղթն է. բ) Անհաղթի փիլիսոփայությունը ուսումնասիրված չէ Ալեքսանդրյան և տվյալ ժամանակահատվածի փիլիսոփայության համատեքստում. գ) հանգամանորեն ուսումնասիրված չէ Անհաղթի փիլիսոփայության ազդեցությունը բյուզանդական և արաբալեզու փիլիսոփայության վրա. դ) ցայսօր Անհաղթի «Արիստոտելի «Կատեգորիաների մեկնություն»» աշխատությունն ամբողջությամբ թարգմանված չէ հայերեն և այլն, և այլն: Հասկանալի է, որ նշված և չնշված խնդիրներին չանդրադառնալով՝ հայ հետազոտական միտքը ոչ միայն պարզապես թերանուն, այլև բաց է թողնում ավելի ընդհանուր համատեքստում հայ փիլիսոփայական արժեքները գիտական հանրությանը ներկայացնելու իրական հնարավորությունը: Ազգային փիլիսոփայությունն ավելի ընդհանուր փիլիսոփայական համատեքստում ներկայացնելու կապակցությամբ անդրադառնանք մեթոդաբանական բնույթի որոշ հարցերի պարզաբանման:

Յուրաքանչյուր փիլիսոփայական համակարգ անհատական, ազգային և համամարդկային տեսական ու գործնական փորձի իմաստավորման արդյունք է, որում դրսևորվում է մարդկային գոյության երեք չափումների՝ անհատականի, ազգայինի և համամարդկայինի ներկայությունը: Այս իմաստով փիլիսոփայությունը կարող ենք դիտարկել երեք տեսանկյունից՝ փիլիսոփայությունն իբրև անհատի ինքնության արտահայտություն, փիլիսոփայությունն իբրև ազգային ինքնության և ինքնագիտակցության արտահայտություն, փիլիսոփայությունն իբրև համամարդկային մշակութային երևույթ:

Ըստ այդմ էլ՝ փիլիսոփայության պատմությունը կարող ենք ներկայացնել իբրև մեծ մտածողների ուսմունքների պատմություն, որպես առանձին ազգերի փիլիսոփայության պատմություն և ընդհանուր կամ համաշխարհային փիլիսոփայության պատմություն: Փիլիսոփայության պատմության ներկայացման առաջին և երրորդ ձևերը թեև արտաքինապես տարբերվում են իրարից, այնուհանդերձ՝ բովանդակային ա-

ռունով դրանք կարող են համընկնել, կամ էլ հարկ եղած դեպքում դրանց միջև գոյություն ունեցող տարբերությունները կարելի է հասցնել նվազագույնի: Առաջին մոտեցման դեպքում ուշադրության կենտրոնում են հայտնվում այն մտածողները, ովքեր ստեղծել են համապարփակ, ինքնատիպ ուսմունքներ և վիթխարի ազդեցություն ունեցել փիլիսոփայական մտքի հետագա զարգացման վրա: Առանց այդ մտածողների փիլիսոփայական վարդապետությունների լուսաբանման՝ գրեթե անհնար է շարադրել փիլիսոփայական մտքի պատմությունը: Օրինակ, անհնար է պատկերացնել եվրոպական փիլիսոփայության պատմությունն առանց Պլատոնի, Արիստոտելի, Օգոստինոսի, Աբելինացու, Դեկարտի, Կանտի, Գեյտեի, Լիցցեի, Գայդեգերի և ուրիշների փիլիսոփայության: Այսինքն՝ շարադրել մեծ փիլիսոփաների վարդապետությունները՝ նշանակում է շարադրել համաշխարհային փիլիսոփայության պատմությունը՝ ուշադրությունը հիմնականում բեռնելով փիլիսոփայական հիմնարար գաղափարների, սկզբունքների ձևավորման և ձևափոխման հոլովույթի վրա: Դա, ինչպես հայտնի է, փիլիսոփայապատմական նյութի վերակազմության տրամաբանական սկզբունքի կիրառման առանձնահատկությունն է: Այս դեպքում որևէ ազգային փիլիսոփայություն ներառվում է համաշխարհային փիլիսոփայության պատմություն այնքանով, որքանով նպաստել է այդ փիլիսոփայական գաղափարների լինելությանը և փիլիսոփայական մտքի հետագա զարգացմանը: Ինքնուրույնության հասկանալի է, որ ներառվում է ոչ թե ամբողջ ազգային փիլիսոփայությունը, այլ դրա միայն այն մասը, որը համընդհանուր արժեք է նշանակություն ունի: Չընդգրկված մասը, որը, ի դեպ, նվազ դեր չի խաղացել «վերին» մասի փայլատակման համար, մնում է ազգային փիլիսոփայության ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում: Նման բախտի է արժանանում նաև այն ազգերի փիլիսոփայությունը, որն «ուղեկցել» և ոչ թե «առաջնորդել» է փիլիսոփայական գաղափարների զարգացումը: Այս դեպքում կիրառվում է փիլիսոփայապատմական նյութի վերակազմության պատմականության սկզբունքը: Դրա շրջանակներում ազգային փիլիսոփայությունը կարող է հետաքրքրություն առաջացնել այլ կապակցությամբ և այլ տեսանկյունից, ինչը վկայում է դրա արժեքավորության մասին: Օրինակ, 14-րդ դարի հայ փիլիսոփայությունը, որքան հայտնի է, ոչ մի ազդեցություն չի ունեցել նույն կամ հաջորդ դարի եվրոպական փիլիսոփայության վրա, ուստի փիլիսոփայության պատմաբան այն կարող է չներառել եվրոպական փիլիսոփայության պատմություն: Մինչույն ժամանակ՝ այդ փիլիսոփայությունն արժեք է ներկայացնում **ճախ**՝ այն առումով, որ դա եվրոպական իմաստասիրման տիպի մեջ մտնող հայ փիլիսոփայության միջնադարյան փուլի զարգացման գազաթնակետն է. **երկրորդ**՝ այդ փիլիսոփայությունը հետաքրքրություն է ներկայացնում հայ-եվրոպական փիլիսոփայական առնչությունների ուսումնասիրության տեսանկյունից. **երրորդ**՝ եվրոպացի մի շարք միջնադարյան մտածողների, հատկապես՝ Թոմաս Աբելինացու փիլիսոփայության տարածման և ազդեցության շրջանակները ճշտելու կապակցությամբ. **չորրորդ**՝ Հռոմի կաթոլիկ եկեղեցու աշխարհակալ նկրտումների դեմ ազգային կրոնափիլիսոփայական մտքի դիմակայության փոր-

ծի տեսանկյունից:

Ազգային փիլիսոփայության պատմությունն ուսումնասիրելիս ու շարադրելիս անհրաժեշտ է նկատի ունենալ ոչ միայն ազգային, այլև պատմամշակութային և փիլիսոփայական այն համատեքստը, որտեղ և որի շնորհիվ ձևավորվել ու զարգացել է այդ փիլիսոփայությունը: Այդ համատեքստը պատմականորեն փոփոխվում է, բայց բոլոր դեպքերում այն մնում է ոչ թե աշխարհագրական, այլ հոգևոր-մշակութային տարածություն: Պատմամշակութային համատեքստը բազմաձև է երևույթ է և ներառում է մի շարք մշակութային տարածքներ՝ ազգային, տարածաշրջանային, ընդհանուր և համաշխարհային: Դրանց միջև գոյություն ունեն հորիզոնական և ուղղահայաց կապեր ու հարաբերություններ, որոնց ինտենսիվության աստիճանը կախված է միասնականացման, փոխադարձ շփումների մակարդակից: Անշուշտ, ստեղծագործող անհատի համար գոյություն ունի մեկ միասնական մշակութային տարածք՝ բազմազան և այլասեռ ավանդույթներով, որոնք իրզեհարազատ են դառնում այնքանով, որքանով յուրացվում են: Բնական է, որ որևէ ազգային փիլիսոփայության պատմությունն ուսումնասիրելիս հարկավոր է նախ և առաջ հաշվի առնել ազգային և տարածաշրջանային փիլիսոփայական համատեքստը, քանի որ դրանք գտնվում են ազգակցական ավելի սերտ կապերի մեջ, քան, ասենք, ազգային և համաշխարհային տարածքները: Համաշխարհային փիլիսոփայությունն ընդգրկում է տիպաբանորեն տարբեր փիլիսոփայություններ, որոնք ունեցել են զարգացման ուրույն տրամաբանություն: Օրինակ, հայ փիլիսոփայական միտքն իր տիպաբանական առանձնահատկություններով պատկանում է իմաստասիրման արևմտաեվրոպական տիպին, իսկ չինական փիլիսոփայությունը՝ արևելյան տիպին: Անհրաժեշտության դեպքում հնարավոր է դրանք իրար հետ համեմատել, ընդհանուր ինչ-ինչ եզրեր գտնել, սակայն հայ փիլիսոփայության պատմությունը շարադրելիս այդ համեմատությունը չի ունենա իմացական մեծ արժեք: Ավելին՝ նույնիսկ ընդհանուր մշակութային տարածքում գտնվող ազգերի փիլիսոփայությունների համեմատությունը դառնում է անտեղի, եթե դրանց միջև գոյություն չունեն պատմական և տրամաբանական փոխառնչություններ, ուղղակի կամ միջնորդավորված փոխշփումներ: Այսինքն՝ չպետք է թռիչք գործել մշակութային տարածքների վրայով, եթե դրա անհրաժեշտությունը չկա:

Սակայն, մյուս կողմից, չպետք է մեխանիկորեն բացատրել ազգային և տարածաշրջանային համատեքստերի հարաբերակցությունը: Գտնվել տվյալ տարածաշրջանային մշակութային տարածքում՝ դեռ չի նշանակում լինել տարածաշրջանային մշակութային գործընթացների մասնակից: Հարկավոր է ցուցաբերել տարբերակված մոտեցում, այսինքն՝ նախևառաջ ճշտել տվյալ ազգի մասնակցության աստիճանը տարածաշրջանային մշակութային կյանքում: Չի բացառվում այն դեպքը, երբ ֆիզիկապես լինելով տարածաշրջանային մշակութային տարածքում՝ պատմական տարբեր հանգամանքների պատճառով ազգային փիլիսոփայական միտքը ժամանակավորապես հայտնվում է «խաղից դուրս» վիճակում և անհաղորդակից դառնում տարածաշրջանում ընթացող հոգևոր գործընթացներին: Այդ կապակցությամբ անհրաժեշտ է զանազանել ընդհանուր և տարածաշրջանային մշակութային կյանքին

մասնակցելու երկու վիճակ՝ ներգործական (ակտիվ) և կրավորական (պասիվ):

Ներգործական վիճակն այն է, երբ տվյալ ազգի փիլիսոփայական միտքը ներհյուսված է ընդհանուր փիլիսոփայական մտքին, հանդիսանում է դրա օրգանական մասը: Եթե այդ ընդհանուր փիլիսոփայությունը ներկայացնենք որպես երկխոսություն, ապա ներգործական վիճակում գտնվող ազգային միտքը կլինի այդ երկխոսության ակտիվ մասնակիցը և «եղանակ» ստեղծողը: Տարածաշրջանային կամ ընդհանուր փիլիսոփայության մեջ ազգային փիլիսոփայության ներառվածության այդպիսի աստիճանը դրան ինքնըստինքյան դարձնում է ընդհանուր փիլիսոփայական արժեքների կրող և արարող: Այս պարագայում ազգային փիլիսոփայությունը դուրս է գալիս գուտ ազգային շրջանակներից և դառնում է տարածաշրջանային երևույթ: Իսկ ազգային փիլիսոփայական համատեքստը գրեթե համընկնում է տարածաշրջանային փիլիսոփայական համատեքստին: Օրինակ, միջնադարում արևմտաեվրոպական ազգերի պատմական ու մշակութային կյանքի անմխաղեպ միասնականացման հետևանքով գոյացավ վերագաղային, համաեվրոպական փիլիսոփայություն, որը, իբրև ամբողջություն, շարժում ու կենսունակ հոգևոր կազմավորում էր: Առանց այդ համաեվրոպական համատեքստի՝ հնարավոր չէ պատկերացնել եվրոպական որևէ ազգի փիլիսոփայությունը: Այսպես, շարադրել միջնադարյան ֆրանսիական փիլիսոփայության պատմությունը՝ նշանակում է համարյա շարադրել միջնադարյան եվրոպական փիլիսոփայության պատմությունը, կամ, այլ կերպ ասած, անհնար է շարադրել միջնադարյան ֆրանսիական փիլիսոփայության պատմությունը՝ առանց ներառելու եվրոպական մյուս ազգերի փիլիսոփայությունը: Արդեն միջնադարում եվրոպայում ձևավորվեցին համաեվրոպական փիլիսոփայական ավանդույթներ, որոնք այնքան կենսունակ գտնվեցին, որ երբ ազգային պետությունների կազմավորմանը համընթաց փիլիսոփայության լեզուն ազգայնացվեց, այնուհանդերձ չխարխվեց եվրոպական փիլիսոփայության միասնությունը և դրա զարգացման տրամաբանությունը: Ավելին՝ եվրոպականը գերիշխող մնաց ազգային ավանդույթի նկատմամբ: «Եթե մենք հանրա · ումարի բերենք մեր հո · ևոր պաշարը՝ հավատալիքները և կանոնները, ցանկությունները և կարծիքները,- գրում է իսպանացի փիլիսոփա Խ. Օրտեգա-ի-Գասետան,- ապա կտեսնենք, որ դրանց մեծ մասը իր ծա · մամբ պարտական է ոչ թե հայրենական, այլ համաեվրոպական ֆոնդին: Մեզնից յուրաքանչյուրի մեջ եվրոպացին նշանակալիորեն · երիշխում է · երմանացու, իսպանացու, ֆրանսիացու նկատմամբ: Եթե մենք փորձենք ապրել միայն այն բանով, ինչը մեր մեջ «յուրային», «ազ · ային» է, եթե մենք, օրինակ, ցանկանայինք միջին ֆրանսիացուն կամ · երմանացուն զրկել բոլոր այն սովորույթներից, մտքերից, գ · ացմունքներից, բառերից, որոնք նա փոխառել է ուրիշ ժողովուրդներից, կմնանք սաստիկ զարմացած, բանի որ կպարզվի, որ դա պարզապես անհնարին է. մեր ներքին հարստության չորս առ հին · ը համաեվրոպական սեփականություն է»⁴:

Կրավորական է այն վիճակը, երբ տարածաշրջանային կամ ընդհանուր մշակութային տարածքում գտնվող որևէ ազգի փիլիսոփայություն հանգամանք-

ների բերումով հայտնվում է «խաղից դուրս» վիճակում, դառնում հանդիսատես կամ էլ խխունջի պես փակվում սեփական պատյանում՝ անհաղորդ մնալով աշխարհում տեղի ունեցող մշակութային գործընթացներին: Նման դեպքում հնարավոր է ազգային փիլիսոփայության գոյության մի քանի վիճակ՝

ա) փիլիսոփայական մտքի անկում, որը կարող է դարեր տևել:

բ) ինքնամեկուսացում, փիլիսոփայական ավանդույթների պարզունակ վերարտադրություն, որի դեպքում տվյալ ազգային փիլիսոփայությունը վերածվում է «լուսանցքային» երևույթի և երկար շարունակվելու դեպքում՝ դառնում ժամանակավրեպ:

գ) կղզիացում ընդհանուր փիլիսոփայական գործընթացներից, սակայն փիլիսոփայական մտքի ինքնուրույն զարգացում՝ շնորհիվ ներքին հոգևոր կարողությունների ծավալման:

Այս վերջին դեպքում նույնիսկ հնարավոր են մտքի փայլատակումներ, խոր կռահումներ, որոնք, սակայն, դարերով անհայտ մնալով, այլևս երկար ժամանակ ոչ մի ազդեցություն չեն կարող ունենալ տարածաշրջանային փիլիսոփայական մտքի զարգացման վրա: Դա մշակութային ողբերգություն է ինչպես տվյալ ազգի, այնպես էլ միևնույն հոգևոր տարածքին պատկանող ազգերի համար: Օրինակ, 10-րդ դարի հայ մեծանուն բանաստեղծ, մտածող Գրիգոր Նարեկացու «Մատենան ողբերգութեան» ստեղծագործությունը, որը քրիստոնեական «սրտի փիլիսոփայության» անզուգական մարմնավորում է, «ներքին մարդու» քրիստոնեական վարդապետության ինքնատիպ մեկնաբանություն, միջնադարում դուրս չգալով ազգային մշակույթի շրջանակներից, ինչպես հողում թաղված գանձ, մնաց անծանոթ երուպացիների համար:

Այն դեպքում, երբ ազգային փիլիսոփայությունն այս կամ այն չափով մասնակցում է տարածաշրջանային փիլիսոփայության կայացման գործընթացին, ապա այդ փիլիսոփայության ուսումնասիրությունը պետք է կատարվի երկու տեսանկյունից՝ ազգային և տարածաշրջանային:

Բերեն մի օրինակ: Քրիստոնեության ընդունումից հետո հայ մշակույթը և նորաստեղծ ազգային կրոնափիլիսոփայական միտքը դարձան համայն քրիստոնեական, իսկ ավելի ստույգ՝ արևելաքրիստոնեական աշխարհի մշակույթի և փիլիսոփայության օրգանական մասը: Արևելաքրիստոնեական տարածաշրջանային մշակութային կյանքում այն փոխմիփոխ հայտնվել է ներգործական-կրավորական վիճակներում, սակայն երբեք, նույնիսկ կրոնադավանական պայքարի ժամանակաշրջանում չի մեկուսացել, միևնույն ժամանակ՝ քաղաքական հանգամանքների բերումով չի կարողացել առաջատարի դեր կատարել տարածաշրջանային մշակութային կյանքում կամ չի կարողացել առաջատար դիրքերը պահպանել:

Դրսևորելով իր ներքին հոգևոր կարողությունների մի չնչին մասը՝ հայ ազգային միտքը, այնուհանդերձ, ստեղծեց փիլիսոփայական այնպիսի աշխատություններ (թե՛ մեկնաբանական և թե՛ ինքնուրույն), որոնց մշակությունը դուրս է գալիս ազգային մշակույթի սահմաններից: Դրանցից մեկը Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց» երկասիրությունն է՝ հայ քրիստոնեական ջատագովական փիլիսոփայության թագուհին: Սակայն եթե «Եղծ աղանդոց»-ը դիտարկենք սոսկ իբրև ազգային- ազատագրական պայքարի գա-

ղափարական հիմնավորման փորձ, իբրև միայն ազգային կեցությամբ պատճառավորված ստեղծագործություն, ապա արհեստականորեն կնվազեցնենք դրա արժեքն ու մշակութային: Ընդհակառակն, այդպիսի մեկնաբանության հետ մեկտեղ «Եղծ աղանդոց»-ը պետք է ներկայացնել որպես առհասարակ քրիստոնեական ջատագովական գրականության մնուշ, արևելաքրիստոնեական տարածաշրջանում կրոնափիլիսոփայական բնույթի հարցադրումների «ազգայնացված» պատասխան, համաքրիստոնեական իմաստասիրման որոշակի ոճի և մտածելակերպի դրսևորման փաստ: Այսինքն՝ «Եղծ աղանդոց»-ը հասկանալու և մեկնաբանելու համար պետք է դա դիտարկել թե՛ ազգային, թե՛ տարածաշրջանային և թե՛ համայն քրիստոնեական կրոնափիլիսոփայական մտքի համատեքստում: Ընդամին՝ խնդիրը պետք է ոչ թե հանգեցնել մերկապարանոց գնահատումներին և համեմատություններին, այլ սկզբնաղբյուրների ուսումնասիրության հիման վրա կատարել մանրակրկիտ, բազմակողմանի, փաստարկված վերլուծություններ:

Այդպիսի մոտեցման դեպքում հայ փիլիսոփայության պատմաբանի ուսումնասիրության առարկա պետք է դառնան, դիցուք, 5-րդ դարում հայերեն թարգմանված կրոնափիլիսոփայական աշխատությունների հեղինակների, հատկապես «կապաղովկյան հայրերի»՝ Բարսեղ Կեսարացու, Գրիգոր Նազիանզացու, Գրիգոր Նյուսացու և այլոց վարդապետությունները: Նրանք այն մտածողներն էին, ովքեր, ինչպես գրում է Լազար Փարպեցին, «**րով մեզ պալանդեցին փրկարծ վարդապետությունը**»: Այնչափ մեծ է նրանց վարդապետությունների դերը հայ քրիստոնեական փիլիսոփայության ծնավորման և զարգացման գործում, որ առանց նրանց ուսմունքների շարադրման, լուսաբանման ու զնահատման՝ թերի պատկերացում կունենանք տվյալ դարաշրջանի հայ կրոնափիլիսոփայական մտքի վերաբերյալ: Չպետք է անտեսել նաև ոչ քրիստոնեական, տվյալ դեպքում՝ իրանական պատմամշակութային համատեքստը, որը շատ առումներով պայմանավորել է «Եղծ աղանդոց»-ը բովանդակության ուղղվածությունը:

Եթե հայ հետազոտողը կարողանա այդ համատեքստում վերլուծել Կողբացու «Եղծ աղանդոց»-ը և, առհասարակ, 5 -րդ դարի հայ փիլիսոփայական միտքը, այսինքն՝ կարողանա դա «տեղավորել» տարածաշրջանային փիլիսոփայության մեջ, իսկ վերջինս էլ՝ հայ փիլիսոփայության մեջ, որքանով որ դա անհրաժեշտ է ընդգրկել, ապա դրանով իսկ կբարձրանա ազգային փիլիսոփայական մտքի արժեքն ու մշակութային: Օրինակ, միայն այն փաստի բացահայտումը, որ «Եղծ աղանդոց»-ի շնորհիվ պահպանվել է գրադաշտականության, ավելի ստույգ՝ գրվածականության մասին մեզ հասած տեղեկությունների հիմնական մասը, բավական է, որ այդ աշխատությունը դիտենք որպես տվյալ ժամանակաշրջանի կրոնափիլիսոփայական ոգին արտահայտող մեծարժեք երկ:

Ի դեպ, այսպիսի մոտեցման դասական մնուշ կարելի է համարել Ն. Ադոնցի «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում» կոթողային աշխատությունը: Նշանավոր հայագետը ելնում է այն դիրքորոշումից, որ տեղական (տվյալ դեպքում՝ հայկական) և ընդհանուր (տվյալ դեպքում՝ բյուզանդական) պատմա-

մշակութային երևույթները դիտարկելիս անհրաժեշտ է հետազոտությունն իրականացնել երկու կողմից: Բյուզանդականությունը՝ որպես պատմամշակութային երևույթ, սխալ կլինի համարել հույն ազգի արարչության արդյունք: Դա «բազմակողմանիորեն ուսումնասիրելու և ճիշտ բնորոշելու համար անհրաժեշտ է հաշվի առնել այն ամենը, որ ցեղային առանձին աշխարհները ներդրում էին պետական և հոգևոր կյանքի ընդհանուր գանձարանը: Նրանց մեջ հայոց աշխարհին և առհասարակ արևելյան ծայրերկրին պատկանում էր առաջին տեղերից մեկը. նրա ավանդը կայսրության ընդհանուր կյանքի մեջ չափազանց մեծ էր: Մյուս կողմից, նույնքան ճիշտ է և այն, որ կայսրության հունի մեջ ներգրավված արևելյան երկրները իրենց հերթին կրում էին կայսրության կրթական հզոր ազդեցությունը: Այս իմաստով Հայաստանի հարաբերությունը Բյուզանդիայի հետ մասի հարաբերությունն է ամբողջի հետ: Հետագոտել հայկականը Բյուզանդիայում և բյուզանդականը Հայաստանում՝ մի խնդիր է, որի մեջ հավասարապես շահագրգռված են և՛ հայագիտությունը, և՛ բյուզանդագիտությունը: Այստեղ անհրաժեշտ է հաշվի նստել երկու տեսակետների հետ էլ. կանգնելով բացառապես կայսրության տեսակետի վրա՝ կարելի է շատ բան չնկատել, և, ընդհակառակը, հնարավոր է նույնպիսի վտանգ մեղ հայկական տեսակետից: Երևույթներն ըստ արժանվույն գնահատելու համար պետք է հաշվի առնել ինչպես կայսրության, այնպես էլ տեղական չափանիշը»⁵: Այսպիսով՝ որևէ ազգային փիլիսոփայության պատմությունը շարադրելու դեպքում անհրաժեշտ է ոչ միայն դա ներկայացնել ազգային կեցության և

մշակույթի համատեքստում (ինչն ինքնաբերաբար հանգեցնում է ազգային փիլիսոփայական արժեքների թերագնահատմանը), այլև ցույց տալ տվյալ ազգային փիլիսոփայության մասնակցության աստիճանը տարածաշրջանային և ընդհանուր փիլիսոփայական գործընթացներում: Եթե այդ մասնակցությունն ակնհայտ է կամ նշմարելի, ապա ազգային փիլիսոփայական միտքը պետք է ներկայացվի ոչ միայն իբրև ազգային, այլև տարածաշրջանային և ընդհանուր մշակութային-փիլիսոփայական երևույթ: Այս պարագայում ազգային փիլիսոփայական մտքի պատճառավորվածության շրջանակները պետք է ընդարձակվեն՝ ներառելով ոչ միայն ազգային, այլև վերազգային գործոնները: Դրանով իսկ մենք հնարավորություն կունենանք ազգային փիլիսոփայությունը վերլուծելու և գնահատելու թե՛ ազգային, թե՛ տարածաշրջանային, թե՛ եվրոպական փիլիսոփայության զարգացման տեսանկյունից:

¹ The New Encyclopedia Britannica in 30 volumes, v.1, London, 1984, p. 1156.
² Հ. Գևորգյան, Հայ ժողովուրդի պատմությունը և մշակույթը Առնոլդ Թոյնբիի պատմափիլիսոփայության տեսանկյունից, «Մխր» 2, 1994:
³ Gilson E. History of Christian Philosophy in the Middle Ages. London, 1956, p. 342.
⁴ X. Ортега-и-Гассета. Восстание масс, Вопросы философии. 1989, N 4, с. 150.
⁵ Ն. Արմնց, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Երևան, 1987, էջ 6:

ARMENIAN PHILOSOPHICAL THOUGHT
 IN THE CONTEXT OF TERRITORIAL
 AND EUROPEAN PHILOSOPHY

SEYRAN ZAQARYAN
 Doctor of Philosophy, Professor

Summary

In case of composing any national philosophical history, it is important not only to introduce that in the context of national being and culture, (which spontaneously brings to underestimation of national philosophical values) but also to show the given national philosophical participation degree in territorial and general philosophical processes. If the participation is obvious or noticeable, the national philosophical thought should be introduced not only as national, but also territorial and general cultural – philosophical phenomenon. In this circumstance the motivation of the national philosophical frameworks should be broaden involving not only national but also up national factors. Thus, we will have opportunity to analyze and estimate from national, territorial and European philosophical development point of view.

АРМЯНСКАЯ ФИЛОСОФСКАЯ МЫСЛЬ
 В ТЕРРИТОРИАЛЬНОМ И ЕВРОПЕЙСКОМ
 ФИЛОСОФСКОМ КОНТЕКСТЕ

СЕЙРАН ЗАКАРЯН
 Доктор философских наук, профессор

Резюме

В случае изложения какой-либо национальной философской истории необходимо представить это не только в контексте национального и культурного бытия (что само по себе приводит к недооценке национальных философских ценностей), а показать степень участия данной национальной философии в общих и территориальных философских процессах. Если это участие очевидно или чуть заметно, то национальная философская мысль должна быть представлена не только в качестве национальной, а также как общее и территориальное культурно-философское явление. В этой связи мотивированность национальной философской мысли должна быть раскрыта, включая не только национальные, но и наднациональные факторы. В этом случае нам представится возможность проанализировать и оценить национальную философию как с национальной, с территориальной, так и с точки зрения европейской философии.

ԳՈՒՐԳԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Բանասիրական իրությունների որկրորդ

ԼԻՒԹ ԴԵՏՐՈՍՅԱՆ

ՆԱՐԵԿԱՅԻՆ՝ ԲԱՌԱՍՏԵՂԾ

Գրիգոր Նարեկացին հայ բազմադարյան մշակույթի պատմության մեջ իր անջնջելի դրոշմն է թողել մի շարք տեսանկյուններից: Մի հոդվածի սահմաններում հնարավոր չէ բոլորին անդրադառնալ, ուստի ստորև կքննարկենք դրանցից մեկ-երկուսը միայն:

Նարեկացին գրական ասպարեզ է իջել գրաբարի և միջին հայերենի սահմանազլխին, երբ դասական հայերենով անթերի գրելը հատուկեմտ օժտվածների մեաշնորի էր համարվում: Նա հենց այդ օժտվածներից մեկը եղավ: Ավելին՝ նա դասական հայերենի՝ 5-րդ դարից ի վեր հնչող զանգի վերջին լիարժեք դղանջը դարձավ՝ եզրափակելով հայ պատմիչներով ու թարգմանիչներով սկսվող փառահեղ անունների շարքը: Այդ շարքը նա եզրափակեց ոչ թե ժամանակագրական տեսանկյունից՝ սոսկ հաջորդելով Դավիթանես Դրասխանակերտցուն ու Թովմա Արծրունուն, որոնց «Պատմութիւն...»-ներում ակնհայտորեն մեռնում է հոգեվարքի մեջ ջղածվող գրաբարը: Նարեկացին եզրափակեց գրաբարի նախկին փառքին վայել դողանջով: Նա գրեց անթերի գրաբարով և գրեց ոչ թե հայոց պատմությունը, այլ արժարժեց բոլորովին նոր թեմաներ, կիրառեց նոր ժանրեր և նոր՝ նարեկացիական ոճ: Նա մի դղանջ էր, որը, յուրօրինակ ավարտ լինելով, միաժամանակ սկիզբը դարձավ տակավին նոր ելելունների: Նա, իրո՞ք, վերածննդի դղանջ էր:

Գրիգոր Նարեկացու բառապաշարի քննությունը ցույց է տալիս, որ նա ոչ միայն մեծ բանաստեղծ է, այլև հմուտ ու նրբաճաշակ բառաստեղծ: Ստեղծագործական տարերքի մեջ Նարեկացին կերտել է նոր բառեր՝ հեղինակ դառնալով բազմաթիվ նորաբանությունների (Նարեկացու նորաբանությունների թիվը, ըստ Վ. Առաքելյանի հաշվարկների, անցնում է 700-ից): Նկատելի է, որ Նարեկացին այդ բառերը կերտում է գրաբարյան բառակազմական օրինաչափություններով՝ հարստացնելով գրաբար հայերենի բառապաշարը:

Սակայն նրա նորաբանությունների շարքում կան այնպիսիք, որոնք, այնուամենայնիվ, ձևի և բովանդակության տեսանկյուններից հանդես են բերել կենսունակություն և դիմանալով ամենամաքառ դատավոր ժամանակի քննությանը՝ հասել են մինչև մեր օրերը և այսօր էլ կիրառվում են ժամանակակից հայերենի տարբեր ոճերում: Այսպես՝

1. **մահա · ուշակ** (119), **լայնատարր** (13), **·իսախռի** (41), **սրբանուէր** (8), **մշտա · իշեր** (39), **բազմազեղուն** (96), **հողապատեան** (167), **ջրողող** (151), **մաքրակրօն** (265), **սոսկավիթխար** (258) և բազմաթիվ այլ նորաբանություններ կիրառվում են գեղարվեստական ոճում: Օրինակ՝ Վրա հասավ **մահա · ուշակ** գիշերը (ԺՅԼԲԲ)²: Մանուկ հոգիդ ալ... հածիլ գնաց կապույտ անհունին մեջ **լայնատարր** (ԺՅԼԲԲ) և այլն:

2. **Կենդանախումբ** (204), **կենսատունկ** (96), **օղաչու** (245), **վեհափառ** (88) նորաբանությունները հիմնականում կիրառվում են գիտական ոճում և այլն:

Ավելին՝ Նարեկացու կերտած կենսունակ որոշ բառեր, պահպանելով իրենց նախնական իմաստը,

ժամանակի ընթացքում ձեռք են բերել այլ իմաստներ և՝ դառնալով բազմիմաստ: Դրանցից են՝ **կենսատունկ** (96), **օղաչու** (245), **ալետանջ** (136), **ախտաբորբոք** (118), **վեհափառ** (88) և այլն: Օրինակ՝ **օղաչու** ածականը («օղուն չվող, օղախաղաց, օղագնաց») այժմ, որպես գոյական, նշանակում է նաև «սավառնակ վարող անձ», «սավառնորդ», իսկ որպես ածական՝ «բարձրաբերձ»: Գարավարենյան այս բարձրության վրա, իբրև զույգ **օղաչու** հսկաներ, կանգնած էին արթունական դղակները (ԺՅԼԲԲ):

Նարեկացու նորաբանությունների շարքում կան նաև այնպիսի բառեր, որոնք ժամանակի ընթացքում քննություն են բռնել միայն ձևի տեսանկյունից՝ մեզ հասնելով իրենց ոչ թե նախնական, այլ բոլորովին նոր իմաստով: Այդպիսի նորաբանություններից են՝ **կենդանախումբ** (204), **հերապանծ** (20) և այլն: Օրինակ՝ **կենդանախումբ** բառը («անմահների խումբ») ժամանակակից հայերենում նշանակում է «կենդանիների խումբ», **հերապանծ** բառը («տերևագարդ»), որը Նարեկացին միանգամից գործածել է փոխաբերաբար, ժամանակակից հայերենում նշանակում է «վարսագեղ»: Ես ունիմ գահ ու գանձեր, ճերմակ կիներ **հերապանծ** (ԺՅԼԲԲ):

Նորաբանություններից շատերն էլ միակ և վերջին անգամ գործածվել են Նարեկացու կողմից և, բացի Նարեկացու երկերից, հանդիպում են միայն գրաբարի բառարաններում: Սրանք մասնագիտական գրականության մեջ հայտնի են **դիպվածային բառեր** տերմինով: Նարեկացիական դիպվածային բառերից են **այսախառն** (245), **ազատազնեայ** (204), **ամենահառաչ** (229), **բարեհանձար** (241), **երջանկակրօն** (8), **խակախորհուրթին** (247), **խաւարասնունդ** (60), **կրկնապղտոր** (109), **կռածա ·** (176), **փրկչավայելուչ** (250), **մոլե · նաճառ** (241) և այլն:

Նշենք նաև, որ Նարեկացու նորակազմությունների շարքում անհամեմատ մեծ թիվ են կազմում ածականները, որոնց մեջ ավելի հաճախադաս են **անժխտական** նախածանցով և **-ելի**, **-ալի** վերջածանցներով կազմությունները, ինչպես՝ **անտկար** («կարող, չտկարացող»)։ Ընդ **անտկար** կարելոյդ եւ կամելդ էլ ախորժելի (217): **Անցուրտ** («տաք»)։ **Անցուրտ** ջերմութեանք ջեռուցանօղք (204): **Անքօղ** («անաղոտ, պայծառ»)։ լուսաւորութիւն **Անքօղ** (26): **Անայլալական** («անայլալ»)։ Երրորդութիւն **անայլալական** (87): **Անխնդրող** («չաղաչող, չուզող»)։ **Անխնդրող** պարգելի (72): **Անկնդրուկ** («կնդրուկ չունեցող»)։ Քահանայ **անկնդրուկ** (140): **Անխայտառակելի** («առանց խայտառակության, պարզերես»)։ **Յանխայտառակելի** պահելով ի տիեզերական յանդիմանութեանն (211): **Անհամբուրելի** («չհամբուրվող»)։ Ձեռներեց Ըսկզբնաւոր **անհամբուրելի** դատողացն (144): **Անտկարանալի** («չտկարացող, կարող»)։ **Անտկարանալի** բարեբարութիւն գըրբութեան (36): **Անաղերսալի** («անաղաչավոր»)։ **Անաղերսալի** պասքեալ (72): **Մշտապաշտելի** («միշտ պաշտելու արժանի»)։ Փրկիչ եւ օծեալ **մշտապաշտելի** (250):

Տատամսելի («վարանունի մեջ գցող»)։ Ի կիրս մեր կերպարան, եթէ հեշտականս, եթէ **տատամսելիս** (77) և այլն։

Թվային գերակշռություն ունեն մաս վերջածանցներով կազմված մակբայներն ու գոյականները, ինչպես **վատահապես** (27), **քալապետաբար** (91), **պաշտպանողորեն** (84), **յատակամտաբար** (250), **յանցաւորապէս** (77, 124, 133), **սպանդարան** (115), **վիթխարութիւն** (243), **նմանա՝ թութիւն** (110), **սառնացրտութիւն** (258) և այլն։

Այնպես որ, միանգամայն իրավացի է Վ. Առաքելյանը՝ գտնելով, որ ստեղծագործությունների բառապաշարով և հատկապես նորակազմություններով Նարեկացին ոչ միայն իր ապրած ժամանակաշրջանում, այլև նրանից և՛ առաջ, և՛ հետո մնում է առաջինը թե՛ հայ թե՛ համաշխարհային մշակութային մեծերի մեջ⁵։

Հայ լեզվաբաններից Նարեկացու «Մատեան ողբերգութեան» աղոթամատյանի նորաբանությունների առաջինն անդրադարձել է Վ. Առաքելյանը⁶։ Նորաբանությունների շարքում Վ. Առաքելյանը քննության է առել մաս բայական նորակազմությունները՝ նշելով դրանց քերականական մի շարք առանձնահատկություններ (խոնարհում, կերպ, սեռ) և բառապաշարի մեջ ունեցած դերը⁷։

Ըստ մեր հաշվարկների՝ Նարեկացու «Մատեան ողբերգութեան» պոեմի նորաբանությունների շարքում առանձնանում են շուրջ 5 տասնյակ համադրական բայեր, որոնց քննությանն էլ մվիրված է մեր այս աշխատանքը, որի մեջ հետամուտ ենք ուսումնասիրելու այդ բայերի ձևախմբատային առանձնահատկություններն ու վերջիններիս՝ հետագայում կրած փոփոխությունները։ Աշխատանքի լեզվական նյութը հիմնականում քաղել ենք Նարեկացու «Մատեան ողբերգութեան» պոեմի «Համաբարբառից»⁸ փակագծերում նշելով համապատասխան էջերը։ Անհրաժեշտության դեպքում դիմել ենք մաս «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» (ՆԲՀԼ) երկհատորյակի⁹։ Նորակազմ բայերի մասին եղած տեղեկատվությանը (խոնարհման ձև, բառիմաստ և այլն)։

Չնայած Նարեկացու բայական նորակազմությունների սահմանափակ թվին՝ դրանք կազմությամբ միատարր չեն։ Իբրև բայեր՝ կազմությամբ լինում են պարզ, որոնք մեծ թիվ են կազմում, և ածանցավոր։ Վերջիններիս կազմությանը մասնակցում են գրաբարյան պատճառական **-ուցան-** ածանցը և **-ան-** սոսկածանցը։ Ընդ որում, **-ուցան-** ածանցով կազմվել է 7 բայ, իսկ **-ան-** սոսկածանցով՝ երկուսը։ Իբրև բառ՝ այս նորակազմությունները նույնպես անմիօրինակ են, առանձնանում են պարզ (արտահայտված «արմատ + **-ել** բայակերտ ածանց» կաղապարով, ինչպես՝ **ամպել, վճռել, յեսանել**), ածանցավոր (արտահայտված «նախածանց + արմատ + **-ել** բայակերտ ածանց» կաղապարով, ինչպես՝ **լուսաբանել, հերկա՝ ործել** և այլն) և բարդ ածանցավոր (արտահայտված «նախածանց + արմատ + **-ել** բայակերտ ածանց» կաղապարով կամ «արմատ + արմատ + վերջածանց + **-ել** բայակերտ ածանց» կաղապարով, ինչպես՝ **վերյուղարկել, թուլադաշնակել** և այլն)։

Բայական նորակազմությունների մեծ մասը, բնականաբար, կիրառվել է մեկական անգամ, և միայն մի քանի նորակազմություններ ունեն մեկից ավելի կի-

րառության դեպքեր։ Բնական է մաս, որ ելակետային վիճակում այս բայերի մի մասն արտահայտված է դիմավոր, մյուս մասը՝ անդեմ ձևով։ Նկատելի է, որ անդեմ ձևերով նորակազմությունները սակավաթիվ են՝ արտահայտված գերազանցապես անցյալ դերբայով կամ վերջինիս հոլովածներից որևէ մեկով։ Դիտարկումը ցույց է տալիս մաս, որ Նարեկի բոլոր բայական նորակազմությունները պատկանում են **ե** խոնարհման (բացառությամբ **զարթնանամ՝ ա** խոնարհման, **պատճառաւորիմ՝ ի** խոնարհման բայերի)։

Նարեկացին կերտել է և՛ ներգործական (**վճռել, լուսաբանել, նախազեկուցանել, վերանկարել** և այլն), և՛ կրավորական (**ստորածածկեցայց, ստորախուղեալ** և այլն), և՛ չեզոք (**զարթնանալ, ամպել** և այլն) սեռի սկզբնատիպ բայեր։

Նորակազմությունները, ըստ կազմավորման առանձնահատկության, բաժանել ենք 6 խմբի։

1. Նորակազմություններ՝ սկզբնատիպ ունեցող, որոնք Նարեկացին ներկայացրել է նոր տարբերակով։ Դրանցից են՝ **զարթնուլ/զարթչիմ-զարթնանալ**։ Բարբառին՝ եւ ոչ **զարթնանամ** (136)։ **Ընպահկել-ընդպահկել** («չհնազանդվել, ապստամբել»)։ Մի՛ **ընդպահկեսցես** ըզդեդեւեալն (219)։ **Մածնուլ-մածանել** («փակցնել, կպցնել, մակարդել, թամծրացնել»)։ Որ գառեալ ի գետոյն... **Մածեր** արիւն ի ցամաքի (159)։ **Ի միտ առնուլ-մտառել**։ Մաշիմք եւ ոչ **մտառեմք** (138) և այլն։

2. Նորակազմություններ, որոնք սկզբնատիպ չեզոք կամ ներգործական բայերի պատճառական տարբերակներն են։ Դրանցից են՝ **բարբառել-բարբառեցուցանել. Բարբառեցուցանես** համերս (86)։ **Գր՝ ել՝ ըր՝ եցուցանել** («փայլալայել»)։ Նա ի բազմական ամենապատիկս գահուց **ըր՝ եցուցանիցել** (188)։ **Երկնչիմ-երկուցանել. Երկուցեր** փոքր այս խթանաւ զապարասանին ըզվիթխարութիւն (243)։ **Համրանալ-համրացուցանել**։ Ամրափակ խցմամբ **համրացոյց** արգել հողմ՝ բանարկուիմ (41)։

Այս շարքում առանձնանում են **կերպաւորել** և **կարպաւորեցուցանել** («ձևավորել») նորակազմությունները, որոնցից և՛ սկզբնատիպ ներգործական է Նարեկացունը, և՛ վերջինիս պատճառական տարբերակը։ Չայս գոչումն ծածուկ խորհրդոց **կերպաւորելոց** յայսմ մատենի՝ ամենագոր ականջաց մեծիդ Աստծոյ ընծայեցուցի (91)։ Չոր Եսայիաս մարգարտ ըզյանկարծադեպ կատարածն... նըմանութեամբ այսր օրինակի **կերպաւորեցոյց** (58)։

Հետաքրքիր է, որ, **վճիռ** գոյականից ձևավորված **վճռել** բայից բացի, Նարեկացին կերտել է մաս **նախավճռել** նախածանցավոր տարբերակը։ Դատակնիք բանին քո **վճռեաց** (39)։ Ձքաւութիւն մեղաց ախտացելոցն **նախավճռելի** (251)։

3. Նորակազմություններ, որոնք կերտվել են սկզբնատիպ պարզ, ածանցավոր կամ բարդ անուն խոսքի մասերից՝ **-ել** բայակերտ ածանցի հավելումով։ Դրանցից են՝ **աղերսաբան-աղերսաբանել** («աղերսել»)։ Ըզբնաւից **աղերսաբանել** ըզմեռելոցըն (217)։ **Ամպ-ամպել**։ Մի՛ լիցի ինծ... **Ամպել՝** եւ ոչ անձրեւել (5)։ **Ապաբան-ապաբանել**։ Չնոսա ընկալար **զապաբանեալսըն** աղերսանաց (33)։ **Արդիւնատու-արդիւնատրել** («պտղաբերել»)։ Սովաւ եւ ի սոյն **արդիւնատրեցեր** (257)։ **Դարմանատու-դարմանատրել**։ Մարդասիրապէս **դարմանատրեցեր** (32)։ **Զարմանա՝ ործ-զարմանա՝ ործել**։ Ըզաղարթ սեւութեան վարսից ի ձեան կերպարան **զարմանա-**

որո՞նք (160): **Թերամիտ-թերամտել**. Ո՞վ **թերամտեց** կամ երկբայեցի (ՆԲՅԼ, 1, 807)⁸: **Լուսածին-լուսածնել**. **Ըզլուսածնելոցն** զազատարարն օրենս հոգւոյն կենաց՝ որ ի Տէր Յիսուս, Յիշատակեցից նը-լազըս յորունց (98): **Խնկաւոր-խնկաւորել** («պատ-վել»)։ Հիւսեա՛, միացո՛ ըզմեղուցելոյս դառըն հեծու-թիւն՝ Ընդ քումդ երջանիկ եւ **խնկաւորեալ** հայցու-ծոց (201): Փառաւորեալ եւ ի փրկութեան... **խնկա-ւորեալ** յողորմածութեան (218): Ըզսահմանեալ ա-ւանդութիւնս առ ձեռակերտս եկեղեցի վարկանիցի, եւ ոչ... կամաց արարողին **խնկաւորեալ** խորհրդա-րան... բարեհամար հիմնարկութիւն (241): **Հանդեր-ձաւոր-հանդերձաւորել** («պատրաստել, շտկել»)։ Հրամանատրեաց փրկութիւնս, շնորհեաց ծիրս, **հան-դերձաւորեաց** բաւութիւն (89): Պարգեւեա՛ բժշկու-թիւն, **հանդերձաւորեա՛** շնորհ (265): Ոչ ի պատկեր գեղոյ զարդարիլ եւ ոչ բանի **հանդերձաւորիլ** (10): Ոչ **հանդերձաւորեցի** քեզ աղերս աղօթից (173): **Մասնակից-մասնակցել**. Ձիա՞րդ **մասնակցեալ** մե-ծին արութեան՝ Սատակեցից ի քաղաքի Տեառըն զանօրինեալսն (153): Ի խաւարե՛... ի լոյս սրբոց **մա-սնակցեաց** (ՆԲՅԼ, 2, 211): **Մտառու-մտառել**. Մա-շիմք եւ ոչ **մտառեմք** (138): **Յար-աւոր-յար-աւորել**. Պատուականին հարստութեամբ զամարզըն **յար-ա-ւորեալ** (237): **Յեսան-յեսանել**. Ձայս եղջիր խեթիկի մոլի գռռոզին՝ Իբր ըզխաչիդ փրկանակ **յեսանեալ** սրեցեր (163): **Պատճառաւոր-պատճառաւորիմ**. Ի մահ գրաւեցաւ... ի ծառոյն **պատճառաւորեալ** յա-նկունս մայրաբի ամենակրծան զլորման (251): **Պար-եւատու-պար-եւատրել**. **Պար-եւատրեա՛** առա՛տ (6): Օծումըն կենաց **պար-եւատրեցես** քո աղաչո-ղիս (158): **Տեսական-տեսականել** («երևելի դարձ-նել»)։ Ի փոքր գոյս **տեսականեցեր** գօրութեամբ (256):

4. Նորակազմութիւններ, որոնք Նարեկացին ձևավորել է սկզբնատիպ բայերին որևէ ձևույթի նա-խահավելումով: Դրանք են՝ **առօրինակել** (3), **թու-լաղաշնակել** (264), **լուսաբանել** (7), **համասնեալ** (235), **հանրահռչակել** (ՆԲՅԼ, 1, 47), **հերկա-ործել** (ՆԲՅԼ, 2, 93), **ձմարտա-րել** (265), **մեծա-րել** (39), **նախազեկուցանել** (255), **նախայարմարել** (253), **նախասերմանել** (119), **նախվճռել** (251), **ներք-նաշարել** (86), **շրջապարուրել** (ՆԲՅԼ, 2, 498), **ստո-րախուզել** (187), **ստորածածկել** (93), **վերաթուել** (264), **վերածածկել** (12), **վերաշուել** (135), (ՆԲՅԼ, 2, 809), **վերակարել** (87), **վերասքօղել** (ՆԲՅԼ, 2, 810), **վերավկայել** (253), **վերարժանացուցանել** (20), **վերյուղարկել** (245), **տարակորզել** (42):

Նշված տիպի կազմութիւնները ակադ. Գ. Ջահուկ-յանը համարում է բառակապակցութիւններ՝ լրիվ կամ թերի փոխակերպված⁹: Ինչպես բառակազմութեան¹⁰, այնպես էլ բառաբաղադրիչների փոխակերպման բաժ-նում¹¹ գիտնականը խոսում է բարդ գոյականների, ա-ծականների, մակբայների գործառական արժեքի մա-սին՝ հասկանալի պատճառով չչեշտելով բայ խոսքի մասը: Այս աշխատանքում մենք տեղ ենք տալիս այն բայերին, որոնք, ըստ էության, տրամաբանորեն կերտ-վել են նախադասութեան անդամներից բայական ան-դամի լրացումներով՝ արտահայտվելով «բայական անդամի լրացում + լրացյալ» կաղապարով:

Մեր կողմից առանձնացված 4-րդ խմբի՝ թվով 25 բայական նորակազմութիւններից 18-ը կազմված են «նախածանց + բայ» մասնակաղապարով: **Վեր-, տար-, առ-, նախ-, ստոր-, թեր-** և այլ նախածանցներ հնուց ի վեր ներկայացնում են իմաստային տարբեր

դաշտեր՝ արտահայտելով մթագնած պարագայա-կան զանազան իմաստներ: Այնպես որ, միանգամայն իրավացի է Է.Աղայանը՝ սերող հիմք համարելով ոչ թե արմատը, այլ «նախածանց + արմատ» կաղա-պարը¹²:

Ստորն քննութեան ենք առնում Նարեկացու բա-յական նորակազմութիւնների բաղադրիչ տարրերի միջև եղած քերականական հարաբերութիւնները, նշում այդ նորակազմութիւնների բայիմաստները՝ սալվածը հիմնավորելով բնագրային օրինակներով: Եվ այսպես՝ Նարեկացու բայական նորակազմու-թիւնների մեջ առանձնանում են՝

ա) «**Տեղի պարա-ա (նախածանց) + լրացյալ (բայ)**» մասնակաղապարով արտահայտվող բայեր, որպիսիք են՝

Նախայարմարել («նախադասել»)։ Ձայն սաղ-մոսողին գեր քան զմարգարութիւն՝ Ձօծեալըն անուն **նախայարմարեաց** (253): **Ներքնաշարել** («ներ-քնում շարել, դասավորել»)։ Ձոր **ներքնաշարեալքըղ** սահմանադրեն գոհաբանութիւնք (86): **Ստորախու-զել** («տակից կտրել»)։ Հնձեալ արտ, **ստորախուզ-եալ** բոյս (187): **Ստորածածկել** («թաքնվել ներ-քնում»)։ Ի ներքոյ գրուանին **ստորածածկեցայց** (93): **Վերաթուել** («վերևից ներքև թվել»)։ Որ յալփա-բետաց անտի **վերաթուի** (264): **Շրջապարուրել** («շրջապատել»)։ Ի գլուխ ծայրից լրջութեանն թե-ղանեաց **շրջապարուրեաց** (ՆԲՅԼ, 2, 498): **Վերա-ծածկել** («պատել»)։ Լուսովդ փառաց **վերածած-կեցեր** (12): **Վերասքօղել** («վերածածկել, պատել»)։ Ի խանձարոյ, որով ի ծննդեանն աւուր տմանկաբար **վերասքօղեցաւ** (ՆԲՅԼ, 2, 810): **Վերյուղարկել** («վե-րևից ուղարկել»)։ Հրեշտակ կամարար թշնամւոյն ներհակ **վերյուղարկեցեր** (245): **Տարակորզել** («կորզել, խլել»)։ **Տարակորզեցես** ի ձեռըն ձեռնիդ ամենակալի (42):

բ) «**Չափի պարա-ա (նախածանց) + լրացյալ (բայ)**» մասնակաղապարով արտահայտվող բայեր, որպիսիք են՝

Վերարժանացուցանել («դարձյալ, մեկ անգամ ևս արժանացնել»)։ Երանութեան **վերարժանաց** (20): **Վերանկարել** («դարձյալ, մեկ անգամ ևս նկա-րել, դրոշմել»)։ Ձոր շաւիղ կարգիդ **վերանըկարէ: Վերանկարեա՛** զառ յաւազանն մաքուր արգանդէ զկարդացեալս անուն ի գիր մատենի վերնում դպրո-ցիդ (87):

գ) «**Ժամանակի պարա-ա (նախածանց) + լրացյալ (բայ)**» մասնակաղապարով արտահայտ-վող բայեր, որպիսիք են՝

Նախասերմանել («նախապես, նախօրոք սեր-մանել»)։ Ի սիրտըս բնաւից **նախասերմանեաց** ժո-ղովողս (119): **Նախվճռել** («նախապես, նախօրոք վճռել»)։ Ձքաւութիւն մեղաց ախտացելոցն **նախա-վճռէիր** (251): **Վերավկայել** («նախօրոք վկայել»)։ Ի հոգելից բանից իմաստնոյն **վերավրկայեալ՝ Կանխա իսկ-րեցաւ** (253): **Նախազեկուցանել** («նախապես, նախօրոք զեկուցել»)։ Ձ՛ի թոյղ լրութենէ ի մեզ փրկութիւն եւ օծելութիւն գերաբընապէս **նա-խազեկուցաներ** (255):

դ) «**Ձևի պարա-ա (նախածանց, ածական) + լրացյալ (բայ)**» մասնակաղապարով արտահայտ-վող բայեր, որպիսիք են՝

Առօրինակել («օրինակել, համեմատել»)։ **Առ-օրինակեալ** ըզՄովսէս, Ձբրիստոսի փրկութիւնն յաղ-թօղ ցուցանէ (3): **Թուլաղաշնակել** («ցածր ծայնով

հնչել»): Ջրացիր ինքն զիջութեամբ անվայելուչ թուլադաշնակեալ՝ Ի ստորեւ կորստեան քարշէ (264): **Ճշմարտա·րել** («ստույգ գրել»): Ստուգաբանօրէն քննութեամբ ընդ ձիթոյն անուան միւթ **Ճշմարտա·րի** (265): **Համասնել** («միասին դաստիարակել»): Ընդ ամենակատարն էութեան **համասնեալ** յանջրպետ միակամութիւն (235):

ե) «**Ուղիղ խնդիր** (· **ոյականաբար** · **ործածված ածական կամ** · **ոյական**) + **լրացյալ (բայ)**» մասնակադապարով արտահայտվող բայեր, որպիսիք են՝ **Լուսաբանել** («հայտնի դարձնել»): Ջոր հանդերձելոցն ճառից **լուսաբանեն** կերպաւորութիւնը (7): **Մեծա·րել** («մեծ բան համարել»): Եւ **մեծա·րեալ** քր ըզմերն՝ վեհս գոհաբանիս (39): **Հերկա·ործել** («հերկել»): Ի գործի ձևակի խաչին խորհրդոյ զմարդկային սրտից անդաստանս **հերկա·ործողը** (ՆԲՅԼ, 2, 93):

զ) «**Անուղղակի խնդիր** (· **ոյականաբար** · **ործածված ածական**) + **լրացյալ (բայ)**» մասնակադապարով արտահայտվել է միայն **հանրահռչակել** նորակազմութիւնը: Ջարինագեղ անճառն խորհուրդ **հանրահռչակեաց** (ՆԲՅԼ, 1, 47):

Ինչպէս նկատելի է, Նարեկացու կերտած 4-րդ խմբի բայական նորակազմութիւնների բաղադրիչների միջև առկա է ստորադասական հարաբերություն («բայական անդամի լրացում + լրացյալ»): Հատկանշական է նաև, որ նորակազմ այս բայերը կերտվել են գրաբարին բնորոշ բառակազմական մասնակադապարներով, որոնցում հանդիպում են և՛ հոդակապով (թվով 22), և՛ առանց հոդակապի (թվով 3) ձևեր:

Այս շարքում հաճախուհեալ են նախածանցներով կազմված ձևերը: Ի դեպ, Նարեկացին այդ նախածանցներով կերտել է ոչ միայն բայեր, այլև բազմաթիվ այլ բառեր (հիմնականում՝ գոյականներ և ածականներ) ևս. · **երափայլ** (204), · **երափառ** (252), **ընդմիջարկութիւն** (253), **ընդունայնաթոպ** (118), **թերամտութիւն** (228), **համաձարակ** (34), **համայնապատում** (79), **համապարփակ** (236), **մակա·աւիթ** (267), **նախակապուտ** (114), **նախակրօն** (25), **նախահրաման** (120), **նախայլ** (9)¹⁴, **նախանուէր** (134), **նախապար·եւ** (24), **ստորնասէր** (26), **վերածակութիւն** (264), **տարա·րիչ** (206) և այլն:

5. Նարեկացու բայական նորակազմութիւնների շարքում առանձնանում է **լուսաբանել**-ը, որը ո՛չ սկզբնատիպ բայ ունի (**բանել**) և ո՛չ էլ ձևավորվել է **լուսաբան** հիմքից: Ջոր հանդերձելոցն ճառից **լուսաբանեն** կերպաւորութիւնը:

Հարկ ենք համարում նշել, որ նորակազմութիւնների շարքում չկան կրկնավոր կամ բաղիյուսական ձևեր, բազմաբաղադրիչ (3 և ավելի հիմնական ձևութիւններ ունեցող) բայեր, քանի որ հայոց լեզուն «...երկու բառով բարդութեան կողմից շատ հարուստ լինելով, պահում է չափավորութիւն և առանձնապէս չի սիրում երկուսից ավելի բաղադրիչով բարդ բառեր կազմել»¹⁵:

Նարեկացու բայական նորակազմութիւնները բազմատեսակ ձևութիւնների համադրութիւններ են, որոնցով արտահայտվում են ամենատարբեր գործողութիւններ: Այստեղ վերջին բաղադրիչ բայը ամնիջական կապի և հարաբերութեան մեջ է մտել մեկ անգամ՝ գոյականի, հինգ անգամ՝ փոխանուն ածականի, մեկ անգամ՝ մակբայի և 17 անգամ՝ նախածանցների հետ:

Բաղադրյալ բայերի ներքին ձևերը այլ խոսքի մասերին հակադրելով՝ Ա. Մարգարյանն իրավացիորեն նշում է. «Բայական գերադաս անդամը միա-

նշանակ, իսկ լրացում անդամը բազմանշանակ բաղադրիչ է, որը և, իբրև այդպիսին, բարդութեան ներսում ուղիղ, անուղղակի խնդրի, պարագայի իմաստ և հարաբերութիւն է արտահայտում»¹⁶:

Ինչպէս յուրաքանչյուր լեզվական իրողութիւն, այնպէս էլ Նարեկացու բայական նորակազմութիւնների բաղադրիչների շարահյուսական հարաբերութիւնների արտահայտութիւններում բայական գերադաս անդամով կազմված նորակազմութիւնները հավասարապէս նույն տեսակարար կշիռը չունեն: Տվյալ դեպքում իրենց բաղադրիչների միջև ներշարահյուսական բազմաթիվ հարաբերութիւններ են դրսևորում նախածանցավոր և փոխանուն ածականով արտահայտված մասնակադապարները: Նախածանցները, կախված իրենց բառաստեղծական հնարավորութիւնից, հանդես են եկել տարբեր պաշտոններով, իսկ ածականը, գործածվելով գոյականաբար, կատարել է ուղիղ և անուղղակի խնդիրների շարահյուսական գործառնութիւնը:

Բայակերտ-ել ածանցը բարդ նորակազմութիւնների հիմքերի բաղադրիչների ներքին շարահյուսական գործառնութիւնը չի փոխել: Նարեկացին ամուսնների միջոցով արտահայտվող առարկայացված կամ կայուն հատկանիշներին հաղորդել է փոփոխվող հատկանիշի գաղափար՝ դրանք գործածելով իբրև դիմավոր կամ անդեմ բայեր:

Գրիգոր Նարեկացու բայական նորակազմութիւնները անմիօրինակ դաշտ են ներկայացնում նաև ժամանակակից հայոց լեզվի բառապաշարում, որտեղ դրանք կարելի է բաժանել չորս խմբի:

Առաջին՝ այն նորակազմութիւնները, որոնք արդեն հազար տարի պահպանում են իրենց և՛ ձևը, և՛ իմաստը: Դրանք են՝ **լուսաբանել**, **մեծա·րել**, **նախավձռել**, **վերաթվել**, **վերանկարել**, **վերածածկել**, **հերկա·ործել**, **վճռել** (օր.՝ Դատում են, **վճռում**, կռնեը կտրում են (ԺՂԼԲ)), **պար·կատրել** (օր.՝ Ես կամենում էի, որ ավելի մեծագին ընծաներով **պար·կատրեին** նրան, բայց հորս ոչինչ չասացի (ԺՂԼԲ)), **հեսանել**, **մածանել**, **մասնակցել** (օր.՝ Երեկոյթին ամեն ոք կարող էր **մասնակցել** (ԺՂԼԲ)), **հանդերձակորել**, **զարմանա·ործել**, **համարացնել**, **ամպել** (օր.՝ Էլի երկինքն **ամպել** է (ԺՂԼԲ)), **կերպավորել**:

Երկրորդ խումբ են կազմում այն նորակազմութիւնները, որոնք, պահպանելով իրենց ձևերը, ձեռք են բերել նոր իմաստներ: Դրանք են՝ **լուսաբանել**: Շնորհակալ են, որ բարեհաճեցաք մեր թանկագին տեղեկութիւններով զիս **լուսաբանելու** (ԺՂԼԲ), **վճռել** («վերջնական որոշում կայացնել»): Ես **վճռել** եմ գյուղական վարժուհի դառնալ (ԺՂԼԲ): Շապուհը կամենում էր ընդմիջտ **վճռել** այդ քաղաքական ժամը խնդիրը (ԺՂԼԲ), **պար·կատրել**: Փայլում էր մանգաղը, ետում էր գործը, և ոսկեղեն հունձը յուր լիառատ բեղմնավորութեամբ **պար·կատրում** էր վաստակաբեկ շինականի աշխատանքը (ԺՂԼԲ), **համարացնել** («դանդաղեցնել»): Մ. գեղին օղը կրնար **համարացնել** հիվանդութեան ընթացքը և մեղմել սաստկութիւնը (ԺՂԼԲ), **ամպել** («Վտանգ կախվել, տխրել»): Կովկասի երկինքն **ամպել** վերստին (ԺՂԼԲ): Ժպտում ես, հոգյա՛կ, **ամպած** երեսիս (ԺՂԼԲ), **կերպավորել** («կերպար գեղարվեստորեն նկարագրել, բեմական կերպար ստեղծել»):

Երրորդ խումբ են կազմում այն նորակազմութիւնները, որոնք հիմք են դարձել այլ բառերի (գոյականների, ածականների) առաջացման: Այսպէս **հան-**

րահոչակել, վերաչվել, լուսաբանել, նախավճռել, թերամտել բայերից սերվել են հանրահոչակ, վերաչու, լուսաբանելիք, լուսաբանում, լուսաբանություն, նախավճիռ գոյականներն ու ածականները¹⁷:

Չորրորդ խումբ են կազմում այն նորակազմությունները, որոնք ժամանակակից հայերենի բառապաշարում չեն պահպանվել: Դրանք են՝ աղերսաբանել, արդյունատրել, ապաբանել, ՝րօեցուցանել, դարմանատրել, հարաուրել, առօրինակել, թուլադաշնակել, նախասերմանել, վերասքողել, վերավկայել, վերյուղարկել, տարակորզել և այլն:

Ունենալով 1000-ամյա պատմություն՝ Նարեկացու բայական նորակազմությունները կրել են բազմաթիվ փոփոխություններ՝ պատմության տարբեր ժամանակներում գտնվելով բառապաշարի տարբեր շերտերում:

Գրիգոր Նարեկացու նորակազմությունները (դրանց թվում՝ նաև բայական) վկայում են նրա՝ իբրև յուրօրինակ աշխարհընկալմամբ և լեզվամտածողության օժտված անհատականության մասին: Նա նոր շունչ բերեց ոչ միայն հայ գրականության, այլև հայոց լեզվի ասպարեզում: Նարեկացին այն բացառիկներից է, ովքեր յուրովսանն հարստացրել են հայերենի բառապաշարը անհատական-հեղինակային նորարարություններով, որոնց մի մասն արդեն հազար տարի է՝ մեր ժողովրդի բանավոր և գրավոր խոսքի բաղադրիչ տարրերից է:

հայերենի բառահատոր բացատրական բառարանի համապատասխան բառահոլովածներից (տե՛ս Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. 1, Երևան, 1969, հ. 2, Երևան, 1972, հ. 3, Երևան, 1974, հ. 4, Երևան, 1980):

- ³ Տե՛ս Վարագ Առաքելյան, նշվ. աշխ., էջ 41:
- ⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 42-59:
- ⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 73-75:
- ⁶ Հայկական համաբարբառ, 8, Գրիգոր Նարեկացի, հ. 1, Երևան, 1975, հ. 2, Երևան, 1978, հ. 3, Երևան, 1978:
- ⁷ Նոր բառգիրք հայկազգան լեզուի, հ. 1, Երևան, 1979, հ. 2, Երևան, 1981:
- ⁸ ՆԲՀԼ, 1 և ՆԲՀԼ, 2 հղումներով բառաշարքերում տեղ ենք հատկացրել նաև Նարեկացու հեղինակած այլ ստեղծագործությունների նորակազմություններին:
- ⁹ Տե՛ս Գ. Բ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974, էջ 561:
- ¹⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 150:
- ¹¹ Տե՛ս նույն տեղում, էջ 560:
- ¹² Հմմտ. Է. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևան, 1984, էջ 245:
- ¹³ Նախածանցների իմաստի մթագմամբ և բառի՝ միայն մեկ անգամ կիրառված լինելու պատճառով երբեմն դժվար է հստակորեն որոշել դրանց շարահյուսական գործառնությունը:
- ¹⁴ ՆԲՀԼ-ում՝ նախալր:
- ¹⁵ Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 3, Երևան, էջ 14:
- ¹⁶ Ա. Ս. Մարգարյան, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1990, էջ 142:
- ¹⁷ Այս խմբում ուսումնասիրել ենք միայն առաջին խմբի նորակազմությունները, քանի որ երկրորդ խմբի բայերը կերտվել են և՛ հին, և՛ արդի հայերեններում գործածական անուններից:

¹ Հմմտ. Վարագ Առաքելյան, Գրիգոր Նարեկացու լեզուն և ոճը, Երևան, 1975, էջ 42:
² ԺՀԼԲԲ հղումով նախադասությունները քաղել ենք արդի

NAREKATSI AS A WORD-CREATOR

GOURGEN KHACHATRIAN
 Doctor of Philology

LILIT PETROSIAN

Summary

In the history of Armenian Culture Grigor Narekatsi is notable not only as a poet and author of the "Book of Lamentations"- which is an honor to the Age of the Renaissance. The poet is remarkable for his word-creating gift as well. Narekatsi's neologisms are over 7 hundred, 5 dozens of which are synthetic verbs. According to their formation peculiarities they are divided into some groups. According to morphological and semantic aspects a part of Narekatsi's new-built verbs have preserved unchanged to this day. There are verbs which have preserved their form-acquiring new sense in Ashkharhabar (New Armenian). On the basis of the third verb-group other parts of speech have been formed (Nouns, Adjectives), and new-built verbs of the fourth group which are of a big amount, have not been transferred to Ashkharhabar.

НАРЕКАЦИ - СЛОВОТВОРЕЦ

ГУРГЕН ХАЧАТРЯН
 Доктор филологических наук

ЛИЛИТ ПЕТРОСЯН

Резюме

Григор Нарекаци в истории армянской культуры известен не только как поэт, автор выдающейся "Книги скорбных песнопений", оставившей славу эпохе армянского Возрождения. Его творчеству присущи поиски нового слова. В произведениях Нарекаци выявлено более 700 новообразований, более 5 десятков из которых составляют синтетические глаголы. Они по своим словообразовательным особенностям подразделяются на несколько групп.

Некоторые глагольные новообразования Нарекаци дошли до наших дней, не претерпев никаких морфологических и семантических изменений. Другая группа состоит из глаголов, которые сохранили свою морфологическую форму, однако в ашхарабаре приобрели новую семантику. Выделяются такие глаголы, которые послужили основой для развития слов, относящихся к другим частям речи (существительным, прилагательным). И наконец, имеется группа глагольных новообразований (окказионализмов), по числу лексем превосходящая остальные, которые так и не были усвоены ашхарабаром.

ՎԱՎԵՐԱՅՎԱԾ ԱՊՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ

«Վասն օրինաց»-ը 22 մայիսի 2003 թվականի N 566-Ն որոշումը, որը 29 մայիսի 2003 թ. վավերացրել է ՀՀ Նախագահ Ռ. Քոչարյանը, տարակուսանք կարող է հարուցել ուղղակիորեն հիշեցնելով «նպատակն արդարացնում է միջոցները» ասույթը: Որոշումից պարզ է դառնում, որ 2002 թվականի հոկտեմբերի 19-ին Երևանի Վ. Բոյուտովի անվան պետական լեզվաբանական համալսարանը «Յանինա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ կնքել է N ԱՇԲ - 1 պայմանագիրը, որի հիմամբ պայմանավորվող առաջին կողմը երկրորդ կողմից ինչ-որ գնում է կատարել¹: Որոշումից, բնականաբար, չի հասկացվում, թե ինչ գնում է դա. արձանագրված է միայն «լեզվաբանական համալսարանի կարիքների համար աշխատանքների գնման» փաստը: Մի կողմ թողնենք այն հարցը, թե ինչպես են «կարիքների համար աշխատանքներ գնվում»: Խոսքն առավել էական թերությունների մասին է, որն այս որոշումը դարձնում է խոցելի՝ իրավաբանական, խորշելի՝ բարոյականության տեսակետից: Որոշման մեջ աներկբա ձևակերպում է ստացել հայրենի իշխանավորների գործելակերպում վաղուց ի վեր «բույն դրած» այն մտայնությունը, թե՛ շահի համեմատ՝ օրենքը հեջ: Մենք դիտմամբ ենք օրենք բառի կողքին հեջ օտար բառը գործածում, որպեսզի ընդգծենք, թե մեր իշխանության ներկայացուցիչները հենց այդպես՝ հեջ - առ ոչինչ համարելով են վերաբերվում օրենքներին, որոնց ոչ միայն ոտնահարողները (ավաղ), այլև հեղի-

նակներն են իրենք (վերստին ավաղ): Ընթերցողն իհարկե՝ սպասում է վերն ասվածը հավաստող «բնագրային մեջբերումների»: Ահավասիկ. «... Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հավանություն տալ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների խախտումներով կնքված ... պայմանագրին» (ընդգծումները մերն են՝ «Վ.ա.»):

Որոշումն ունի նաև 2-րդ կետ, որը «հուշում է», թե մեր իշխանության վերին օղակներում կան, այնուամենայնիվ, օրինապահ մարդիկ, նույնիսկ՝ օրինապահ նախարարներ: Այս պարագայում դա ֆինանսների և էկոնոմիկայի նախարարն է, որն ամենայն հավանականությամբ չի ընդունել վերոնշյալ պայմանագիրը, բայց քանի որ պայմանագիրը ձեռնտու շահավետ է եղել կառավարությանը, ուստի՝ օրենքը հեջ: Եվ հայրենի կառավարությունը որոշման տեսքով զարմանալի անօրեն հորդոր է կարողանում ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի գլխին. «... ձեռնպահ մնալ սույն որոշման 1-ին կետում նշված պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջներ ներկայացնելուց...»:

Ավարտենք՝ մեկ անգամ ևս հիշեցնելով. սույն ապօրինի որոշման «զլխին» Հայաստանի Հանրապետության Նախագահ Ռ. Քոչարյանի «Վավերացնում են»-ն է:

ԼԵԶՎԱԿԱՆ «ՏՎԱՅՏԱՆՔՆԵՐ»

Հայոց օրենսդրությունն անվիճելիորեն աչքի է ընկնում լեզվաշինության հանդեպ հակավածությամբ: Դրա մեջ, անշուշտ, արտառոց ոչինչ չկա: Մարդը (օրենսդիրը) եթե «արարում է», դիցուք, անցկալ² բառը, թող արարի. ի՞նչ անենք, որ բառիմաստը դեռևս հստակորեն որոշված չէ կամ կարող է երբևէ չորոշվի էլ:

Սակայն միշտ չէ, որ հայ օրենսդրի կողմից բառն «արարվում է» բնականորեն, առանց արհեստական մտասևեռման, առանց ծիզ ու ջանքի: Երբեմն ծանր ու տվայտալի է լինում նոր բառի ծնունդը: Կարծում ենք՝ այդպիսին է եղել տեղեկատվայնացման բառի երկունքը: Միանգամից ասենք, որ բառը «վերցված է» Հայաստանի Հանրապետության 2 մայիսի 2003 թ. N 469-Ն որոշումից՝ վավերացված 14 մայիսի 2003 թ. «... Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հունվարի 13-ի «Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության կապի և տեղեկատվայնացման գլխավոր վարչություն ստեղծելու մասին» N 21 որոշումը»³:

Այսու պարզվում է, որ ընդգծված բառը ոչ թե դիպ-

վածաբար է հայտնվել մեր օրենսդրական բառապաշարում, այլ 2001թվականից մինչև 2003 թվականը ՀՀ կառավարման համակարգում նույնիսկ եղել է այդ անվանումով՝ տեղեկատվայնացման գլխավոր վարչություն: Ընդգծված բառը սեռական հոլովով է, որից էլ ենթադրվում է, թե գոյություն ունի բառի ուղիղ, այս պարագայում՝ տեղեկատվայնացում ձևը, որն իր հերթին հուշում է, թե տեղեկատվայնացումը պարտավոր էր «ծնվել» տեղեկատվայնացման բառից (հմտ.՝ զարգ+ան+ալ - զարգ+աց+ում): Արդ դառնանք մեր կառավարական այրերին: Դուք, հարգարժան... այրեր, անշուշտ, զրադարանի, այդ թվում՝ մասնագիտական, ավելի ստույգ՝ լեզվաբանական գրադարանի պակաս ենթադրաբար չունենք, ուրեմն քրքրեք, խնդրենք, հայոց լեզվով առկա բոլոր բառարանները և եթե գտնեք տեղեկատվայնացման անվանյալ բառ, ուրեմն «Վասն արդարութեան» հանդեսի «Վասն օրինաց» խորագրի նյութերը պատրաստող հեղինակը հայ բառակազմական նորույթ - նորաբանությունների բոլորովին տեղեկատվայնացված չէ և խոնարհաբար խնդրում է ձեր ներողամտությունը վերոշառադրյալի և, իհարկե, վերնագրի համար:

ՀԻՇԵՑՈՒՄ

Ընթերցողը, հարկավ, չի կասկածում, որ եթե որևէ գերատեսչության ղեկավար, այս պարագայում՝ ՀՀ կառավարությանն առընթեր լեզվի պետական տեսչության պետը «լեզվամտածողության ասպարեզում

միօրինակություն և անաղարտություն ապահովելու նպատակով ՀՐԱԱՅՈՒՄ է», որ սուբսիդիա օտար բառի փոխարեն իր հրամանից հետո բոլոր դեպքերում (թե՛ բանավոր և թե՛, հատկապես, գրավոր խոս-

քում) գործածվի լրահատկացում իսկապես շատ բարեհունչ-հայաշունչ բառը, այդ հրամանը պիտի կատարվի անառարկելիորեն, մանավանդ, որ հրամանը կից բառացանկով «գրանցված է» (չակերտները բնագրային են) 33 արդարադատության նախարարության կողմից 1 հունիսի 2000 թ.: Ընթերցողը, անշուշտ, նաև պիտի ենթադրի, որ սույն հրամանը պարտավոր են «ի կատար անել» նախ և առաջ պետական մարմինները, առավել ևս՝ 33 կառավարությունը: Սակայն վերջինս իր 20 մայիսի 2003 թվականի N 565 - Ն որոշումն անվանել է «Թանգարանների սուբսիդավորման նպատակով 2003 թվականին նախատեսված հատկացումներն ըստ առանձին թանգարանների բաշխելու մասին»: 33 կառավարության այս որոշման հավելվածում, որ ստորագրել է 33 կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար Մ. Թովուզյանը, դարձյալ գործածվում է սուբսիդիա բա-

ռը և ուղղակիորեն վկայում, որ բառը տեղ է գտել նաև 33 2003 թ. պետական բյուջեում: Ժամանակն է հարց ուղղելու կառավարությանը. ինչո՞ւ Դուք, հարգարժան կառավարություն և մեծադոկ վարչապետ Ա. Սարգսյան, չեք կատարում վերոբերյալ հորդոր-հրահանգ-հրամանը: Եթե Դուք մոռացել եք սույն հրամանի մասին, «Պաշտոնական տեղեկագիր ՓԲԸ»-ն 2003 թ. իր «3այոց լեզվի կանոններ» հրատարակությամբ թարմացնում է Ձեր հիշողությունը, թարմացնելով՝ վերստին հիշեցնում Ձեր պարտականությունը: Մենք՝ հայոց լեզվի անադարտությամբ մտահոգ քաղաքացիներս էլ հուսով ենք, թե այսուհետև Ձեզ խնդրոք առարկա հրամանի նոր հրատարակություն-հիշեցում պետք չէ լրահատկացնել (ինձ՝ սուբսիդացնել), որ Դուք Ձեր պարտքը (մեր ու ձեր լեզուն անադարտ պահելու առումով) կատարեք:

ՎԵՐԱՀԱՏԿԱՅՈՒՄ, ԹԵ՞ ԳԵՐԱՀԱՏԿԱՅՈՒՄ

«Բյուջեն դատարկ է», «բյուջեն հնարավորություն չի տալիս» և սրանց հանգույն շատ այլ արտահայտություններ արդեն այնքան սովորական են դարձել, հայ թոշակառուի թշվառությունն այնքան «հարիրվել է» մեր իրականությանը, ամենամոտ թալանատենչն այնպես թափանցել է նույնիսկ պետական բյուջե և մսխում է վերջինիս առանց այն էլ աղքատիկ միջոցները (աղքատիկ՝ ոչ միայն պետության նորանկախության, տնտեսական շրջափակման, տարածաշրջանային առանձնահատկությունների պատճառներով, ինչպես մեզ համոզում են, այլ առավելապես նորահայտ իշխանիկների տգիտության, տհասության, կաշառվածության ու թալանելու մոլուցքի պատճառով), որ յուրաքանչյուր անդրադարձ այդ թեմային թվում է անտեղի: Սակայն, ինչպես տեղեկանում ենք 33 կառավարության՝ ոչ վաղ անցյալում կայացրած մի որոշումից, 3այաստանի բյուջեում կան հոդվածներ, որոնցով նախատեսված գումարները ... չեն ծախսվում:

- 3այաստանո՞ւմ ենք:
- 3արտանո՞ւմ ենք:
- Չշտապենք:

«2002 թվականի պետական բյուջեի մասին» 33 կառավարության 22 մայիսի 2003 թվականի N 642-Ա որոշումից՝ պարզվում է, որ «3այաստանի 3անրապետության» օրենքով նախատեսված է եղել «պետական աջակցություն ազգային փոքրամասնություններին»: Նախորոշված աջակցությունը ստույգ գումարային չափ ունի՝ 10 միլիոն դրամ: Սույն գումարը, որ պիտի ծախսվեր 2002 թվականին, մնացել է անձեռնմխելի: 3արց է ծագում՝ 3այաստանում ազգային փոքրամասնություններն են վերացել, թե՞ նրանց նյութական-ֆինանսական հնարավորություններն են մեծացել: 3այաստանում որպես ազգային փոքրամասնություններ շարունակում են ապրել հույներ, ասորիներ, ռուսներ և այլք, ուստի նախորդ նախադատության առաջին հարցն ինքնաբերաբար «փակվում է». մնում է երկրորդը: Միանշանակ է, որ հայրենի հողում եթե իր չարքաշ գոյությունն է շարունակում հայրենատեր հայը, ինչպե՞ս կարող են բարգավաճել, բարեկեցիկ ապրել ազգային փոքրամասնությունները: Անտարակույս՝ ոչ մի կերպ: Ուստի բյուջեով նախատեսված նշված գումարը, որը, անշուշտ, չէինքն է, անպայման ուներ իր հասցեատերը, և օրի-

նական պարտավորությունից գատ՝ նաև բարոյական պարտք կար՝ նշված գումարը ժամանակին հասցեատիրոջը հատկացնելու: Այդ պարտավորությունն ու պարտքը, բնականաբար, պիտի ծանրացած լինեին կառավարության ուսերին, որը պետական բյուջեի կատարողն է:

Եթե ընթերցողը կարծում է, թե 10 միլիոն դրամն ըստ պատկանելիության չհատկացնելով՝ հարցը փակվել է, սխալվում է. **ու՛մարը վերոհիշյալ որոշմամբ հատկացվել է ոչ այլ ում, քան ՀՀ կառավարության աշխատակազմին:** Վերջինս այդ հատկացման կարիքը 2003 թ. ունեցել է, և մեր մեծավորներն այդ գումարն ստացել են 33 ազգային փոքրամասնությունների հաշվին:

Ակամա սկսում են մտածել, որ գումարը հասցեատիրոջը չի տրամադրվել միտումնավոր, որպեսզի հետո հնարավոր լինի այն «վերահատկացնել» 33 կառավարության աշխատակազմին: Շատ է զարմանալի, որ լուսնայական ճշգրտությամբ ծախսումներ նախահաշվող բյուջեի հեղինակները 33 կառավարության աշխատակազմի համար և ի վնաս աշխատակազմի «սխալմամբ» 10 մլն դրամի վրիպում են թույլ տվել, և կառավարությունն այդ վրիպումը որոշել է ուղղել ազգային փոքրամասնություններին հատկացվելիքը ժամանակին չտրամադրելու միջոցով:

Որոշմանը անկողնակալության, նույնիսկ մեծահոգության տեսք տալու համար 2-րդ կետով կառավարությունն այնուամենայնիվ որոշել է արդեն 2003 թ. պետբյուջեից նույն գումարի (10 միլիոն դրամ)՝ ավելացրած նախորդ տարվանը, աջակցություն տրամադրել եզրինների ազգային միությանը՝ «նրա միջոցով համայնքների միջև (թե՞՞ համայնքներին՝ «Վ.ա.») ... բաշխելու համար»:

Ծագում է մեկ այլ հարց. ազգային փոքրամասնությունների համար բյուջեով նախատեսված տարեկան 10 մլն դրամը երկու տարվա գումարով (որքան հասկացանք որոշումից՝ 20 մլն դրամ) ինչո՞ւ է տրամադրվում հատկապես եզրիններին, ընդ որում՝ երկու տարի անընդմեջ (թեկու՞զ միանվազ): 3այաստանում ուրիշ ազգային փոքրամասնություններ չկա՞ն: Գուցե 33 վիճակագրական ծառայությունը ստույգ տվյալներ է ներկայացրել 33 կառավարությանը, որ մեկ շնչին ընկնող մանր եղջերավոր անասունների թվով առջևում ասորիներն են կան հույները ...

SEPTEMBER 2003 45 FOR THE SAKE OF JUSTICE

ԱՊՕՐԻՆԻ ՕՐԵՆՔՆԵՐ

Արդեն առիթ եղել է խոսելու, թե հայոց օրենսդրությունը շարունակում է որչափ հարազատ մնալ իր «խորհրդային արմատներին» կամ, այլ կերպ ասած, օրենսգրքերի անվանումներից օտարելով-վտարելով «ԽՍՀՄ», «խորհրդային» և նման այլ բառ-բառակապակցություններ, այդ օրենսգրքերը (մեր ակնարկած պարագայում՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքը») ժամանակակից տեսքի է բերում՝ իբրև թե հարմարեցնելով ավելի քան 12 տարի անկախ մի պետությունում բնականաբար ծագած նոր իրավահարաբերություններին, իրավական կարգավորման ենթակա նոր իրողություններին: Առիթ եղել է խոսելու նաև այն մասին, որ խորհրդային օրենքների, օրենսգրքերի, իրավական այլ ակտերի «արդիականացումը» երբեմն կատարվում է կամայաբար, առանց օրինական հիմքերի: Չգրված մի օրենքով՝ մեր օրենսդիրներն օրենքի կամ օրենսգրքի անվանումից սուսուփուս վտարում են անցանկալի-ժամանակավրեպ բառ-բառակապակցությունը՝ այդ փոփոխություն(ներ)ը որևէ հիմք-օրենքով չօրինականացնելով: Պարադոքսային վիճակ է՝ երկրում գործում են ապօրինի օրենքներ:

Ահա դրանցից ևս մեկը՝ «Հայաստանի Հանրապետության ամուսնության և ընտանիքի օրենսգրքը»՝ 08.05.2003 թ. դրությամբ կատարված փոփոխություններով և լրացումներով: Նոր հրատարակություն է՝ Երևան 2003, հրատարակիչը՝ «Էկոտաքս» ՍՊԸ: Կարիք չկա փնտրելու (թեև մենք փնտրել ենք)՝ ապացուցելու համար, որ օրենսգրքի վերոբերյալ անվանման «Հայաստանի Հանրապետության ...» բառակապակցությունը մայր օրինակում «ՀԽՍՀ» հապավման ձևն է ունեցել⁵, և օրենսդիրը սույն շրջաբաղադրիչներից կազմված հապավման-զուգահեռից միևնուս անելով երկուսը՝ «խորհրդային սոցիալիստական»-ը, ստացել է «Հայաստանի Հանրապետություն» տարբերությունը: Ինչ-որ դյուրին է, չէ՞՞ 4-2=2: Իրավագիտության ասպարեզում չզիտենք՝ ինչպես, մաթեմատիկայի բնագավառում մեր օրենսդիրներն անսխալական են:

Վերադառնանք ամուսնության և ընտանիքի օրենսգրքին: Վերջինիս հատված 1-ի գլուխ 1-ի հոդված 1-ը («Հայաստանի Հանրապետության ամուսնության և ընտանիքի օրենսդրության խնդիրները» (խնդրում ենք՝ նկատել և մտապահել ընդգծումը)) ազդարարում է. «Հայաստանի Հանրապետության ամուսնության և ընտանիքի օրենսդրության խնդիրներն են՝

կոմունիստական բարոյականության սկզբունքների վրա խարսխված խորհրդային ընտանիքի հետագա ամրապնդումը.

երեխաների՝ հասարակական դաստիարակության հետ օրգանապես զուգորդված դաստիարակությունն ընտանիքում ... աշխատանքի նկատմամբ կոմունիստական վերաբերմունքի ոգով, երեխաների նախապատրաստումը կոմունիստական հասարակարգի կառուցմանն ակտիվորեն մասնակցելուն ...»: (Մեր խնդիր-նպատակն այդ չէ, բայց փակագծե-

րում մեզ թույլ տանք փոքր-ինչ մեկնաբանել: Երեխաներին այսօր աշխատանքի նկատմամբ կոմունիստական ոգով դաստիարակել պետք չէ, ինչպես հորդորում է վերոբերյալ հոդվածը. վերջին ավելի քան տասը տարիների ընթացքում հայ երեխաները «դաստիարակվում են» անխտիր ամեն տեսակի աշխատանքի նկատմամբ պաշտամունքի հասնող ակնածանքի ոգով, քանի որ ականատեսներն են իրենց աշխատունակ - անաշխատանք ծնողների և, առավել ևս ու բնականաբար, իրենց իսկ չքավորության, թշվառականի վիճակի, աղքատի կացության և, որ ամենաողբերգականն է, կրողներն են անտերունչ-լքվածի հոգեբանության):

Կրկին դառնանք օրենսգրքին: Այստեղ ևս ամենուր ակնառնում են «ԽՍՀՄ»-ը, «կոմունիստական ոգին», «սոցիալիստական օրինականությունը» և այլն: Վերջին 12 (անկախյալ) տարիների ընթացքում հայ օրենսդիրն այս օրենսգրքն աչքի է անցկացրել մեկերկու անգամ. առաջին՝ որ ապօրինաբար 4-2=2 գործողությունն է կատարել, երկրորդ՝ 22 դեկտեմբերի 1992 թ. ընդունված ՀՀ օրենքով, որ դարձյալ առնչություններ ունի մաթեմատիկայի հետ, սահմանել է. «Գործազրկության նպաստ ստացող ծնողներից ալիմենտ է զանձվում հետևյալ չափով ...»: Չափը, անտարակույս, ընթերցողին չի հետաքրքրի. հետաքրքիրն այն է, որ «հեռավոր» 1992-ին ալիմենտ էր զանձվում և «ընթացիկ» 2003-ին էլ շարունակվում է զանձվել ... գործազրկության նպաստից, այն նպաստից, որը նպաստառուն 2000-ից «այս կողմ» դեռ լրիվ չի ստացել, ստացածն էլ ի՞նչ է՝ մի 3000 դրամ: Ընթերցողն արդեն նկատեց, որ որքան էլ փորձում ենք պահպանել ՀՀ ամուսնության և ընտանեկան օրենսգրքին այս փոքրիկ հողված-անդրադարձի իրավական ոգին, չի ստացվում. մեր խոսքում ականա հնչում են սոցիալական դժգոհության ու բողոքի նուտաներ, որոնք այնքան ու այնպես մաշված են, որ ամաչում էլ ես հնչեցնել ևս մեկ անգամ: Թերևս դա կարելի է բացատրել-արդարացնել այն հանգամանքով, որ խնդրո առարկան ամուսնության և ընտանիքի օրենսգրքն է, և ընդգծվածներն ականա մղում են սոցիալական խնդիրների արծարծումների: Տխու՛ր արծարծումների:

Սակայն մենք կկամենայինք խոսքն ավարտել փոքր-ինչ ուրախ նոտայով. օրենսգրքի վերը նշված հրատարակությունն ընդամենը ... 100 օրինակ է: Եվ այս անգամ էլ մեզ մխիթարենք հույսով, թե հրատարակիչներն այն նախատեսել են մերքին՝ պաշտոնական օգտագործման համար և արդեն գլխի են ընկել, որ նոր օրենսգրքի ստեղծման անհրաժեշտությունը և նոր օրենսգրքն ընթերցողին հազարավոր օրինակներով անվարան ներկայացնելու հարցը հատուկացել է, ինչպես հասունացել է այն սերունդը, որ մեկ էլ տեսար ընդվզեց ու հրաժարվեց ամուսնանալ, ընտանիք կազմել, երեխաներ դաստիարակել այս օրենսգրքի ոգով, որով տարփողվում են կոմունիստական անհոգ(ս) ապագան, սոցիալիստական բարոյականությունը և այլն:

«ՀԱՏՈՒԿ ՆԻՍՏԵՐԻՆ»՝ ՀԱՏՈՒԿ ՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Աժ նախկին նախագահ Ա. Խաչատրյանը 2003 թ. ապրիլի 1-ին ստորագրել է ՀՀ ԱԺ որոշումը՝ «Հայաստանի Հանրապետության Նախագահի պաշտոնը ստանձնելուն նվիրված Հայաստանի Հանրա-

պետության Ազգային ժողովի հատուկ միատ գումարելու վայրի մասին»: Որոշումը ծավալուն չէ, և նպատակահարմար է մեջբերել ամբողջությամբ.

«Հայաստանի Հանրապետության Ազ. ային

ժողովը որոշում է.

Առաջնորդվելով «Հայաստանի Հանրապետության Ազ. ային ժողովի կանոնակար.» >> Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածով Հայաստանի Հանրապետության Նախա. ահի պաշտոնը ստանձնելուն նվիրված Հայաստանի Հանրապետության Ազ. ային ժողովի հատուկ նիստ. ումարել 2003 թվականի ապրիլի 9-ին, ժամը 13.00-ին, Երևան քաղաքում, Հայաստանի Հանրապետության Կառավարության նիստերի Մեծ դահլիճում (Մելիք-Աղամյան 1)»:

«Հողվածով» բառի վրա բուք կետադրական նշանի բացակայությունը համարենք տպագրական վրիպակ, «Կառավարություն» բառի մեծատառ գրությունը՝ հավուր պատշաճի ոգևորության արդյունք (կամ հետևանք) և շարունակենք տարակուսել՝ 33 Աժ-ն, «առաջնորդվելով ... կանոնակար. ի 4-րդ հոդվածով», ինչպես կարող էր հատուկ նիստ գումարել, երբ նշված հոդվածն այդպիսի (հատուկ) նիստ գումարելու արտոնություն չի տալիս: Վերոնշյալ «առաջնորդող» հոդվածն ընդհանրապես որևէ, նույնիսկ հեռավոր կապ չունի 33 Նախագահի պաշտոնն ստանձնելու արարողակարգի հետ: Ահավասիկ Աժ կանոնակարգի համապատասխան հոդվածը. «Հողված 4. Ազ. ային ժողովի նիստերի անցկացման վայրը.

Ազ. ային ժողովի նիստերը. ումարվում են Երևան քաղաքում, Ազ. ային ժողովի նստավայրում՝ Բաղրամյան 19: Այլ վայրում նիստ կարող է. ումարվել միայն Ազ. ային ժողովի որոշմամբ կամ, դրա անհնարինության դեպքում, Հանրապետության Նախա. ահի հրամանա. րով»: 3իչեցնենք, որ Աժ կանոնակարգը վերջին լրացումներով և փոփոխություններով Աժ-ի կողմից ընդունվել է 2002 թ. փետրվարի 20-ին, 33 Նախագահի կողմից վավերացվել 21 մարտի 2002 թ. (30-308), այն է՝ Աժ Նախագահ, բանասիրական գիտությունների դոկտոր Ա. Խաչատրյանի «օրոք»: Արդ փորձենք հասկանալ, թե ի՞նչ է նշանակում հողվածում ամրագրված որոշման անհնարինության դեպքը: Օրենսդիրները, անտարակույս, ի նկատի են ունեցել որոշում կայացնելու անհնարինությունը, որը կարող է դեպք որակվել: Այնուհետև՝ ի՞նչ է նշանակում հողվածում (նաև՝ ամբողջ Կանոնակարգում, նաև՝ հայոց գրեթե բոլոր օրենսդրական ակտերում) գործածվող «Հանրապետության Նախագահը»: 12 տարին այդքան երկար ժամանակ է, որ իսպառ. և մեկընդմիշտ մոռանա՞նք մեր իսկ ընդունած Անկախության հռչակագիրը, որում սևով սպիտակին գրված է. «3իսԱ3-ն վերանվանել Հայաստանի Հանրապետություն, կրճատ՝ Հայաստան»: Ինչպես նկատեց ընթերցողը, Աժ կանոնակարգի վերոբերյալ հողվածում մեր երկիրը ոչ Հայաստանի Հանրապետություն է, ոչ Հայաստան. այն անորոշ անստույգ-ապօրինի Հանրապետություն է:

Աժ նախկին նախագահին հիչեցնենք նաև, որ իր իսկ հաստատած կանոնակարգում այլուր խոսք կա հատուկ նիստ գումարելու վերաբերյալ, բայց այն ոչ մի, բացարձակապես ոչ մի առնչություն չունի 33 Նախագահի երդման արարողության հետ: Ահավասիկ. «3ողված 42. Հատուկ նիստերը

1. Ազգական դրություն հայտարարելու մասին Հանրապետության Նախագահի հրամանագրի հրապարակվելուց հետո անհապաղ գումարվում է հատուկ նիստ:

2. Հատուկ նիստի օրակարգում առանց քվեարկության ընդգրկվում և քննարկվում են պատերազմ

հայտարարելու որոշման նախագիծը և ռազմական դրություն հայտարարելու մասին միջոցառումների օրագիրը»:

Վերևում խոսվեց Աժ Նախագահի՝ 2003 թ. ապրիլ 9-յան՝ հավուր պատշաճի ոգևորությամբ պայմանավորված Կառավարության մեծատառ գրության մասին: Ստիպված ենք հավելել, որ նույն օրվա հարուցած ոգևորությունը Աժ որոշման անվանման և բուն որոշման մեջ «ներմուծել» է նաև «հատուկ», բառը, որի իրավունքը, կրկնում ենք, Աժ Նախագահը չունի և որևէ իրավական ակտով հիմնավորված չէր: Ավելին. 33 Նախագահի երդման արարողությունն անցկացնելու նպատակով Աժ հատուկ նիստ կայացնելու իրավական հիմք տալիս է 33 Սահմանադրությունը (հողված 54), որին և պետք էր հղում անել:

Ավարտին՝ մի բանասիրական դիտողություն՝ կապված վերոբերյալ հողված 42-ի հետ և ուղղված Բ. Գ. Դ. Աժ նախկին նախագահին. ճիշտ չէ գրել «հրամանագրի հրապարակվելուց հետո». ճիշտ է՝ «հրամանագիրը հրապարակվելուց հետո» կամ, տարբերակ, «հրամանագրի հրապարակումից հետո»:

Այսքանը: Ընթերցողը, կարծում ենք, համոզվեց, որ վերոգրյալ հողվածով առաջնորդվելով՝ վերոհիշյալ որոշումը կայացնելու ոչ մի հնար չկա, և թե դա ինչպես է հնարավոր դարձել նախկին գումարման Աժ-ում, մնում է անհայտ: Հայտնի է (զոնե մեզ համար) մի բան. քանի որ Հայաստան երկիրը հավերժորեն լինելու է, այդ երկիրը այսուհետև էլ Նախագահներ ու ազգային ժողովներ ունենալու է, որոնց հատուկ նիստերում նախագահները ստանձնելու են իրենց պաշտոնները, ուստի անհրաժեշտ է Աժ կանոնակարգում համապատասխան լրացում կատարել, որպեսզի Աժ-ն լիազորված լինի 33 նորընտիր Նախագահի երդման արարողության առթիվ հատուկ նիստ հրավիրել և այդ մասին օրինական որոշումներ կայացնել:

Ավարտին՝ ևս մեկ դիտողություն. որոշման մեջ «Կառավարության նիստերի Մեծ դահլիճի» հասցեն տրված է Մելիք-Աղամյան 1 ձևով, մինչդեռ, կարծում ենք, որոշումը, ուր այնքան մանրակրկիտ կերպով քանիցս կրկնվում է «Հայաստանի Հանրապետություն»-ը, պետք արձանագրեր նաև, որ Մելիք-Աղամյան 1-ը փողոցի և շենքի անվանում է: Ինչ անհեթեթ բան կատարվեք, եթե այդ փողոցն ու շենքը կոչվենք, դիցուք, Դեմիրճյան 2:

1 Տե՛ս Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, N 32 (267) 11 Հունիսի 2003:
2 Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, N 31 (266) 4 Հունիսի 2003:
3 Պաշտոնական տեղեկագիր ՓԲԸ, Հայոց լեզվի կանոններ, Երևան 2003: Անցկալ-ը ռուսերեն՝ заваръ բառի հայերեն համարժեքն է:
4 Տե՛ս Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, N 34 (269), 25 Հունիսի 2003:
5 Հմնտ. Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության ամուսնության և ընտանքի օրենսգիրք, Երևան «Հայաստան», 1986:
6 Այնհայտ է ՀՀ Նախագահի երդման արարողության վերաբերյալ ՀՀ Սահմանադրության և ՀՀ Աժ կանոնակարգի հակասությունը: Սահմանադրության վերն ակնարկված հողված 54-ում ամրագրված է. «Հանրապետության Նախագահը պաշտոնն ստանձնում է Ազգային ժողովի հատուկ նիստում ժողովրդին տրված երդմամբ»: Մինչդեռ Աժ կանոնակարգում, ինչպես տեսանք, հատուկ նիստեր հրավիրվում-գումարվում էին բոլորովին այլ առիթներով:

ՀԱՅ-ԵԳԻՊՏԱԿԱՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ
(14-րդ դարի գաղթի և քաղաքացիական պատերազմի փուլեր)

ԱՐԱՄ ՀՈՎՀԱՆԵՒՅԱՆ
ԵՊՀ պարամոնիայի ամբիոնի ասպիրանտ

14-րդ դարի առաջին քառորդը Կիլիկիայի հայկական թագավորության պատմության ամենակարևոր ժամանակահատվածներից մեկն է: Կիլիկիան թեև դեռ պահպանում էր իր հզորությունը և ի գործ էր պաշտպանել երկրի սահմանները, սակայն միջազգային ասպարեզում տեղի ունեցած նոր իրադարձությունների հետևանքով հայտնվել էր քաղաքական անմաստ վիճակում: Տարածաշրջանի խաչակրաց պետությունները, բացառությամբ Կիպրոսի, կործանվել էին, իսկ վերջինս էլ այնքան հզոր չէր, որ կարողանար մշտական օգնություն ցույց տալ Կիլիկյան Հայաստանին:

Եվրոպական պետությունների հարաբերություններն էլ բավականաչափ սրված էին, և խաչակրաց նոր արշավանքներ չէին ակնկալվում: Եվրոպական երկրների թագավորները և Հռոմի պապը իրական օգնության փոխարեն ավելի շատ ձգտում էին ընդարձակել իրենց ազդեցության ոլորտները Կիլիկիայում և նամակներ առաքելով ու չնչին ֆինանսական օժանդակություն ցուցաբերելով՝ լուծել իրենց հուզող քաղաքական ու տնտեսական հարցերը: Հատկապես իտալական քաղաք - պետությունների համար, որոնք հայտնի էին իրենց առևտրական գործունեությամբ, Կիլիկիայի թշնամիների դեմ պատերազմն ամենևին ձեռնադրել չէր: Նրանք ավելի հակված էին դիմելու խորանակված քաղաքականության՝ սիրաշահելու Կիլիկիային, կապվելու նրա հետ առևտրական պայմանագրերով, որոնցով հսկայական եկամուտներ էին ստանում: Այդ ժամանակ Կիլիկիայի Այաս նավահանգիստը հիմնական, միակ անվտանգ նավահանգիստն էր, որտեղից Արևմտյան Եվրոպայի վաճառականներն առևտրական հարաբերություններ էին պահպանում արևելքի իրենց գործընկերների հետ:

Ինչ վերաբերում է Կիլիկիայի գլխավոր դաշնակիցներին՝ մոնղոլներին, պետք է նշել, որ նրանք այս շրջանում արդեն չունեին նախկին հզորությունը: Իրանի մոնղոլական պետությունից՝ իլխանությունից, իր թշնամիների, հատկապես Ոսկե հորդայի դեմ պայքարը մեծ ծախսեր և ճիգեր էր պահանջում: Իլխանությունը սկսեց թուլանալ նաև այն պարզ պատճառով, որ նրա առանձին շրջաններում, սկսած 13-րդ դարի 80-90-ական թվականներից, ապստամբություններ բռնկվեցին: Այս ապստամբությունների ճնշումն իլխանությունից բավական մարդկային և նյութական ռեսուրսներ էր խլում: Փաստորեն ներքին անկայուն վիճակը, պայքարը հարևան ուլուսների դեմ և Ասիայում հզոր դաշնակցի բացակայությունը ստիպեցին գրեթե բոլոր իլխաններին՝ հզոր դաշնակիցներ փնտրելու Եվրոպայում: Սակայն բացի խոստումներից՝ մոնղոլները իրական օգնություն չստացան և մեն-մենակ մնացին հզոր թշնամիների դեմ:

Մոնղոլների և Կիլիկիայի դաշնակցային հարաբերությունների մասին պետք է նշել, որ թեև դրանք պահպանվում էին, բայց 13-րդ դարի վերջերին ի հայտ

եկավ մի հզոր արգելակող գործոն. մոնղոլները Ղազան խանի օրոք՝ 1295 թ., մահմեդականություն ընդունեցին²:

Մահմեդականություն ընդունելու հիմնական պատճառներն էին՝

1. Պարսկաստանի մոնղոլ իլխանները և ազնվականները, առանց իրենց հպատակների կրոնն ընդունելու, չէին կարող թագավորել մի երկրում, որի բնիկները մուսուլման մահմեդականներ էին:
2. Գրավելով բարձր քաղաքակրթություն ունեցող շատ երկրներ և երկար ժամանակ կախվածության մեջ լինելով տեղի ժողովուրդների հավատարմությունից՝ մոնղոլները ստիպված էին ընդունել նրանց կրոնը՝ իրենց իշխանությունը պահպանելու համար:
3. Իսլամի ընդունումը Ղազան խանին ապահովում էր իրանական ֆեոդալական վերնախավի աջակցությունը:

14-րդ դարի սկզբին մոնղոլները շարունակում էին նամակագրական կապերով և դեսպանությունների միջոցով եվրոպական երկրներին իրենց կողմը գրավելու քաղաքականությունը, որպեսզի ստեղծվի հակաեգիպտական դաշինք:

Այս նույն ժամանակահատվածում իրենց ուժերի ծաղկման շրջանում էին Կիլիկիայի գլխավոր հակառակորդները՝ Եգիպտոսի մամլուքները: Նրանք օր օրի հզորանում էին՝ դառնալով տարածաշրջանի ամենաազդեցիկ ուժերից մեկը: Եգիպտացիները, նվաճելով լատինական իշխանությունները՝ Ալեքան, Տիրը, Սիդոնը, Բեյրութը, սահմանակից դարձան Կիլիկյան Հայաստանին: Մամլուքների կողմից վտանգն ավելի աճեց:

Ինչ վերաբերում է Իկոնիայի սուլթանությանը, պետք է նշել, որ նրա տարածքում առաջացել էին 10 ամիրայություններ, որոնցից երկուսն առավել ագրեսիվ ու վտանգավոր էին: Առաջինը թուրք - սելջուկներն էին, որոնք հարևան էին Կիլիկիային արևելքից, երկրորդը՝ թուրքմեն-կարամանները, որոնք հարևան էին Կիլիկիային հյուսիսից:

14-րդ դարի սկիզբը նշանավորվեց նաև նրանով, որ մոնղոլական իլխանությունը 1303թ. կազմակերպեց ամենավճռական արշավանքներից մեկը դեպի Սիրիա: Ղազան խանի նախորդ երկու արշավանքները (1299թ., 1300թ.) համոզեցին իլխանին, որ առանց եվրոպական երկրների հետ համատեղ գործողությունների՝ հնարավոր չէ հաղթել Եգիպտացիներին: Նախապատրաստվելով երրորդ արշավանքին՝ Ղազանը դեսպանություններ ուղարկեց Անգլիա և Ֆրանսիա³:

Ֆրանսիայի թագավոր Ֆիլիպ Գեղեցիկի պատասխանը մեզ հայտնի չէ, սակայն պարզ է, որ նա այդ ժամանակ չէր կարող դրական պատասխան տալ, որովհետև պատերազմի մեջ էր հարևան երկրների հետ:

Անգլիայի թագավոր Էդվարդը նույնպես գործնականում չօգնեց: Նման պարագայում արևելք էին հաս-

նուն միայն Հռոմի պապի խոստումնառատ թղթերը: Այսպիսով՝ սիրիական երրորդ արշավանքից առաջ Ղազան խանն արևելքում իր հպատակ երկրների հետ միայնակ պետք է պայքարեր եգիպտոսի սուլթանության դեմ: 1303թ. արշավանքը կարևոր է այն առումով, որ այն փաստորեն վերջին արշավանքն էր, որտեղ հայերը, դաշնակցելով մոնղոլների հետ, փորձեցին գրավել Սիրիան, Պաղեստինը և վերացնել եգիպտական պետությունը:

Այսպիսով՝ 1303թ. գարնանը մոնղոլական բանակը, հայ-վրացական զորքերի հետ, սկսեց սիրիական երրորդ արշավանքը:

Ցավոք, աղբյուրները, որոնք վերաբերում են 1303-1305թթ. քաղաքական անցուղարձերին, բավարար քանակությամբ մեզ չեն հասել, ուստի այս արշավանքը և 1305թ. եգիպտական զորքերի ներխուժումը Կիլիկիա հնարավոր չէ մամրագրել հետազոտել: Ըստ Աբուլ Ֆիդայի՝ 1303 թ. գարնանը Ղազանը նոր արշավանք է սկսում դեպի Սիրիա⁴: Նա անձամբ չի անցնում Եփրատը՝ զորքը վստահելով իր զորավարներից հուսալուշահին: Ըստ Հեթում պատմիչի՝ հուսալուշահի տրամադրության տակ կար 30 հազարանոց զորք, որին միացավ Կիլիկյան Հայաստանի 18 հազարանոց բանակը⁵: Ընդհանուր առմամբ՝ սիրիական արշավանքին մասնակցում էր մոտ 50 հազար զինվոր: Դժբախտաբար աղբյուրները մեզ հնարավորություն չեն ընձեռում՝ ճշտելու հակառակորդ զորաբանակի զինակազմների թիվը: Ի վերջո, դաշնակիցների զորքերը հասնում են Հոմս, գրավում ու թալանում են այն և, ինչպես նշում է Ռաշիդ ադ-Դինը, մոտենում են Դամասկոսին, որտեղ 1303թ. ապրիլի 20-ին տեղի է ունենում վճռական ճակատամարտ դաշնակից զորքերի և եգիպտացիների միջև⁶: Մարտը տևում է մինչև ապրիլի 21-ի կեսօրը և ավարտվում դաշնակից զորքերի պարտությամբ: Հայ պատմիչ Հեթումը, որն այդ ճակատամարտի ակնամատեններից էր, պարտությունը վերագրում է մոնղոլ զորավարի չափազանց ինքնավստահությանը⁷: Դաշնակիցների պարտությունն ուներ մի քանի պատճառներ ևս: Նախ՝ Դամասկոսի կառավարիչ Կիփչակը, որին այդ պաշտոնին էր նշանակել Ղազանը, դավաճանեց մոնղոլներին: Այնուհետև՝ մարտավարությունը կառուցելու տեսակետից եգիպտական բանակն ավելի գրագետ էր գտնվել, ինչի արդյունքը երևաց ճակատամարտի ավարտին: Եվ, վերջապես, ամենակարևոր գործոնն այն էր, որ Ղազանը չէր կարողացել իր բոլոր ուժերն ուղղել դեպի Դամասկոս, որովհետև այդ նույն ժամանակ, ինչպես նշում է Հեթում պատմիչը, Գայդա խանը նորից մտել էր Ղազանի երկիրը և մեծ ավերածություններ գործել⁸: Այդ պատճառով էլ Ղազանը զորքի մի մասով հետ գնաց Իրան՝ չկարողանալով բոլոր ուժերը կենտրոնացնել Սիրիայում:

Այս ամենից առաջին հերթին տուժում էր Կիլիկիան: Վերահաս վտանգից պաշտպանվելու համար Հեթում 2-րդը մեկնեց Իրան՝ Ղազան խանից օգնություն խնդրելու: Խանը նրան տվեց միայն 1000 ծիավոր և դրամական օժանդակություն՝ թագավորության սահմանները պաշտպանելու համար⁹: Այնուհետև Ղազան խանը Հեթումին տվեց նաև բազմաթիվ նվերներ ու պարգևագրեր: Ամենայն հավանականությամբ՝ կարելի է ենթադրել, որ Ղազան խանի այդպիսի հոգատարությունը հայոց արքայի նկատմամբ պայմանավորված էր նրանով, որ Ղազանը ցանկանում էր ա-

պագայում կազմակերպել նոր արշավանք դեպի Սիրիա և մեծ կարևորություն էր տալիս Կիլիկիայի ռազմավարական դիրքին:

Երբ հայոց արքան վերադարձավ իր երկիրը, հանգիստ չունեց, որովհետև, ինչպես նշում են աղբյուրները, գրեթե ամեն ամիս սուլթանի զորքերը խուժում էին երկիրը և ասպատակում դաշտային շրջանները¹⁰:

Հայոց թագավորության այս ծանր վիճակը շարունակվեց մինչև 1305թ.:

Ըստ Աբուլ Ֆիդայի՝ 1305թ. Հալեպի սուլթանության տեղակալ Կարա-Սոնկուրը զորքեր ուղարկեց Հալեպից՝ Կուշթմուր մամլուքի գլխավորությամբ, որ գրավեց Սիսի երկիրը¹¹: Սույն Կուշթմուրը մի թեթևամիտ և անկարող անձ էր ու իրեն տվել էր հարբեցողության: Նա խիստ անփույթ գտնվեց և թշնամիների մասին տեղեկություններ հավաքելու և դրանցից օգտվելու ոչ մի փորձ չարեց: Արշավանքի պատրվակը մամլուք պետերը պատճառաբանում էին նրանով, որ հայոց թագավորն իբր ծոծոցում է հարկի վճարումը:

Մամլուքյան բանակը հասավ մինչև Տարսուն և մեծ ավերածություն կատարելով՝ շարժվեց դեպի Այաս, բայց այստեղ Սիսի թագավորը մեծ թվով զինվորներ հավաքեց թաթարներից, ֆրանկներից, որոնք անակնկալ հարձակվեցին Կուշթմուրի վրա, որի հետ էին նաև Հալեպի ամիրաները և գնդերը: Բախումը տեղի ունեցավ Այասի մոտ և ավարտվեց մամլուքների պարտությամբ: Հայերը շատերին կոտորեցին և գերի վերցրին: Շատ քչերին հաջողվեց Հալեպ հասնել¹²: Աբուլ Ֆիդայի խոսքերը հաստատում է նաև Մուֆազալը՝ ասելով, որ Բեյբարսի թագավորությունից ի վեր հայոց արքայի զորքն այդպիսի հաղթանակ չէր տարել¹³: Հեթում պատմիչը նույնպես հաստատում է դեպքերի այդպիսի ընթացքը և ավելացնում, որ մամլուքյան 7 հազարանոց բանակից միայն 300 հոգի փրկվեց¹⁴: Նա նաև ավելացնում է, որ դրանից հետո եգիպտոսի սուլթանը խաղաղության դաշինք կնքեց հայոց թագավորի հետ¹⁵: Հայկական զորքերի փայլուն հաղթանակը հաստատում է նաև սուլթանի արքունի պատմիչը՝ Մաքրիզին¹⁶: Ցավոք, հայ-եգիպտական հակամարտության պատմության մեջ սա վերջին լուրջ հաղթանակն էր մամլուքյան զորքերի դեմ: Դրանից հետո մամլուքները մոտ 15 տարի այլևս չհամարձակվեցին ներխուժել Կիլիկիա: Այս շրջանում հայ-մոնղոլական դաշինքը կարծես թե գործում էր, բայց իրականում այն իր հոգեվարքն էր ապրում:

1305թ. Հեթում 2-րդը հրաժարվեց գահից, վանականի զգեստ հագավ և, քանի որ ժառանգ չունեց, արքայական գահը հանձնեց թորոս եղբոր որդի Լևոն 4-րդին¹⁷, իսկ իրեն վերապահեց թագավորահոր տիտղոսը: Այնուհետև, որպես վանական, Հեթումը մասնակցում էր և՛ պետական, և՛ եկեղեցական գործերին:

Կիլիկիայի ավատատիրական վերնախավը, հասկանալով, որ մոնղոլները գնալով թուլանում են, անհրաժեշտ համարեց ավելի սերտ կապեր հաստատել Եվրոպայի հետ: 1306թ. գարնանը Լևոն 4-րդի դեսպանները Նեապոլի վրայով ուղևորվեցին Հռոմ և Փարիզ: Կլեմենտ Ե Պապը, օգնություն խոստանալով, պահանջեց, որ հայ եկեղեցին ընդունի կաթոլիկ եկեղեցու ծիսակատարություններն ու դավանաբանական սկզբունքները¹⁸: Այդ առթիվ 1307թ. Սիսում հրավիրվեց եկեղեցական ժողով, որտեղ լատինա-սերների ճնշման տակ ժողովականներն ընդունեցին Պապի առաջարկը: 1309թ. Աղանայի ժողովը հաս-

տատեց այդ որոշումը: Սակայն այդ որոշումը չիրագործվեց, որովհետև հայ ժողովրդի ստվար զանգվածը և հոգևորականության մեծ մասն առանձին հույսեր չէին կապում Պապի խոստումների հետ և դեմ էին այդ որոշմանը¹⁹:

Այս նույն ժամանակ Կիլիկիայի ներքին դրությունը շատ անկայուն էր: 1307թ. տեղի ունեցավ մի դեպք, որից հետո, կարելի է ասել, ի չիք էր դառնում հայ-մոնղոլական դաշինքը: 1307թ. նոյեմբերի 18-ին Փիլարդուն, որը նշանակվել էր Կիլիկիայում մոնղոլական զորքերի հրամանատար, ձեռնարկում է մի ուխտատրուժ դավադրություն: Յուրասիրության պատրվակով իր մոտ Անարզաբա քաղաք է հրավիրում Լևոն թագավորին, Չեթուն թագավորահորը և 40 նշանավոր իշխանների, այդ թվում՝ նաև Օշին սպարապետին, Չեթունի եղբորորդի պարոն Թորոսին և կազմակերպում է նրանց սպանությունը²⁰: Փիլարդուն և նրա ջոկատն ամրանում են Անարզաբայի բերդում, իսկ թագավորի հորեղբայր Օշինը, հայկական զորքերի գլուխ անցած, հարձակվում է նրանց վրա և դուրս բշում Կիլիկիայից²¹: Ինչո՞վ բացատրել մոնղոլ զորավարի այդպիսի արարքը: Հայ և օտար միջնադարյան հեղինակները հարուստ տեղեկություններ են հաղորդում այս արարքի իրական նպատակը պարզաբանելու համար: Սամվել Անեցու շարունակողներից մեկը տեղեկացնում է, որ Փիլարդունի այս արարքի նպատակն էր՝ գրավել ամբողջ Կիլիկիան²²:

Աբուլ-Կասիմ Աբդալլա իբն Ալի ալ-հաշանին «Թարիխի Օլջայդու» աշխատությունում հետևյալ տեղեկություններն է տալիս. ըստ նրա՝ Փիլարդուն ստացել էր սուլթան Մուհամեդ Օլջայդուից մի զորամասի հրամանատարությունը՝ Իրենչի Նուինի բանակում: Երբ վերջինս հիջրայի 606 թվականին (1306թ.) Ռումի երկրի զինվորական կառավարիչ նշանակվեց, Փիլարդուն իր զորամասով եկավ հաստատվելու Կիլիկիայում: Նրա զինվորները մուսուլմաններ էին, ինքն էլ նորադարձի եռանդով էր լի: Հայերն ախռի էին վերածել Մամուն խալիֆի աղջկա՝ Այիշեի գերեզմանը Սիսի մոտ: Սրբապղծված այդ շիրինը տեսնելով՝ Փիլարդուն և նրա զինվորները զայրացան և ամեն տեսակ ծայրահեղությունների դիմեցին: Լևոնը զանգատվեց Օլջայդուին և տեղեկացրեց Եգիպտոսի սուլթան ալ-մալիք ալ-Նասր իբն Կալավունին, թե անկարող է վճարել տարեկան հարկը: Նասրը մարդ ուղարկեց Փիլարդուի մոտ, որպեսզի բացատրություն պահանջի հայոց թագավորից: Փիլարդուն հրավիրեց Լևոնին ու նրա ազգականներին իր մոտ և բոլորին սպանեց²³: Ավելի ուշագրավ տեսակետ է հայտնում Մաքրիզին, ըստ որի՝ Փիլարդուն, որը մահմեդական էր դարձել, եկավ Սիս և որոշեց այնտեղ մզկիթ կառուցել²⁴: Այս ծրագիրը դուր չեկավ Չեթունին, և նա գրեց հուղաբանդային, որ Փիլարդուն մտադրվել է եգիպտացիների կողմն անցնել և Ստուն մի մզկիթ է կառուցել: Բարկազկոտ մի նամակ ստանալով տիրոջից՝ մոնղոլ ամիրան վրեժխնդիր եղավ հայերից՝ հրավիրելով նրանց խնջույքի և կոտորելով²⁵:

Կարելի է ենթադրել, որ մոնղոլների՝ իսլամ ընդունելուց և սիրիական 3-րդ արշավանքի պարտությունից հետո հայ-մոնղոլական հարաբերությունները սկսեցին հետզհետե թուլանալ: Հավանաբար Փիլարդուի թշնամական քաղաքականությունը հայերի հանդեպ պաշտպանվում էր մոնղոլական իշխանության վերնախավի մի մասի կողմից: Սրա վկայությունն

է այն փաստը, որ սկզբում Փիլարդուն արդարացվեց: Բացի այդ, անցնելով իշխանության գլուխ՝ Օլջայդուն ընկավ մահմեդական շրջապատի ազդեցության տակ և փոխեց վերաբերմունքը քրիստոնյաների հանդեպ: Հիշատակարաններից հայտնի է դառնում, որ Օլջայդուի հրամանով քրիստոնյաները մահմեդականներից տարբերվելու համար իրենց մեջքի վրա պետք է սև կամ կապույտ նշաններ ունենային: Քրիստոնյաների վրա նաև մեծ հարկեր էին դրվել²⁶: Կիլիկիայում գիտակցում էին, որ խզվում են երբեմնի բարեկամական հարաբերությունները մոնղոլների հետ: Փիլարդուին Կիլիկիայից հեռացնելուց հետո Օշինն օժովում է Կիլիկիայի թագավոր (1308-1320): Կարելի է նշել, որ բացի Փիլարդուի ուխտատրուժ արարքից՝ Կիլիկիայում այդ տարիներին հարաբերական անդորր է հաստատվում: Սակայն այս շրջանում միայն Կիլիկիայի ռազմաքաղաքական անցուղարձերի մասին խոսելը սխալ է, որովհետև հայ-եգիպտական, հայ-մոնղոլական և Կիլիկիա-Արևմուտք հարաբերություններում կարևորվում էր նաև Կիլիկիայի տնտեսական զործոնը. Արևմուտքի ավատատերերի, Հռոմի պապի, Եվրոպայի թագավորների կողմից խաչակրաց արշավանքներ կազմակերպելու նպատակներից մեկն էլ Երուսաղեմի, Պաղեստինի, Սիրիայի առևտրական ուղիներին տիրանալն էր²⁷: 14-րդ դարի սկզբին եվրոպացիների համար միակ ձեռնտու առևտրական նավահանգիստը Այասն էր: Միջազգային այս նոր իրադրության պայմաններում Կիլիկիայի ռազմավարական ու քաղաքական նշանակությունն ավելի մեծացավ: Արևմտյան Եվրոպայի վաճառականներն Արևելքի իրենց զործոններին հետ հարաբերություններ էին պահպանում Այասի վրայով անցնող քարավանային ճանապարհների միջոցով²⁸: Կիլիկիան միջազգային առևտրից հսկայական եկամուտներ էր ստանում: Այսպես տարանցիկ ճանապարհների ցանցով կապված էր Տրապիզոնի, Կովկասի, Ռուսաստանի, Թավրիզի, Ասորիքի, Միջագետքի, Եգիպտոսի և այլ երկրների հետ: 14-րդ դարի սկզբին Այասը լուրջ մրցակից էր դարձել Եգիպտոսի Ալեքսանդրիա նավահանգստի համար²⁹: Ինչպես նշում է Ռ. Գրուսեն, 1291թ. Ակոսի անկումից հետո Այասի առևտրական կարևորությունը 10 անգամ ավելացավ³⁰: Իսկ Ղ. Ալիշանն ավելացնում է, որ 14-րդ դարի սկզբին Այասը հանդիսանում էր Միջերկրական ծովի արևելյան մասի խոշորագույն նավահանգիստներից մեկը³¹: Այնուհետև Ռ. Գրուսեն պատմում է, որ եվրոպացիները շտապում էին Այաս՝ Ալեքսանդրիայի կողմից դրված բարձր մաքսերից խուսափելու համար³²: Ինչքան Արևմուտքի հետ աշխուժանում էր Կիլիկիայի առևտուրը, նույնքան էլ Եգիպտոսի սուլթանության թշնամանքն ավելանում էր հայերի հանդեպ, որովհետև հայկական նավահանգիստների մրցակցությունը վնասում էր Ալեքսանդրիայի ու Դամիրի գործունեությանը³³: Կիլիկիայի առևտուրը 14-րդ դարի սկզբին աշխուժացավ նաև այն պարզ պատճառով, որ Պապի կողմից դրված արգելքն անհնար էր դարձնում արևմտյան վաճառականների առևտուրը Սիրիայի, Պաղեստինի ավերում և Եգիպտոսում³⁴: Դեպի Կիլիկիա կատարած մամուլների բազմաթիվ արշավանքների գլխավոր պատճառներից մեկն էլ Կիլիկյան Հայաստանի տնտեսական հաջողություններն էին: Եվ սխալ է հետազոտողների այն կարծիքը, որ 14-րդ դարի առաջին քառորդին մամուլների ար-

շավանքների հիմնական պատճառը հայերի կողմից կաթոլիկություն ընդունելու փորձեր կատարելն էր կամ խաչակրաց արշավանքներ կազմակերպելու խնդրանքով Պապին ու եվրոպական երկրների թագավորներին դիմումներ հղելը³⁵:

Արևելքից Կիլիկիա էին բերում մետաքս, Յնդկական օվկիանոսից՝ մարգարիտ, Իրանից՝ գորգեր, Արևմուտքից ներմուծում էին բրդե սավաններ, ձեթ, օճառ, գինի, յուղ և այլն³⁶: Միջազգային առևտրին Կիլիկիան մասնակցում էր բանբակով, բրդով, այծի մազով, որից պատրաստում էին բարձրորակ կտորեղեն³⁷:

Ղ. Ալիշանը տեղեկացնում է, որ Արևմուտքից այնքան մարդ էր գալիս Այաս, որ այն ավելի շատ եվրոպական, քան հայկական քաղաք էր³⁸:

Բացի ծովային ճանապարհներից՝ երկրի համար կարևոր նշանակություն ունեին ցամաքային ուղիները: Ըստ Պեգոլոտիի և Մ. Պոլոյի՝ առևտրական կարևոր ճանապարհներից մեկն էլ Այասից ձգվում էր մինչև Թավրիզ⁴⁰: Կիլիկիայի արևմուտքից դուրս եկող առևտրական մայրուղիները ձգվում էին Միջերկրական ծովի ափով դեպի Ատալիա, Իկոնիա, Անտիոք, իսկ Կապադովկիայի վրայով՝ դեպի Փոքր Ասիայի սևծովյան նավահանգիստներ՝ Սինոպ ու Տրապիզոն⁴¹: Մ. Սամուտոն խորհուրդ էր տալիս եվրոպացիներին՝ չգնել հնդկական ապրանքներ Ալեքսանդրիայից և չօգտվել այդ ուղիով Յնդկաստան գնալու հնարավորությունից. օգտվել այն ուղուց, որն անցնում էր Կիլիկիայի տարածքով⁴²: Հարձակվելով Այասի վրա՝ մամլուքները փորձում էին փակել Այաս-Թավրիզ քաղաքային ճանապարհը՝ հօգուտ Ալեքսանդրիայի⁴³: Լարվածությունը հակամարտող կողմերի միջև պայմանավորված էր նրանով, որ Այաս-Թավրիզ քաղաքային ճանապարհը մրցակցում էր Յնդկական օվկիանոս - Կարմիր ծով ճանապարհի հետ, իսկ Այաս նավահանգիստը մրցակցում էր Ալեքսանդրիայի հետ՝ Յնդկաստանից եվրոպա ապրանքներ տանելու հարցում: Եգիպտացիներին զայրացնում էր նաև այն փաստը, որ Եգիպտոսի համար կարևոր շատ ապրանքներ՝ փայտ, բանբակ, երկաթ և այլն, թագավորի հրամանով չէին վաճառում Եգիպտացիներին՝ Պապի դրած արգելքի պատճառով⁴⁴: Դրանից օգտվում էին վենետիկցիներն ու ջենովացիները, որոնք հայերից գնում էին այդ ապրանքները և ավելի թանկ վերավաճառում Եգիպտացիներին՝ հակառակ Պապի դրած արգելքներին⁴⁵: Իսկ վենետիկցիներն ու ջենովացիներն իրենց առևտրական գործունեությանը այնքան հայտնի էին եվրոպայում ու Մերձավոր արևելքում, որ միջնադարյան ասացվածքն ասում էր. «Եթե ջենովացի ես, հետևաբար առևտրական ես»⁴⁶: Փաստ, որը նույնպես գրգռում էր Եգիպտացիներին հայերի դեմ: Ահա սրանք էին Կիլիկյան Հայաստան-Եգիպտոս հակամարտության գլխավոր պատճառները. Եգիպտոսի սուլթանության արշավանքների շարժառիթը Կիլիկիայի և հատկապես Այասի դեմ ավելի տնտեսական-շահադիտական էր:

Անդրադառնալով հայ-եգիպտական հարաբերությունների ռազմաքաղաքական հայեցակետին՝ պետք է նշել մի կարևոր իրադարձության մասին ևս: 1312թ. Օլջայդու խանը արշավանք ձեռնարկեց Եգիպտոսի սուլթանության դեմ⁴⁷, որն ավարտվեց Եգիպտացիների հաղթանակով: Սա մոնղոլների կատարած վերջին արշավանքն էր դեպի Սիրիա: Արշավանքը հետաքրքրություն է ներկայացնում այն տե-

սակետից, որ Կիլիկիան չմասնակցեց այդ արշավանքին, որն էլ մեզ թույլ է տալիս կարծելու, որ Փիլարդուի արարքից հետո հայ-մոնղոլական համագործակցությունն ընդհատվել էր: Այդ պարագայում Կիլիկիայի իշխող վերնախավը սկսել էր ավելի շատ իր հույսերը կապել Արևմուտքի հետ: Իսկ ժողովուրդը դեմ էր թագավորության արևմտամետ քաղաքականությանը: Բացի այս՝ Սսի և Ադանայի եկեղեցական ժողովների որոշումներին դիմադրություն էին ցույց տալիս նաև բուն Հայաստանի հոգևորականները և Երուսաղեմի Սարգիս եպիսկոպոսը: Վերջինս 1311թ. չընդունեց Սսի ժողովի լատինամետ որոշումները: Երկրից իր աշխարհիկ գերակային՝ Եգիպտոսի սուլթան Նասրին, և հիմնեց անկախ պատրիարքություն, որը գոյատևում է մինչև օրս⁴⁸: 1317թ. Օշինը նոր պատվիրակություն ուղարկեց Եվրոպա՝ Ամինիոն ու Փարիզ, Պապի ու Ֆրանսիայի թագավորի մոտ՝ օգնություն խնդրելու նպատակով⁴⁹: Ինչպես նախկինում, այս անգամ ևս ոչ մի օգնություն չստացվեց:

1320թ.՝ Օշին թագավորի մահից հետո, Կիլիկիայի գահին է բազմում նրա անչափահաս որդին՝ Լևոն Ե-ն: Նրա անչափահասության պատճառով երկիրը ղեկավարվում էր խնամակալների միջոցով: Այս շրջանում նորից բռնկվում են ավատական երկպառակությունները:

14-րդ դարի 20-ական թվականներին թուրք-կարամաններին ղեկավարում էր Չոբանի որդին՝ Թիմուրտաշը, իսկ թուրք-սելջուկներին՝ Ամիր Օմարը⁵⁰: Եգիպտոսի սուլթանությունը, տեղեկանալով Կիլիկիայի ներքին ու արտաքին անմաստ վիճակի մասին, ինչպես նաև դաշնակցելով այս երկու ուժերի հետ, սկսում է պարբերաբար արշավանքներ ձեռնարկել հայկական թագավորության դեմ: Սուլթան մալիք ալ-Նասիր Մուհամեդը Լևոն թագավորից պահանջեց, որ հայերը վերադարձնեն այն տարածքները, որոնք գրավվել էին սուլթան Լաչինի օրոք, այն է՝ Սարվանդի քաղաք, Թիլ Համդունը, Համուսը, Կվայրան, Նոդայրը, Մարաշը⁵¹: Բայց քանի որ հայերը համաձայնեցին հանձնել այդ ամրոցներից միայն մեկը, սուլթանը որոշեց դիմել ռազմական գործողությունների: Եգիպտոսի սուլթանության խրախուսանքով Կիլիկիայի վրա հարձակվեցին Թիմուրտաշը՝ հյուսիսից, թուրք Ամիր Օմարը՝ արևելքից: Միջնադարյան պայքարները մեզ հարուստ տեղեկություններ են տալիս այս արշավանքի մասին: Սամվել Անեցու շարունակողներից մեկը հետևյալ կերպ է նկարագրում այս արշավանքը. «Եկն անօրէն Նուինն Թամուրտաշն որդի Զօպանին յերկիրն Սըսոյ՝ և զբազում վնաս գործեաց, զբազումս եսպան՝ և զբազումս գերի վարեաց...»⁵²: Ժամանակակիցներից Ներսես Պալինցն էլ մեզ տեղեկացնում է, որ Թիմուրտաշը Կիլիկիա մտավ 30 հազար հեծյալներով, մեծաթիվ հետևակով ու մեծ ջանքեր գործադրեց, որ գրավի երկրի բերդերը, բայց չկարողացավ: Երբ նրա զորքերն անցնում էին Լեռնային տարածքներով, մեծ վնաս կրեցին⁵³: Այս արշավանքի մասին մեզ տեղեկացնում է նաև Աբուլ Ֆիդան, բայց ըստ նրա՝ Թիմուրտաշը Կիլիկիայում պարտություն չի կրել, այլ մտել է Սսի երկիրը, ասպատակել այն, իսկ հայոց թագավորն էլ ասպատակել էր Այասի բերդում: Մոտ մեկ ամիս հետո թշնամի են է վերադառնում⁵⁴: Մենք հակված ենք ավելի շատ ընդունելու Ներսես Պալինցի տեղեկության հավաստիությունը. եթե Աբուլ Ֆիդայի խոսքերը լինեին

ճշմարտացի, և թշնամին լիակատար հաղթանակ տարած լինելու, ապա հայերը ստիպված կլինեին ընդունել սուլթանի պահանջները, և բախումները կավարտվեին: Բայց հաջորդ գարնանը եգիպտացիները վերսկսում են ռազմական գործողությունները Կիլիկիայի հանդեպ, որն էլ մեզ թույլ է տալիս պնդելու, որ թշնամու բանակը 1321թ. լիակատար հաղթանակ չի տարել և նահանջել է: Պատերազմին վերջ տալու նպատակով Լևոն թագավորը պատվիրակություն է ուղարկում Եգիպտոս՝ խաղաղություն հաստատելու առաջարկությամբ: Խաղաղության դիմաց Եգիպտոսի սուլթանը պահանջում էր վերը նշված բերդերը, որոնք հայերը միացրել էին Կիլիկիային Պազան խանի արշավանքների ժամանակ՝ Սարվանդիքարը, Թիլ Զամդունը, Զամուսը, Կվայրան, Նողայրը, Մարաշը⁵⁵ : 1322 թ. Լևոնը նամակ է գրում Պապին՝ օգնություն ցույց տալու խնդրանքով⁵⁶: Պապը պատասխանում է, որ Եվրոպայի թագավորները պատերազմի մեջ են և չեն կարող արևելք մեկնել: Եգիպտոսի սուլթանը, իմանալով այդ մասին, որոշում է այս անգամ իր գլխավոր հարվածն ուղղել Այասի դեմ: Թշնամու բանակի հարձակումը Այասի վրա արձանագրել են միջնադարյան հեղինակներ Ներսես Պալիենցը, Սամվել Անեցին, Աբուլ Ֆիդան, Իբն ալ Վարդիին և ուրիշները: Թշնամին մեծաքանակ զորքերով երկրի հարավից մտավ Կիլիկիա: Ներսես Պալիենցն այսպես է նկարագրում Թիմուրտաշի և սուլթան մալիք ալ - Նասիր Մուհամեդի արշավանքը Այասի վրա . «Ապրիլի 20-ին սուլթանի զորքը՝ 40 հազար հեծյալ և անշափ հետևակ, եկավ երկիրը հայոց ... 23-ին ապրիլի առավ Այաս նավահանգստի բերդը, գերեց անթիվ մարդկանց, ի վերջո Այասը ամբողջությամբ ընկավ ...»⁵⁷:

Այսպիսի գրավման այս նկարագրությունը հաստատում է նաև Սամվել Անեցու ժամանակագրության շարունակողներից մեկը՝ ավելացնելով, որ Եգիպտացիները Կիլիկիայից մոտ 20 հազար մարդ գերի տարան⁵⁸: Սակայն նա չի նշում, թե ո՞ր ամսվա ո՞ր օրը թշնամին գրավեց Այասը՝ բավարարվելով միայն տարեթիվը նշելով: Հակառակ Ներսես Պալիենցի բերած տեղեկության՝ Աբուլ Ֆիդան, որը Համայի կառավարիչն էր, Այասի գրավումը թվագրում է ռաբի ախար ամսի 21-ով, կիրակիով, այսինքն՝ 1322թ. մայիսի 9-ով: Նա նաև նշում է, որ իրենց դիմադրեց ծովի վրա գտնվող բերդը, որն ի վերջո նույնպես գրավվեց⁵⁹: Մասնագիտական գրականության մեջ Այասի գրավման օրն ընդունված է համարել ապրիլի 23-ը՝ ըստ Ներսես Պալիենցի տեղեկության⁶⁰: Սակայն արաբական աղբյուրների հիման վրա հակված ենք կասկածելու այս տարեթվի ճշգրտությանը, որովհետև այլ հեղինակներ տարբեր կարծիքներ են արտահայտում: Այսպես, օրինակ, Իբն ալ Վարդիին հետևյալն է նշում հարցի վերաբերյալ. «Այասը գրավվեց ռաբի II ամսում՝ 1322 թ. ապրիլի 19 - մայիսի 17», ապա նաև ավելացնում է. «Հայերը ծովի վրա ունեին երեք ռազմանակ՝ Ատլաս, Շամա, Այաս անուններով: Հայերը սկսեցին հայիոյել ու անարգել մարգարեին, և Ալլահը նրանց սրտի մեջ սարսափ գցեց և նրանց խուճապի մատնեց... »⁶¹: Իբն ալ Վարդիի տեղեկության հիման վրա մենք չենք կարող հստակ նշել Այասի գրավման օրը, որովհետև նրա բերած տեղեկության մեջ ընդգրկված են և՛ Ներսես Պալիենցի, և՛ Աբուլ Ֆիդայի կարծիքները: Այսպիսի մասին մեզ տեղեկություն է տալիս նաև Կալկազանդինի իր «Սորի ալ Աշա» գրքում,

որտեղ նշվում է, որ Այասը գրավվեց 1322թ. մարտի 23-ին: Նա նաև ավելացնում է, որ այդ հոյակապ քաղաքը, որը «հպարտ էր մի նորահարսի նման», քանդվեց, և այդ ավերումը խոր ու ճնշող տպավորություն գործեց ժամանակակիցների վրա⁶²: Այսպիսով՝ Այասի գրավման վերաբերյալ մենք ունենք չորս կարծիք.

1. Ըստ Ներսես Պալիենցի՝ 1322թ. ապրիլի 23
2. Ըստ Աբուլ Ֆիդայի՝ 1322թ. մայիսի 9
3. Ըստ Իբն ալ Վարդիի՝ 1322 թ . ապրիլի 19 - ից մայիսի 17
4. Ըստ Կալկազանդիի՝ 1322թ. մարտի 23:

Ամենայն հավանականությամբ՝ ավելի ճշգրիտ կարելի է համարել Աբուլ Ֆիդայի բերած տեղեկությունը, որովհետև այդ ժամանակաշրջանում նա գտնվում էր Սիրիայում, հանդիսանում էր Համայի կառավարիչը և քաջատեղյակ էր ժամանակի քաղաքական անցուղաբծերին: Բացի այդ, եթե իրականում ճիշտ լիներ Ներսես Պալիենցի տեղեկությունը՝ ապրիլի 23-ը, ապա դժվար թե արաբ պատմիչները 16 օր ուշ նշեին մամլուքյան զորքերի հաջողությունը:

Այսպիսով՝ Աբուլ Ֆիդայի տեղեկության հիման վրա կարելի է 1322թ. մայիսի 9-ն ընդունել Այասի գրավման օր: Այս կռիվների ժամանակ թեև հայերն առանձին վայրերում ունեցան հաջողություններ, սակայն ի վերջո պարտվեցին: Կիլիկիայի հայկական թագավորության դրության բարդությունը ճշգրիտ է նկարագրել վենետիկցի ազնվական Մարինո Սանուտոն, որը տալիս է հայկական թագավորության «աշխարհաքաղաքական» հետևյալ բնորոշումը. «Այն գտնվում է վայրի չորս գագանների ճիղակներում»: Մի կողմից՝ ներսում կա մի առյուծ, այսինքն՝ մոնղոլները, որոնց հայոց արքան մեծ հարկ է մուծում, մյուս կողմից ընծառյուծն է, այսինքն՝ սուլթանը, որն ասպատակում է ամեն օր նրա սահմանները: Երրորդ կողմից գայլն է, այսինքն՝ թյուրքերը, որոնք քայքայում են նրա տարածքը, չորրորդ կողմից օձն է, այսինքն՝ ծովահենները, որոնք պաշարում են Հայաստանի քրիստոնյաներին⁶³:

Ի վերջո, Լևոն Ե թագավորը Կոստանդին կաթողիկոսի գլխավորությամբ մի պատվիրակություն է ուղարկում Եգիպտոսի մայրաքաղաք Կահիրե՝ սուլթանի հետ հաշտություն կնքելու նպատակով: Հաշտության պայմանագիրը կնքվում է Կահիրեում 1323թ., 15 տարի ժամանակով⁶⁴:

- Պայմանագրի հիմնական կետերն էին.
1. Կիլիկյան Հայաստանը պարտավորվում էր Եգիպտոսի սուլթանությանը վճարել տարեկան մեկ միլիոն 200 հազար արծաթ դիրհեմ⁶⁵:
 2. Հայերը հանձն էին առնում Եգիպտոսի սուլթանությանը վճարել Այաս նավահանգստից ստացվող եկամուտների 50 տոկոսը:
 3. Եգիպտոսի սուլթանությանը պետք է վճարվեր օտարականներին վաճառված աղի եկամուտի կեսը:
 4. Հայերը պարտավորվում էին խզել բոլոր կապերը Արևմուտքի հետ:
 5. Եգիպտոսի սուլթանությունը պարտավորվում էր զորքերը հետ քաշել Կիլիկիայից:
 6. Սուլթանը պարտավորվում էր իր ծախսերով վերաշինել ավերված քաղաքները՝ բացի Այաս ծովային բերդի ամրությունից⁶⁶:

Մեզ հասած աղբյուրների և գրականության մեջ, չգիտես ինչու, 1323թ. պայմանագրի կետերը շարադրելիս չի խոսվում ամենակարևոր գործոններից մե-

կի մասին: Դրանք այն բերդերն ու ամրություններն էին, որոնք սուլթանը պահանջել էր խաղաղության դիմաց՝ Սարվանդիքարը, Թիլ Յամդունը, Յամուսը, Կվայրան, Նոդայրը, Մարաշը⁶⁷: Ամենայն հավանականությամբ՝ այս տարածքները նույնպես հանձնվեցին Եգիպտացիներին խաղաղության դիմաց: Եթե այս բերդերի խնդիրը չլիներ, իսկ դրանք կարևոր ռազմավարական նշանակություն ունեին, ապա 1321թ. արշավանքից հետո Լևոն Ե-ի դեսպանների հետ սուլթանը դաշինք կկնքեր: Իսկ սուլթանը խաղաղության դիմաց պահանջեց հենց այդ տարածքները: Այս հանգամանքն էլ մեզ թույլ է տալիս ենթադրելու, որ 1323թ. սուլթանը համաձայնեց խաղաղության դաշինք կնքել այն պայմանով, որ Լևոն Ե-ն իրեն հանձնի այդ տարածքները: Ուրեմն պետք է հղել հատուկ կետ 1323թ. պայմանագրի մեջ, ըստ որի՝ Սարվանդիքարը, Թիլ Յամդունը, Յամուսը , Կվայրան, Նոդայրը, Մարաշը հանձնվեցին Եգիպտոսի սուլթանությանը: Բացի այդ՝ պետք է նշել, որ հետագա տասնամյակների ընթացքում Կիլիկիայի պատմության էջերում այս տեղանուններն այլևս չեն հանդիպում, որը մեկ անգամ ևս հաստատում է մեր առաջ քաշած վարկածի ճշտությունը:

Ամփոփենք: 14-րդ դարի առաջին քառորդում հայկական թագավորության պարտության պատճառներն էին. առաջին՝ Այսսի գրավումը և հայկական բանակի պարտությունը հետևանք էր Կիլիկիայում տիրող ռազմաքաղաքական և տնտեսական ճգնաժամի. երկրորդ՝ Կիլիկիայում իշխող վերնախավը չկարողացավ իր շուրջը համախմբել ոչ միայն հասարակ ժողովրդին, այլև իշխաններին և ազնվականությանը. երրորդ՝ ներքին զահակալական կռիվներն ու կրոնական վեճերը կենտրոնական իշխանությանը խանգարեցին թշնամու դեմ միավորելու երկրի մարդկային և նյութական միջոցները. չորրորդ՝ Եգիպտոսի ռազմական ուժերը շատ ավելի մեծաթիվ էին և լավ կազմակերպված. հինգերորդ՝ մոնղոլները և եվրոպական երկրները չօգնեցին Կիլիկիային: Այս ամենի հետևանքը եղավ այն, որ 14-րդ դարի առաջին քառորդի վերջում Կիլիկյան Յայաստանն իրականում արդեն կիսով չափ ենթարկվեց Եգիպտոսի մամուլության սուլթանությանը:

Պատահական չէ, որ մարոկկոացի հայտնի ճանապարհորդ Իբն Բատտուան (նա Եգիպտոսից տուն էր վերադառնում Ասորիքի տարածքով և եղել էր նաև Կիլիկիայում) նշում է, թե այդ ժամանակ հայոց թագավորությունը ստորակա կախվածության մեջ էր Եգիպտոսի սուլթանից⁶⁸:

¹ L. Balletto, Le commerce Armeno - Italien (XIII e - XVe) siècle, Roma - Armenia, Edition de Luca, Roma, 1999, p. 185, C. Otten - Froux, Le commerce Cilicien du XII e au XIVe siècle, Arménie entre Orient et Occident, Paris, 1996, p.136, A. Bozoyan, Le cadre juridique du commerce de la Cilicie Arménienne, Arménie entre Orient et Occident, Paris, 1996, p. 130-131, V. Langlois, Le Trésor des chartes d'Arménie, Venise, 1863, p. 22 - 23, 151 -153, 193-194.
² K. E. Lupprian, Die Beziehungen Der päpste zu islamischen und mongolischen Herrschern im. Vaticana, 1981, p. 56-58, B. Spuler, The Muslim World, Part. II, Leiden, 1960, p. 35, Encyclopaedia, Iranica, vol. V, California, 1992, p. 134, The Cambridge history of Iran, vol. V, Cambridge, 1968, p. 380-

382, Encyclopaedia of Islam, vol. II, London, 1965, p. 1043, К.Босворт, Мусульманские династии, Москва, 1971, с. 201, Н. В. Пигулевская, История Ирана с древнейших времен до конца XV века, Москва, 1977, с. 199-200.
³ J.Richard, La Papeauté et les Missions. D' Orient Au Moyen Age (XIII e - XVe siècles), Roma, 1998, p. 111-113, The Cambridge history of Iran, vol. V, p. 390, B. Spuler, նշվ. աշխ., էջ 37- 38, M. D` Ohsson, Histoire des Mongols, t.V, Amsterdam, 1852, p. 345.
⁴ Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, թարգմանեց Հ. Նալբանդյանը, Երևան, 1965, էջ 281:
⁵ Հեթում Պատմիչ, Պատմությունը թաթարաց, Վենետիկ, 1842, էջ 64:
⁶ Рашид-ад-дин, Сборник летописей, Москва, 1946, с. 96.
⁷ Հեթում Պատմիչ, էջ 65:
⁸ Նույն տեղում, էջ 65:
⁹ Recueil des historiens des croisades, Documents arméniens, t. II, Paris, 1869, p. 204.
¹⁰ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺՂ դար, կազմեց Լ. Խաչիկյան, Երևան, 1950 թ., էջ 47:
¹¹ Արաբական աղբյուրները, էջ 245:
¹² Նույն տեղում:
¹³ Կ. Մութաֆյան, Կիլիկիան կայսրությունների խաչմերուկում, Երևան 2001, էջ 459:
¹⁴ Recueil des historiens des croisades, Documents arméniens, p. 205.
¹⁵ Նույն տեղում:
¹⁶ Makrizi, Histoire des Sultans Mamelouks, vol. II, Paris, 1837, p. 603.
¹⁷ Օսման իբն Ալ-Թուրք, Հայ ժողովրդի պատմություն, Հալեպ, 1960, էջ 158 /թարգմանված է արաբերեն լեզվից/, Արաբական աղբյուրները, էջ 282, Г. Микаелян, История Киликийского армянского государства, Ереван, 1952, с. 435.
¹⁸ J.Richard, Les Arméniens Avignon au XIV e siècle, Revue des études Arméniennes, t. XXIII, Paris, 1992, p.253-254, A. S. Atiya, The Crusade in the Later middle Ages, London, 1938, p. 62-63, Մ. Օրմանեան, Ազգապատում, §1227, էջմիածին, 2001, էջ 2081-2082:
¹⁹ Արաբական աղբյուրները, էջ 244, Կ. Մութաֆյան, նշվ. աշխ., էջ 461:
²⁰ Մամր ժամանակագրություններ, հ. II, կազմեց՝ Վ. Ա. Հակոբյան, Երևան, 1956, էջ 88-89, Արաբական աղբյուրները, էջ 245-246, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺՂ դար, էջ 55, Սամվել Անեցի, Հաւարքումը ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 155-156, Օսման իբն Ալ-Թուրք, նշվ. աշխ., էջ 153:
²¹ Սամվել Անեցի, էջ 153, Արաբական աղբյուրները, էջ 88-89:
²² Սամվել Անեցի, էջ 156:
²³ Արաբական աղբյուրները, էջ 283:
²⁴ Makrizi, էջ 620:
²⁵ Նույն տեղում:
²⁶ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺՂ դար, էջ 46:
²⁷ М. Заборов, Крестовые походы, Москва 1956, с.277, Հ. Հակոբյան, Ուղեգրություններ, հաս. Ա, Երևան, 1932, էջ 2:
²⁸ C. Otten - Froux, La fortune L'Aias, Le Royaume Arménien de Cilicie, Paris, 1993, p.120, L. Balletto, նշվ. աշխ., էջ 187, А. Мартиросян, Армянские поселения на территории Ирана в XI-XV вв, Ереван,1990, с.172, W. Heyd, Histoire du commerce Levant, t. I, Leipzig, 1885, p. 367, R. Grousset, L'Empire du Levant, Paris, 1946, p. 632.
²⁹ Մ. Ճվախիրճյան, Այսա քաղաք-մավահանգիստը Կիլիկիայում, «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 1973, N1, էջ 97, R. W. Edwards, The fortifications of Armenian Cilicia, Washington, 1987, p. 38-41.
³⁰ R. Grousset, նշվ. աշխ., էջ 632:

- ³¹ Ղ. Ալիշան, Սխուման, Վենետիկ, 1885, էջ 358:
³² R. Grousset, նշվ. աշխ., էջ 632:
³³ Արաբական աղբյուրները, էջ 289, L. Balletto, նշվ. աշխ., էջ 185, C. Otten - Froux La commerce Cilicien du XII e-XIV e siècle, p. 1135, R. Grousset, նշվ. աշխ., էջ 416:
³⁴ Նույն տեղում:
³⁵ A. Atiya, նշվ. աշխ., էջ 270, G. Dedeyan, Histoire des Arméniens, Toulouse, 1986, p. 310, D' Ohsson, նշվ. աշխ., էջ 660:
³⁶ F. Pegolotti, La pratica della Mercatura, Cambridge, 1336, p. 59-60.
³⁷ W. Heyd, նշվ. աշխ., h. II, էջ 368:
³⁹ Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 359:
⁴⁰ М. Поло, Книга М. Поло, Москва, 1955, с. 17, F. Pegolotti, էջ 389:
⁴¹ Ա. Բոգոյեան, Կիլիկեան Հայաստանի պատմութիւնը Միջերկրական ծովի պետութիւնների արխիւներում, «Հայաստանի պատմութեան նիւթեր Կենտրոնական Եւրոպայի դիւաններում», Երևան 2001, էջ 18:
⁴² L. Balletto, նշվ. աշխ., էջ 186:
⁴³ A. Bozoyan, նշվ. աշխ., էջ 133:
⁴⁴ S. Lane-Poole, A history of Egypt in the Middle ages, London, 1901, p. 299, R. Grousset, Histoire des Croisades, p. 633.
⁴⁵ С. Карпов, Трапезундская империя и западносвронейские государства в XIII-XV вв, Москва, 1981, с. 21.
⁴⁶ С. Карпов, Италияские морские республики и южные причерноморье в XIII-XIV вв, Москва, 1990, с. 4.
⁴⁷ J. Boyle, The Ikhans of Persia and the Christian West, London, 1973, p. 563, R. Irwin, The Middle East in the Middle ages (1250-1382), Londress, 1986, p. 118, The Cambridge history of Iran, p. 402-403, S. W. Muir, The Mamluke or slave dynasty of Egypt (1260-1517), London 1896, p. 68.
⁴⁸ Մ. Օրմանեան, Ազգապատում, հատ. Բ, Էջմիածին, 2001, §1261 էջ, 2134-2135, J. Meccerian, Histoire et institutions de l'glise arménienne, Beyrouth, 1965, p. 115.
⁴⁹ Մ. Օրմանեան, նշվ. աշխ., §1260, էջ 2133-2134, A. Atiya, նշվ. աշխ., էջ 209:
⁵⁰ Encyclopaedia of Islam, vol. p. 646, The Cambridge history of Iran, p. 407-408, B. Spuler, նշվ. աշխ., հատ. II, էջ 39-40, S. Lane-Poole, նշվ. աշխ., էջ 308-309:
⁵¹ Արաբական աղբյուրները, էջ 244:
⁵² Սամվել Անեցի, էջ 158:
⁵³ Մանր ժամանակագրություններ, էջ 188:
⁵⁴ Արաբական աղբյուրները, էջ 247:
⁵⁵ Նույն տեղում, էջ 242:
⁵⁶ J. Richard, Les Arméniens A. Avignon au XIV e siècle, p. 261, A. Atiya, նշվ. աշխ., էջ 65:
⁵⁷ Մանր ժամանակագրություններ, հատ. II, էջ 188-189:
⁵⁸ Սամվել Անեցի, էջ 167 :
⁵⁹ Արաբական աղբյուրները, էջ 247:
⁶⁰ Г. Микасян, նշվ. աշխ., էջ 448, Հայ ժողովրդի պատմություն , հատ . III, Երևան, 1976, էջ 272:
⁶¹ Արաբական աղբյուրները, էջ 290:
⁶² Նույն տեղում:
⁶³ Կ. Մուրաֆյան, նշվ. աշխ., էջ 463:
⁶⁴ Օսման իբն Ալ-Թուրք, նշվ. աշխ., էջ 160, V. Langlois, նշվ. աշխ., էջ 232, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 66, Մ. Օրմանեան, նշվ. աշխ., § 1269, էջ 2147:
⁶⁵ Օսման իբն Ալ-Թուրք, նշվ. աշխ., էջ 160, Սամվել Անեցի, էջ 158, D' Ohsson, նշվ. աշխ., էջ 665, Ս . Ճեվահիրճյան, նշվ. աշխ., էջ 108, Կ. Մուրաֆյան, նշվ. աշխ., էջ 463:
⁶⁶ Արաբական աղբյուրները, էջ 291, V. Langlois, նշվ. աշխ., էջ 232:
⁶⁷ Արաբական աղբյուրները, էջ 291, Սամվել Անեցի, էջ 158, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 66, Մանր ժամանակագրություններ, հատ. II, էջ 189, Կ .Մուրաֆյան, նշվ. աշխ., էջ 463, Մ. Չամչյան, Հայոց Պատմություն, Երևան, 1984, հատ Գ, էջ 323, V. Langlois, նշվ. աշխ., էջ 232:
⁶⁸ Իբն Բատտուտա, Օտար աղբյուրները հայերի մասին, թարգմանեց Հ . Անառյանը, Երևան, 1940 թ., էջ 9:

ROUND THE HISTORY
OF ARMENIAN-EGHIPTION RELATIONS
(First Quarter of 14th Century)

ARAM HOVHANNISYAN
Research Student of YSU History Department

Summary

The sultanate relationships of Egypt and Cilician Armenia in the 1st quarter of the 14th century are of paramount importance not only for the history of the Cilician country and Egypt, but also those of the whole Western Europe and the countries of the Near East and the Middle East. The article dwells upon Syrian compaign in 1303 organized by the Armenian-Mongolian troops, as well as it draws upon the defeat of the mamlukian troops relation between Cilician Armenia and the Mongols in organizing new crusades. It points out the Bilarghu strategy in 1307, after which the relations between Cilician and the Mongols were ceased. The second part of the papers, based on the New Literature, places great emphasis on the economic factor of Cilician Armenia, particular emphasis is cast upon Ayas harbor and in the end it throughly presents the campaigns to Cilician by the mamluks in 1321 and 1322. Of a particular value is the statement of the terms in the contract of 1323.

ОБ АРМЯНО-ЕГИПЕТСКИХ
ИСТОРИЧЕСКИХ ОТНОШЕНИЯХ

АРАМ ОГАНЕСЯН
Аспирант кафедры истории ЕГУ

Резюме

В первой четверти 14-ого века отношения Киликийской Армении с Египетским султанатом имеют важное значение не только для Киликии и Египта, а для истории всей Западной Европы, также Ближнего и Среднего Востока.

В статье говорится о походе в Сирию в 1303г. армяно-монгольских войск, и о мамлюках, потерпевших поражение в 1305г. в Киликии. Далее представляются факты в связи с организацией нового крестового похода в Сирию, а также поступок Биларгу 1307г., после которого порвались отношения между Киликией и монголами. Во второй части статьи, операясь на новейшую литературу, выделяется экономический фактор Киликии, особенно о порте Аяс, а в конце подробно говорится о походе мамлюков в Киликию в 1321 и 1322гг.

Большую ценность представляет особенно освещение пунктов договора 1323 года.



ՄԵՆՔ ՈՒՋՈՒՄ ԵՆՔ, ՈՐ ԱՄԵՆ ԻՆՉ ԹԱՓԱՆՅԻԿ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԼԻՆԻ

Կրթական համակարգում վերջին տարիների տարերային զարգացումները, ինչպես նաև արտասահմանյան փորձի ուսումնասիրությունը հիմք հանդիսացան, որ մեր հանրապետությունում ևս ստեղծվեն մասնագիտացված կառույցներ, որոնք զբաղվում են բարեփոխումներով, վերահսկում և պատասխանատվություն կրում այդ գործընթացի արդյունավետության համար: Այդօրինակ մի կառույց է ՀՀ կրթության և գիտության նախարարությանը կից գործող «Կրթական ծրագրերի կենտրոնը», որի տնօրեն ԿԱՐԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ հետ է «Վ.ա.» խմբագիր ԻՐԻՆԱ ՀԱՎՈՔՅԱՆԻ հարցազրույցը:

- Տիկին Հարությունյան, կարծում եմ՝ հարկ կա, որ մեր ընթերցողներին ներկայացնեք Ձեր տնօրինությամբ գործող կենտրոնի ստեղծման նպատակը, կրթության ոլորտում նրա գործառնությունը:

- «Կրթական ծրագրերի կենտրոնը» գործում է ՀՀ կրթության և գիտության նախարարությանը կից, 1996 թվականից: Կենտրոնի գլխավոր նպատակը և գործունեության հիմնական ոլորտը կրթության համակարգում Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող ծրագրերի իրագործումն է: Դրանք պետական դրամաշնորհային վարկային ծրագրեր են:

1997 թ.-ից իրականացրել ենք Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող կրթության համակարգի ֆինանսավորման և կառավարման բարեփոխումների՝ 15 մլն ԱՄՆ դոլար արժողությամբ ծրագիր, որը միտված էր օժանդակելու կրթության ոլորտում իրականացվող կառուցվածքային բարեփոխումներին: Ծրագիրը հիմնականում իրականացվել է երկու ուղղություններով՝ հանրակրթական դպրոցների դասագրքերի հրատարակում և օժանդակություն բարեփոխումների գործընթացին: Ծրագրի իրականացման 4 ուսումնական տարիների ընթացքում՝ 1998-2002 թթ., հրատարակվել է 114 անուն դասագիրք (1-ից 10-րդ դասարանների բոլոր ուսումնական առարկաների դասագրքերը): Տպաքանակները որոշվել են տվյալ ուսումնական տարում հանրակրթական դպրոցներում սովորող աշակերտների ընդհանուր թվով՝ հաշվի առնելով նաև հետագա մի քանի տարիների ընթացքում հնարավոր աճը կամ նվազումը: Ծրագրի շրջանակներում ներդրվել է նաև վարձակալական համակարգը, որի հիմնական նպատակը եղել է դասագրքերի հրատարակման գործընթացի շարունակականության ապահովումը, որովհետև Համաշխարհային բանկի ֆինանսավորումը 4 տարի է, և պարզ է, որ հրատարակված դասագրքերը երկար ժամայել չեն կարող. թե՛ ֆիզիկապես, թե՛ բարոյապես դրանք մաշվելու են, և փոխարինման անհրաժեշտություն է առաջանալու: Նպատակահարմար էր, որ պետությունը միևնույն նպատակի համար գումարներ չվերցնեք, որովհետև վարկերը կամ փոխառությունները պետք է վերադարձվեն: (Մենք օգտագործում ենք վարկ բառը, բայց կրթության համար իրականում վարկ չի տրվել, այլ՝ փոխառություն՝ անտոկոս և բավական արտոնյալ պայմաններով. գումարի մոտ 25 տոկոսը դրամաշնորհային սկզբունքով, վերադարձման շատ նպաստավոր պայմանով: Անվանական գնի ընդամենը 75 տոկոսն է վերադարձվելու՝ առանց որևէ տոկոսադրույքի, 35 տարվա ընթացքում, որից 10 տարին, այսպես ասած, մեռյալ ժամանակաշրջան է. այս ընթացքում ոչ մի վերադարձ չի կատարվում): Կրթության ոլորտում այս փոխա-

ռությունը բավական նպաստավոր է պետության համար: Եվ քանի որ պարտքն ավելացնելու միտումը ցանկալի չէ, ներդրվեց այս շրջանառու համակարգը, որի հիմնական սկզբունքն, ըստ էության, այն է, որ դասագրքերի վրա ծախսված գումարը տարիների ընթացքում վերականգնվի: Երկար քննարկումներից հետո որոշվեց, որ դասագրքերի օգտագործման ամենատրամաբանական ժամկետը 4 տարին է, որովհետև դասագրքի անհարկի և փութկոտ փոփոխությունները կրթական համակարգի համար միշտ անցանկալի են, երկարատև կիրառումն էլ դասագրքերը դարձնում է ժամանակավրեպ, մանավանդ կրթական արդի արագ զարգացման պայմաններում: Իհարկե, որոշ տարբերակված մոտեցում կա. տարրական դասարաններում դասագրքերն օգտագործվում են 3 տարով, քանի որ կրտսեր դպրոցականներն ավելի քիչ դասագրքեր ունեն, սակայն գրեթե ամեն օր են օգտագործում:

Դասագրքերը բաշխվում են հետևյալ մեխանիզմով՝ յուրաքանչյուր դպրոցի համար բացված է բանկային հաշվեհամար, ծրագրի շրջանակներում տպագրված դասագրքերը տրվում են դպրոցներին որպես գրադարանային ֆոնդ: Դպրոցից աշակերտներն ստանում են դասագրքեր մեկ տարի օգտագործման իրավունքով՝ վճարելով դասագրքի ինքնարժեքի 1/4-ը կամ 1/5-ը՝ նայած, թե քանի տարով է տրված դասագիրքը: Տարիների ընթացքում, երբ վերականգնվում է գումարը, նոր դասագրքեր են ձեռք բերվում: 2002 թվականից մենք այլևս փոխառության միջոցներ չունենք, և դպրոցներում հավաքված գումարներով են նոր դասագրքեր գնվում: Այս մեխանիզմը բավական հաջող է գործում: Հետխորհրդային երկրներից առաջինը փաստորեն մեր երկրում ներդրվեց այս աշխատանքը, և այսօր այդ փորձը կիրառում են ԱՊՀ մյուս երկրներում: Միջին Ասիայի, Բելառուսի, Մոլդովայի, Վրաստանի համապատասխան նախարարությունների ներկայացուցիչները, որոնք նույնպիսի խնդիրներ են լուծում և նույնպիսի դժվարություններ ունեն, բազմաթիվ այցելություններ են կատարել մեր հանրապետություն, ուսումնասիրել դասագրքերի շրջանառու համակարգը, և այսօր այդ երկրներում փորձնական կամ հիմնական հիմունքներով մեր փորձը կիրառվում է:

- Տիկին Հարությունյան, ես, բնականաբար, չեմ կարծում, թե «Կրթական ծրագրերի կենտրոնի» գործառնություններից գլխավորն ու առաջնայինը ժամանակին դասագրքերի հրատարակելն է, Համաշխարհային բանկի պատկառելի ֆինանսավորումը միայն դասագրքատեղծման նպատակին ծառայեցնելը, այնուհետև, Ձեր նշած մեխանիզմը գործադրելով, դասագրքերի, այսպես կոչված, վերարտադրությունն ա-

պահովելը: Շատ ավելի կարևոր է դասագրքերի արդիականացումը, այնպիսի դասագրքերի ստեղծումը, որոնք, թրթափած լինելով անցյալի՝ կոմունիստական գաղափարախոսության երբեմն նաև աննկատ «բեռը», լավագույնս ծառայեն նոր սերնդի կրթության ու դաստիարակության գործին:

Մինչդեռ այս բնագավառում, դժբախտաբար, վիճակը շատ հեռու է բավարար լինելուց. մեր դպրոցական դասագրքերում ակնհայտ-ակնբախ է դիվետանտիզմը, պրոֆեսիոնալիզմի բացակայությունը, երբեմն, թող ներվի ասել, նաև ոչ գրագիտությունը:

- Դասագրքերի բովանդակային հարստության շուրջ քննարկումներն այսօր շատ արդիական են: Ծրագրերն սկսելուց առաջ խորհրդակցել ենք ուսուցիչների հետ: Ի դեպ, նշեմ՝ ժամանակ կար, երբ ուսուցիչներին հետաքրքրում էր ոչ այնքան դասագրքերի բովանդակությունը, որքան դրանց առկայությունը: Վերջին անգամ համակարգին դասագրքեր մատակարարվել էին 1988-89 թթ.: Աշոտ Բլեյանի՝ կրթության նախարար եղած տարիներին ինչ-որ դասագրքեր ստեղծվեցին-տրվեցին, որոնք, սակայն, քննություն չբռնեցին, հետո կառավարության որոշումով հանվեցին գործածությունից: Ստացվեց այնպես, որ հենց այդ տարիներին էլ՝ 1996-97թթ., առաջացավ ճգնաժամային իրավիճակ. նախորդ տարիներին մշակված դասագրքերը հանվել էին գործածությունից, խորհրդային շրջանի դասագրքերը չէին պահպանվել, եթե կային էլ, այնպիսի վիճակում էին, որ օգտագործել հնարավոր չէր: Այդ ժամանակ, բնականաբար, չէինք կարող և չէինք խոսում դասագրքերի բովանդակային խնդիրների կամ ծրագրային բարեփոխումների մասին, թեև յուրաքանչյուր մրցույթից առաջ վերանայվել են ծրագրերը, կոմունիստական գաղափարախոսության «ճնշումից» թրթափվել: Սաթեմատիկական, բնագիտական ուսումնական առարկաների դասագրքերում, բնականաբար, քիչ են եղել փոփոխություններ: Մենք ունեցել ենք ավանդական բավական ուժեղ դպրոց, և նշված դասագրքերի որոշ բեռնաթափման և նորացման խնդիր էր ընդամենը դրված. էական փոփոխություններ ծրագրում չենք կատարել: Բայց հասարակագիտական առարկաների համար, մասնավորապես, այնպիսի բլոկի, ինչպիսին «Իրավունք» առարկայաշարն է, որը նախկինում ուսումնական առարկայացանկում չի եղել, դասագրքեր ընդհանրապես նոր են գրվել: Այս և շատ նոր ներդրված առարկաների դասագրքեր հրատարակվեցին ծրագրի ավարտին, քանի որ մենք չունեինք արդեն մշակված ծրագիր, որը կարելի էր պարզապես վերանայել: Ավանդյուն հավելեմ նաև մեկ բան. չգիտես ինչու, մոռացել ենք, որ այն տարիներին դասագրքեր հրատարակելու հրատապ խնդիր կար. այսօր բոլոր դպրոցները և աշակերտները դասագրքեր ունեն, և դրանք մատչելի են հիմնական մասի համար: Իհարկե, կա սոցիալական խավ, որի համար խնդիր է նույնիսկ պահանջվող փոքր գումարները վճարել: Այդ պատճառով պետք է ցուցաբերել համապատասխան գումարներ են նախատեսվել, և աշակերտության շուրջ 10 տոկոսն ամեն տարի դասագրքերը ստանում է անվճար (յուրաքանչյուր դպրոցի աշակերտության շուրջ 8 տոկոսը՝ ավելացրած բոլոր գիշերօթիկների, մանկատների, հատուկ կարիքներով, սոցիալապես անապահով խավերի համար նախատեսված դպրոցների աշակերտները): Այս ուսումնական տարվանից դասագրքերն անվճար են տրամադրվել նաև տարրական դասարանների աշակերտներին: Վերոնշյալ մեխանիզմի ներդրման նպատակներից մեկն էլ այն էր, որ դասագրքերն ինքնարժեքով չտրվեն, այլ՝ հնարավորինս մատչելի գներով:

Այսօր դժվարությունները մոռացել ենք և անցել ենք դասագրքերի բովանդակային հարցերի քննարկմանը: Դասագրքերը գրել են համապատասխան մասնագետները, գրասենյակն ընդամենը ֆինանսավորել է: Իհարկե, ակնկալել, որ դասագրքերի ստեղծման առաջին փորձը պետք է լիներ գերազանց, բավարար բոլորի պահանջները, անիրատեսական էր: Մենք ամեն տարի հարցում ենք կատարում, և մինչև դասագրքի մասին կարելի է լսել տարբեր կարծիքներ, և, անկեղծ ասած, կարծիքների հակասականությունը երբեմն զարմացնում է: Անկասկած, կա նաև օբյեկտիվ գնահատական, նկատվում են թերություններ, որոնք երկրորդ փուլում անպայման կվերացվեն: Սակայն կա նաև զգացմունքային մոտեցում, այսպես ասած՝ մանկավարժների մասնագիտական պահպանողականություն: Ի դեպ, ես հանդգնեցի, որ ուսուցիչները՝ որպես մասնագետներ, ամենապահպանողականն են: Դրանում նրանց մեղադրել չի կարելի, մասնավորապես եթե նկատի ունենանք, որ ուսուցիչը 20 տարի աշխատել է մի համակարգում (իսկ մեր ուսուցիչները միջին տարիքը 50 և ավելի է), դասավանդել է մի դասագրքով (խորհրդային տարիներին դասագրքերը հազվադեպ էին փոխվում): Ի վերջո, կա նաև մի շատ կարևոր հանգամանք. մենք ժողովրդավարական պետություն դառնալու ճանապարհին ենք, մարդիկ կարողանում են ազատ արտահայտվել (նախկինում ոչ մի ուսուցիչի հնարավորություն չի տրվել քննարկել դասագրքի լավ կամ վատ կողմերը), և ուրախալի է, որ ուսուցիչները քննարկում են դասագիրքը, դժգոհում կամ գոհունակություն են արտահայտում: Դասագրքերում կան թերություններ, բայց մենք ունենք այն, ինչ մեր մասնագետներն են ստեղծել. դասագիրք գրելու փորձի որոշակի պակաս նկատվում է: Դպրոցի համար դասագիրք գրելը շատ ավելի դժվար է, քան բուհի համար: Պետք է հաշվի առնել աշակերտների տարիքային առանձնահատկությունները, դասավանդման առանձնահատկությունները, մեթոդիկաները և այլն: Այսօրվա դասագրքերում նկատվում է ակադեմիականություն, և դա զարմանալի չէ. դրանք հիմնականում հեղինակել է բուհական պրոֆեսորադասախոսական կազմը, ոչ թե մանկավարժը: Մենք միշտ հորդորում ենք մանկավարժներին՝ լինել ակտիվ, մինչդեռ նրանք ստեղծագործելու հմաստով ինչ-որ չափով պայմի են և առավելապես հակված են քննադատելու:

- Իսկ փորձեր արվե՞լ են նրանց ընդգրկելու այդ աշխատանքների մեջ:

- Պետական մակարդակով՝ ոչ, որովհետև դասագրքերի հրատարակումը շուկայականորեն կարգավորվող գործընթաց է. այն պահին, երբ մենք վերադարձինք մենաշնորհը (կար պետական մի հրատարակչություն՝ «Լույս»), շուկայական հարաբերություններ սկսեցին զարգանալ, ինչը նպաստեց դասագրքերի արտադրական որակի բարձրացմանը, մրցակցության խրախուսմանը, հնարավորինս շատ մասնագետների ներգրավմանը: Մենաշնորհն այսօր վերացված է, կան բազմաթիվ հրատարակչատներ, որոնք ընդգրկված են գործընթացում: Հրատարակվել է 114 անուն դասագիրք, որոնցից յուրաքանչյուրի ստեղծմանը մասնակցում են չորս հեղինակ, երեք ձևավորող, երկու խմբագիր, մեկ սրբագրող: Ակնհայտ է, որ հազարավոր մարդ է ներգրավված դասագրքերի ստեղծման գործընթացում: Որոշ դասագրքերի հեղինակային խմբերում կան ուսուցիչներ. ավելի շատ են այն առարկաների ուսուցիչները, որոնք առհասարակ առավել ակտիվ են, օրինակ՝ անգլերեն լեզվի ուսուցիչները. նրանք համեմատաբար ակտիվ են, և ակադեմիական բլոկն էլ ճնշող չէ: Ուսուցիչները պատրաստ չեն մրցակցելու մեր բուհական պրոֆե-

ստրադասախոսական կազմի հետ: Դասագրքերի ընտրության հանձնաժողովները թեև 50 տոկոսով համալրված են ուսուցիչներով, միևնույնն է, դասախոսական կազմի կարծիքը դոմինանտ է, ուսուցիչները գիտության նույն ոլորտի դոկտորի կամ թեկնածուի ներկայությամբ իրենց վստահ չեն զգում՝ ինքնուրույն կարծիք արտահայտելու, բայց, կարծում են, հաջորդ փուլում ավելի շատ ուսուցիչներ կներգրավվեն այս գործընթացում և արդեն ներգրավվել են: Հավատացնում են, որ առնվազն 5 տարի հետո բոլորովին ուրիշ իրավիճակ է լինելու: Ուղղակի մենք երբեմն ուզում ենք շուտ տեսնել արդյունքը: Անշուշտ, պետք է ունենալ սխալվելու իրավունք, թերությունների հանդեպ լինել հանդուրժող՝ չանելով, բնականաբար, ճակատագրական սխալներ: Ինչևէ, կարծում են, այս պարագայում էական սխալներ չեն արվել: Կան օբյեկտիվ թերություններ, և մենք այդ գիտակցում ենք. առաջինը՝ դասագրքերի ակադեմիական լինելն է, երկրորդը՝ տրված նյութի գերիազնվածությունը, գիտենք նաև, որ կան նաև վրիպակներ: Ցանկացած առաջարկ, որ ստացվում է ուսուցչից, փոխանցվում է հեղինակային խմբին: Այսօր կան նաև բացահայտորեն համակարգի կողմից չընդունված դասագրքեր: Մեծ աղմուկ են առաջացրել Ֆ. Խլղաթյանի հեղինակած 9-10-րդ դասարանների հայոց լեզվի դասագրքերը, որոնք դպրոցի համար չեն: Նոր մրցույթ կհայտարարվի, և կընտրվեն նոր դասագրքեր: Այսպես ասած՝ մասնագիտական էզոիզմ է զգացվում նաև մյուս առարկաների դասագրքերում: Ոչ մի մասնագետ հաշվի չի առնում միջին ունակություններով երեխայի պահանջները: Եթե մտածում են միայն ուժեղի մասին, ապա պետք է նշեն, որ ուժեղն իր ճանապարհը կարողանում է հարթել. բայց այդ ուժեղ կոչվածը աշակերտության 10 տոկոսն է կազմում, ոչ ավելին: Պետությունը պետք է մտածի ոչ թե այդ 10 տոկոսի մասին, այլ մնացած 90-ի: Դժբախտաբար, այսօր հակառակ միտումն է նկատվում: Պետք է կարողանալ տարատեսակություն մտցնել ուսուցման ծրագրերի մեջ:

- Ի դեպ, մկամենայի, որ Դուք փոքր-ինչ անդրադառնալիք Ձեր կենտրոնի ապագա ծրագրերին, այդ թվում՝ այնպիսի ծրագրերին, որոնք չեն վերաբերում սովորական դասագրքաստեղծման գործընթացին: Որքան տեղյակ եմ, ԿԳ նախարարությունում պատրաստվում են մեծ, երկարատև ինչ-ինչ ծրագրեր իրականացնել: Գաղտնիք չէ, որ բարեփոխման անհրաժեշտություն կա և՛ բուհական ընդունելության համակարգում, և՛ ընդհանուր ուսումնական ծրագրերի, և՛ գնահատման չափանիշների հստակեցման ու որոշակիացման ոլորտներում:

- Շատ խոսեցիք դասագրքերի մասին, դրանց հրատարակումն իրականացվել է մեր առաջին ծրագրով, և այն արդեն կենսունակ մեխանիզմ է, ձևավորվել է դասագրքերի շրջանառու հիմնադրամ: Մենք այսօր ավելի շատ նոր ծրագրերի վրա ենք աշխատում: Նախարարության աշխատանքային խմբերը նախապատրաստում են մեծ վարկային ծրագիր: Այն հավանաբար կլինի երկարատև՝ շուրջ 10-ամյա ծրագիր, մի քանի փուլով: Այսօր դեռ բոլոր փուլերի մասին չեն կարող խոսել: Երկրորդ ծրագրի առաջին փուլով նախատեսվում է աշխատանք չորս ուղղություններով: Առաջինը հենց ուսումնական առարկայական ծրագրերի վերանայումն է (այն ծրագրերի, որոնցով մենք դասավանդում ենք): Վերանայման են ենթակա պետական չափորոշիչները: Երկրորդը՝ գնահատման համակարգի վերանայում: Ուշադրության կենտրոնում են լինելու ինչպես աշակերտների գիտելիքների ընթացիկ գնահատման մեխանիզմները, այնպես էլ քննությունների ամբողջ համակարգը՝ միջին, ա-

վագ դպրոցների ավարտական և բուհական ընդունելությունների: Նախատեսում ենք այս ընդհանուր համակարգի բարելավում:

Երկրորդ ուղղությունը տեղեկատվական ժամանակակից միջոցների տրամադրումն է դպրոցներին: Նպատակը դպրոցներին սոսկ համակարգիչներ տրամադրելը չէ, այլ՝ աշակերտներին համակարգչային գիտելիքներ ուսուցանելը: Առաջին քայլը համակարգչային անգրագիտության վերացումն է, երկրորդը՝ քայլը՝ համակարգչի օգտագործումը որպես ուսուցման նոր միջոց: Աշխարհը վաղուց տեխնոլոգիաները դիտում է որպես ուսուցման նոր միջոց, որպես ինֆորմացիայի հզոր աղբյուր, աշխարհը վաղուց զարգացել է այս ուղղությամբ, մենք երկի շատ ենք ուշացել և չենք կարող մեզ թույլ տալ էլ ավելի ուշանալու շռայլությունը՝ ևս մի հինգ տարի մոռանալով այն մասին, որ ապրում ենք տեխնոլոգիական զարգացման դարում: Այսօր աշակերտը, ավարտելով դպրոցը, եթե չի տիրապետում համակարգչին, կորած է աշխատաշուկայի համար, դատապարտված է ամեն ինչ ինքնուրույն սովորելու: Այս իրողությունը մեծ բացթողում է թե՛ անձի, թե՛ պետության համար. Ռուսաստանում համակարգչից օգտվել առաջին դասարանից են սովորում, մենք ուզում ենք փորձել զոնե միջին դպրոցի 5-րդ, 6-րդ դասարաններից սկսել ուսուցումը, ոչ թե 8-րդ, 9-րդ դասարաններում տեսական ինֆորմատիկայի կուրս անցնել՝ առանց կիրառական գիտելիքների՝ հույս դնելով անհատ տնօրենների նախաձեռնության, ՀԿ-ների վրա:

Այս ամենը պետական համակարգված մոտեցման անհրաժեշտություն ունի: Ծրագրով նախատեսվում է բոլոր դպրոցները զինել համակարգիչներով, իսկ ինտերնետ կապի տրամադրումն առավել երկարատև գործընթաց է, քանի որ, ընդհանուր առմամբ, կապի վիճակը Հայաստանում բավական վատ է: Գուցե փոքր-ինչ կուշանա, սակայն նախատեսված է բոլոր դպրոցները միասնական ցանցի մեջ դնել և ստեղծել համացանց (ինտերնետ) ազատ մուտքի հնարավորություն:

Երրորդ ուղղությունն ուսուցիչների վերապատրաստումն է: Վերջին տարիներին կարծես մոռացել ենք ուսուցիչների վերապատրաստման մասին: Հիմնական բեռն ընկած է հասարակական կազմակերպությունների ուսերին, որոնք այդ գործընթացը զանգվածաբար և պարբերաբար իրականացնել չեն կարող: Հիմա նախատեսված է բոլոր ուսուցիչների պարբերական վերապատրաստումներ երեք հիմնական ուղղություններով՝ նոր ծրագրերով, այսինքն՝ մասնագիտական վերապատրաստում, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառական գիտելիքների յուրացում և նոր մեթոդիկաների ուսուցում, մասնավորապես, ինտերակտիվ, աշակերտակենտրոն մեթոդների կիրառման հնարավորություն:

Չորրորդ ուղղությունը սկսված բարեփոխումների շարունակականության ապահովումն է, դպրոցների ֆինանսավորումն աշակերտ-թվով, դպրոցների ինքնուրույնության աճը, կառավարման խորհուրդների ձևավորումն ու ամրապնդումը: Հարկավոր է, որ համայնքի յուրաքանչյուր անդամ, առավել ևս՝ ծնողներն ավելի ակտիվորեն ընդգրկվեն դպրոցի կառավարման, ֆինանսավորման և այլ խնդիրների լուծման գործընթացում:

- Արդեն քանի տարի է՝ կիրառվում է դպրոցների կառավարման Ձեր մշած մեխանիզմը, և այսօր արդեն կարելի է խոսել արդյունքների մասին: Ինչպիսի՞ն է Ձեր գնահատականը:

- Աշակերտ-թվով ֆինանսավորումը անկասկած դրական և էական առաջանցիկ քայլ էր: Բոլոր դպրոց-

ներն ակնհայտորեն նշում են դրա առավելությունը: Սկզբում կային որոշ տեխնիկական դժվարություններ, մինչև ամբողջությամբ ներդրվեց համակարգը: Դպրոցին այս մեխանիզմը տալիս է ճկունություն, հնարավորություն՝ ինքնուրույն ձևավորել բյուջե՝ ելնելով իր կարիքներից: Ինչ վերաբերում է կառավարման նոր ձևին, անտարակուսելիորեն շատ արդյունավետ ձև է: Մեր բնակչությունը պետք է գիտակցի, որ կրթությունն առաջին հերթին ի՞նչ հոգան է: Ոչ թե միայն պետությունը պետք է այդ մասին հոգ տանի, այլև յուրաքանչյուր անձ՝ որպես քաղաքացի, որպես ծնող հանդես պիտի գա իբրև առաջին շահագրգիռ կողմ. դպրոցը պետք է հաշվետու լինի ծնողի, համայնքի առջև թե՛ ուսուցման բովանդակային, թե՛ ֆինանսական միջոցների տնօրինման հարցերի տեսակետից: Եթե ամբողջ աշխարհը գնում է այս ուղղությամբ, ուրեմն ճիշտ ուղղություն է. բոլորը չեն կարող սխալվել:

Մենք ուզում ենք, որ ամեն ինչ թափանցիկ և ժողովրդավարական լինի: Որոշ ուսումնասիրություններ ենք կատարել. չէի ասի, թե լուրջ առաջընթաց ունենք: Շատ դեպքերում տնօրեններն այս ամենը դիտում են որպես իրենց իշխանությանն ուղղված սպառնալիք: Շատերը չեն սիրում և սովոր չեն հաշվետու լինել: Շատ դեպքերում դպրոցական խորհուրդների անդամները չեն կարևորում այս գործընթացը: Պետք է նշեն, որ մենք դերակատարություն ունեն տնօրենները, համայնքի ղեկավարները, տեղական ինքնակառավարման մարմինների, ինչու չէ, նաև մարզի ղեկավարության ներկայացուցիչները: Այն, որ համայնքն ակտիվանում է, փաստել կարող ենք. որ հիմնախնդիրները շատ են, այդ ևս կարող ենք փաստել: Ես չեմ ուզում զնահատակամետր տալ. գործընթացը դեռ շարունակվում է: Զարգացած եվրոպական երկրներն արդեն 20 տարի է՝ հասարակության մասնակցությունը բարձրացնելու գործընթաց են իրականացնում, մենք՝ ընդամենը 2-3 տարի:

- Տիկին Զարթուրյան, Դուք նշեցիք ուսուցիչների վերապատրաստման խնդիրների մասին: Կցանկանալի փոքր-ինչ վերաթարծել այդ խնդիրը և նշել, որ ՀՄԻ-4-ը, որ մեր հանդեսի հիմնադիրն է, շուրջ երեք տարի է, ինչ սերտորեն համագործակցում է ԿԳ նախարարության Կրթական բարեփոխումների կենտրոնի (ԿԲԿ) հետ: Մեր կազմակերպությունը, սկսած 1996 թ., կազմակերպում է մարդու իրավունքների կրթության ամենամյա դասընթացներ: Այս տարվա օգոստոսի 9-29-ը Վանաձորում կազմակերպված 9-րդ խորացված դասընթացը տարբերվում էր բոլոր նախորդներից այն առումով, որ անցկացվեց ուսուցման համագործակցային կամ կոլեկտիվ եղանակով, որի ջատագովներին է ԿԲԿ գիտակրթական գործընթացների պլանավորման և տեղեկատվական վերլուծությունների դեպարտամենտի ղեկավար, «Մանկավարժական նախաձեռնություններ» ասոցիացիայի նախագահ Մանուկ Սկրտչյանը: Ուսուցման նոր եղանակի գործնական կիրառումը դասընթացում ցույց տվեց նրա հեռանկարայնությունը, որը փաստեցին ոչ միայն դասընթացի մասնակիցները՝ հանրապետության բոլոր մարզերից ընտրությամբ դասընթացին հրավիրված 75 մանկավարժներ, նաև տեղի և արտերկրի հրավիրված փորձագետները, ԿԲԿ աշխատակիցներ Վ.Պարսամյանը, Օ. Դուրումյանը:

Կկանենայի իմանալ Դուք ինչպե՞ս եք գնահատում ուսուցման համագործակցային եղանակը կամ մեթոդը:

- Ես գիտեմ, որ ներկայիս ուսուցման մեթոդներն այլևս արդյունավետ չեն: Ինքս ինձ չեմ համարում մասնագետ ուսուցման մեթոդիկայի առումով, բայց որ կոլեկտիվ կամ թիմային աշխատանքն ավելի արդյունավետ է, ինձ վրա են զգացել, որովհետև բազմա-

թիվ դասընթացներում կամ սեմինարներում, երբ նստած լսում ես, շատ դեպքերում զգո՞մ չես, իսկ եթե պահանջվում է մասնակցություն, ավելի զգո՞մ ես, և, բնականաբար, արդյունքն էլ նկատելի է: Գիտե՞մք, թե աշխարհը որքան է զարգացել այդ առումով: Անշուշտ, չի կարելի չնշել, որ վերջին 10 տարիների ընթացքում եթե այս ուղղությամբ ինչ-որ բան արվել է, ապա միայն շնորհիվ հասարակական կառույցների՝ միջազգային, թե տեղական: Այդ կառույցներն այսօր շատ ավելի մեծ փորձ ունեն այս ոլորտում, քան որևէ մեկ ուրիշը, նույնիսկ պետությունը, նույնիսկ ԿԲԿ-ն: ԴԿ-ներն ավելի ճկուն, դինամիկ, ավելի ուղղակի են աշխատել ուսուցիչների հետ, և նրանց փորձը մենք անպայման ուզում ենք օգտագործել՝ դասախոսներով, կառույցներով, մեթոդներով, որոնք արդեն ներդրվել են: Շատ դեպքերում, իհարկե, հեծանիվ հնարելու հարկ չկա. մի բան որ աշխատում է, պետք է զարգացնել, բարելավել, շարունակել:

Այս նպատակի իրագործման համար շատ մեծ գումարներ են ներդրվելու, դրանք ծախսվելու են ուսուցիչների վերապատրաստման համար, և ամեն ինչ պետք է արվի, որ համակարգում նոր մեթոդներ ներդրվեն: Նախատեսված է նաև վերապատրաստում իրականացնել նոր մեթոդներով: Ուսուցիչը պետք է ամձամբ զգա մեթոդի առավելությունը, որպեսզի այն տանի դպրոց:


- Յուրաքանչյուր ուսումնական առարկայի հաջող դասավանդումն ապահովող միջոցներից է, արդիական ծրագրերից ու դասագրքերից բացի, օժանդակ ուսումնական և մեթոդական գրականությունը: Կենտրոնն ի՞նչ քայլեր է ձեռնարկում այդ օժանդակ գրականությունն ավելի հարստացնելու ուղղությամբ:

- Ամեն դասագրքի միշտ «ուղեկցել է» համապատասխան մեթոդական ձեռնարկ ուսուցչի համար: Օժանդակ ուսուցման նյութերի ձեռք բերման կամ ստեղծման համար մեր ֆինանսական միջոցները միշտ չեն բավարարել: Եվ այս հետ հավաքվող գումարներն էլ, բնականաբար, չեն բավարարում: Այդ ամենը մեր հասարակական կառույցների, մասնավոր սեկտորի և շուկայի միջոցով է լրացվել: Այսօր մենք հիմնախնդիր է, որ մենք ունենք ընդամենը դասագիրք՝ ըստ առարկայի, և ուրիշ ոչինչ. մենք չունենք լազերային սկավառակներ, ուսուցիչների համար պատրաստված դասանմուշների օրինակներ, քարտեզներ, այլ պարագաներ: Այս ամենն ունենալու համար շատ մեծ գումարներ են պահանջվում, համարյա այնքան, որքան ներդրել ենք դասագրքերի ստեղծման նպատակով: Եվ հույս ունենալ, որ պետությունն առաջիկայում գումարներ կտրամադրի այս նպատակով, իրատեսական չէ:

- Մեր ժամանակներում, ցավոք, խիստ սակավ են հանրակրթական դպրոցին հասցեագրված գիտամեթոդական պարբերականները, իսկ եղածներն էլ հասու չեն ուսուցչին: «Վասն արդարության» իրավական գիտամեթոդական հանդեսը անվճար բաշխվում է «Իրավունք» առարկայաշարի ուսուցիչներին: Ասել է, թե՛ մեր հանդեսի միջոցով Ձեր խոսքն ուսուցչին առավել է «լսելի»: Ի՞նչ կկամենայիք, որ նա լսեր:

- Ես ուսուցիչների առջև խոսարկվում եմ: Հատկապես այն նվիրյալների, ովքեր Հայաստանի համար վերջին դժվար տարիների ընթացքում չնահանջեցին: Ուսուցչի կյանքն այսօր դյուրին չէ. սոցիալական խնդիրները ճնշում են, սակայն, այնուամենայնիվ, տարակույս չունեն, որ մեր ուսուցիչները շատ ավելի հանդուրժող, համբերատար կլինեն, ինչպես միշտ են եղել, և կշարունակեն մնալ իրենց գործի նվիրյալները: Ես անչափ բարձր են գնահատում ուսուցչի աշխատանքը:

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆՎԻՐՅԱԼԸ



Լրացավ պրոֆեսոր ԷՂՎԱՐԴ ՄԻՔԵԼՅԱՆԻ ԲԱՂՂԱՍԱՐՅԱՆԻ ծննդյան 70-ամյակը: Սոսկ մի՝ ամեն ինչ կամ գրեթե ոչինչ չատող փաստի արձանագրում, որի ետևում հայոց պատմության ու մշակույթի ուսումնասիրությանն անմնացորդ տրված մի ամբողջ կյանք է, լրջամիտ գիտնականին վայել խորաքննիչ, անհանգիստ պրպտումներով և անմնացորդ նվիրումով, դեռևս շատ կիսատ գործեր լրացնելու և նորերը ձեռնարկելու երիտասարդական ավյունով առկայություն է կյանք, որի 44 տարիներն անցել են յուրաքանչյուր հայի համար սրբագործված և սրտի թրթիռ հարուցող կամառում՝ Մատենադարանում:

1959 թվական: 26-ամյա երիտասարդը քիչ է ասել՝ սրտի թրթիռով (գիտեր՝ ուր է մտնում), սրտի դղիրդով հրեց հիմնադրված և իր պատերի ներսում աշխարհի գաղտնիքների վրա դրված ծանրածանր դուռը ու ներս մտավ՝ այլևս հազարամյա իմաստությունների ու բույրերի հետ լինելու, նրանց հետ զրուցելու, նրանցից շունչ ու ոգի վերցնելու, նրանց շունչ ու ոգի տալու, կրկին ու կրկին ապշելու և աշխարհին նվիրելու՝ ապշեցնելու համակ ցանկությունը:

Հարափոփոխ այս աշխարհում անփոփոխ արժեքի՝ մարդու բարոյականի և դրա պահպանմանն ու կատարելագործմանը նվիրված ուսման և գիտնականությանն ու հրապարակախոսական երկերի ուսումնասիրությունը և մեկնությունը գիտնական Բաղդասարյանին հասցրել են դրանց հնարավոր ու երբեմն անհնարին շերտերի պեղմանը: Եվ այսօր, հանրության սեփականությունը դարձած նրա «անգիտաց անպետ» աշխատասիրությունների միջոցով, մենք ծանոթանում ենք ոչ միայն միջնադարյան մտածողների կանոնական խրատներին՝ «իբրև հայ եկեղեցու կանոնագրքի դրույթները և հայ իրականության մեջ եղած իրավական նորմերը առավել մատչելի ու ճկուն ձևով ժողովրդական անենալայն զանգվածներին հասցնելու միջոցի», այլ և «միջնադարյան Հայաստանի ներքին կյանքին, առանձին դասերի ու դասակարգերի փոխհարաբերությանը, սոցիալական վիճակին, գաղափարաբանությանը, ժողովրդական կենցաղին և սովորույթներին ու հավատալիքներին»:

«Վրբյուրագետ պատմաբանի աշխատանքը նման է հնագետի գործունեությանը, -ասում է Էղվարդ Բաղդասարյանը: - Այստեղ խնդիրը միայն այն չէ, թե քանի հուշարձան են պեղել կամ քանի հատոր են գրել, այլ նաև այն, թե ինչ նոր խոսք են ասել»:

Եվ իրոք, Էղվարդ Բաղդասարյանը երբեք չզգաց տրորված ճանապարհով: Հենց միայն այն, որ նա առաջիններից

«Վասն ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ» հանդեսի խմբագրակազմը շնորհավորում է հանդեսի գիտական խմբագրական խորհրդի անդամ, պրոֆեսոր ԷՂՎԱՐԴ ԲԱՂՂԱՍԱՐՅԱՆԻՆ՝ ծննդյան 70-ամյակի կապակցությամբ:

Յուրաքանչյուր հորեկար, առավել ևս՝ եթե այն գիտնականի կամ արվեստագետի հորեկար է, կենսագրական փաստ լինելուց բացի նաև առիթ է՝ վաստակի արժևորման ու գնահատանքի խոսք հնչեցնելու: Լինելով բարձր ինտելեկտի տեր, լայնահայաց և ներհուն գիտնական՝ Էդ. Բաղդասարյանը՝ երկարամյա գիտական գործունեությամբ ու կենսավորված իմաստացած, յուրահաստիակ ռճով ու խոսքի զարմանալի բնականությամբ գրված իր պատմագիտական ուսումնասիրությունների քիվն ավելացնելու, հայ պատմագիտության մեջ նոր ավանդ մուծելն երդնելու մեծ «պարտք» ունի:

Մեծարգո հորեկարը հանդեսի խմբագրական խորհրդի այն անդամներից է, ում հետ համագործակցությունը հիրավի բեղմնավոր է, ում խորհուրդները, դիտողություններն ու առաջարկություններն անտարակույս օգտակար են, ում հետ փոխըմբռնումն արդարև դյուրին է և անբռնագրես:

Հանձին պարոն Բաղդասարյանի՝ խմբագրակազմը տեսնում է պատմաբան-գիտնականի, ով նաև հանդեսի տաղանդաշատ հեղինակներից է, ում հողվածները ընթերցվել են հետաքրքրությամբ, հարուցել ընթերցողի գնահատանք-արձագանքը:


Երկրորդեղով շնորհավորական խոսքը՝ հանդեսի խմբագրակազմը մեծարգո հորեկարին մաղթում է առողջություն, իր գիտական բազմադյուն ճանապարհը շարունակելու և առավել արգասավորելու, ի վերուստ իրեն տրված շնորհը գործադրելու կորով ու կամք:

մեկն էր, որ նվիրվեց միջնադարյան քարոզչական, խրատական ու մեկնողական երկերում, շրջաբերական թղթերում, առանձին հոգևոր գործիչների նամակներում տեղ գտած պատմագիտական արժեքավոր փաստերի վերհանմանն ու լուսաբանմանը, ինքնին խոսուն փաստ է: Էղվարդ Բաղդասարյանի գիտական գործունեության շնորհիվ ուշագրավ նոր շերտեր բացահայտվեցին միջնադարյան Հայաստանի աշխարհիկ և հոգևոր տարբեր բնույթի կազմակերպությունների պատմության շուրջը: Հետևելով իր ակամավոր ուսուցիչ ակադեմիկոս Լևոն հաշիկյանին՝ Էղվարդ Բաղդասարյանը լրացրեց ու ամբողջացրեց մանկտավագության կարևոր իմաստալուծի մասին մեր ունեցած պատկերացումները: Այժմ էլ գիտնականի միտքը զբաղված է միջնադարյան հայ իրականության մեջ չափազանց կարևոր նշանակություն ունեցած պարոնտերություն երևույթի ուսումնասիրությամբ: Էղվարդ Բաղդասարյանի գիտական արպտումները վերաբերում են Սյունյաց, Երզնկայի, Դանիշմանյան հայկական իշխանությունների ու Կիլիկյան հայկական թագավորության պատմությանը, միջնադարյան հայ մեծ մտածողներ Ներսես Շնորհալու, Հովհաննես Պլուզ Երզնկացու, Գևորգ Սկևռացու, Հովհան Որոտնեցու և այլոց գիտական ժառանգության ուսումնասիրությանը: Ի լրումն այդ ամենի՝ Էդ. Բաղդասարյանը առաջին անգամ բնագրերից աշխարհաբարի վերածեց Սմբատ Գունդստաբլի, Աստրախանի հայոց դատաստանագրքերը և այլ գործեր (տե՛ս Ռ. Ավագյան, «Հայ իրավական մտքի զանձարան» երկհատորյակը, Երևան, 2001-2002 թթ.):

Կատարած աշխատանքի լիարժեք ըմբռնումով և կատարելիքի նկատմամբ մեծ հավատով՝ վաստակաշատ գիտնականին ի սրտե ցանկանանք հայոց լեռներից բխող առողջություն, Հայոց աշխարհի երկարակյանություն և հայոց հողի նման գրչի բեղմնավորություն:

ՌՈՒԲԵՆ ՄՎԱԳՅԱՆ
Բրախլարսևական իրությունների ղեկավար, պրոֆեսոր
ՄԱԹԵՆԻԿ ՄԿՐՏՅԱՆ
Մրձակա իր, թար մանիչ
ԳՈՒԲԳԵՆ ԳԵՂԱՄՅԱՆ
Պարմական իրությունների ղեկավար, պրոֆեսոր

ՀԻՄՆԱՐԱՐ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ



Լույս է տեսել ՌԱՖԱՅԵԼ ՊԱՊԱՅԱՆԻ «ԱՐԳԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԲՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԱՎՈՒՆՔՆԵՐԸ» գիրքը՝ հիրավի նախօրինակը չունեցող մի աշխատություն, որ շքեղ ներդրում է իրավունքի պատմության ոչ միայն հայ, այլև համաշխարհային գանձարան: Գրքի խմբագիրը իրավաբանական գիտությունների դոկտոր ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆՆ է, որ հեղինակ է նաև գրքում գետեղված «Ճմբագրի նախաբանի», ինչը ներկայացվում է ստորև:

Ներկայացվող գիրքը եզակի մի հետազոտություն է, որը տանում է դեպի դարերի խորքը եւ իրավունքի նախասկիզբ հիմքերը: Գրքի հիմնական բովանդակությունն ու պատճառը կարելի է բնութագրել որպես հիշեցում այն մասին, որ, ինչպես էլ զարգանա իրավական միտքը, իրավունքի ակունքները մնում են անասան, քանի որ հաստատված են աշխարհի արարման պահից, սերվում են այն հիմքերից, որոնք հայտնվեցին մարդկությանը նրա ծննդյան պահին ու ծեւակորման արշալույսին եւ ներկայացված են Աստվածաշնչում: Ռ.Պապայանի գիրքը մանրակրկիտ բացահայտում է մեր օրերում գործող իրավունքի բազում հասկացությունների աստվածաշնչյան ընկալումը, վեր է հանում դրանց «սղված» բովանդակային նրբությունները, առանց որոնց այդ արժեքների ընկալումը թերի է: Հեղինակի համար հիմք է ծառայում աստվածաշնչյան ողջ նյութը, ներառյալ ե՛ւ Հին, ե՛ւ Նոր Կտակարանները, Սուրբ Մատյանի «Օրենսդրական», պատմական, խրատական եւ մարգարեական գրքերը: Նա դիտարկում է սուրբ պատգամներն իրենց «գործողության մեջ»՝ Կենսաց Գրքից մինչեւ Հովհաննու Հայտնություն, համադրելով «աստվածաշնչյան իրավունքն» այն նորմերի հետ, որոնք ամրագրված են այսօրվա միջազգային իրավունքում եւ սահմանադրական պրակտիկայում, համալրելով իր դիտարկումները համոզիչ փաստարկումներով, որոնց մեջ ընդգրկված են ինչպես աստվածաբանական, այնպես էլ իրավաբանական, պատմա-փիլիսոփայական, բանասիրական աշխատություններ:


Յոթնամասունամյա աթեիզմի կնիքը չթողնելով հետսոցիալիստական տարածքում արմատավորված աշխարհընկալման եւ «ազատական» Արեւմուտքի թեոլոգիական նիհիլիզմի ֆոնի վրա դժվար է չտեսնել հեղինակի կողմից արծարծված խնդրի լուծությունը, չըմբռնել իրավունքի իմաստը կազմող բաղադրիչների վերաիմաստավորման կենսական անհրաժեշտությունը, ինչն էլ կազմում է գրքի բովանդակությունը: Կասկածից վեր է, որ սույն գիրքը բացում է իրավունքի տեսական հիմնահարցերի եւ արդի աշխարհի իրավական կարգավորման խնդիրների շուրջ հետազա մտորումների լայն դաշտ:

Գրքի հարցադրումներն, ընդգրկելով արդի իրավունքի կարեւորագույն բաղադրյալները, ուշադրությունը սեւեռում են մարդու իրավունքների վրա, ինչպես նաեւ դրանց երաշխավորման այն նախադրյալների վրա, որոնք պիտի վերածվեն պետական իշխանության եւ նրա գործունեության

սկզբունքային հիմքերի: Հեղինակը հավատարիմ է մնում այսօր որդեգրված այն «սահմանադրական տրամաբանությանը», որով թելադրվում են արդի իրավունքի սահմանադրական նորմերը բացահայտելու հերթականությունն ու պատճառա-հետեւանքային կապերը: Ուսումնասիրելով աստվածաշնչյան ու մարդկայինը, երկնայինն ու երկրայինը սերտ փոխադարձ կապի մեջ, հեղինակը ցուցադրում է պետական իշխանությունն «աստվածային» տեսքի բերելու այն ուղիները, որոնք նախանշված են Աստվածաշնչում՝ ներկայացնելով երկնային Արքայությունը որպես երկրային թագավորության, իսկ Աստծո իշխանությունը՝ որպես պետական իշխանության նախատիպեր: Այդ զուգահեռները ամենեւի՛ն այլաբանություններ եւ գեղեցիկ համեմատություններ չեն, այլ հիմնված են աստվածաշնչյան երկնային ու երկրային իրողությունների տարբեր, կառուցվածքի, գործառնությունների, պատմական դերակատարումների եւ այլ չափանիշների լուրջ վերլուծության վրա: Մարդու իրավունքները, իշխանության թեւերի տարանջատումը, աշխարհիկ եւ հոգեւոր իշխանությունների, Եկեղեցու եւ պետության, ի վերջո անհատի եւ պետության փոխադարձ կապերն ու փոխհարաբերությունները և այս հիմնահարցերի պատասխանն է որոնում հեղինակը՝ հիմնահարցեր, որոնք զգալի տեղ են գրավում ժամանակակից իրավաբանների, քաղաքագետների, պետական եւ եկեղեցական գործիչների մտորումներում: Ինքնատիպ մոտեցմամբ եւ խոր ու հետետողական վերլուծությամբ ներկայացվող լուսաբանումները դառնում են լուրջ ազդակ՝ խորհելու այն մասին, թե որքան է կարեւոր բոլոր արծարծված հարցերի տեղափոխումը քրիստոնեական չափորոշիչների տարածք:

Ռուսերեն հրատարակությունը («Христианские корни современного права», М., «Норма», 2002), որը հսկայական արձագանք է ստացել իրավաբանների, հոգեւորականների ու աստվածաբանների, ինչպես նաեւ լայն հասարակության շրջանակում, հեղինակը լրամշակել էւ հարստացրել է նոր ծավալում նյութով ու դիտարկումներով, որոնցով հիմնահարցը ներկայացված է առավել ամբողջական ու համակարգված:

Ռ. Պապայանի հիմնարար հետազոտությունը փաստորեն հանդիսանում է իրավունքի «ոգիավորում», այն ներարկում է իրավունքի մեջ հոգեւոր տարրի այն մասնաբաժինը, որը կոչված է, ըստ հեղինակի, արմատապես «ճշգրտելու» դրա իմաստն ու բովանդակությունը: Նման հարցադրումը, հետազոտողի մոտեցման ինքնատիպությունը, մեր կարծիքով, մեծ ճանաչողական եւ գիտական արձագանք կունենան ինչպես իրավաբանների, օրենսգետների եւ օրենսդիրների, պետական ու քաղաքական գործիչների, այնպես էլ հասարակության լայն շրջանակում: Գիրքը մեծ հետաքրքրություն կառաջացնի բոլոր նրանց համար, ովքեր մտահոգ են իրենց երկրի ու աշխարհի ճակատագրով՝ անկախ հավատացյալ կամ անհավատ լինելու հանգամանքից:



Գրքերի փեսություն

ՋԻԳՄՈՒՆԳ ՖՐՈՅԳ

ՀՈԳԵՎԵՐԼՈՒԹՈՒԹՅԱՆ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Չանգակ-97», Երևան, 2002, 472 էջ



Աշխատությունը պատկանում է ականավոր հոգեբան և հոգեբույժ Ջիգմունդ Ֆրոյդի գրչին: Չ. Ֆրոյդը ժամանակակից հոգեբանության հիմնադիրներից մեկն է և հսկայական ներդրում է կատարել գիտության ու մշակույթի բնագավառում: Ընթերցողի ուշադրությանը ներկայացվող համրամատչելի աշխատության մեջ Չ. Ֆրոյդը մանրամասնորեն ներկայացնում է իր ուսմունքի բոլոր բաժինները (առօրյա կյանքի հոգեախտաբանություն, սեռական կյանքի և երազների հոգեբանություն, նկրողների տեսություն և այլն): Գրքում տեղ են գտել նաև թարգմանչի վերջաբանը, որտեղ սեղմ ներկայացվում են Չ. Ֆրոյդի կյանքի ուղին և գործունեության հիմնական արդյունքները:

Գիրքը նախատեսված է ընթերցողների լայն շրջանակների համար: Սա Չ. Ֆրոյդի առաջին ամբողջական աշխատությունն է հայերեն: Այն կարող է ծառայել նաև որպես ուսումնական ձեռնարկ բուհերի ուսանողների համար:

ՎԱՐՆ ԵՆԳԲԲԱՐՅԱՆ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆ

Ընդհանուր խմբագիր՝ Ա. Գյուլումյան, ՀՀ դատավորների միություն. «Տիգրան Մեծ», Երևան, 2002, 108 էջ



Սույն աշխատանքում ներկայացված են արդարադատության իրականացման հետ կապված այնպիսի հարցեր, որոնց պատասխանների իմացությունը քաղաքացիների համար առավել մատչելի կդարձնի դատարանը, և մեր ընթերցողը նվազագույն տեղեկություններ կունենա այն մասին, թե ո՞ր դեպքերում, ինչպե՞ս և ո՞ր դատարան դիմել: Գրքույկն ընթերցողին հնարավորություն է ընձեռում տեղեկանալ նաև իր դատավարական իրավունքների մասին:


Հարցերը շարադրված են ըստ բաժինների և որոշակի հաջորդականությամբ, իսկ վերջում տրվում է հարցազանկը, որն ավելի դյուրին է դարձնում մյուսից օգտվելը:

MONICA MACOVEI

THE RIGHT TO LIBERTY AND SECURITY OF THE PERSON

(A guide to the implementation of Article 5 of the European Convention on Human Rights)

Directorate General of Human Rights, Council of Europe, F-67075 Strasbourg Cedex



The opinions expressed in this publication are those of the author and do not engage the responsibility of the Council of Europe. They should not be regarded as

placing upon the legal instruments mentioned in it any official interpretation capable of binding the governments of member states, the Council of Europe's statutory organs or any organ set up by virtue of the European Convention on Human Rights.

ԲՈՅՈՎ Ա. և ուրիշներ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Հատուկ մաս: Երևանի համալսարանի հրատ., Երևան, 2003, 592 էջ



Դասագիրքը 2000 թվականին լույս տեսած «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն» (ընդհանուր մաս) դասագրքի շարունակությունն է: Այն շարադրված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի հատուկ մասի կառուցվածքին համապատասխան: Դասագրքում լուսաբանված են քրեական դատավարության բոլոր փուլերը, հատուկ վարույթների առանձնահատկությունները, ինչպես նաև արտասահմանյան զարգացած և իրավական ավանդույթներ ունեցող մի քանի երկրների քրեական դատավարությունների հիմնական ինստիտուտները:

Նախատեսված է իրավաբանական բուհերի և ֆակուլտետների ուսանողների, դասախոսների, ասպիրանտների համար: Կարող է օգտակար լինել նաև պրակտիկ իրավաբանների և քրեական դատավարության հարցերով հետաքրքրվող անձանց համար:

Ս. Ա. ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆԶՆԵՐ

Երևան, «Դե-ֆակտո», 2003, 288 էջ



Ապրում ենք անցումային հասարակության պայմաններում: Վերափոխվում են հասարակական կյանքի բոլոր ոլորտները: Այս ընդհանուր գործընթացից չի կարող անմասն մնալ նաև փիլիսոփայական մշակույթը, առավել ևս, որ այն այսօրվա դրությամբ գտնվում է մի տեսակ «խաղից դուրս» վիճակում, հասարակու-

թյան հոգևոր կյանքի ծայրամասային տիրույթում: Ընթերցողին ներկայացվող սույն աշխատանքը նշված մտահոգության արտահայտությունն է, որում փորձ է արվում հասարակության համակարգային վերլուծության օգնությամբ սոցիալական փիլիսոփայությանը ներարկել որոշակի երանգներ՝ ապահովելով նրա թեկուզև միջնորդավորված ներառվածությունը հասարակության գործառնության ծիրում, տնտեսական, քաղաքական և իրավական վճիռների կայացման գործընթացներում:

ՍՍՄՎԵԼ Ա. ԽԱԶՍԻՅԱՆ

ԻՐԱՎՈՒՆՔԻ ՕՐԻՆԱԶՉԱՓՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (նոր ուսմունք իրավունքի մասին)

Երևան, «Զանգակ – 97», 2003, 356 էջ



Իրավագիտության թեկնածու Ս. Ա. Խաչատրյանի այս մենագրության մեջ շարադրվածը նոր տեսություն է իրավունքի մասին և հանդիսանում է նրա՝ «Իրավունքի արժեքավոր հատկությունները» աշխատության տրամաբանական շարունակությունը: Այստեղ իրավունքը քննարկվել է իր ներքին բովանդակությունը կազմող

հատկությունների համակցության, դրանց մեջ գործող պատճառական-արժեքային կապերի տեսակետից և, կախված հատկությունների համակցությունը սերող երկու գլխավոր սկզբնապատճառներից կամ սուբստրատներից՝ ազատությունից կամ բռնությունից, սահմանվել են իրավունքի ներքին բովանդակության և կառուցվածքի մեջ անհրաժեշտաբար գործող օրինաչափություններ, օրենքներ:

Հարգարժու՛ն ուսույիչ

Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոնը գերմոստե՛ն շնորհավորում է Ձեզ Մուսույիչ օրվա առթիվ, մաղթում աշխարհաբայիս-արեղծագործական հազոդություններ, բարեկեցություն եւ՛ երգանկություն անձնական կյանքում:

Անժադեղի իրողություն է, թե՛ ամուր ու կայացած է այն պետությունը, որև ունի ամուր ու կայացած դպրոց: Այսօր, մեր կորակալի պետության հակառակ, ամրակալու եւ՛ կայակալու իսկզբի ունի կառուցված հայոց դպրոցը, եւ՛ այդ իսկզբի լուծման հակադարձիս ամենամեծ ու ամենապարասխակալու բնոր Ձեր ունեւրի է, սիրելի՛ ուսույիչ: Մեր գրեթե ամեն քրեակեցից խաթարված իրականության մեջ ամենամաքուր, չադարսված բնագավառը մանկավարժությունն է, եւ՛ դա՛ Ձեր կիրքում, անձնուրացության, անշահախնդրության շնորհիվ: Ձեր կիրքումն է, որ մեր բարդ ու դժվարիս ժամանակներում շե՛ն ու կենսալիք է պահում հայոց դպրոցը, նրա դարսվոր-հապարակյա ավանդները: Մուսրի երիցս ճշմարիտ էն այն խոսքերը, թե՛ «այագայի համար պայքարը, որ մեկն մղում էնք այսօր, կարող էնք քրանույ քրալ կամ շաեղ դպրոցական դասարաններում»:

Մեկ անգամ եւ՛ն շնորհավորելով Ձեր քրեկ առթիվ՝ ՀՄԻԱ-ը հայրնում է իր վարսահությունն առ այն, որ ապագայում Ձեզ կրեւնի առաւել հարգված, Ձեր արժանապարիվ պաշկամքիս հարիք պեքրական ու հասարակական հոգածությամբ ու հովանավորությամբ շրգապարված:

Մղզ շերուք եւ՛ կեցեք հավարով: